



Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հրատարակչությունը, չհետապնդելով որևէ եկամուտ, ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտի համացանցային կայքերում ներկայացնում է իր հայագիտական հրատարակությունները: Գիրքը այլ համացանցային կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ հրատարակչության համապատասխան թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:

Ն.Մ. ՆԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՆՈՐ ԲԱՅԱԶԵՏԻ
ԳԱՎԱՌԸ
1828 - 1913 ԹԹ.



CALOUSTE GULBENKIAN FOUNDATION
Armenian Communities Department

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹԱԿՈՒՆԵՑՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ
ԳՐԱԴԱՐԱՆ

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹԱԿՈՒՆԵՑՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ
ԳՐԱԴԱՐԱՆ

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹԱԿՈՒՆԵՑՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ
ԳՐԱԴԱՐԱՆ

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹԱԿՈՒՆԵՑՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ
ԳՐԱԴԱՐԱՆ

Գ. Մ. ԱՐՄԵՆՅԱՆ

**НОВО-БАЯЗЕТСКИЙ
УЕЗД В 1828 - 1913 гг.**

ԵՐԵՎԱՆ
ԻԶԴԱՏԵԼՅՏՎՈ ՊԵՐԵՄՈՒՅԻՆ ԿԵՆՏՐՈՆԻ
ԻԶԴԱՏԵԼՅՏՎՈ ԵԿՄ
2008

ՀԱՅԿԱԿԱՆ ՄԱՏԵՆԱԸԱՐ
ԳԱԼՈՒՄՏ ԿԻՒԼՊԵՆԿԵԱՆ
ՀԻՄՆԱՐԿՈՒԹԵԱՆ

Վ.Մ. ՎԵՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**ՆՈՐ ԲԱՅԱԶԵՏԻ ԳԱՎԱՌԸ
1828 - 1913 թթ.**

ԵՐԵՎԱՆ
ՀՀ ԳԱՍ «ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՀՐԱՏԵՐԱԿՈՒԹՅՈՒՆ
ԵՊՀ ՀՐԱՏԵՐԱԿՈՒԹՅՈՒՆ
2008

*Տպագրվում է ԳՄԱ պատմության ինստիտուտի
գիտական խորհրդի որոշմամբ*

Պատասխանատու խմբագիր՝ ԳՄԱ թղթակից անդամ
Ա.Ա.Մելքոնյան

Գարությունյան Գ.Ս.

Հ 422 Նոր Բայազետի գավառը 1828-1913թթ. – եր.: «Գիտություն»
հրատ. 2008.– 294 էջ:

Գայ պատմագիտության մեջ առաջին անգամ տրվում է երևանի նահանգի ամենամեծ գավառի ամբողջական պատմությունը: Լուսարանվում են Նոր Բայազետի գավառի վարչատարածքային կառուցվածքը, բնակչության ներգաղթը, էթնոգավառաբանական կազմի փոփոխությունները, սոցիալ-տնտեսական վիճակը, կրթամշակութային և հոգևոր կյանքը, ինչպես նաև այլ բնույթի հարցեր: Զգալի տեղ է հատկացվել գավառի վարչական կենտրոնի՝ Նոր Բայազետ քաղաքի պատմությանը:

Գրացնագրվում է ընթերցող լայն հանրությանը:

ԳՄԴ-63.3(ՀՀ)

Առաջարանի փոխարեն

Պատմական երևույթների ընկալման ոլորտում ամենևին էլ չեական չէ հանրության համար ակնհայտ դարձնել ներկայի գերազանցությունն անցյալի նկատմամբ: Առավել կարևոր է ապագայի կանխագագացողությունը, որ շատ ավելի անհրաժեշտ է ներկայից: Եվ քանի որ նման փորձերն այնքան էլ հաճախադեպ չեն, ուստի երևույթների զարգացման, ներքին պատճառական կապերի բացահայտման ընթացքում խստորեն կարևորվում են տարբեր ժամանակներն ու հանգամանքները միմյանց համադրելու, փաստական հարուստ նյութը շրջանառության մեջ դնելու հաջողված փորձերը: Այս դեպքում էլ ընդհանուր շարադրանքում տեղակայված բազմաթիվ փաստերի գործածությունն ու տարածաշրջանի մասին ամբողջական ժողովրդագրական պատկերի ստեղծումը, որ միակն է ընդգրկման ծավալով ու խորքով, չի դառնում միակ արժանիքն այս աշխատության: Մեզ համար խիստ կարևոր է այս ամբողջ համակարգված նյութից, տեքստից վերացարկված գաղափարը՝ իսկ դա այն է, ինչ անհրաժեշտ է սերունդներին: Պատմությունը երբեք չի ընդունում դժվարությունը որպես արդարացում: Մա առավել կարևոր նկատառում է մեզ համար: Պատմության ճանապարհին մեր կորցրածն ավելի շատ է, քան գտածը: Բայց այդ չին էլ շատ ավելի թանկ է, քան այն, ինչը կար է այսօր չկա: Իսկ եղածի կայացման ընթացքը, որի ամբողջական շարունակությունն է մեր ներկան, հարկ է, որ գիտակցվի մեր կողմից: Միս այս նպատակի իրագործման ճանապարհին Գ.Գարությունյանի երկար տարիների աշխատանքի արդյունքը՝ «Նոր Բայազետի գավառը 1828-1913թթ.», կարևոր քայլ է:

Ուսումնասիրության առարկան՝ (1828-1913թվականներ) նախկին երևանի խանության Դրխուլաղի, Դարաչիչակի և Գյուլչայի մահալների հենքի վրա ստեղծված երևանի նահանգի Նոր Բայազետի գավառն է՝ Ռուսաստանին միանալուց մինչև առաջին աշխարհամարտի նախօրյակը: Ընդգրկվում է բարձրագույն

հարցերի շրջանակը՝ նորագրավյալ երկրամասի վարչաժողովրդագրական հիմնահարցը՝ Ռուսաստանի ռազմավարության համատեքստում, ժողովրդագրական տեղաշարժեր, բնակչության թվաքանակի, էթնոգրավանաբանական և սեռային կազմի փոփոխություններ, վարչատարածքային բաժանումներ, տնտեսություն, կրթություն, մշակույթ և այլ բնույթի հարցեր, որոնց խոր և համակողմանի վերլուծությունը ստեղծում է Նոր Բայազետի գավառի ամբողջական պատկերը: Աշխատությունն ունի նաև մեկ այլ կարևոր արժանիք. սույն գավառի պատմության Վիդ. մինչև XIXդ. ընկած ժամանակահատվածը պատմագիտության կողմից մինչև օրս չի ենթարկվել ժողովրդագրական ուսումնասիրության: Պատճառն, անշուշտ, սկզբնաղբյուրների սակավությունն է: Հարցի լուսաբանումը նաև քաղաքական է, ունի հույժ արդիական նշանակություն: Ներկայումս, երբ մեր հարևանները փորձում են «ապացուցել», որ Երևանի նահանգն ի սկզբանե եղել է մուսուլմանաբնակ, և հայ տարրն այստեղ առաջին անգամ հայտնվել է միայն 1828-1830թթ. պարսկահայերի և արևմտահայերի ներգաղթից հետո, ժողովրդագրական հարցերի ուսումնասիրությունը ստանում է ճանաչողական մեծ արժեք, այն է՝ իրական փաստերով ներկայացնել ինչպես ամբողջ Արևելյան Հայաստանի, այնպես էլ Նոր Բայազետի գավառի էթնոժողովրդագրական պատկերը, հայոց տարրի հետագա ճակատագիրը, նրա էթնիկ օտարացման և մուսուլման բնակչության շարունակական աճի պատճառները: Աստիճանաբար բնիկները դուրս են մղվել, և կամ խստորեն ասիմանափակվել է նրանց հայրենիքը:

Փիսական շրջանառության մեջ է դրվել արժեքավոր փաստական նյութ, ինչն անհամեմատ ընդլայնում է ինչպես ընթերցողի իմացության շրջանակը, այնպես էլ որոշակիորեն համակարգում Նոր Բայազետի գավառի ուսումնասիրության գործը:

Գավառի պատմության ուսումնասիրման ուղղությամբ աշխատանքներ տարվել են դեռևս XIX դարում: 1829-1830թթ. կամեռալ ցուցակագրության տվյալների, ազգագրական-դաշտային աշխատանքների հարուստ նյութերի հիման վրա լույս տեսան Արևելյան Հայաստանի և նրա մաս կազմող Նոր Բա-

յազետի գավառի վերաբնակեցման, բնակչության գրառումների և սոցիալ-տնտեսական կյանքը լուսաբանող մի շարք աշխատություններ¹:

Բնության առարկա ժամանակաշրջանի Արևելյան Հայաստանի էթնոժողովրդագրական հարցերի ուսումնասիրությունը XX դարում և XXIIդ. սկզբներին դրվեց ամուր հիմքերի վրա: Այս առումով հատկապես առանձնանում են Ե.Լալայանի, Ջ.Կորկոտյանի, Խ.Ավդաբեգյանի, Ջ.Գրիգորյանի, Վ.Պարսամյանի, Ա.Մելքոնյանի, Հ.Սարգսյանի, Խ.Սարուխանյանի, Ա.Ալեքսանյանի, Վ.Խոջարեյանի և այլոց աշխատությունները²:

Վերջին շրջանում մեծացել է անցյալի նկատմամբ ուշադրությունը. բնակավայրերի, բնակատեղիների մասին գրվել և գրվում են հետազոտություններ: Բացառություն չէ և Նոր Բա-

¹ Սարգիս արքեպիսկոպոս Ջալալեանց, ճանապարհորդություն ի Մեծն Հայաստան, մասը Բ, Տփլիսի, 1858, *Յովհաննես եպիսկոպոս Շահխաթունեանց*, Ստորագրություն կարողիլ էջմիածին և ինքզ զաւտացն Արարատայ, հատոր երկրորդ, էջմիածին, 1842, *Միմիոն կարթլիկոս Երևանցի*, Չամբո, Վաղարշապատ, 1873, *Մելքոմբ արքեպիսկոպոս Սմբատեանց*, Տեղագիր Գեղարքունի Օժովազարդ զաւառի որ այժմ Նոր-Բայազիտ զաւառ, Վաղարշապատ, 1895, *Ա.Երիզյան*, Աննեան Հայոց կարթլիկությունը և Կովկասի Հայք 19-րդ դարում, Խ. Ա. Թիֆլիս, 1894:

² Ե.Լալայան, Ազգագրական հանդես, XVIII գիրք, թիվ 1-2, Թիֆլիս, 1908, *Խ.Ավդաբեգյան*, Հողային հարցը Արևելյան Հայաստանում (1801-1917թթ.), Ե., 1959, *Ա.Ալեքսանյան*, Արևելյան Հայաստանի նոր շրջանի ագրարային հարաբերությունների պատմագրությունը, Ե., 1991, *Ջ.Կորկոտյան*, Խորհրդային Հայաստանի բնակչությունը վերջին հարյուրամյակում (1831-1931թթ.), Ե., 1932, *Վ.Խոջարեյան*, Հայաստանի բնակչության վերարտադրությունը և տեղաշարժերը XIX-XX դարերում, XXI դարի շեմին, Ե., 2001, *Ջ.Գրիգորյան*, Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին և նրա պատմական նշանակությունը, Ե., 1978, Վ.Պարսամյան, Գրիգորեղովը և հայ-ուսական հարաբերությունները, Ե., 1947, *Խ.Սարուխանյան*, Արևելյան Հայաստանի Ռուսաստանին միացման պրոբլեմը մինչիզդարիական հայ պատմագրության մեջ, Ե., 1971, *Ա.Մելքոնյան*, Ձավախքը XIX դարում և XX դարի առաջին քառորդին, Ե., 2003, *Գ.Տարկյան*, Население Восточной Армении в XIX- начале XXв., Ե., 2002 և այլն:

յագետի գավառը, որի վերաբերյալ ստեղծվել են մի շարք աշխատանքներ³:

3. Հարությունյանի աշխատանքը շահեկանորեն տարբերվում է այս բեմայով գրված աշխատանքներից՝ բազմապլան կառուցվածքով, բովանդակային բազմաշերտությամբ, փաստական հարուստ նյութի ու տվյալների հիմնավոր վերլուծությամբ:

Վաչագան Գրիգորյան
Բանասիրական գիտությունների դոկտոր

Էթնոժողովրդագրական իրավիճակը Նոր Քայազանի գավառում XI դ. մինչև XIX դ. սկիզբը

Ժողովրդագրական գործընթացները (Եթնիկ կազմավորումների քանակական, կրոնադավանաբանական, սեռատարիքային և սոցիալ-հոգեբանական) յուրաքանչյուր ժողովրդի պատմական ուղու անբաժանելի ուղեկիցներն են: Ժողովրդագրական տեղաշարժերը սոցիալ-տնտեսական և ներքին ու արտաքին քաղաքական (ջարդ, պատերազմ, ազգամիջյան կռիվներ, արտագաղթ, տեղահանություն, հավատափոխություն) գործոնների հետևանք են, որոնք անմիջականորեն ազդում են այդ գործընթացների ուղղվածության և դրանց դրսևորման ձևերի ու ծավալների վրա:

Ինչպես նախորդ դարերում, այնպես էլ քննության առարկա ժամանակաշրջանում Հայկական լեռնաշխարհում ժողովրդագրական փոփոխությունները սնուցող հիմնական աղբյուրը հանդիսացել է արտաքին քաղաքականը: Հատկանշական է, որ Հայաստանի Եթնիկ օտարացման գործընթացը սկիզբ առավ XI դ. սկսած, կապված Արևելքի վաչկատուն ցեղերի դեպի արևմուտք կատարած և հաճախակի բնույթ կրող զանգվածային տեղաշարժերի հետ: Ավարառու այս ցեղերի հիմնական կորիզը կազմում էին օղուզները և թուրքմենները⁴:

Սելջուկ-թուրքերն իրենց զբաղմունքը և ապրուստի հիմնական միջոցը դարձրել էին նվաճողական պատերազմները, որոնք, որպես կանոն, ուղեկցվում էին նախադեպը չունեցող ավերածություններով, կոտորածներով, գերեվարումով և տեղահանումով: Եթիշտ է նկատել ճանաչված թուրքագետ Ա. Տվերիտիևովան. «Մենք գիտենք, որ թալանը, հողերի գրավումը, զանգվածային գերեվարությունը, թուրքական արշավանքների զլխավոր շարժառիթն էին»⁵:

³ Վ. Պողոսյան, Գեղահովիտ, Ե., 1996, Ֆ. Սողոմոնյան, Դժմաշեն, Ե., 1997, Կ. Մանուկյան, Սարուխան, Ե., 1998, Ա. Հակոբյան, Վ. Հարությունյան, Նորատուս, Ե., 2000, Ի. Ղարիբյան, Արծախ-Մեղրածոր, Ե., 2006, Զ. Մարտիրոսյան, Գոմածոր, Ե., 2006, Բյավառ (Բյավառ քաղաքի պատմությունը), Գ. Մանուկյանի խմբագրությամբ, Ե., 2001, Վ. Շահբազյան, Կարմիրգյուղ, Ե., 2004, Գ. Մարտիրոսյան, Սևան (Հայրենագիտական ակնարկներ), Ե., 1998:

⁴ С. Асажанов. Очерки истории огузов и туркмен Средней Азии IX-XIII вв., Ашхабад, 1969, с. 165.

⁵ А. Тверитинова. Фальсификация истории средневековой Турции в кемалистской историографии. - Византийский вестник, т. VII, с. 23-24.

Թուրքալեզու ցեղերի ներխուժումը Հայկական լեռնաշխարհում երկուսն ունյն ձեռնազիրը: Քոչվոր խասմանորխի պարբերաբար կրնկվող մարդակույ և շեներ կործանող արշավանքներն ալիքվելով տարածվեցին Հայաստանի գրեթե բոլոր շրջանների վրա: Հայաստանի գրավումը սելջուկների կողմից ահավոր ողբերգություն էր հայ ժողովրդի համար: Ընկնելով այս ցեղերի իշխանության տակ, հայությունը կանգնեց ազգակործան սպառնալիքի առաջ: Նոր բռնակալները Հայաստանում հաստատեցին իրենց ապրելակերպին, կենցաղավարությանը և հոգեբանությանը հարիր վարչակառավարման և տնտեսավարման համակարգ, որը մեծ հաշվով ուղղված էր նորագրավյալ աշխարհը կողոպտելուն և նրա բնակչությանը արմատախիչ անելուն: Նախ՝ չմոռանանք, որ Հայաստանի նոր «տերերը», անենից առաջ, քոչվոր անասնապահ ցեղեր էին: Այս իմաստով, Հայաստանի հրաշալի բնակիչմայական պայմանները նպաստավոր էին անասնապահությանը զբաղվելու համար:

Թերևս այս հանգամանքով կարելի է բացատրել նաև այն փաստը, որ թուրքալեզու ցեղերը տեղաբնիկ ժողովրդին զանգվածաբար ոչնչացնելով և բնավեր անելով, երբեմնի ծաղկուն ու շեն երկիրը, չափազանց կարճ ժամանակամիջոցում, վերածեցին մոխրակույտի: Բազում բնակավայրեր հրոճարակ դարձան ու անայացան, իսկ հրաշքով փրկվածներից շատերը հարկներից ու տուրքերից ազատվելու համար փախչում էին հայրենի երկրից և ապագա փնտրում օտար ափերում: Ցավոք, ազգակործան արտագաղթը անենուր տեսանելի եղավ և դրսևորվեց նաև հետագա դարերում:

Սելջուկների իշխող վերնախավի քաղաքականությունը միավորված էր նաև ցեղակիցներից նստակյաց դարձնելուն: Նրանց մի զգալի մասը դարձավ նստակյաց, բնակություն հաստատելով նոր կամ արդեն գոյություն ունեցող լքված ու կիսավեր բնակավայրերում: Սույն քաղաքականությունը հետապնդում էր երկու նպատակ. նախ՝ ավելանում և ամրապնդվում էին մուսուլմանական բնակավայրերը, և, երկրորդը, խորանում էր բնիկ ժողովրդի էթնիկական օտարացման գործընթացը: Այս ամենով բնավ չէր ավարտվում հայ ժողովրդին պարտադրված աներևակայելի տառապանքը:

Սելջուկ-թուրքերի նստակյաց դառնալը սկսված էթնիկ օտարացման տեղաշարժերի մի կողմն էր միայն: Մյուս կողմը՝ նվաճված քրիստոնյա բնակչության բռնի մահմեդականացումն էր: Սելջուկների և նրանց հաջորդող թուրքալեզու այլ ցեղերի տիրապետության ժամանակ բռնի կամ կամավոր³ հավատափոխությունը Արևելյան Հայաստանի լեռնային շրջաններում, նաև քնուկույան առարկա երկրամասում զանգվածային չափերի չլնդունել, իհարկե, ոչ առանց հիմքի: Խոսքը վերաբերում է նրան, որ տեղական բնակչության իսլամացման գործընթացի շարունակականությունը և խորացումը, ի վերջո, հանգեցնելու էր քրիստոնյա բնակչության գերակշիռ մասի իսլամացմանն ու հետագայում բուրքացմանը: Սելջուկները, առաջին հերթին, քոչվոր տնտեսաձևով ապրող, անասնապահ ցեղեր էին, նոր միայն թուրքալեզու մահմեդականներ: Հետևաբար, անասնապահությունը նրանց ապրելակերպում կենսական նշանակություն ունեցող գործոն էր և, բնականաբար, նրանք պիտի որ հաշվի նստեին այդ գործոնի հետ: Անս թե ինչու քոչվոր սելջուկները հիմնահատակ կործանում էին բնակավայրերը և անխնա ոչնչացնում տեղաբնիկների՝ արտավայրերը ընդարձակելու

³ Հավատափոխության էին դիմում տնտեսական կամ քաղաքական նկատառումներով: Տեղական շատ իշխանավորներ իսլամ ընդունելով բարձր պաշտոններ էին ստանում տիրող վարչակարգի հիերարխիայում: Զրիստոնյաներն ավելի շատ էին ենթարկվում իսլամ նվաճողների կամայականությանը: Հատկանշական է, որ վերոիշխյալ նկատառումներով իսլամ ընդունելու սովորույթը շարունակվեց մինչև պարսկական տիրապետության վերջը: XVII դ. Պարսկաստանում շրջանառության մեջ մտած Իմամ Ջաֆարի օրենքի հստակաբան, եթե քրիստոնյա ընտանիքի որևէ անդամ ընդունում էր մահմեդականություն, ապա վերջինս այդ օրենքի ուժով դառնում էր տվյալ ընտանիքի շարժական ու անշարժ կարողության միակ ժառանգորդը, մինչդեռ քրիստոնեությանը հավատարիմ մնացած գերդաստանի մյուս անդամները զրկվում էին ժառանգական իրավունքից: Տես *Լեռ, Հայոց պատմություն*, նորագույն շրջան, ձեռագրի իրավունքով, պետական համալսարանի ապակետիպ, մասն Ա, Ե., 1926, էջ 33., *Ն. Սարգիսյան*, Արևելյան Հայաստանի Ռուսաստանից միացման պարոլենը մինչեղափոխական հայ պատմագրության մեջ, Ե., 1971, էջ 20: Հայությունը իսլամ էր ընդունում, անենից առաջ, ֆիզիկական գոյությունը պահպանելու նպատակով:

և անասնապահական տնտեսությունը զարգացնելու համար:

Չայ ժողովուրդը դեռ չէր հասցրել անոթել սելջուկ-թուրքերի ձեռքով ծվեն-ծվեն արված Չայաստան երկրի վերքերը, երբ կարճ ժամանակ անց նոր արհալիրքների ենթարկվեց քրդական ցեղերի կողմից⁴: XI-XII դդ. հաճախակի դարձան քրդերի մահապիտուտ արշավանքները:

Քրդական տարրը Չայաստան ներթափանցեց Առաջավոր Ասիային: Նրանք կենտրոնացան գլխավորապես երկրի հարավային նահանգներում, Արարատյան դաշտում, Արագած լեռան ստորոտում, Սևանա լճի հարավային ու արևմտյան ափերին և այլուր: Նրանք զբաղեցնում էին բնաջնջված և հայրենիքը լքած հայերի բնակավայրերը⁵: Առաջ անցնելով ճշեճք, որ այս ցեղերի ներհոսքը Չայկական լեռնաշխարհի շարունակվեց և հետագա դարերում, հատկապես XIX դ. առաջին և երկրորդ կեսերին, նայի՝ 1822-1823 թթ. բուրբ-պարսկական, 1853-1856 թթ. ռուս-թուրքական և վերջապես 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմների ժամանակ: Բավական է նշել, որ XIXդ. սկզբներին Արևելյան Չայաստանում քրդական էթնիկ տարրի թիվը հասնում էր 30000 մարդու⁶, որը կազմում էր ընդհանուր բնակչության 17,8%-ը⁷: Վաչկատուն նոր ցեղերի հայտնվումը, աստիճանաբար նկատելի դարձրին որոշակի միտումներ, որոնք հաճախ բարդանում էին բազմաթիվ անբարենպաստ հանգամանքներով:

Չնայած բնակչության էթնոգրավանաբանական բարդ

⁴ Որպես մեկ էթնիկական ընդհանրություն քրդերը բաժանվում են երկու խմբի՝ քուրդ մուսուլմաններ (շխաներ և սուլիներ) և քուրդ եղզիներ:

⁵ Ա. Դարբաշյան, Ժողովրդագրական տեղաշարժերը Չայաստանում XI-XV դդ., Չայաստանի պատմական ժողովրդագրության հիմնահարցեր, Չայկական լեռնաշխարհը հայ էթնոսի բնօրրան, Ե., 2004, էջ 41:

⁶ С. Есашаров. Краткий этнографический очерк курдов Эриванской губернии. Тифлис, 1884, с. 21; Г. Саркисян. Население Восточной Армении в XIX – начале XX в., Е., 2002, с. 49.

⁷ Խ. Ավդալբեյան, Չրդային հարցը Արևելյան Չայաստանում (1801-1917թթ.), Ե., 1959, էջ 13:

կազմին, ուր գերիշխող էր հայությունը, օտարացման գործընթացների հետագա ծավալումը և խորացումը, անշուշտ, կհանգեցներ բնիկ բնակչության ավաքանակի և տեսակարար կշռի խիստ նվազմանը: Չայ ժողովուրդը վերստին կանգնեց ազգային ինքնությունն ու ֆիզիկական գոյությունը և հազարամյակների ընթացքում ստեղծած նյութական ու հոգևոր արժեքները կորցնելու հարցականի առջև: Սյունահանդերձ, Լոռին, Տավուխը, Տավուշը, Ինչպես և Սևանա լճի շրջանա զավառները շարունակում էին գերազանցապես մնալ հայաբնակ:

Պայքարը հայերի և այս օտարաբուսների միջև դաժան ու անգիշում բնույթ էր կրում: XII դ. վերջին և XIII դ. սկզբին հայվարական միացյալ զորքերը սելջուկ-թուրքերի տիրապետությունից ազատագրեցին գրեթե ամբողջ Չյուսիսարևելյան Չայաստանը՝ Կարսը, Անին, Շիրակը, Գուգարքը, Արարատյան դաշտը, Սևանի ավազանը, Սյունիքը, Ռիտիքը և Արցախը: «Մեծն սպարապետ Չայոց և Վրաց Իվանն և Ջաքարտ,- գրում է ժամանակակից մի հիշատակագրող,- առին գլխին և կուտորեցին և բափեցին զաշխարհս Չայոց ի տաճկեն...»⁸:

Նույն վկայությունը փոքր-ինչ այլ ձևակերպումով, հանդիպում ենք նաև Կիրակոս Գանձակեցու մոտ.«Սոքա (Ջաքարտն և Իվանեն – Չ, Չ.) քազում մարտս քաջութեն ցուցին, քանզի զբազում աշխարհս Չայոց, գոր ունէին պարսկիք և տանկուք, առին ի նոցանէ յինքենանս՝ զգաւասս, որ շուրջ զծովովն Գեղարքունույ...»⁹:

Ազատագրված տարածքները վրաց արքունիքը հանձնեց Ջաքարտան եղբայրներին, որոնք Վրաստանի աջակցությամբ ստեղծեցին իրենց առանձին իշխանությունները: Եղբայրներից Իվանն Ջաքարտյանին¹⁰ բաժին հասավ Լոռու գավառի մի մասը, Արարատյան դաշտը, Դարաչիչակը, Սևանի ավազանը և Սյու-

⁸ «Մանր ժամանակագրություններ», 13-18-րդ դդ., հ. 2, կազմեց Վ. Գալոբյան, Ե., 1956, էջ 37:

⁹ Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն հայոց, Ե., 1963, էջ 163:

¹⁰ Իվանն Ջաքարտյանի տանը ենթարկվում էին Օրբելյանները, Պողոսյանները, Դոփյանները և մի քանի փոքր իշխանական տներ: Տես «Չայ ժողովրդի պատմություն», հ. III, Ե., 1971, էջ 547:

նիցը: Այս ընդարձակ իշխանության վարչական կենտրոնն էր Դվինը, իսկ հետագայում՝ Բջինն¹¹:

Աղբյուրներից հայտնի է, որ Օրբելյանները Լոռիում ունեցած հայրենական կալվածքների փոխարեն Իվանե Ջաքարյանից ստացան մի շարք տարածքներ Վայոց ձորում, Գեղարքունիքում, Կոտայքում, Կայենում: Սյունյաց տան պատմիչ Ստ. Օրբելյանը իր մի վկայությունում գրում է. «...և ի մանկական հասակիս դարձայ վերստին ի լուստուր հաւատ սրբոյն Գրիգորի. և եկի առ մեծ Աթաբէկն Իվանէ. և նորա բազում սիրով ընկալեալ զձեզ՝ ետ փոխան հայրենեաց իմոց զԴրաշակաբերդ իւր կերովս (եկամսիւք). և այլ բազում զիւղս իՎայոց ձոր, ի Գեղարքունի, ի Կոտայսն և ի Կայեն»¹²: Ծանակ գաժառը (այժմ՝ Գավառի ենթաշրջան) Իվանե Ջաքարյանը պահում էր իր ձեռքում: Աղբյուրների վկայությամբ Իվանեի կողմից «Գեղարքունեաց» երկրի վերականգու է նշանակվել ոճն Բուպակը¹³:

Ինչպես աղբյուրներն են նշում Բուպակը Իվանե Ջաքարյանից որպես ժառանգական սեփականություն ստացավ այն տարածքները, որոնց ազատագրմանը նա մասնակցել էր. «...ես մեղուցեալ ծառայ Քրիստոսի Բուպակ՝ իշխանաց իշխան, եկի ի նաւակափս սուրբ եկեղեցուս Լորաւանից առ երջանիկ հայրապետս մեր Տէր Ասարգիս. և ընծայեցի ի՝ հաղլ հայրենեաց իմոց զոր իմ բազկաս առեալ էի յայլազգեաց և իմ արեանքս քափեալ»¹⁴: Ուսումնասիրությունը ցույց է տվել, որ Գյուսիսարևելյան Գայաստանում Ջաքարյանների ձեռք բերած ժառանգությունը շարունակում էր մնալ իիմնականում հայահոծ ու միատարր երկրամաս¹⁵: Լավագույն ապագայի հույսերով Ջաքարյաններն ամեն ինչ անում էին հայ ժողովրդի առաջադիմության, նրա տնտեսական ու քաղաքական անկախությունը

¹¹ Տես *Աղիքսեր - Բեկ*, Կրաց աղբյուրները Գայաստանի և հայերի մասին, հ. Ա, ե., 1934, էջ 13-14:

¹² Ստ. Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, Տփլիս, 1910, էջ 360:

¹³ Տես *Նույն տեղում*, էջ 357:

¹⁴ Լույն տեղում, էջ 357, 360:

¹⁵ Տես Ա. Ղարազոյզյան, *Նշվ. աշխ.*, էջ 42:

պահպանելու համար: Գայությունը երկար կարող էր ըմբռնել խաղաղ ու անվտանգ կյանքի վայելքը, եթե չկանգներ նոր օտար տիրապետության հաստատման վտանգի առաջ: XIII դ. և Գայաստանին խաղաղություն չբերեց: Երկրի ու ժողովրդի գլխին կախված դաժնկյալն սուրը այս անգամ կապված էր մոնղոլ իտրացների և թուրքալեզու այլ ցեղերի Գայական լեռնաշխարհում հայտնվելու հետ: Քոչվոր մոնղոլական ցեղերն առաջին անգամ հայտնվեցին Անդրկովկասում 1220 թ., որից հետո Շիրվանի վրայով անցան Գյուսիսային Կովկաս: Օտար նվաճողների հեռանալով, սակայն, խաղաղության շրջանը երկար չտևեց: Գայաստան է արշավում մոնղոլների կողմից հալածված իտրեզնի տիրակալի որդին՝ Ջալալեդդին զորավարը: 1225 թ. նրա զորքերը գրավելով Իրանի հյուսիսային շրջանները և աստիճանաբար ուժ հավաքելով՝ մտան Գայաստան: Խառնածին ազգախմբերից կազմված այս հրոսակների հայտնվելը մեծ ողբերգություն և չարիք հանդիսացավ հայության համար: Անդրադատնալով այդ որդայի անցքերին Ստ. Օրբելյանը գրում է. «... սուլտանն իտրազմաց Ջալալադինն՝ որդի իտրազմալիին, և գայ ընդ Պարսկաստան. և անցեալ ընդ Ատրպատական մտան յաշխարհս Գայոց. և յոր տեղ հասանէր՝ աւերել, գերփել, ապականել ոչ խնայելով ի՝ հաղլ կամ յանասուն»¹⁶:

Ինչպես արդեն վերը նշել ենք, այս շրջանում Գայաստանը գրավելու մտադրություն ունեին նաև քոչվոր մոնղոլները:

1236-1245 թթ. Գայաստանը մոնղոլներն և նրանց միացած այլ քոչվոր ցեղերի բարբարոսական սապատակությունների քատերաբեմն էր դարձել: Մոնղոլական նվաճումներից հետո Գայաստանը, Կրաստանը և Շիրվանը ճանաչեցին նոր նվաճողների գերիշխանությունը, իսկ տեղական ազնվականությունը՝ մոնղոլական մեծ խանից: Կիրակոս Գանձակեցու վկայությամբ մոնղոլները ռազմակալեցին նաև «զգաւառն որ շուրջ զծովովմ Գեղարքունոյ»: Մոնղոլ-թաթարական ցեղերն իրենց զորարանակներով հաստատվել էին Աևանա լճի ավազանի շրջակա սարերում. «Թաթարաց աշխարհակալութեան միջոց. անոնց շորմաղան զորավարը, Անին առնելէն առաջ, Գեղամայ ծովակի

¹⁶ Ստ. Օրբելյան, *Նշվ. աշխ.*, էջ 399:

ափունքը դրած էր իւր խորանը»¹⁷: Այստեղ էին գտնվում նրանց ճամբարները-«օրաները», որոնք պատուհաս են դառնում շրջա-
կա գյուղերի հայ հողագործ գյուղացիության համար: Այսպես,
մեզ հայտնի է ճապոտիկ գյուղը (այժմ Ծովագյուղ-Սևանի ենթա-
շրջանում), որը դարձավ մոնղոլ իրոսականների ճամբար և
կղզիք Չիբուխու: Սա առաջին բնակավայրն էր այս վայրում,
որը ստացավ թուրք-թաթարական անվանումը: Մոնղոլների
ազդեցակալության տակ Հայաստանը հիմնովին կորցրեց իր
քաղաքական ինքնուրույնությունը, իսկ հայությունը ենթարկ-
վեց սոցիալական, ազգային ու կրոնական ամենաբիրտ ճնշում-
ների: Այս ցեղերի շուրջ երկդարյա դժոխային տիրապետության
ժամանակաշրջանում բնավ չնվազեց հայ ժողովրդի տառա-
պանքը, եթե չասենք, որ զնալով այն ավելի սահմանեցուցիչ էր
դառնում: Այս ամենը այլընտրանք չէին թողնում հայության մի
ստվար մասին, բացի «կամովին» հայրենիքը լքելուց: Ընդհա-
նուր բնակչության կազմում կրճատվում էր հայության տեսա-
կարաւ կշիռը՝ օրավուր ավելացող մուսուլման բնակչության
հանդեպ և դիմախեղվում էր Հայաստանի էթնիկական պատ-
կերը: Ժամանակի մի աղբյուրի վկայությամբ. «... և էր աշխարհ
յամենայն ի տառապանք և ի հարկապահանջութիւն և ի սպառ
նուագեալ էր ազգս Հայոց»¹⁸:

Միևնույն պատկերն ենք տեսնում ուսումնասիրության
առարկա երկրամասում: Այստեղ ներթափանցած քոչվոր ցեղերի
մի մասը մշտական բնակություն հաստատելով և աստիճա-
նաբար միախառնվելով իրենից առաջ արդեն վերաբնակված
արյունակից և ցեղակից բնակչության հետ, կործանման հասց-
րին հայոց երկրագործական մշակույթը և փոխարենը, Ա. Գով-
հաննիսյանի դիպուկ բնորոշմամբ. «... և կաճողների ճոխյոցները
դոփում էին ավերված բնակավայրերի մոխիրն ու փոշին, ճանա-
պարհ բացելով թաթար քոչվորների ստալա»¹⁹:

¹⁷ Գ. Էփրիկյան, Պատկերազարդ բնաշխարհիկ բառարան, պրակ
առաջին, Կենտրին, 1902, էջ 481:

¹⁸ «ԺՂ դարի հայրենե ձեռագրերի հիշատակարաններ», կազմ.
Լ. Խաչիկյան, գիրք երկրորդ, Ե., 1950, էջ 101-102:

¹⁹ Ա. Գովհաննիսյան, Դրվագներ հայ ազատագրական մտքի պատ-
մության, Ե., 1980, էջ 413:

XIV դ. վերջին – XV դ. սկզբին Հայաստանը հայտնվեց նոր
բարբարոսների՝ Լենկ Թեմուրի և թուրքմենական ցեղերի տե-
սադաշտում: Մոնղոլական բարաս ցեղից սերված այս բռնա-
կալը 1387թ. Թավրիզը վերցնելուց հետո ներխուժեց Հայաս-
տան: Իրադարձություններին մոտ կանգնած աղբյուրն այսպես
էր նկարագրում Լենկ Թեմուրի արշավանքը դեպի Հայաստան.
«Ի սոյն ամի ՊԼԵ (1386թ.) Լանկաթումուր եկն ի Թավրիզ և ի
Նախչուրան՝ և անտի ի միում՝ աւուր կալաւ մինչև ի Կարք և ի
Բջնի, ի Գանճի՝ Սուրմարի, ի Կողք, և անտի գնաց ի Վրացտուն...
և ի գեալ տարւոյն յաւուրս աւագ գատկին ել ի Սինիս...»²⁰:

Աղբյուրներից մեզ հասած տեղեկության համաձայն Լենկ
Թեմուրի իրոսակների ճանապարհը դեպի Երնջակ բերդ անցել
է ուսումնասիրվող գավառի տարածքով. «Այս գաւառիս մէջ
(Սևանա լճի ավազան–Գ. Գ.) 1387-ին բանակեցաւ նաև աշ-
խարհաւեր Լէնկ-Թիմուրը, և ասկէց արշաւեց Երնջակայ ամրո-
ցին վրայ»²¹:

Միամանակակիցները սրտածնլիկ կերպով են նկարագրում
կաղ բռնակալի Հայաստանով անցած ճանապարհի կործանա-
րար հետևանքները, որոնք տեսանելի էին ամենուր՝ նախադեպը
չունեցող զանգվածային կոտորածներ, գերեվարություն, թա-
լան, բնակավայրերի կործանում և մահասարսուռ այլ իրողու-
թյուններ:

Ըստ թուրք Մեծովիեցու, ուր ոտք է դրել այդ վիուկը, հողը
շաղախվել է արյունով. «Աւաղ եւ եղուկ ամենայն Հայոցս զի
ավերեցաւ ամենայն երկիրս, զի յկրճշոյ մինչեւ ի տունն Վրաց
եւ մինչ ի Կուր գետն Մղվանից շաղախեցաւ արեամբ ամեղաց
երկիր ամենայն չարչարանօք, սպանմամբ և գերությանմբ»²²:
Որտեղ ոտխը դիմադրության էր հանդիպում, վկայում է նույն
սկզբնաղբյուրը, կովի ընդունակ տղամարդկանց սրի էր քաշում,
կանանց ու աղջիկներին անարգում էր, իսկ երեխաներին՝

²⁰ Սամուելի քահանայի Անեցույ Հուաքմունք ի գրոց պատմագրաց,
Վաղարշապատ, 1893, էջ 171:

²¹ Գ. Էփրիկյան, նշվ. աշխ., էջ 481:

²² Թով Մեծովիցի, Պատմութիւն Լանկ-Թամուրայ և յաջորդաց իւրոյ,
Վաղարշապատ, 1896, էջ 32:

գերավարում, կամ էլ. «... իբրև գլխավոր կամեասայլից տղայսն ձիովք կատին, և փոխան ցորենոյ արունս գետոց բզխին»²³: Չդադարող ջարդերը, բնակչության տեղահանումն ու նրանց դավաճանափոխումը գումարվելով նվազագույնի էին հասցնում հայերի քիվը: Ոչ միայն այդ: XIVդ. երկրորդ կեսերը և XVդ. սկիզբը Յայաստանը նաև այլազգի ցեղերով բնակեցնելու ժամանակաշրջան էր: Բանն այն է, որ, երբ մեծուրը տիրում էր որևէ մի քաղաքի, անպատճառ զորքի մի մասին այնտեղ էր բնակեցնում, այդ երկրում թողնում, իսկ այդ աշխարհի մարդկանց մի մասը փոխադրում էր և բնակեցնում ուրիշ երկրում²⁴: Տեղահանվածներին քշում էին դեպի Սամարղանդ և Միջին Ասիա, որոնք ճանապարհին ենթարկվում էին հարձակումների՝ զանազան հրոսակախմբերի կողմից, մահանում սովից, համաճարակից և ճանապարհի անլուր գրկանքներից: Տարահանված տասնյակ հազարավոր հայ բնակչության փոխարեն Խորասանից և այլ շրջաններից Յայաստան բերեցին թուրքական ցեղեր²⁵:

Ժողովրդագրական այս քաղաքականությունը տարածված իրողություն էր, քանի որ Յայաստանի մեծ մասին տիրացած նոր բռնակալների համար, հեռանկարի իմաստով, ուներ ռազմավարական նշանակություն: Յայաստանը դիտելով իբրև տերության սահմանային շրջան և մշտական խոցելի, անհրաժեշտ համարվեց այդ վտանգին հաջողությամբ դիմակայելու համար այն ամրացնել և ամրապնդել հավատակից ու արյունակից ցեղերի բնակեցումով: Մյուսը՝ տերության կենտրոնական գավառները դատարկել ըմբոստ և կենտրոնական իշխանության անհնազանդ ցեղերից և նրանց փոխադրել սահմանամերձ շրջաններ:

Այս առումով բացառություն չէր կազմում խնդրո առարկա երկրամասը, որը մինչ այդ արդեն ճաշակել էր Թեմուրի որդու՝

²³ Նույն տեղում, էջ 45:

²⁴ *Կիրակոսյան*, Յայաստանը Լանկ-Թամուրի և թուրքոն ցեղերի արշավանքների շրջանում, Ե., 1997, էջ 72:

²⁵ *Մանանդյան*, երկեր, հ. գ., էջ 372, *Կիրակոսյան*, նշվ. աշխ., էջ 156:

Միրանշահի ավարառու հրոսակների արնաթաթախ ոտնահետքերի խորշանքը²⁶:

Յայաստանի բնակչության էթնիկական կազմում տեղի ունեցած փոփոխություններն ուղղակիորեն կապված էին նաև երկրում ստեղծված սոցիալ-տնտեսական ծանր պայմանների՝ սովի ու համաճարակային հիվանդությունների հետ: Տևական պատերազմները, միջցեղային բախումները, աշխատունակ բնակչության թվաքանակի նվազումը, վարելահողերի կրճատումը, բանող անասունների զլխաքանակի անկումը, ինչպես նաև նվաճողների զորքերի և անասնահոտերի մշտական տեղաշարժերը գրեթե կործանման հասցրին երկրի տնտեսությունը: Սկզբնաղբյուրները ցույց են տալիս, որ 1388-1432թթ. Յայաստանում պարբերաբար բռնկվել է սով և խլել տասնյակ հազարավոր կյանքեր: Անդրադառնալով XIVդ. վերջի – XVդ. 30-ական թվականների Յայաստանի տնտեսական կացությանը և հայ ժողովրդի նյութական դրությանը, սկզբնաղբյուրը հարդորում է. «Շատք ի սովու մեռան և այլք՝ շուն և կատու կերան»²⁷: Սեկ այլ սկզբնաղբյուր հիշատակում է հարազատներից սպանելու և ուտելու մասին. «Ել պարապեալ պակասեցաւ անասունն. և դիմեցին ի յուստերս եւ ի գոստերս իւրեանց»²⁸:

Սովի ավերիչ հետևանքները նկատելի էին ամենուր, այդ թվում և ապագա՝ Նոր Բայազետի գավառի տարածքում: Բննարկվող հարցի կարևորությունից ելնելով հարկ է նշել, որ այս երկրամասի մի մասում՝ Գյոլչայի մահալում 1319թ. տեղի էր ունեցել ավերիչ երկրաշարժ, որի հետևանքով լրիվ կամ մասնակիորեն ավերվել էին մի շարք գյուղեր ու բնակավայրեր, կային մեծ թվով զոհեր: Յսկայական վնաս էր կրել գյուղատնտեսությունը: Ամասունների ու թռչունների մեծ զլխաքանակ ոչնչացավ: Սամուել Անեցին սրտակեղեք փաստերով է շարադրում բնական աղետի պատճառած արհավիրքների մասին.

²⁶ *В.Тязенгаузен. Сборник материалов, относящихся к истории Золотой орды, т. 2, М. Л., 1941, с. 153.*

²⁷ «Յայ ժողովրդի պատմություն», ՅԱՄԻ ԳԱ հրատ., հ. IV, Ե., 1972, էջ 27-28:

²⁸ *Թով. Սեծոկեցի*, նշվ. աշխ., էջ 94:

«...յետ քսան ամաց (1319թ.) այլ ազգ աւերած ահաւոր եհաս, երկրաշարժ մեծ ի Գեղարունի ընկղղմեաց զբազում գեօղս, համ-դերն արամորք և կանամորք»²⁹:

Լեզվյալ բռնակալի մահից (1405թ.) շատ չանցած հայ ժողովուրդը դեռ չէր հասցրել իր վրայից սրբել արյան հետքերը, երբ ենթարկվեց կարակոյունլու, իսկ XVդ. վերջին մաս ակկոյունլու ցեղերի արշավանքներին: Քննության առարկա երեք մահաւնդի տարածքները կարակոյունլուների կողմից ռազմակալվեց 1430թ.³⁰: Այս ցեղերի ներխուժելը Հայկական լեռնաշխարհի ամենից բազմադետն է եղել հայության համար: Երանք, ըստ էության, իսպառ բնացնեցին այն ամենն ինչը որ հարիր չէր իրենց ապրելակերպին, մտածելակերպին և նախապաշարունով կապված չէր իրենց ցեղին ու ավանդին:

Գնվելով XV դ. սկզբնադարերի հաղորդած փաստերի վրա՝ թուրքագետ Ի. Պետրուշևսկին նշում է. «... Թուրքմեն նվաճողների՝ կարակոյունլուների և ակկոյունլուների տիրապետությունը Հայաստանում շատ ծանր հետևանքներ ունեցավ»³¹:

Լախի՝ տիրելով Հայաստան աշխարհին՝ վերոհիշյալ ցեղերն իրենց ձեռքը վերցրին երկրի հոգևոր և աշխարհիկ ազդեցիկ բոլոր պաշտոնները: «Տախան շախի օրոք,- պատմում է Սիմոն Երևանցին,- այլազգիները տիրեցին ողջ երկրին, և վերացավ քրիստոնեական իշխանությունը: Ուստի բոլոր պաշտոնական անձինք սկսեցին նշանակվել մահմեդականներից, քրիստոնյաների բոլոր գործերը՝ հոգևոր կամ աշխարհիկ սկսեցին կատարվել մահմեդականների հրամանով կամ հրահանգներով»³²: Հայ բնակչության համար ստեղծվել էր անձի ու գույքի անապահով

²⁹ Սամուէլի Բախանյի Անեցոյ, Հաւաքմունք ի գրոց պատմագրաց, էջ 26, 36մա.՝ *Ղ Ալիջան*, Սիսական, Վենետիկ, 1893, էջ 34, *Հ.Կիրիկեան*, Պատկերագրող բնաշխարհիկ բառարան, պրակ առաջին, էջ 481:

³⁰ «Բյավատ» (Բյավատ քաղաքի պատմությունը), խմբ. Չ.Մանուկյան, Ե., 2001:

³¹ *И. Петрушевский*, Очерки по истории феодальных отношений в Азербайджане и Армении в XVI – начале XIX в., Л., 1949, с. 64.

³² *Սիմոն Երևանցի*, Տամր, Բարձրանութեամբ Վ. Համբարձումյանի, Ե., 2003, էջ 28:

վիճակ, ենթարկվում էին սոցիալական, էթնոգավանաբանական, բարոյական և ֆիզիկական ճնշումների ու բռնությունների և ամենքը մտահոգված էին իրենց ֆիզիկական գոյությունը պահպանելու խնդրով: Հայությունը զրկված էր իր տնտեսական և կրթամշակութային կյանքը նորմալ կազմակերպելու ամենապարզունակ հնարավորությունից:

Լախիկն զարգացած երկրագործությունն իր տեղը զիջեց քոչվոր ցեղերի պարզ տնտեսական մեկին՝ անասնապահությանը³³:

Այս ամենը ուղեկցվում էր տնտեսական կյանքի անկումով: Ավարառու ցեղերի ավերածություններն ու ջարդարարությունները, հայության ֆիզիկական գոյությանը սպառնացող վտանգը և ապրուստի անապահովությունը մեծ թափ հաղորդեցին չարաղետ արտագաղթին՝ դեպի Վրաստան, Հյուսիսային Կովկաս, Դրիմ և այլուր³⁴: Այս ամենը, բնական է, որ չէր կարող իր ազգակործան ազդեցությունը չունենալ ինչպես ամբողջ երկրի, այնպես էլ քննության առարկա երկրամասի էթնիկ օտարացման գործընթացի վրա: Տարբեր տարիներին վերաբնակված մահմեդական բնակչությունն (թուրքեր, քրդեր, արաբներ) արդեն կազմում էր Արևելյան Հայաստանի մեծաթիվ ցեղավեգվական խոշոր ընդհանրություններից մեկը: Այսուհանդերձ, հայ բնակչությունը, նախկինի նման, գերակշիռ էթնիկ միավորն էր:

XVI դ. սկզբին Հայաստանի ժողովրդագրությանը, էթնիկ օտարացման առումով, սպառնում էր նոր վտանգ: Այս անգամ, Հայաստանը տնտեսապես տվեցին թուրքալեզու նոր քոչվորները, որոնց Ի. Շոպենը և Ի. Պետրուշևսկին, իրենց աշխատություններում տվել են «ղզլքաշներ»³⁵ (կարմրազուխներ) անվանումը:

³³ *С. Еремян*, Опыт периодизации истории Армении эпохи феодализма, Е., 1954, с. 68.

³⁴ *С. Еремян*, Армения до конца XV в. См. Очерки истории СССР, М., 1958, с. 719.

³⁵ *Տիս Ի. Շոլեն*, Исторический памятник состояния Армянской области в эпоху ее присоединения к Российской империи. СПб., 1852, *И. Петрушевский*, Очерки по истории феодальных отношений в Азербайджане и Армении в XVI – начале XIX в., Л., 1949.

Սկզբից այդ ցեղերը յորճ էին՝ շամլուներ, ռամլուներ, ուստաշ-լուներ, քեքեյուներ, ավշարներ, կաջարներ և զուլքադարներ: XVI դ. սկզբին նրանք ներխուժեցին Արևելյան Հայաստան³⁶: XVդ. վերջին - XVI դ. սկզբին ղզլբաշների շարքերն են ներթափանցում թուրքալեզու նոր ցեղեր, և արդեն XVI դ. սկզբին նրանց թիվը հասնում է տասնհինգի³⁷: ղզլբաշների ցեղի կազմում բուրքեաման (այսինքն «թուրքմեն») անվան տակ մտան ցեղերից մի քանիսը՝ քայաթ³⁸, ղազախլու (բաժանվում էին երկու խմբի՝ չորանցարա և կարափափախ³⁹), չախարլու, ղարաձանլու, այրումլի⁴⁰ և միլլի, XVI դ. սկզբին հաստատվեցին Արևելյան Հայաստանում, մասնավորապես Սևանա լճի ավազանում: Առաջ անցնելով Նշենք, որ Իրանի տարածքում և Փոքր Ասիայում հաստատված վերոգրյալ ցեղերը տարբեր ժամանակներում, հատկապես XVIII դ. վերջին և XIX դ. սկզբին պարբերաբար

³⁶ Գ. Саркисян, նշվ. աշխ., էջ 51:

³⁷ И. Петрушевский, նշվ. աշխ., էջ 91-92, Գ. Саркисян, նշվ. աշխ., էջ 51:

³⁸ Այս ցեղը հիշատակվում է դեռևս XI դ. որպես թուրքմենական ցեղախմբերից մեկը որը XIII դ. Մոնղոլիայից տարածվել է Փոքր Ասիա: Նրանց մի մասը սուլթան Բայազետի ղեկավարությամբ պատերազմել է Լենև Ռենուրի դեմ: Թուրքական սուլթանի ջախջախումից հետո, հաղթողները նրանց բռնեցին Պարբեքի: Մշտական բնակվելու համար քավարոպայմաններ չգտնելով նրանց անցան Բաղդադի փաշայություն: Այնուհետև շաի Թահաձադը նրանց տեղափոխեց Պարսկաստան, մասսաբ էլ՝ Մազանդարան: Այստեղից Հաի Սբառը նրանց վերջնականապես տեղափոխեց Խորասան: Բայաթ ցեղի մի մասը մնաց Փոքր Ասիայում, որտեղից էլ տարբեր ժամանակներում ներխուժում էր դեպի Հայկական մարզ: Որոշ չափով եկան նաև Մազանդարանից: Տես Մ. Шонен, նշվ. աշխ., էջ 230, И. Петрушевский, նշվ. աշխ., էջ 91-92:

³⁹ Անվանում են նաև քարաքամաններ: Նրանք սկզբում բացառապես քրչկորներ էին, հետզհետե անցան ճատակեցուրյան: Տես Մ. Մելրոյան, Տավախքը XIX դ. և XX դ. առաջին քառորդին, Ե., 2003, էջ 107:

⁴⁰ Իկոնիայի սուլթանության անկումից հետո, այրումլի ցեղի մեծ մասը վերադարձավ Պարսկաստան, իսկ փոքր մասը մնաց Հայաստանում, որտեղ ստացավ այրումլու կամ իրնյա անվանումը, կազմավորելով այրումլի, սևիդլի - ախախիլի, տաշանլի և սաուլի ցեղախմբերը: Տես Մ. Шонен, նշվ. աշխ., էջ 536:

ներխուժել են Արևելյան Հայաստան և վերաբնակություն հաստատել նրա տարբեր շրջաններում, այդ թվում և քննության առարկա երկրամասում⁴¹:

Արտաքին քաղաքական գործունեորի հետևանքով Հայաստան աշխարհի բոլոր շրջաններում էքնոժողովրդագրական կտրուկ փոփոխություններ դիտվեցին XVI-XVIII դարերում, երբ տևական և ավերիչ պատերազմներից հետո իրենց արյունոտ տիրապետությունն էին հաստատել Արևելքի մահմեդական երկու խոշոր բռնատերությունները՝ խանական Պարսկաստանը և սուլթանական Թուրքիան:

Գ. Գալոյանը իրավամբ նշում է. «Հունենալով միասնական պետություն և զինված ուժ, հայ ժողովուրդը ի վիճակի չէր դիմագրավելու թուրքերի և պարսիկների՝ Հայաստան ներխուժմանը, առավել ևս կասեցնելու երկրի ներսում նրանց չարագործությունները»⁴²:

Պարսկա-թուրքական երկարատև և աշխարհակործան պատերազմների ընթացքում ամբողջ Հայաստանի հետ միասին, այս ընդարձակ տարածքը ևս հաճախ էր ռազմաբեմ դարձել և բազմիցս էր ենթարկվել օսմանցի ակալարների և ղզլբաշ զինվորների յաթաղանին: Ասվածը հավասարապես վերաբերում է երկուսին էլ, որովհետև նրանք, «ավանդույթի» սովորույթով, ամեն անգամ հեռանում էին, իրենց հետևից թողնելով միայն կիսավեր կամ հիմնովին կործանված շենքեր և տասնյակ հազարներով սպանված ու խեղձած մարդկային կյանքեր: Մեկ երկու օրինակն էլ բավական և դրանում համոզվելու համար: 1553թ. թուրքական բանակը գրավելով Հորադյալի (Շիրակ) գավառը. «ամբողջությամբ ավերեց և հողից հավասարեցրեց գավառի գյուղերը և բոլոր շինությունները»⁴³: Նույն աղբյուրը վկայում է, որ «1578թ. թուրք զինվորները կողոպտեցին և թալանեցին

⁴¹ Գ. Саркисян, նշվ. աշխ., էջ 51:

⁴² Գ. Գալոյան, Հայաստանը Մեծ տերությունների աշխարհակալական առճակատումներում (XVI դարից 1917թ.), Ե., 2004, էջ 57:

⁴³ «Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին», հ. Ա., կազմեց Ա. Սաֆրաստյան, Ե., 1961, էջ 33-34:

երևան քաղաքն ու երկիրը և երկու հազարից ավելի կին ու երեխա գերեվարեցին»⁴⁴։ Հավատակիցներից ետ չէին մնում և պարսիկները։ Առաքել Դավիթիցին իր աշխատության մեջ նկարագրում է պարսիկների վայրագությունների մասին, թե ինչպիսի մոլագարությամբ էին նրանք ոչնչացնում բնակչությանը և նրա ստեղծած արժեքները. «...ավերեց... Հայաստանն ու Վրաստանը, բոլորին ոչնչացրեց սրով, սովով և գերեվարությամբ...»⁴⁵։ Հայ բնակչությունը անհաշիվ թվերով բռնագաղթեցվում էր դեպի Պարսկաստանի խորքերը՝ տնտեսությունը զարգացնելու, արհեստն ու առևտուրը ծաղկեցնելու, երկիրը շենացնելու, մյուս կողմից էլ հայ ժողովրդին ջլատելու և նրա դիմադրողականությունը թուլացնելու համար։ Հայության, մինչ այդ նախադեպը չունեցող, մեծամասշտաբ տեղահանությունը սկսվեց 1604թ., որի իրականացման ողջ ընթացքը ճշմարիտ կերպով չարադրել է Առ. Դավիթիցին. «Վասն զի քչելն գերկիրս, ոչ թե զմի կամ գերկու գաւառս վարեաց Ի Պարսկաստան, այլ զբազումս...»⁴⁶, և դառնացած արժանագրում է. «Շահն անմարդարնակ դարձրեց ամեն ինչով լի բարեբեր աշխարհս հայոց»⁴⁷։ Անդրադառնալով դեպի Պարսկաստան քվածների հետագա ճակատագրին, Դավիթիցին նշում է, որ գաղթական հայության մեծ մասը, շուրջ հազար ընտանիք կար ժամանակամիջոցում բնաջնջվեց⁴⁸, իսկ նրանցից հազարներն էլ ենթարկվեցին էթնակական դիմախեղման⁴⁹։

Խառնիփնթոր քառուստ հայության մի մասն էլ ֆիզիկական բնաջնջումից փրկվելու համար, նախկինի նման, հեռանում էր հայրենիքից և կյանքի ու ապրուստի միջոցներ փնտրում օտարության մեջ։ Սողոմ Գոմորի խորշակը կտրեց անցավ նաև մեզ հետաքրքրող ընդարձակ երկրամասի վրայով։

⁴⁴ Լույն տեղում։

⁴⁵ Առ. Դավիթիցի, Պատմութիւն, Վաղարշապատ, 1896, էջ 74-83։

⁴⁶ Լույն տեղում, էջ 52։

⁴⁷ Լույն տեղում, էջ 53։

⁴⁸ Տե՛ս նույն տեղում, էջ 45-60, 136-146։

⁴⁹ Ա. Դավիթիցի, Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, գիրք երկրորդ, Ե., 1959, էջ 99։

«Այս մահալը (խոսքը Գյուլչայի մահալի մասին է – Գ.Գ.), վկայում է վավերագիր մի սկզբնաղբյուր.՝ Շահ Արասի կողմից անայացվելուց հետո հայրուրամյակներ շարունակ կատարյալ անապատ է մնացել։ 15 տարի առաջ, երբ երևանի սարդարը ձեռնարկեց այն կարափափախներով բնակեցման գործը, ապա ոչ ոք չէր հիշում հին գյուղերի անունները, դրանք նոր բնակիչներից նոր անուններ ստացան»⁵⁰։

Սա այն դեպքն է, երբ Արևելյան Հայաստանի մյուս շրջանների համեմատությամբ պատմական Սոթքի և մասամբ Գեղարքունիքի գավառներն առավել քիչ էին տուժել սույն բռնագաղթից և նվազ չափով էին կորցրել իրենց վաղեմի մարդաշատ ու ծաղկուն պատկերը՝ Սազրա-Սոթքի կառավարիչ Մելիք Շահնազարի և Շահ Արասի անձնական մտերմության շնորհիվ։ Առ. Դավիթիցին պատմում է, որ Վրաստանից Պարսկաստան վերադառնալիս. «Ինքն Շահաբասան իջևանեցաւ Ի տան Մելիք Շահնազարին, որ էր Ի գյուղն Սազրայ (ի Սոդս), բնական Ի նոյն գեղջէն. և էր Մելիք Շահնազարի յազգեն Հայոց, և հաւատով քրիստոնեայ, Ի իշխան հզոր և փառաւոր, որ արար Ի Իւրընկալութիւն Շահին, որպես վայել է թագաւորի...»⁵¹։

Թուրք-պարսկական մարդակուլ պատերազմներն ի վերջո հանգեցրին Անդրկովկասի, այդ թվում և Հայաստանի երկփեղկմանը։ 1639թ. Թուրքիայի հետ կնքած Կարե-Շիրինի պայմանագրով խանական Պարսկաստանը տիրացավ Արևելյան Հայաստանի մեծ մասին։

Սկզբից որվեց Պարսկաստանի մտայլ ու մղծվամբջային տիրապետությանը, որը տևեց ավելի քան մեկուկես դար։ Սեֆյանների տիրապետության օրոք Արևելյան Հայաստանի պատմության հարցերի հիմուտ ուսումնասիրող Ն. Սարուխանյանը ճիշտ է նկատել, որ պարսկա-թուրքական տիրապետությունը հայ ժողովրդին բերեց ռազմաֆեոդալական դաժան շահագործում, սոցիալական անասելի թալան ու հարստահարում, արտատնտեսական ճնշման վայրագ ձևեր, ազգային ու կրոնական

⁵⁰ Հայաստանի ազգային արխիվ (այսուհետև ՀԱԱ), ֆ. 90, ց. 1, գ. 89, ք. 319։

⁵¹ Առ. Դավիթիցի, նշվ. աշխ., էջ 212։

քարբարոսական հալածանքներ²²: Պարսկական հսկայածավալ տերությունը վարչատարածքային առումով բաժանված էր խանությունների և մահալների:

Այս բաժանումները թելադրված էին գրավյա տարածքների նկատմամբ Պարսկաստանի ռազմավարական շահերով: Արևելյան Հայաստանի մեծ մասի վրա ստեղծվեցին Երևանի, Նախիջևանի, Դարբարտի խանությունները և Օրդուբադի օկրուգը: Տարածքային առումով և բնակչության թվով ամենախոշորը Երևանի խանությունն էր և առանձնակի գերակայություն ուներ այդ տերության վարչակառավարման համակարգում: XIX դ. սկզբին սույն խանությունը բաժանվեց տասնհինգ մահիճների կամ մահալների՝ Կրիսբուլաղի, Ջանգիրասարի, Գանձիրասարի, Վեդիրասարի, Շարուրի, Սուրմալուի, Դարաբենդ - Փարչենիսի, Սաթլիհի, Թալիհի, Սևիդլի - Ախսախլի, Սարդարապատի, Կարբիրասարի, Ապարանի, Դարաչիչակի և Գյուլչայի²³: Մինչև Ռուսաստանին միանալը Արևելյան Հայաստանում անփոփոխ պահպանվեցին պարսկական վերոգոյալ վարչական բաժանումները: Արևելյան Հայաստանի բոլոր վարչական բաժանումներում շարունակվում էր աղճատվել բնակչության ազգագրական դեմքը: Նոր իրողությունն այն էր, որ էթնոժողովրդագրական իրավիճակի փոփոխությունները թելադրված էին ոչ այնքան արտաքին գործոններով, որքան քաղաքական և տնտեսական շարժախթներով:

Բռնության տափանող ուժը շարունակում էր իր ավերիչ գործը: Ճակատագրական ժամանակներ էր ապրում հայությունը: Թշնամին չէր թաքցնում մտադրությունը. ամբողջովին հայաթափելու էր երկիրը, ամբաստնվելու էին մուսուլմանական գյուղերը: Հատկանշական է, որ Արևելյան Հայաստանի պարսկական մասում, հայերի արտագաղթը, դրսից բերված քրջվոր ցեղերի բնակեցումը, նոր բնակավայրերի հիմնումը և բնակչության հարկելը, ի տարբերություն նախորդ ժամանակների,

²² Տես *Ն. Սարուխանյան*, Արևելյան Հայաստանի Ռուսաստանին միացման պրոբլեմը մինչևեղափոխական հայ պատմագրության մեջ, էջ 10:

²³ *H. Wonen*, նշվ. աշխ., էջ 441:

Սեֆյանների օրոք որոշակիորեն կարգավորվում էր կենտրոնական իշխանության և նրա տեղական կառույցների կողմից: Այսպես, պարսկական տերության սահմաններն ամրապնդելու և Ռուսաստանի ու Թուրքիայի հնարավոր հարձակումներից պաշտպանվելու շահախնդրությամբ, Երևանի վերջին սարդաթ շուսեյն խանը ծրագրավորված կարգով, համաճում խանության սահմանամերձ մահալները պարբերաբար բնակեցնում էր քրջվոր թուրք-տարբեջանական ցեղերով²⁴: Օրինակ, Թալիհի մահալում նա բնակեցրել էր այրուճի ու քաշանլի քրջվոր ցեղերին՝ Կաֆար-խանի գլխավորությամբ, Արազածոտունում և Ապարանի հարավում տեղավորել էր սեյիդլի և ախսախլի ցեղերին՝ Իսմայիլ-խանի առաջնորդությամբ, Դարաչիչակի ու Գյուլչայի մահալներում՝ կարափափախներին՝ Իսմայիլ-խանի, Մարդան-խանի ու Նադի-խանի առաջնորդությամբ²⁵: Հուսեյն խանի վերաբնակեցման քաղաքականությանը շահախնդիր ջանադրությամբ մասնակցում էին նրա ենթակա պաշտոնյաները՝ մահալների կառավարիչները:

Այսուհանդերձ, պարսից տիրապետության օրոք Արևելյան Հայաստանում կառավարման գոյություն ունեցող վարչաձևը Որևելյան տիպի ռազմական դեսպտիզմն էր, ուր կայուն ոչինչ չկար, խաների և նրանց ենթակա պաշտոնյաների իրավունքները ոչնչով չէին սահմանափակվում, իսկ հսկայական ժողովուրդները զրկված էին ապրելու և արարելու ամենատարրական իրավունքներից ու հնարավորությունից: Իրավական, հարկային դատական ու սեփականատիրական քաղաքականությունը և դրանց իրագործումը ոչ միայն կայուն չէին, այլև տարափոխվում էին գավառից գավառ, գյուղից գյուղ, անհատից անհատ՝ կախված ժամանակի, իրավիճակի, ներդրված եռանդի ու այլ միջոցների ինչպիսին լինելուց²⁶:

Արևելյան Հայաստանի էթնիկ դիմագիծը ձևափոխվում էր ոչ միայն քրջվոր ցեղերի շարունակական վերաբնակեցումով:

²⁴ Տես նույն տեղում, էջ 449-450:

²⁵ Տես վճռով ՑաֆՉցզվ, *Խ. Ակրայրեզյան*, նշվ. աշխ., էջ 12:

²⁶ Տես *Միմոն Երևանցի*, նշվ. աշխ., էջ 21:

Ընդհանուր բնակչության կազմում հայերի տեսակարար կշիռը նվազում էր նաև առօրյա դարձած արտագաղթի հետևանքով: Ուժեղ վեր հարկերը, անմարդկային շահագործումը և հարստահարումը, կրոնական հալածանքները, էթնիկական արժանապատվության ստորացումը, անձի ու գույքի անապահովությունը անտանելի էին դարձրել հայ ժողովրդի ոչ միայն բաղաբական, այլև սոցիալական կացությունը: Նույնիսկ այս իրավիճակում հայ գյուղացիությանը ծանր զրկանքներ էին պատճառում ներքին «իշխանիկներն» ու «զավառական իշխողները», որոնք իրենց կամայականությունների մեջ գերազանցում էին միմյանց և մի տեսակ իրար հետ մրցակցում⁵⁷: Հատկանշական է, որ պարսից տիրապետության ներքո հայ ժողովրդի այս շերտերը նույնպես ճեղքվում ու կեղեքվում էին պարսիկ աստիճանավորների կողմից: «Պարսից տիրապետության վերջին շրջանում, - գրում է Ա. Գյուլիաննիսյանը, - խանական ճնշումներից ու կեղեքումներից տուժում էին ոչ միայն հայ ժողովրդական զանգվածները, այլև հայ տիրող դասերը...»⁵⁸:

Այս մղծավանջային իրականության մեջ հայ ժողովրդի մի սովոր մասը լեզուն ատամի տակ սեղմած և վրեժի ցասումը հոգում պահած, տանում էր իր բաժին տառապանքը՝ հանդգնած, որ պարսից դժոխային տիրապետությունից և վերջո կործանվելու է: Հայ տառապալ ժողովրդի մեջ ազգային-բաղաբական զարթոնք և ակտիվություն այդ շրջանում բացատրվում էր նրանով, որ ցարական Ռուսաստանը ծավալապաշտական քաղաքականություն էր սկսել դեպի հարավ: Ռուսաստանից ստացվող օգնության նկատմամբ հայերի հավաղ օրավոր խորանում էր և ավելի հուսադրող էր դառնում: Դրանով է բացատրվում XVIII դ. 20-ական թվականներին Արևելյան Հայաստանի տարբեր շրջանների գյուղական համայնքների կողմից Ռուսաստանի կառավարությանն ուղարկված նամակները: Այդպիսի մի

⁵⁷ Տե՛ս նույն տեղում:

⁵⁸ Ա. Գյուլիաննիսյան, 19-րդ դարի 50-60-ական թվականների արևելահայ հասարակական - քաղաքական հոսանքները, «Պատմա-բանասիրական հանդես», թիվ 4, 1965, էջ 57:

վավերագիր փաստաթուղթ է 1724թ. Գյուլեյաի մահալի 30 գյուղերի բնակիչների անուկից նամակը Պետրոս Մեծին՝ ձեռք մեկնել Պարսկաստանի լծի տակ տառապող հայությանը և իր հովանավորության տակ վերցնելու խնդրանքով⁵⁹: Նրանք, ում համար անհույս ու վտանգավոր էր մնալ հայրենիքում, զանգվածաբար հեռանում էին: Էթնիկական օտարացման գործընթացի վրա հատկապես բացասական հետևանքներ է ունենում, երբ այս ամենին ավելանում են հյուսիսկովկասյան լեռնակամների՝ լեզգիների արշավանքները և նրանց կազմակերպած բռնագաղթերը:

Ստեղծված իրավիճակը խորացրեց XIX դ. սկզբներին Արևելյան Հայաստանի մի շարք շրջանների՝ Լոռի Փամբակի, Լեռնային Դազախի, Շամշադինի, Արևելյան Շիրակի, Զանգեզուրի և Ղարաբաղի Ռուսաստանին անցնելը: Այսպես, 1804 թ. ռուսական բանակի երևանյան անհաջող արշավանքից հետո ավելի քան երկու հազար հայեր լքեցին հայրենիքը և հաստատվելով Թիֆլիսում՝ հիմնադրեցին Հավլաբար բաղամասը⁶⁰:

1805 թ. շուրջ 200 հայ ընտանիք երևանի խանությունից անցավ Փամբակ⁶¹: Հայ բնակչության արտագաղթը կործանաբար հետք թողեց ռուսամասիրության առարկա Գյուլեյաի, Դարաչիչակի և Ղրիսրուլաղի մահալների բնակչության էթնիկական նկարագրի վրա՝ զգալիորեն նվազեց հայ ազգաբնակչության թիվը՝ մեծապես ավելացող մահմեդականի հանդեպ:

Հայ ժողովրդի սոցիալ-տնտեսական կացության և ժողովրդագրական վիճակի մասին հարուստ տեղեկություններ են հաղորդում երևանի խանության և նրա մաս կազմող վերոգրյալ մահալներ այցելած օտարերկրացիները: Այս առումով ուշագրավ են Հայաստան այցելած անգլիացի Ջեյմս Մոյրի գրառումները: Վերջինս իր գրառումներում առաջ բերված և մեծ շրջահայացությամբ վերլուծված փաստերի և նյութերի մանրա-

⁵⁹ Տե՛ս Ա. Արրսիսյան, Մի էջ Անդրկովկասի ժողովուրդների և հայ-ռուսական հարաբերությունների պատմությունից, Ե., 1953, էջ 51:

⁶⁰ Տե՛ս Կ. Մոսեև, Նշվ. աշխ., էջ 706:

⁶¹ Տե՛ս Օ. Արայան, Ռուսաստանի դերը հայ ժողովրդի պատմական ճակատագրում, Ե., 1981, էջ 206:

Նոր Քայազեռի գավառի վարչատարածքային սահմանները և բնակչությունը XVIII դ. վերջին և XIX դ. սկզբին

Ինչպես արդեն ցույց ենք տվել նախորդ ենթաբաժնում XI դ. մինչև XVIII դ. վերջը Արևելյան Չայաստանը պարբերաբար ենթարկվելով ավարառու և ռազմատենջ ցեղերի մահասպանության արշավանքներին ու նրանց նողկալի տիրապետությանը, կրելով չափ ու սահման չունեցող բռնի տեղահանության և արտագաղթի կործանարար հետևանքները, որոնք ի սկզբանե ուղեկցվում էին հայ բնակչությանը պարտադրված մահմեդականացումով և դրսից բերվող ցեղերի բնակեցումով՝ Խաչես փոխեցին երկրի ազգային նկարագիրը: Կամերալ վիճակագրության տվյալները թույլ են տալիս աներկբա պնդելու, որ թե՛ մեկ կամ ամենաշատը երկու տասնամյակ էլ շարունակվել ու խորանար էքնիկ օտարացման այս գործընթացը, ապա Արևելյան Չայաստանը, մասնավորապես նրա պարսկական մասը վերջնականապես կիսաթափվել: Բավական է մշել, որ Ռուսաստանին միանալուց առաջ, ամբողջ Արևելյան Չայաստանում ապրում էր 169155 մարդ, որից հայեր էին 57305-ը (33,8 %), թուրքերի թիվը հասնում էր 84089-ի (49,7 %), քրդերին՝ 26911-ի (16,0 %), այլ ժողովուրդների՝ 850-ի (0,5 %):

Ինչ վերաբերում է Արևելյան Չայաստանի երկու՝ Երևանի և Նախիջևանի խանություններին, ապա նույն ժամանակամիջոցում նրանց բնակչության ընդհանուր թիվը հասնում էր 119650 մարդու, այդ թվում հայեր՝ 24952 (20,8 %), թուրքեր՝ 72917 (60,9 %), քրդեր՝ 21253 (17,8 %), այլ ժողովուրդներ՝ 528 (0,5 %):

Ռուսաստանին անցնելու նախօրյակին նվազագույնի էր հասել նաև բնակավայրերի թիվը: Ըստ կամերալ ցուցակագրության 1827թ. դրությամբ նշված խանություններում բնակեցված գյուղերի թիվը եղել է 552, իսկ մինչ այդ՝ 559 բնակավայր դարձել

մասն ներկայացումից հետո գրում է. «Երևանից Սևան ճանապարհին (1813թ.), ոչ մի բնակեցված վայր չտեսանք... լիճը շրջապատված է վայրի լեռներով և բնակչություն չունի»: Ասկայն նախամարդուց մինչև քաղաքակիրթ ժամանակները կիսակազմավորված և քարակույտ հիշեցնող բնակատեղիներն, աշխարհիկ և հոգևոր հրաշագործ կառույցները, որոնց գոյության տարբեր ձևերի մեջ մշտարվում էր անցյալի պատմությունը, անգլիացու հիացմունքն են շարժում: Ապա նա գրում է. «Նախիջևան ճանապարհում որքան ծաղկուն է եղել Չայաստանը, ինչպես վկայում են հիանալիորեն կառուցված այս շինությունները»⁹²:

Այսպիսով, նշված ժամանակաշրջանում բոլոր ցեղերի պարբերաբար կրկնվող կործանարար արշավանքների և նրանց նողկալի տիրապետության պատճառով, ամբողջ Արևելյան Չայաստանում, ինչպես և նրա առանձին շրջաններում տեղի ունեցած ժողովրդագրական գործընթացներից կարելի է անել հետևյալ եզրակացությունները.

ա) Բոլոր ցեղերի արշավանքները, որպես կանոն, ուղեկցվել են բնակավայրերի ավերումով, բնակչության կողոպուտով, ամենաբիրտ կտորածներով, գերեվարումով և զանգվածային տեղահանումով:

բ) Չայաստանի նոր «տերերը» ռազմակալմանը զուգընթաց, հայոց հողը «վերակենդանացնում» էին մուսուլման բոլոր ցեղերին վերաբնակեցնելով: Այս ամենի հետևանքով երկրամասում կտրուկ կրճատվել էր բնակավայրերի և հայ բնակչության թիվը, փոխվել էր ազգաբնակչության էքնիկ կազմը:

գ) Չայ ժողովրդի սոցիալ-տնտեսական և հոգևոր-մշակութային զարգացածությունից բացարձակապես ցածր աստիճանի վրա կանգնած լինելով՝ վաչկատուն ցեղերը նողկալի կերպով ոտնահարում էին նրա դարավոր հավատքը, սովորությունները և կենցաղը: Նրանք ամենաբիրտ կերպով ոչնչացրին դարերի ընթացքում հայ ժողովրդի ստեղծած նյութական ու հոգևոր արժեքները, իսկ մշակութային կյանքը դատապարտեցին անուրյան:

⁹² Գ. Ասրոխյան, Սևան (հայրենագիտական ակնարկներ), Ե., 1999, էջ 27:

⁹³ H. Wlonek, նշվ. աշխ., էջ 463-482, և Ավդալբեգյան, նշվ. աշխ., էջ 14, 17:

էր ավերակ ու անմարդաբնակ²: Քննության առարկա Գյուլչայի, Դարաչիչակի և Ղրիսուրլաղի մահալներին տիրելը, անշուշտ, ռազմատենչ թուրքո ցեղերի քաղաքակառուցման մասն էր կազմում և, բնականաբար, նրանց արշավանքներին ենթարկվել է նաև սույն մահալների բնակչությունը և կրել ավերիչ արշավանքների բոլոր հետևանքները: Հայությունը իբրև բնակչության գերակշիռ էթնիկ միավոր կրճատվեց՝ քանակապես ավելացող մահմեդական ավարառու ցեղերի հանդեպ: Այս տեսակետից վիճակը չափազանց աղետալի էր Գյուլչայի մահալում:

Վերջինս երևանի խանություն, հետագայում նաև՝ Հայկական մարզի ամենաընդարձակ մահալն էր³:

Ընդգրկել է մի տարածություն, որն ամփոփված էր Սևանա լճի ավազանի հյուսիսարևմտյան, արևելյան, հարավարևելյան և մասամբ արևմտյան կողմերում: Իր տարածքով համընկնում է ներկայիս Շամբարակի և Սևանի ենթաշրջանների մի մասին, Վարդենիսի, Մարտունիի և Գավառի ենթաշրջաններին:

Մահալի հատակային մասը զբաղեցրել է Սևանա լիճը՝

² *Н. Шонен*, նշվ. աշխ., էջ 509:

³ Բոլոր կողմերից բարձր լեռներով գտակավորված եռանկյունաձև այս գոգավորությունը հնում կոչվել է Գեղանա երկիր: Երկրամասը մտնում էր Սյունիքի նահանգի մեջ և կազմում էր նրա երկու՝ Գեղարքունիք և Սոթք գավառները: IX դ. առաջին կեսից սկսած Սոթքը (տարածվում էր Գեղանա լճի հարավարևելյան և արևելյան կողմերում իր տարածքով գրեթե համընկնում է այժմյան Մարտունու ենթաշրջանի մի մասին և Վարդենիսի ենթաշրջանին) եղել է խաչենի (ի՞նչ Արցախի) իշխանության սահմաններում: Այն ընդգրկել է նաև Գեղարքունիքի արևելյան մասը՝ Շողվազա ավանով հանդերձ: Ընդ հյուսիսարևելյան ափը ևս, որ հայտնի է Արեգունի անունով, հավանաբար Սոթքի մի գավառակն է կազմել: Տես *Ս. Երեմյան*, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, Ե., 1963, էջ 108, Ե. *Լալայան*, Ազգագրական հանդես, XVIII հիդր. թիվ 1-2, Թիֆլիս, 1908, էջ 110: Ինչ վերաբերում է Գեղարքունիքի գավառին, ապա այն տարածվում էր Սևանա լճի ավազանի հարավային և մասամբ արևմտյան կողմում: IX դ., երբ հայ ժողովուրդը նվաճում է քաղաքական անկախություն, այդ երկիրը միացվում է Բագրատունիների կենտրոնական իշխանությանը: Տես *Ս. Թ. Վարդանյան*, Հայաստանի պատմական աշխարհագրություն, Ե., 1968, էջ 216-217, *Դ. Ռթմազյան*, Սյունիքը IX-X դդ., Ե., 1958, էջ 119:

1200 քառ. վերստ կամ 1416 կմ քառ. մակերեսով: 1906,2 քառ. վերստ ընդհանուր մակերես ունեցող, 94 վերստ երկարությամբ և 64 վերստ լայնությամբ մահալը⁴ հյուսիսից սահմանակից էր Ելիզավետպոլի օկրուգին և Դազախի ու Շամաղիների դիստանցիաներին, արևմուտքից՝ Փամբակի պրովինցիային Դարաչիչակի հետ և մասամբ Ղրիսուրլաղի մահալին, հարավից՝ Ղրիսուրլաղի, Գառնիքասարի և Վեդիքասարի մահալներին, արևելքից՝ Դարավազազի լեռնային հատվածին և Դարաքաղի պրովինցիային⁵:

Ինչպես արդեն վերը նշել ենք, ամբողջ Արևելյան Հայաստանի նման, սույն գավառը ևս հայտնվել էր էթնիկ օտարացման կացության մեջ, որ երևում է հետևյալ աղյուսակից:

Գյուլչայի մահալի բնակչության թիվը և էթնիկ պատկերը Արևելյան Հայաստանը Ռուսաստանին անցնելու նախօրյակին⁶:

Աղյուսակ 1

	Բնակավայրի անվանումը	Մահալում բնակվող				Բնակիչ		
		ցեղամասեր	մուսուլմաններ	չեռնադեղի արաբներ	չեռնադեղի անդամները	մուսուլմաններ	չեռնադեղի անդամները	չեռնադեղի անդամները
			ար.	իս.	չեռ.	ար.	իս.	չեռ.
1	Բեդյուս-Չուսեն կամ Սարաջուկ	կարաիմա-ժուկ	5	14	12	26		
2	Տիկնալ-արալի	կարաիմա-ժուկ	10	27	18	45		
3	Ռաժման-քենի	կարաիմա-ժուկ	8	16	12	26		
4	Ար-Կալա	կարաիմա-ժուկ	7	21	10	39		
5	Արիվանք	կարաիմա-ժուկ	12	41	24	65		
6	Դիմ-Շին կամ Սյուն-քենի	կարաիմա-ժուկ	19	68	40	108		
7	Ար-Կալա	կարաիմա-ժուկ	16	54	45	90		
8	Երևան					13	47	34

⁴ Հաշվարկը կատարվել է ՀԱԱ, ֆ. 1284, ց. 223, գ. 118, ք. 4, ֆ. 93, ց. 1, գ. 83, ք. 397, գ. 93, ք. 116 տվյալների հիման վրա:

⁵ ՀԱԱ, ֆ. 90, գ. 1, գ. 88, ք. 2, գ. 89, ք. 319:

⁶ Աղյուսակը կազմվել է ՀԱԱ, ֆ. 90, գ. 1, գ. 89, ք. 2-324, գ. 88, ք. 2-336, *Н. Шонен*, նշվ. աշխ., էջ 595-602 տվյալների հիման վրա:

8	Պարտափակ-ընտր	Գնումային	2	5	5	10							
10	Ցարգիզի	կարտի- ման	19	62	59	121							
11	Ճարտու-	միջի	17	56	42	98							
12	Պեղե-քուստ	ապրիլ	36	117	95	212							
13	Գրեթուսն	կարտի- ման	39	133	114	287							
14	Դան-կանիկ	միջի	16	49	50	99							
15	Քաղաքի	միջի	31	91	87	178							
16	Խոշ-քուստ	միջի	16	60	57	117							
17	Քեռի սար-կան Կալան-կան	կարտի- ման	29	85	79	164							
18	Քու-քեռի	ապրիլ	15	46	29	75							
19	Եղեռ	միջի	71	215	164	379							
20	Քու-քեռի	ապրիլ	69	188	169	367							
21	Քաղաքի	կարտի- ման	25	68	56	124							
22	Ցարի-գլխ	կարտի- ման	29	81	67	148							
23	Ցարգիզի	կարտի- ման	41	119	83	202	2	5	4	9			
24	Ցուգ	կարտի- ման	44	145	100	245							
25	Աղ-տուգ	կարտի- ման	36	114	78	182							
26	Օգոստ	կարտի- ման	30	124	83	207							
27	Մեծ Կալան	կարտի- ման	49	150	143	293							
28	Փոքր Կալան	ապրիլ	39	130	97	227							
29	Քալան	կարտի- ման	31	94	72	166							
30	Երեւոյ	կարտի- ման	51	141	110	251							
31	Ձիւ	կարտի- ման	45	159	106	265							
32	Արցախ	կարտի- ման	20	67	52	119							
33	Ար-տուգ	կարտի- ման	22	82	47	129							
34	Եր-Այի	կարտի- ման	24	86	54	140							
35	Աղ-տուգ	կարտի- ման	26	79	57	136							
36	Քալան	կարտի- ման	50	177	119	296							
Ընդամենը			999	3164	2443	5607	15	52	36	90			

Կամերալ վիճակագրությունը և աղյուսակը ցույց են տալիս, որ Արևելյան Հայաստանը Ռուսաստանին անցնելուց առաջ Գյուլչայի մահալում 74 բնակավայրերից բնակեցված էր միայն 36-ը, ուր ապրում էր 1014 ընտանիք, ընդամենը՝ 5697 մարդ (3216

արական, 2481 իգական), իսկ մնացած 38-ը անանդրաբնակ էր: 35 գյուղերում, որոնց մեծ մասն ընկած էր Սևանա լճի արևելյան և իյուսիսարևելյան ափերին, բնակվում էր 999 մահմեդական ընտանիք կամ 5607 շունչ (3164 արական, 2443 իգական):

Հայ բնակչության թիվն այնքան էր նվազել, որ տեղում մնացած հայերը կազմում էին ընդամենը 15 ընտանիք կամ 90 հոգի (52 արական, 38 իգական):

Աղյուսակ 1-ի տվյալների քննությամբ ներկայացնենք մահմեդական ամբողջ բնակչության կազմում թուրքապետու տարրեր ցեղերի հաշվեկշիռը, տոկոսային արտահայտությամբ: Կարափախ ցեղերի բնակավայրերի թիվը Գյուլչայի մահալում 23 էր, իսկ բնակիչներինը՝ 3480, այսինքն ամբողջ մուսուլման բնակչության 62 %-ը: Մահալում հաշվվում էր միլլի ցեղերի 5 բնակավայր՝ 871 բնակչությամբ կամ ամբողջ մահմեդական բնակչության 15,5 %-ը, իսկ մնացած մուսուլման բնակչությունը՝ 1256 մարդ, այդ ժամանակ մահմեդականության 22,5 %-ն էր կազմել:

Վերոհիշյալ աղյուսակից երևում է, որ մահալում կար 1 միատարր հայաբնակ գյուղ՝ Երանոսը, որտեղ ապրում էր 13 ընտանիք կամ 81 մարդ: Հայերից 2 ընտանիք կամ 9 մարդ բնակվում էր Չարգեբիլ թուրքական գյուղում:

Այսպիսով, Գյուլչայի մահալը դասվում էր այն մահալների շարքում, որոնցում պարսկական տիրապետության վերջին շրջանում հայ բնակչություն գրեթե չէր մնացել: Այս մահալում իրև գերակշռող մեծամասնություն մուսուլմանները կազմում էին բնակչության ընդհանուր թվաքանակի 98,4 %-ը, հայության 1,6 %-ի դիմաց:

Հատկանշական է, որ սկզբնաղբյուրները հիշատակում են մեծ քաղաքային հայաբնակ այլ գյուղեր, որոնք մինչև XVIII դ. վերջերը պահպանվել են, իսկ այնուհետև ամայացել են կամ ենթարկվել անվանափոխության: Դրանք են Ցրտագետը, Սալկուտը, Քուլատակը, Երիցաշենը, Օվկատեղը, Քափորը, Գառնակերը, Դաշտակը, Ակունքը, Քարատակը, Բարսեղիշենը, Չափարը, Դուլալին, Նորատուսը, Դշաղը, Բերըր, Ագատ քա-

դաքը, Գանձակը, Դաշտակը, Կաթիկը, Առնեղին և այլն⁷: Առաջ անցնելով նշենք, որ Պարսկաստանից և Արևմտյան Հայաստանից ներգաղթած հազարավոր հայեր հաստատվելով Սևանի ավազանում վերակենդանացրին և նոր շունչ հարդրեցին հիշյալ գյուղերի մի զգալի մասին:

Գյուկչայի մահալից հյուսիս-արևմուտք Դարաչիչակի⁸ (հնում Կարաժնունիք)⁹ մահալն էր: Պատմական Դարաչիչակի մահալի տարածքը ընդգրկում էր այժմյան Հրազդանի և մասամբ Սևանի ենթաշրջանների տարածքները: 1,6 հազ. քառ. վերստ ընդհանուր տարածությամբ և մոտ 65 վերստ երկարություն (Բալխիից մինչև Կյումիշ, իմա Գյումուշ) և 35 վերստ լայնություն (ՈՒլուշիկից մինչև Չորան-գեյ կամ Կերին Ախտա) ունեցող այս մահալը զբաղեցնում էր Երևանի խանության հյուսիսային մահալների միջմասնաը: Հյուսիսում Փամբակի պողվինցիան էր և Դազախի դիստանցիան, արևելքում Սևանա լիճը, հարավում Աղմաղան լեռը և Դրիսուլաղի մահալը, իսկ արևմուտքում Ավարանի մահալը¹⁰:

Դարաչիչակի մահալը նախորդ դարերում ևս մահացու հարվածներ էր ստացել ավարառու ցեղերի հարձակումներից ու նրանց տիրապետությունից՝ ավերակվել և հիմնականում կորցրել էր ազգային նկարագիրը:

⁷ Տե՛ս *Н. Шонен*, նշվ. աշխ., էջ 515-517, 595-602, *Միսնոն Երևանցի*, նշվ. աշխ., էջ 395-396, *Ձ. Կորկուտյան*, Խորհրդային Հայաստանի բնակչությունը վերջին հարյուրամյակում (1831-1931), Ե., 1932, չի էջակալված:

⁸ «Կարաժնունիք, ոչ ընդարձակությամբ կամ յիշատակոք ինչ նշանաւոր, քայք ըստ բնութեան և ըստ դրսից երկրին՝ կարի քարեշնորի, քանզի մեծաւ մասամբն գեղեցիկ ծորավայր է լեռնակոհակ, մայրերուսակ և յոյժ առաւել ծաղկաւետ, վասն որոյ և կոչի եւս ի յետին դարս ՇԱԴԿՈՒՆԻՔ կամ ՇԱԴԿՈՒՆԵՍՅ ծոր, որպէս և ի թուրքաց Տեւեչիշկ (Դարաչիչակ)», *Ղ.Ալիշան*, Այրարատ, Կենտրոն, 1890, էջ 277:

⁹ Ըստ «Աշխարհացոյց»-ի Հայկական լեռնաշխարհի հյուսիս-արևմտյան այս երկրամասը մտնում էր Այրարատ նահանգի մեջ և կազմում էր նրա 12-րդ գավառը: *Ա.Էրեմյան*, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 108:

¹⁰ ՀԱՍ, ֆ. 90, գ. 1, Գ. 83, քք. 397-398, *Н. Шонен*, նշվ. աշխ., էջ 446:

XVIII դ. վերջին XIX դ. սկզբին Դարաչիչակի մահալի բնակչության թվաքանակը և ազգային կազմը դիտարկենք ստորև բերված աղյուսակի տվյալներով¹¹:

Աղյուսակ 2

Բնակավայրի անվանումը	Մահերթականներ				Ընդամենը		
	ցեղանունը	ընտանիքների թիվը	ընտանիքի անդամները	ընտանիքների թիվը	ար.	իս.	ըն.
1 Ալախբա	կառավարիան	21	100	82	162		
2 Ուլուշալար	կառավարիան	5	6	7	15		
3 Գյումուշ	կառավարիան	6	29	19	48		
4 Արզաբան	կառավարիան	5	22	11	33	34	92
5 Դալաբ	պարոնի	33	99	82	181		
6 Գազար-Այի	պարոնի	5	10	12	22		
7 Մյնի	կառավարիան	40	128	104	232	24	60
8 Աուակ	կառավարիան	21	52	42	94		
9 Դալի-Փաշա	կառավարիան	13	44	32	76		
10 Ասպին-Բան	կառավարիան	8	22	21	43		
11 Արզաբ	կառավարիան	14	45	37	82		
12 Չոմբու-Այի	կառավարիան	7	16	12	28		
13 Դաբու-Ալլաու	կառավարիան	5	12	11	23		
14 Քազաբից	կառավարիան	7	24	17	41		
15 Ալլաու-Շիկ	կառավարիան	12	36	30	66		
16 Ասարու-Կալա	կառավարիան	13	37	39	76		
17 Արզաբու-Գյուլի	կառավարիան	12	22	19	40		
18 Յաղի						1	2
19 Ծաղկունց	կառավարիան	4	12	6	18	15	36
20 Գանաթ						26	79
Ընդամենը		234	718	562	1300	92	398

Աղյուսակից երևում է, որ Ռուսաստանին միացվելուց առաջ Դարաչիչակի մահալում մահալեղական բնակչության թիվը շարունակաբար ավելացել է և կազմել 1300 շունչ (արական 718, իգական 582) կամ 234 ծուխ, իսկ հայերինը՝ 552 շունչ (արական 298, իգական 254) կամ 92 ծուխ: Դա նշանակում էր, որ նշված ժամանակաշրջանում ընդհանուր բնակչության (1852

¹¹ Աղյուսակը կազմվել է ՀԱՍ, ֆ. 90, գ. 1, Գ. 83, քք. 1-402, Գ. 329, քք. 1-149, *Н. Шонен*, նշվ. աշխ., էջ 592-596 տվյալների հիման վրա:

մարդ) մեջ մահձեղակամության հարաբերական կշիռը հասել էր 70,2 %-ի, հայերի՝ 29,8%-ի դիմաց: Ընդ որում բացարձակ մեծամասնություն են կազմել կարափափախները:

Մահալում կարափափախներն ընդհանուր բնակչության 60,4 % էին կազմում, իսկ մահձեղակամության մեջ՝ 86 %-ը: Ըստ մեր ունեցած տվյալների Ռուսաստանին անցնելու մախթոթյաներ մահալի 69 բնակավայրերից բնակեցված էր ընդամենը 20-ը:

Այստեղ էին հինավուրց Ալափարս, Ռազվանլար, Արզաքան, Դալլար, Գյարաթ-Ալի, Բջնի, Սուլակ, Ուլանշիկ, Յայջի, Շաղկունք և այլ, թվով 20 գյուղեր: Կամերալ վիճակագրության համաձայն՝ ողջ մահալում հայերն ապրում էին միայն 5 բնակավայրերում, որոնցից 146 շունչ (21 ընտանիք) բացառապես հայաբնակ Գոմաձոր և Յայջի գյուղերում, 173-ը (34 ընտանիք)՝ Արզաքան, 131-ը (24 ընտանիք)՝ Բջնի և 102-ը (13 ընտանիք)՝ Շաղկունք խառը բնակչություն ունեցող գյուղերում:

Դատկանշական է, որ ամալի և ամմարդարնակ գյուղերի ցանկում նշված են այնպիսիք, որոնք բնակեցված են եղել առնվազն մինչև XVIII դ. վերջը, որպիսիք են Կամախին, Բատակալը, Մեծ Վարզելը, Փոքր Վարզելը, Աղպարան, Փշմալկալը, Բուղտաթափան, Ախտան, Պորտակը, Կորառեղը, Դրախտիկը, Ռեռիձառը, Մեծտափը, Հիբուխլուն, Ցամաքաբերդը, Վարսերը, Շարիսը, Ոնդամալը, Դղմաշենը, Աղպարան, Կորկոտան և այլ, թվով 31 գյուղեր, որոնք պատկանել են Սևանի և Բջնիի վանքերի վիճակին¹²:

Գիշյալ բնակավայրերի մի մասը հետագայում բնակեցվեց պարսկահայ և արևմտահայ գաղթականներով: Նրանք հաստատվեցին Պորտակ, Դրախտիկ, Հիբուխլու, Ցամաքաբերդ, Դղմաշեն, Վարսեր, Շարիս, Ռնդամալ, Աղպարա և Ախտա գյուղերում¹³: Անշուշտ, գտնվեցին նաև այնպիսիները, որոնք առհավետ մնացին անմարդաբնակ, ինչպես ասենք Փոքր Օրդաքլուն, Ալի-փափախը, Բարուբը, Դեզաճը, Կոմախ - Գյորմազը, Եշակ - Կուտուրան, Հոբան-Գյոլին, Մաման, Այդին, Շաքար - բաշին, Ախ

¹² Տե՛ս Միմենոն երևանցի, նշվ. աշխ., էջ 397-398:

¹³ *H. Wlonen*, նշվ. աշխ., էջ 591-596:

– խանան, Սուբուրլան, Հիչակլին, Փիր – փալուղը, Ջեյնալ – աղան, Դալարը և այլն, թվով 20 գյուղ¹⁴:

Ղրխուրլաղ (քառասուն աղբյուր) գետի հոսանքի շրջանում և նրանից դեպի հյուսիս-արևելք՝ տարածվում էր համանուն մահալը: Ղրխուրլաղի մահալը տարածությամբ մեծ չէր: 680 քառ. վերստ ընդհանուր մակերես ունեցող այս մահալը 44 վերստ երկարությամբ (Դարաչիչակի մահալից մինչև Հալմախի գյուղը) և 25 վերստ լայնությամբ (Ջանգու գետից մինչև Բյամալ և Ջար)¹⁵ տեղադրվում է պատմական Այրարատ աշխարհի Կուտայից կամ Կուտեից գավառում¹⁶: Հարավում Երևան քաղաքն էր և Ջանգիբասարի մահալը, արևելքում սահմանակից էր Ախմանգուն լեռներին և Գառնիքասարի կիրճի վերին մասին, հյուսիսում՝ Դարաչիչակի մահալին, արևմուտքում՝ Եղվարդի տափաստանին¹⁷:

Քոչվոր գեղերի պարբերական կրկնվող արշավանքները դեպի Արևելյան Հայաստան ուղեկցվել են հայ ժողովրդի, նրա պատմության և մշակույթի հուշարձանների ոչնչացմամբ: Մինևույն պատկերն ենք տեսնում Ղրխուրլաղի մահալում: Մի տարբերությամբ միայն, որ այս մահալում կացությունը բոլորովին այլ էր:

Խոսքն այն մասին է, որ Ռուսաստանի կազմի մեջ մտնելուց առաջ, սույն մահալում հայերի տեսակարար կշիռն ավելի բարձր էր, քեև այստեղ նույնպես, հայտնի իրադարձությունների հետևանքով հայ բնակչության թիվը նվազել էր, քե բացարձակ և քե հարաբերական առումով, այնինչ քոչվոր ու կիսաքոչվոր գեղերինը՝ մեծապես աճել էր:

Բերենք այդ բանն ապացուցող վիճակագրական տվյալներ աղյուսակի տեսքով.¹⁸

¹⁴ *H. Wlonen*, նշվ. աշխ., էջ 515, *Չ. Կորկոտյան*, նշվ. աշխ. չի եղևկալված:

¹⁵ ՀԱԱ, ֆ. 90, ց. 1, գ. 93, ք. 116-117:

¹⁶ Սկզբնական անունը եղել է Կոտ կամ Կոտա: Տե՛ս *Ղ. Ալիշան*, Այրարատ, էջ 284:

¹⁷ ՀԱԱ, ֆ. 90, ց. 1, գ. 93, ք. 116-117:

¹⁸ Աղյուսակը կազմվել է ըստ ՀԱԱ, ֆ. 90, ց. 1, գ. 93, ք. 1-112, գ. 319, ք. 1-78, *H. Wlonen*, նշվ. աշխ., էջ 543-546 տվյալների:

	Բնակավայրի անվանումը	Սահմանակամներ						Բնիկներ								
		ցեղատեսակ	բնուս- մրբների թիվը	բնուսների արտաձևերը			բնուս- մրբների թիվը	բնուսների արտաձևերը								
				ար.	իգ.	ընդ.		ար.	իգ.	ընդ.						
1	Ուղտաբեր	կարապխախա	12	33	40	73										
2	Սահղուտ	քաչձուլու	11	34	26	60	22			54	49	103				
4	Քյանալ	քաչձուլու	13	21	16	37										
5	Թոսք	քաչձուլու	10	21	15	36										
6	Ճառ	լախիլու	20	49	40	89										
7	Ճաղթաձան	լախիլու	4	10	9	19										
8	Գամրեղ						6			15	14	29				
9	Աղամոր	կարապխախա	3	13	14	27	9			20	22	42				
10	Դգավ						1			2	2	4				
11	Սոխիք						33			100	92	192				
12	Չայմանկի (Նորք)						80			197	181	378				
13	Քանաթեն	լախիլու	2	10	5	15	58			214	172	386				
14	Կիրաձան	քաչձուլու	6	14	13	27				18	51	41	91			
15	Պարոնի						18			18	44	44	88			
16	Էլար						17			46	36	82				
17	Ելբրեկաձան						81	205	176	393	743	653	1396			
	Ընդամենը															

Աղյուսակը ցույց է տալիս, որ Արևելյան Հայաստանի գրավումից (1828թ.) առաջ հայերով և մահմեդականներով (1779 մարդ կամ 343 ծով) բնակեցված վերոգրյալ մահալում բնակչության բացարձակ մեծամասնությունը՝ 1396 մարդ (262 ընտանիք) կամ 78,5 %-ը հայեր էին: Վերջիններիս բնակավայրերի թիվն ամբողջ մահալում 10 էր, որից 8-ը միատարր հայ բնակչությամբ, իսկ 2-ը՝ մահմեդականների հետ խառը: Մահմեդականներն (383 շունչ կամ 81 ընտանիք) այդ ժամանակ ազգաբնակչության 21,5 % են կազմել:

Նշված ժամանակաշրջանում այս մահալում ոչ միայն հայ բնակչության թիվն էր նվազել, այլև բնակավայրերի թիվն էր կրճատվել՝ 72-ից հասել էր 17-ի: XVIII դ. վերջին արդեն վերջնականապես մերկացել և անմարդաբնակ էին դարձել Գյոքբիլիսան, Քյանքանը, Աշորան, Դզդալան, Դզլորան, Թեզխարաբան, Եգանջուրը, Հազարաբերդը, Արբուլը, Նոանկանոցը, Ալաբերը, Ծարը, Դալարը, թվով 29-ը բնակավայր, որոնք մինչ այդ մտնում էին Բքնիի վանքի վիճակի մեջ: Ավելի վաղ ամայացել էին Քյուզաջուղը, Իգնատոսը, Քյուլուջան, Բեգակլին, Կարա - կալան, Դալակլին, Չայկոտորը, Արզնին, Չոբանգյարմախը, շուրջ 26 գյուղ:

Թուրքմենչայի պայմանագրից հետո հիշյալ գյուղերի զգալի մասը վերաբնակեցրին պարսկահայ և արևմտահայ գաղթականները: Այսպիսով, կամերալ վիճակագրությունները ցույց են տալիս, որ բնության առարկա զավառների թվում հաշիբը մեծամասնություն են կազմել միայն Դրխրուլաղի մահալում: Հիմնական պատճառները մի քանիսն էին:

Նախ այս մահալը, մյուս մահալների համեմատ, քիչ է ենթարկվել օտար ցեղերի հարձակումներին ու ավերածություններին: Դա բացատրվում է նրանով, որ Դրխրուլաղի մահալի հարավարևմտյան մասը ուներ դաշտային ռելիեֆ և, բնականաբար, այնքան էլ չէր ենթարդրում օտար ռազմատենչ ցեղերին, որոնց գլխավոր զբաղմունքն անասնապահությունն էր: Հանդիսանալով ոչ ներմասնամասնային մահալ, այն գրեթե չի ենթարկվել դրսից բերվող քոչվոր ցեղերի վերաբնակեցմանը:

Այս բոլորով հանդերձ սույն մահալն Արևելյան Հայաստանի ամենախիտ բնակեցված շրջաններից էր: Այսպիսով, հետա-

գտվող ժամանակաշրջանում քննության առարկա երեք մա-
 հալների բնակչության թվաքանակը և ազգային կազմը այս-
 պիսի տեսք ուներ.

Աղյուսակ 4

Մահմեդականներ						Հայեր									
բնակչության թիվը			գյուղ	մյուս տեղերում (ք. քաղ.)	մյուս տեղերում (կոմ. կենտր.)	մահմեդականներ			հայեր						
ընդամենը	գյուղացիներ	քաղաքացիներ				ընդամենը	բնակչության թիվը	բնակչության թիվը	հատկապես հայեր	ընդամենը	գյուղացիներ	քաղաքացիներ			
72	58	6	կաթողիկոսներ	41	422	2640	2028	4877	15	9	6	369	1060	945	2038
			մեք	5	101	471	400	871							
			սարկիս	4	148	427	360	787							
			կաթոլիկ	4	62	198	149	335							
			բուլղար	4	40	90	70	160							
			ուր	4	93	260	200	460							
ընդամենը	72	58	6	62	1214	4382	3207	7290	15	9	6	369	1060	945	2038

Աղյուսակի տվյալներից կարելի է ամեն հետևյալ եզրա-
 կացությունները. նախ՝ Ռուսաստանին միացվելու պահին հիշ-
 կալ երեք մահալներում կար 9328 մարդ կամ 1683 ընտանիք:
 Հայտնի իրողությունների հետևանքով մեծամասնություն են
 կազմել մահմեդականները՝ 7290 մարդ (արական 4083, իգական
 3207) կամ 1314 ընտանիք, որոնց տեսակարար կշիռը բնակչու-
 թյան ընդհանուր թվի մեջ հասել է 78,1 %-ի: Լույն ժամանակ
 այդ տարածքի վրա ապրել է 2038 հայ (արական 1093, իգական
 945) – 369 ծուխ կամ ամբողջ բնակչության 21,9 %-ը: Բնակա-
 վայրերի թիվը պակասել էր 2,9 անգամ՝ 215 բնակավայրերից
 142-ը ամայի և անմարդաբնակ էին:

Պատմական կարևորագույն այս փաստերը նկատի ունե-
 նալով կարող ենք աներկբա արձանագրել, որ 1828 թ. փետրվա-
 րի 10-ի թուրքմենչայի և 1829 թ. սեպտեմբերի 2-ի Ադրիանա-
 պոլի պայմանագրերով, հայերի ներգաղթի հետևանքով ի թիվս
 ամբողջ Արևելյան Հայաստանի վերանվեցանացան նաև Գյուլ-
 չայի, Դարաչիչակի և Դրխրուլաղի մահալները, վերականգնվեց
 նրանց նախկին էթնոհոլովորդագրական պատկերը:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

Զանգվածային ներգաղթը Նոր Բայազետի գավառ

Ա) Պարսկահայերի ներգաղթը

XVIII դ. վերջին և XIX դ. արշալույսին Անդրկովկասի երկ-
 րամասը վերստին հայտնվեց Պարսկաստանի, Թուրքիայի,
 Ռուսաստանի, ինչպես նաև Անգլիայի ու Ֆրանսիայի աշխարհա-
 քաղաքական շահերի բախման կիզակետում: Առաջին երեքի
 դեպքում առճակատումները անմիջական էին, իսկ վերջիննե-
 րիս՝ միջնորդված:

Արևելքի այս հզոր տերությունները չէին բավարարվում
 միայն Անդրկովկասը ռազմակալելուց և ձգտում էին դուրս գալ
 նաև դեպի Հյուսիսային Կովկաս: Ըստ էության տեղի էր ունենում
 տարածաշրջանի բաժանումը ազդեցության գոտիների:

Ռուսաստանն, անշուշտ, չէր կարող դիտորդական առա-
 քելության դեր կատարել այս ամենի նկատմամբ, քանզի պար-
 սիկների ու թուրքերի առաջխաղացումը վտանգ էր սպառնում
 կայսրության հարավարևելյան սահմաններին, և ամենակարևո-
 րը, Ռուսաստանի ժավալապաշտակալն ծրագրերում առանձ-
 նակի նշանակություն ուներ Անդրկովկասի գրավումը: Սիա թե
 ինչու, Ռուսաստանի իշխանությունները, XIX դ. սկզբին գործ-
 նականորեն ակտիվացրին իրենց արևելյան քաղաքականու-
 րյունը: Սյսպիսի պայմաններում 1801 թ. Ռուսաստանին միաց-
 վեց Արևելյան Վրաստանը, այդ թվում և Լոռի-Փամբակի, Դաջա-
 խի, ու Շամշադինի շրջանները: Արևելյան Վրաստանի միացու-
 մով ցարիզմի նվաճողական քաղաքականությունը չավարտ-
 վեց, ավելին, ամբողջ Անդրկովկասի երկրամասում Ռուսաստա-
 նի տիրապետության հաստատումը դարձավ անխուսափելի
 Արևելյան Վրաստանը ռազմավարական հենակետ ունենալու և
 դրանով պայմանավորված նոր վստահություն ձեռք բերելու
 առունով: Այդ են հավաստում Արևելյան Վրաստանի միացմանը
 հաջորդած իրադարձությունները: 1803թ. Ռուսաստանին միաց-

վեց Անգրեյիան, 1804 թ Իմերեթիան և Գուրիան, 1810թ.՝ Աբխազիան:

Այսպիսի պայմաններում էլ ավելի լարվեցին ու խորացան Ռուսաստանի քննամական հարաբերությունները Պարսկաստանի և Թուրքիայի հետ: Շուտով Ռուսաստանը միաժամանակ պատերազմի մեջ ներգրավվեց այդ պետությունների հետ: 1804–1813թթ. ռուս-պարսկական և 1804–1812 թթ. ռուս-թուրքական պատերազմների շնորհիվ ցարիզմի տիրապետության տակ անցան նաև Շորաքյալը, Գանձակի, Ղարաբաղի, Շիրվանի, Բաքվի, Դերբենդի, Ղուբայի և Թալիշի խանությունները:

1813 թ. հոկտեմբերի 12-ին Գյուլիստանում կնքված ռուս-պարսկական հաշտության պայմանագիրը չէր կարող դառնալ կողմերի համար կայուն խաղաղության երաշխիք: Այն զրկեց Պարսկաստանին Անդրկովկասում և Արևելյան Հայաստանում նախկին տիրապետությունից: Կորցրած տարածքները վերադարձնելու խնդիրը շարունակում էր մնալ այդ երկրի արտաքին քաղաքականության օրակարգում: Ինչ վերաբերում է Ռուսաստանին, ապա նրա կառավարությունը շահախնդիր ջանադրությանը ցանկանում էր տեղ դառնալ Արևելյան Հայաստանին՝ հուսալով, որ «կայսրության սահմանները կտարածի մինչև Կուր և Արազ»¹:

Ռուս-պարսկական օրեցօր սրվող հակասություններն ի վերջո հանգեցրին նոր պատերազմի: 1826 թ. ամռանը Պարսկաստանի հանկարծակի հարձակումով սկսվեց երկրորդ ռուս-պարսկական պատերազմը: Պատերազմի թելադրանքով Ռուսաստանի կառավարությունը գործնականորեն առաջնահերթություն դարձրեց Արևելյան Հայաստանը գրավելու՝ հեռանկարի իմաստով Մերձավոր և Միջին Արևելքում իր դիրքերն ամրապնդելու հարցը:

Պատերազմն ավարտվեց Ռուսաստանի հաղթանակով: 1828 թ. փետրվարի 10-ի Թուրքմենչայի պայմանագրով Ռուսաստանը նաև դե յուրե ամրագրեց իր հաղթանակը հակառակորդի նկատմամբ՝ կայսրությանը միացնելով Արևելյան Հա-

յաստանի մեծ մասը հանդիսացող երևանի և Նախիջևանի խանություններն ու Օրդուբադի օկրուգը և ավարտին հասցրեց սույն երկրամասին տիրելու տասնամյակներ առաջ սկսած գործընթացը: Այլ խոսքով՝ ռուսական կայսրության պետական սահմանագիծը հարավում հասցրեց մինչև Արաքս գետը:

Թուրքմենչայում ստորագրված հարաբար լավ պարսկա-հայրությանը թույլատրվեց զանգվածաբար գաղթել և մշտական բնակություն հաստատել ռուսական տիրապետության սահմաններում: Այս տեսակետից նշենք, որ, երբ Պետերբուրգում ստեղծվում էր Թուրքմենչայի պայմանագրի նախագիծը, նրանում հայկական խնդիրներին վերաբերող ոչ մի հոդված չամրագրվեց: Հայոց շահերին անրադարձ չեղավ նաև 1827 թ. հուլիսին Կարա-Ջիհադինում ընթացող ռուս-պարսկական բանակցությունների ժամանակ²: Երկու դեպքում էլ դրվել է Երևանի և Նախիջևանի խանությունները Ռուսաստանին միացնելու հարցը³: Ըստ Լ. Սեմյոնովի, պարսկահայերի գաղթին և հայոց խնդիրներին վերաբերող մյուս հարցերին պատկանող հոդվածները ձևակերպվել են 1827 թ. նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին ԴեՅ – Կարխանում վարվող բանակցությունների ընթացքում⁴:

Հատկանշական է, որ Պարսկաստանի տիրապետության տակ գտնվող հայերին գաղթեցնելու գաղափարը, առանձին հոդվածի տեսքով, պայմանագրի նախագծում ամրագրվել է Ռուսաստանի իշխանությունների վստահությունը վայելող հայ ազգային շարժման ակամավոր գործիչների համա ջանքերի շնորհիվ: Այս գործում մեծ ներդրում ունեցավ հայտնապես արքեպիսկոպոս Ներսես Աշտարակեցին (1822թ. վարում էր կարողիկոսական գործերը), որը հայ ժողովրդի ազատագրումը կապում էր Ռուսաստանի հետ: Այդ հարցով նա քանիցս դիմել էր Պասկևիչին, Կրասովսկուն, Դիբիչին, Գրիբոյեդովին և ուրիշներին:

² Տես Լ. Семенов. К вопросу значения Туркменчайского договора для истории Армении. – Историко-филологический журнал. 1959, N 4, с. 206.

³ Տես նույն տեղում:

⁴ Տես նույն տեղում:

¹ "Присоединение Восточной Армении к России". Сб. док., т. 1, Е., 1972, с. 124:

Դեռևս 1827 թ. անձամբ երևանից Թավրիզ՝ Եղիազար Լազարյանին ուղարկած նամակում Աշտարակեցին գրում էր. «Այժմ ես խնդրեցի ամենայն հայոց ազգի հավատարին պաշտպան Ալեքսանդր Սերգևիչ Գրիբոյեդովին չմոռանալ իմ խնդիրը նաև այդտեղ և այլ տեղերում եղած քրիստոնյա գերիններին ռուսաց հզոր իշխանության որոշի տակ ընդունելու»⁵:

Սույն խնդրի լուծմանը նույնմիտ ակտիվ մասնակցություն ունեցան նաև գնդապետ Ե.Լազարյանը, Ատրպատականի թեմական առաջնորդ Բարսեղ արքեպիսկոպոսը և խոյեցի Մարգար Եղիազարյանը: Եպատանը պարզ էր ու հասկանալի. պարսկահայերին տեղափոխելով Արևելյան Հայաստան՝ փրկել նրանց ազգային ինքնությունը կորցնելու ահազանացող վտանգից, սովորացնել հայերի թիվն արդեն էքնիկ դիմագիծը կորցրած Արևելյան Հայաստանում, ինչպես նաև նոր շունչ ու լիցք հաղորդել կիսամեռ վիճակում հայտնված «ոտնաչափ» հայրենիքի տնտեսական և հոգևոր վերածննդին, ինչը հայ ազգային գործիչների կարծիքով կարող էր հող նախապատրաստել հայոց պետականության վերականգնման համար:

Լեռզաղթի թույլտվություն ստանալու համար հայ գործիչների թափած ջանքերը ծառայեցին նպատակին: Կովկասի կառավարչապետ և Կովկասյան հատուկ կորպուսի հրամանատար գեներալ Խ. Պասկևիչը, որին վաղորոք հայտնի էր իր կառավարության տեսակետն այս հարցում, այն է՝ պարսկահայության ներգաղթը ծառայեցնել Ռուսաստանի ռազմաքաղաքական և գաղութատիրական նպատակներին (այս մասին ավելի հանգամանորեն կխոսենք իր տեղում), և Աշտարակեցուն պատասխան ամակուն շտապեց հաղորդել. «... միտքն ու դիտաւորութիւնն իմ կայսերական մեծության նոյն է »⁶: Մտքի և դիտավորության թելադրանքով էլ գաղթելու թույլտվություն ստանալու մասին առաջարկն ընդունվեց և պայմանագրի նախագծի մեջ ամրագրվեց որպես 15-րդ հոդված, ըստ որի Ռուսաստանի տիրապետության սահմաններում ապրել ցանկացող պարս-

կահայ «... բնակիչներին կտրվի, այսօրվանից հաշված, միանյա ժամանակամիջոց, որպեսզի նրանք իրենց ընտանիքներով հանդերձ, կարողանան դուրս կրել և վաճառել (իրենց) շարժական գույքը, առանց կառավարության կամ տեղական իշխանությունների կողմից հարուցված որևէ արգելքի հանդիպելու»⁷:

Ինչպես այս պատերազմն, այնպես էլ նրա եզրափակիչ ակորդ հանդիսացող Թուրքմենչայի պայմանագիրը վիթխարի ոգևորություն էր առաջացրել ողջ հայ ժողովրդի մեջ. աշխարհի բոլոր ծնգերում. և դա այն պատճառով, որ այդ շրջանից ի վեր Պարսկաստանի և Թուրքիայի թեթև ծնեքով երկփեղկված և նրանց դժոխային տիրապետության «քաղաք» պտուղները ճաշակած հայության հավաքական գոյության շարունակականության և ազգային ինքնության պահպանման համար հուսադրող նախադրյալներ էին ստեղծվել:

Այս իմաստով հայ ժողովրդի հավաքական մտքի արտահայտություն կարելի է համարել թեմական առաջնորդ արքեպիսկոպոս Ներսես Աշտարակեցու ամունով հնդկահայ գաղութի ամունից Հովսեփ Ամիրխանի նամակը, որում ասված է. «Մենք մեր սրբազան պարտքն ենք համարում հայտնել մեր հավերժ երախտագիտությունը համառուսաստանյան միապետին, մեր հին հայրենիքի մեծահոգի ազատարարին: Հայ ժողովուրդը երբեք չի դադարի առողջության և երկարակեցության ջերմ արդթքներով դիմել Աստծուն, մեր բարեգործ կայսրի՝ Մեծն Լիկոլայի համար, որը թագակիրներից առաջինը շնորհեց նրան խաղաղություն և ազատություն Արարատյան երկրում»⁸:

Լեռզաղթի թույլտվությունն ուրախության և բերկրանքի բուռն ոգևորություն էր առաջացրել առանձնապես պարսկահայության մեջ: Եվ դա հասկանալի է: Ռուսաստանի տիրապետության տակ նրանց սպասվում էր կյանքի քիչ թե շատ տանելի պայմաններ: Ինչպես Լեռն է գրում. «Ներգաղթելով ռուսահայաստան հայ ժողովուրդն ինքնաբերաբար, իր սեփական բնագրի թելադրությամբ միակերպ էր լուծում իր ֆիզիկական

⁵ Վ. Պարսամյան, *Շ. Հարությունյան*, Հայ ժողովրդի պատմություն, Ե., 1979, էջ 39:

⁶ Մատենադարան, Ե. Աշտարակեցու արխիվ, թթ. 166, վավ. 822:

⁷ Պայմանագրի անթողջական տեքստը տես՝ "Присоединение Восточной Армении к России", т. 2, с. 446-451.

⁸ Գ. Գալոյան, Նշվ. աշխ., էջ 175:

գոյության պահպանման առեղծվածը, ռուսաց տիրապետության տակ գոնե կանքի և գույքի երաշխավորություն էր»⁹: Յետևաբար, պարսկահայությանը, բնականաբար, միայն մի բան էր մտում, օգտվել ընծեռած շանսից՝ ռուսական կայսրության սահմաններում վերաբնակվելու վերաբերյալ թույլտվության իրավունքից:

Թուրքմենչայի պայմանագիրը շրջադարձային եղավ Ռուսաստանի արտաքին քաղաքականության մեջ. պատերազմի թատերաբեմից ծանրության կենտրոնը տեղափոխվեց նորաբնակ տարածքները յուրացնելու և կայսրության հարավային սահմանն ամրապնդելու համալիր ծրագիրը գործնականում իրականացնելու դաշտ: Այս համատեքստում առանցքային նշանակություն ուներ այդ տարածքների վերաբնակեցման հարցը, այն է, թե երկրամասում ամրապնդվելու համար ցարական իշխանություններն ինչ սկզբունքով էին առաջնորդվելու վերաբնակեցնել պարսկահայ գաղթականներին, թե կայսրությանն ավելի «բարեհույս և հավատարիմ» քրիստոնյա այլ էթնիկ տարրերով:

Պարսկահայերի գաղթը պատմագիտական վերլուծության ենթարկելուց առաջ, անհրաժեշտ ենք համարում փաստել, որ ցարական կառավարությունը ամենևին հավանաբար պարսկահայ գաղթականներին վերաբնակեցնելու նորագրավյալ տարածքներում: Այնինչ, իրողությունն այն է, որ Ռուսաստանի իշխանությունները մտադիր էին այդ խնդիրը լուծել կայսրության տարբեր նահանգներից ավելի քան 80 հազար կազակների այս երկրամաս տեղափոխելով:¹⁰ Սա եղել է ոչ թե մարտավարական, այլ ռազմավարական քայլ, որն, ինչպես ենթադրվում էր, կոյուրացներ Ռուսաստանի սեփական «ունեցվածքը» դարձած Արևելյան Հայաստանի գաղութացման գործընթացը և կամրացներ ու կամրապնդեր գաղութատիրոջ հզորությունը և քարեկեցությունը, իսկ դրսի աշխարհի հետ կապահովեր նրա հարավային սահմանի ամրությունը:

⁹ *Լեռ*, Հայոց պատմություն, նորագույն շրջան, մաս 2, Ե., 1927, էջ 15:

¹⁰ «Հայ ժողովրդի պատմություն», հ. V, Ե., 1974, էջ 171-172, *Լեռ*, Հայոց պատմություն, նորագույն շրջան, մաս 2, էջ 108-109:

Կնշանակի՝ Ռուսաստանը մտադիր էր նվաճված երկրամասի ծուլման գործընթացը սկսել տեղաբնիկ հայ բնակչության նկատմամբ ռուսների թվական գերակշռություն ստեղծելու միջոցով: Պետք է նշել, որ նոր գրավված տարածքների գաղութացման ճանապարհին տեղաբնիկների հետ «զլխացավանքից» ազատվելու այս քաղաքականությունը Ռուսաստանի իշխանությունների համար նոր չէր, որպիսի հարուստ փորձ արդեն նրանք կուտակել էին Կովկասը և Անդրկովկասը գաղութացնելու ժամանակ: Այս առնչությամբ լիովին իրականությանը համապատասխանում է պաշտոնական պատմագրության նշանավոր ներկայացուցիչ Կ. Բորոզդինի կատարյալ անկեղծ այն միտքը, թե. «... չի կարելի հաշտվել այն բանի հետ, որ ռուս մեծ ազգը մնա կովկասյան ազգերի բարտալակ և անընդհատ զբաղվի նրանց խաղաղեցման հարցերով, այլ անհրաժեշտ է երկրամասը վերջնականապես ամրացնել ռուսական բնակչությամբ, որը կդառնա վերջինիս թքնիկական տարբեր խմբերը միավորող ամենալավ ցեմենտը»¹¹:

Վերադառնալով Հայկական մարզը կազակներով վերաբնակեցնելու Ռուսաստանի հետևողական քաղաքականությանը, փաստենք, որ այն միս ու արդուն շղարձավ և ի սկզբանե դատապարտված էր ձախողման: Քանն այն է, որ շուտով պարզ դարձավ, որ Ռուսաստանի տարբեր նահանգներից կազակների զանգվածային տեղահանությունը կպահանջի ինչպես կազակերպական երկարատև ու մանրակրկիտ նախապատրաստություններ, այնպես էլ դրամական ու նյութական խոշոր միջոցներ, որպիսիք պետությունը չուներ: ՌՄՍԽ այդ ծրագիրը թողնվում է ապագային: Փոխարենը նրա կառավարությունը իրատեսական է համարում Հայկական մարզի տարածքը բնակեցնել պարսկահայ գաղթականներով: Սա ինքնանպատակ չէր. Ռուսաստանի կառավարությունը նորանված տարածքներում ամրապնդվելու և կայսրությանը՝ դեպի արևելք տարածվելու հեռանկարը կապում էր հայերի հետ: Այս առնչությամբ ուշագրավ դիտարկում է անում և Սարգիսյանյանը նշելով, որ «Դեպի

¹¹ К. Бороздин. Переселения в Закавказье. — Русский вестник, СПб., 1891, с. 159.

Անդրկովկաս առաջ խաղացող ցարիզմը, սահմանանները երկրներում աջակիցներ ու համակիրներ հավաքագրելու իր տրադիցիոն քաղաքականության համապատասխան հայ ժողովրդին դիտում էր այն ուժերից մեկը, որ կարող էր որոշակի նպաստ բերել նվաճողական իր ծրագրերին»¹²։ Անշուշտ, Լիկոյայ Ա կայսրը 1828 թ. Լեռսես Աշտարակեցուն ուղղված նամակում մտան խնդիր էր հետապնդում. «Քանի որուսական հովանու ներքո ապահով ապաստան գտած ձեր ժողովրդի հավատարմությունը կմնա անխախտ, մենք պարտք կհամարենք միշտ հոգ տանել նրա երջանկության և հանգստության մասին»¹³։

Այս քաղաքականության համատեքստում հասկանալի է դառնում զեներալ Պասկևիչի որուսական բանակի զխնավոր շտաբի պետ Դիրիչին ուղարկած զեկուցագրի այն մասը, որում հետևյալ կերպ է բացատրվում նորագրավյալ տարածքները հայ գաղթականներով վերաբնակեցնելու անհրաժեշտությունը. «Մեր սահմանի ամայի հողերի բնակեցումը հնազանդ, աշխատասեր և հավատով մեզ նվիրված ժողովրդով կարող է մեծ օգուտ բերել»¹⁴։ Ասվածը լիովին համապատասխանում է իրականությանը։ Քանն այն է, որ Չայաստանի և հայ ժողովրդի հարցը Ռուսաստանի արևելյան քաղաքականության մեջ ածանցյալ նշանակություն ունեւր, քանզի Ռուսաստանին մտահոգում էր մի կողմից կայունացնել ներքին կացությունը Չայակական մարզում, իսկ մյուս կողմից, որն ամենազխնավորն է հայությանը ծառայեցնել իր ծավալապաշտական ծրագրերի իրականացմանը տարածաշրջանում։ Ռուսաստանի շահախնդրության դրոշմապատճառները բազմակողմ էին։

Նախ հայտնի իրողություն է, որ պայթուցավտանգ, առավել ևս պատերազմական իրադրության ժամանակ սահմանանները բնակչությունը, որը թշնամական տրամադրություն ունեցող հարևանի հետ ընդհանուր էքոնոմիկանաբանական արմատ-

¹² Ն. Արթուրյան, նշվ. աշխ., էջ 70։

¹³ Լեռ, Ստեփանոս Լազարյանց, առաջին հատոր, Թիֆլիս, 1902, էջ 11։

¹⁴ «Չայ ժողովրդի պատմություն», հ. V, էջ 172։

ներ ունի, մշտապես կատարում է հինգերորդ շարասյան դերը։ Արևելյան Չայաստանում մեծամասնություն կազմող մուսուլմանական բնակչությունը, այդ իմաստով, ունեւր հինգերորդ շարասյան գործառույթ։ Այս հանգամանքը որուսական իշխանություններին մեծ անհանգստություն էր պատճառում։ Նրանք վախեցնում էին, որ Պարսկաստանում հակաուսական տրամադրությունների ակտիվացումը կարող էր համակել նաև նորագրավյալ տարածքների մահմեդական բնակչությանը։ Կերդինիս հանեմատությանը հայերի թվական գերակշռության ստեղծումով Պարսկաստանը կզրկվեւր հինգերորդ շարասյան օգնությունից, ինչն էլ բավական էր, որպեսզի նրան ետ պահեր Ռուսաստանի վրա հարձակվելուց։ Կերդ ասվածին ավելացնենք ևս մեկը։

Ռուսաստանը բազմաէթնիկ Իրանական Ադրբեյջանը (Ատրպատական) և Պարսկահայքը քրիստոնյա բնակչությունից մաքրելու նպատակ էր հետապնդում։

Ցարական իշխանությունները համոզված էին, որ խոշոր հաշվով ժողովրդագրական փոփոխության հետևանքով Արաքս գետի աջ ափին հարող Պարսկաստանի սահմանանները բնակչությունը կնոսրանա, այդ երկիրը կզրկվի իր բնակչության ամենաաշխատասեր և ծեռներեց մասից, խոպանի կվերածվի հագաբավոր հեկտարներով մշակելի հողատարածությունների, անկում կապրի արհեստ ու առևտուրը։ Եվ ամենկին չպետք է զարմանալ, որ Ռուսաստանի կառավարողները նման հույսեր էին ակնկալում։ Պարսկահայությունը նշանակալից դեր ունեւր այդ երկրի տնտեսության բոլոր բնագավառներում, մասնավորապես արհեստագործության և առևտրի մեջ։ Այս առումով հետաքրքրություն է ներկայացնում որուս պատմաբան – վիճակագիր Ս. Գլինկայի այն վկայությունը, ըստ որի յուրաքանչյուր տարի պարսկահայերը միայն արհեստով և առևտրով պետությանը տալիս էին 1,6 մլն. ռուբլու եկամուտ¹⁵։ Պարսկաստանի ներքին կյանքին բաջածանոթ Ա. Գրիբոյեդովը անդրադառնալով այդ հարցին նշում է, որ հայերի արտագաղթը, ընդհանուր առմամբ, արժաթով հաշված, Պարսկաստանին 32 մլն. ռուբլու

¹⁵ Տեւս Ս. Глинка. Описание переселения армян аддербиджанских в пределы России. М., 1831, с. 94.

վնաս է պատճառում՝ կապված այդ երկրում նրանց ստեղծած նյութական արժեքների հետ»¹⁶:

Խոսելով Պարսկաստանի վրա արտագաղթի հնարավոր հետևանքների մասին, Խարկ է ճշել, որ ամայաճում էր նաև Իրանական Ադրբեջանը: Այս առումով բերև, համընկնում էին Կովկասյան Ադրբեջանի և Իրանական Ադրբեջանի շահերը: Չարքը մեծապես կարևորվում էր Պարսկաստանի ազգային անվտանգության տեսակետից: Բանն այն է, որ զանգվածաբար դատարկվելը քրիստոնյա, հիմնականում հայ բնակչությունից, կտրուկ փոխում էր երկրամասի էթնիկ նկարագիրը հօգուտ ադրբեջանական տարրի, որը մշտապես ընդգծված դիրքորոշում ուներ դեպի Կովկասյան Ադրբեջանը:

Այսպիսով, հանրագումարի բերելով վերը նշված փաստերը, կարելի է արձանագրել, որ Արևելյան Չայաստանը որոշիչ դեր ուներ ցարական Ռուսաստանի ռազմավարական ու մարտավարական խնդիրներում և դարձել էր առճակատման առարկա տարածաշրջանում աշխարհաքաղաքական շահեր հետապնդող տերությունների հարաբերություններում: Այս համատեքստում միանգամայն հասկանալի է դառնում XIX դ. առաջին քառորդին Ռուսաստանի կատավարող շրջանակների հայաբնույթ քայլերի ակտիվացումը, որն ավելի զգալի դարձավ 1826-1828 թթ. պատերազմի ընթացքում և հատկապես Թուրք-մենչայի պայմանագրից հետո:

Մյուս կողմից, անշուշտ, հետաքրքիր է իմանալ, թե ինչպիսի՞ն էր ցարական կառավարության մարտավարական այս մեկնակետի անտեսանելի ուղղվածությունը հայ ժողովրդի ազգային ու ռազմավարական խնդիրներին և համապատասխանում էր արդյո՞ք նրա երեք հատվածներից գոնե երկուսի՞ պարսկահայերի և ռուսահայերի զուգահեռ գոյակցությանը: Իրականությունն այն է, որ ներգաղթի հետևանքով պարսկահայությունը «ցամաքելով» սովարացրեց արևելահայության

¹⁶ «Եկարագիր գաղթականության Չայոց ի Պարսկաստանն ի Ռուսաստան», 1832, ի Մոսկով, էջ 67, *Վ. Խորաբեկյան*, Չայաստանի բնակչության վերարտադրությունը և տեղաշարժերը XIX-XX դարերում XXI դարի շեմին, Ե., 2001, էջ 26:

բվաքանակը: Թուրքմենչայի պայմանագիրը ստորագրելուց հետո ցարիզմը ձեռնամուխ եղավ հայ ժողովրդի համար ճակատագրական նշանակություն ունեցող պարսկահայերի ներգաղթի կազմակերպմանը: Այդ գործի կազմակերպման համար գեներալ Պասկևիչի հանձնարարությամբ ստեղծվեց հանձնախումբ գնդապետ Եղիազար Լազարյանի՝¹⁷ ղեկավարությամբ, մի մարդ, որը «... ազգասիրությամբ տոգորված, Ներսեսի նման (Ներսես Աշտարակեցու – ՉՀ.) հափշտակված էր հայրենյաց ազատության գաղափարներով»¹⁸:

Բազմաթիվ փաստաթղթեր հավաստում են, որ այդ նշանակումը մեծապես ոգևորել էր Ե. Լազարյանին: Ի. Պասկևիչին հասցեագրած զեկույցում (24 դեկտեմբերի 1829 թ.) նա գրում էր, թե լինելով ռուսական սպա և հայ, իր համար «բացառիկ երջանկություն է» տրված հանձնարարության կատարումը¹⁹: Նրա օգնականներն էին Մովսես Արղությանը, Իվան Մելիքյանը, Իսահակ Ղամայանը, Դավիթ և Ալեքսանդր Դորդախանները, ինչպես նաև մի շարք ռուս զինվորական ու քաղաքացիական պաշտոնյաներ²⁰:

Չանձնաժողովը գործում էր 19 կետից բաղկացած հանձնարարականով: Ըստ այդմ գործում էր կամավորական սկզբունքը: Գաղթելու թույլտվություն, առաջնահերթ, տրվում էր այն շրջաններին, որոնք առաջինն էին դատարկվելու ռուսական գործերից: Բնակչության տարահանումը և վերաբնակե-

¹⁷ Եղիազար Լազարյանը Լազարյան նշանավոր տոհմի ներկայացուցիչ էր: 28 տարեկան հասակում դարձել էր գնդապետ: Ծառայում էր կայսերական թիկնապահ գնդում: 1827 թ. ապրիլին Պասկևիչը Դիբիջի միջնորդությամբ դիմեց կայսրին գրելու՝ «Կարևորություն ունենալով այնպիսի աստիճանավորի, որ ամենայնիվ հավատարիմ լինի տերությանը և միանգամայն մեծաթուզ և պատկառելի Չայոց աչքում, խնդրում եմ, որ գնդապետ Լազարյանը, որ այժմ գտնվում է կոմս Կամարովսկու հրամանատարության ներքո, ուղարկվի իմ մոտ...»: *Վ. Խորաբեկյան*, Ամենայն Չայոց կաթողիկոսությունը և Կովկասի հայք 19-րդ դարում, հ. 1, 1894, էջ 212:

¹⁸ *Ս. Երիցյան*, նշվ. աշխ., էջ 310:

¹⁹ Տես *Ս. Գալոյան*, նշվ. աշխ., էջ 188-189:

²⁰ Տես *Ս. Երիցյան*, նշվ. աշխ., էջ 325:

ցումն առանց այլևայլ դժվարությունների կազմակերպելու համար պարտադիր էր համարվում նրանց խմբերի բաժանելը՝ յուրաքանչյուրը կազմված 150-300 ընտանիքից²¹:

Նախատեսվում էր նորաբնակներին տեղավորել հիմնականում նախկին Երևանի և Նախիջևանի խանությունների տարածքներում: Ռուսաստանի սահմանն անցած հայերի ընդունման և տեղավորման խնդիրների լուծման հետ կապված, փետրվարի 28-ին Պասկևիչի հրամանով Երևանի մարզային ժամանակավոր վարչությանը կից ստեղծվում է ներգաղթի հատուկ կոմիտե:

Պարսկական սահմանը հաստելուց հետո նորաբնակները ենթակա էին սույն կոմիտեի իրավասությանը: Գեներալ Պասկևիչի՝ փետրվարի 29-ի հրամանագրով սահմանվում են կոմիտեի հիմնական գործառույթները:

Չանձնաժողովին հրահանված էր՝ որքան հնարավոր է, գաղթականներին բնակեցնել ամբողջ գյուղերով, առանց միմյանցից անջատելու, իսկ եթե դա անկարելի լինի, բնակեցնել մոտակա գյուղերում լեռնաբնակներին լեռնային տեղերում, իսկ դաշտավայրերինը՝ դաշտավայրերում, բացառապես արքունական ազատ հողերի վրա,²² որպիսիք քիչ չէին: Բավական է նշել, որ Ռուսաստանին անցնելու նախօրյակին միայն Երևանի խանությունում արքունական հողերը կազմում էին խանության ամբողջ հողերի 70%-ը: Մյուս կողմից էլ, դա արվում էր, որպեսզի նրանք չընկնեին կալվածատերից կախյալ վիճակի մեջ:

Նախատեսվում էր յուրաքանչյուր վերաբնակչին տալ 10 ուրլի արծաթով վարկ, առանց հավելավճարի, 10 տարվա մարման ժամկետով²³:

Վերը նշված հանձնարարական – հրահանգները, ըստ էության տարածաշրջանում Ռուսաստանի հիմնովին հաստատ-

վելու ռազմավարության բաղկացուցիչ մասն էր, որով ցարական կառավարությունը հետանուտ էր լուծելու հետևյալ խնդիրները: Ուռչին, ներգաղթածների արագորեն ինտեգրել նոր պայմաններին: Երկրորդ, առանց մեծ զժվարությունների լուծել նրանց զբաղվածության հարցը: Հինգերորդ, վերահսկել պետության հանդեպ գաղթականների ծառայությունների և պարտավորությունների կատարմանը: Վեցերորդ, համազյուղացիների կողեկտիվ ուժերով, պետական հողատարածությունների վրա վերականգնացնել անայի գյուղերը կամ նորերը՝ հիմնել:

Վերը ամբողջ շարադրանքից էլ հետևում է պարսկական իշխանությունների անհանդուրժողականությունը արտագաղթի նկատմամբ: Իշխանությունները և նրանց գործակալները դիմում էին զանազան խարդավանքների և այլևայլ միջոցների՝ խափանելու հայերի արտագաղթը: Թուրքմենչայի պայմանագրի՝ գաղթին վերաբերող հոդվածներն աղավաղելուց և ազգային-պետական նեղ շահերին համահունչ մեկնաբանություններ, ինչպես նաև գաղթականության ապագայի մասին սահմնվեցուցիչ և զուսնազարդված կամխատեսումներ անելուց զատ, պետական քարոզամեթոդներ և նրա սայլաքարչ գործակալները, վերից վար, միաժամանակ ստեղծում էին բազում ղոժվարություններ՝ կապված գաղթել ցանկացողների սեփական ունեցվածքի վաճառքի, փաստաթղթերի ձևակերպման, հերթազրման և տարատեսակ այլ խնդիրների հետ:

Պետության կողմից ուղղորդվող այս քաղաքականությունը խրախուսում և պաշտպանում էին Թեհրանի դաշնակից անգլիացիները²⁴:

Այսպես, ներգաղթի կազմակերպման գլխավոր պատասխանատու Ե. Լազարյանը 1828 թ. ապրիլի 2-ին Ուրմիայից Պասկևիչին ուղարկած զեկուցագրում արտահայտել է այն

²¹ Присоединение Восточной Армении к России, т. 2, с. 464-465; С. Глинка, նշվ. աշխ., էջ 103:

²² Ա. Երիցյան, նշվ. աշխ., էջ 325:

²³ Խ. Ավդալբեգյան, Հողային հարցը Արևելյան Հայաստանում (1801–1917թթ.), էջ 36-37, Ա. Ալեքսանյան, Արևելյան Հայաստանի նոր շրջանի ագրարային հարաբերությունների պատմագրությունը, Ե., 1997, էջ 28:

²⁴ С. Глинка, նշվ. աշխ., էջ 51-54:

միտքը որ. «Ոչ միայն պարսիկները, այլև անգլիական միսիան բոլոր միջոցները գործադրում են, որպեսզի գաղթը դադարեցնեն»²⁵:

Այս բաղաբաղանդային կողքին ռուսական զինվորական և քաղաքացիական իշխանությունները շարունակում էին հակաքարոզչության միջոցով համոզել գաղթելու ցանկություն ունեցողներին՝ Արևելյան Չայաստան ներգաղթելու: Պարսկահայության համար ճակատագրական նշանակության այդ օրերին առանձնակի դեր են կատարում Ե. Լազարյանը, Ստ. Ենոքյան եպիսկոպոսը, Լիկոզայոս վարդապետը և այլոք, որոնք գյուղից գյուղ շրջելով, ամենուրեք քողազրկում էին կեղծ քարոզիչներին իրականությունը աղավաղելու համար, միաժամանակ հայրենակիցներին համոզում և հորդորում էին գաղթել դեպի ռուսահայաստան²⁶, քանի որ, ինչպես բացատրում էր Ե. Լազարյանը, ռուսական գործերի դուրս գալուց հետո ավելի է դժվարանալու արտագաղթի կազմակերպումը²⁷: Ինչ վերաբերում է գաղթի հակառակորդների վնասակար գործունեությանը, ապա ճշմարտությունը պահանջում է նշել, որ նրանք կարողացան ինչ որ չափով ազդել պարսկահայերի որոշ հատվածի վրա և նրանց ետ կանգնեցնել գաղթի ճանապարհից, բայց անկարող եղան գաղթականության ալիքի հանդեպ: Վավերագրերի ուսումնասիրությունը, ինչպես ցույց կտրվի իր տեղում, վկայում է, որ Արաքսի ռուսական ափն անցնել ցանկացողների բանակն այնքան մեծ էր, որ նրանց մի ստվար մասը, թքած ունենալով շարժական և անշարժ գույքի վրա, տեղում էր, օր առօր հատել մայր գետը: Պարսկահայերի արտագաղթի կազմակերպիչ Ե. Լազարյանը գրել է. «... հայերը զանգվածաբար թողնելով իրենց տները, ցանած հողերը, այգիները, պատրաստակամություն էին հայտնում արտագաղթել Ռուսաստան»²⁸: Գաղթականների առաջին բա-

²⁵ Վ. Պարսամյան, *Ե. Չարությունյան*, նշվ. աշխ., էջ 39:

²⁶ Ա. Երիցյան, նշվ. աշխ., էջ 327:

²⁷ «Акты, относящиеся до заключения мира с Персией», СПб., 1828, с. 620.

²⁸ Собрание актов, относящихся к обозрению истории армянского народа», т. 2. М., 1838, с. 166-182.

րականը ճանապարհի ընկավ դեպի ռուսահայաստան 1828 թ. վերջերին: Գաղթի «փշածածկ» ճանապարհի ակոսը բացեցին բախրիզահայերը: Շուտով այդ արահներով պիտի անցներ Մա-կուի, Սալմաստի, Խոյի, Ուրմիայի, Մարաղայի և այլ գավառների բազմահազար հայությունը:

Ականատեսներից մեկը, անդրադառնալով այդ անցքերին, բազմահազար գաղթականների տեղաշարժը համեմատել է ալեկոծված ծովի հետ. «Անհամար բազմությունք գաղթական ժողովրդեան ի մնանություն պեեսց ծովու աղմկելոյ՝ հոսէին ի սահմանս Ռուսաստանի»²⁹:

Գաղթը հիմնականում ավարտվեց երեք ամսում, պայմանագրով նախատեսված մեկ տարվա փոխարեն: 1828 թ. մարտ-ապրիլ ամիսներին Չայկական մարզի³⁰ տարածքը գլխավորապես Լախիջևանը և Արարատյան դաշտը լցված էին անհաշիվ և անհամար, սոված ու անօղևան գաղթականներով: Կյանքը ապացուցեց, որ ռուսական իշխանությունները և ներգաղթի հատուկ կոմիտեն պատրաստ չէին դրան: Գաղթականությունը հայտնվել էր ծանր վիճակի մեջ: Դրա պատճառն այն էր, որ իրավասու մարմիններն ու կազմակերպությունները նախապես միջոցներ չէին ձեռնարկել սննդի, բնակարանային, հողի, սերմացուի և այլ առաքնային նշանակության հարցերը լուծելու ուղղությամբ: Այս կապակցությամբ ուշագրավ տեղեկություն է հայտնում Ա. Երիցյանը. «Անցնելով Արաքսը՝ գաղթականները

²⁹ Վ. Պարսամյան, *Ե. Չարությունյան*, նշվ. աշխ., էջ 39:

³⁰ 1828 թ. մարտի 21-ին կայսր Լիկոզայ Ա-ի հրամանագրով ստեղծվեց Չայկական մարզը կազմում ունենալով Երևանի, Լախիջևանի խանությունները և Օրդուբադի օկրուգը: Չայկական մարզն իր հերթին բաժանվում էր Երևանի ու Լախիջևանի գավառներ և Օրդուբադի օկրուգի: Տես *И. Шонен*, նշվ. աշխ., էջ 61: 1833 թ. Երևանի գավառը բաժանվում է չորս օկրուգների՝ Երևանի, Շարուրի, Սուրճալուի և Սարդարապատի: Լախիջևանի և Օրդուբադի օկրուգները պահպանվում են: Երևանի օկրուգը կազմված էր Գյուլչայի, Դարաչիչայի և Դրխուլաղի մահալներից: Տես «Собрание актов, относящихся к обозрению истории армянского народа», т. 1. М., 1833, с. 278; *В. Иваницо*. Гражданское управление Закавказьем (исторический очерк). Тифлис, 1901, с. 241, «*Մայ ժողովրդի պատմություն*», հ. V, էջ 207:

չսպասված թշվառության հանդիպեցին: Ռուսաց սահմանում նրանց համար ոչինչ պատրաստություն տեսնված չէր: Նախիջևանի ամալի դաշտերում նրանք մնացին բաց օդի տակ՝ առանց քնակարանի և առանց հացի»³¹: Ստեղծված իրավիճակը արդյունք էր ներգաղթի կազմակերպման համար հատկացված չնչին գումարների:

Պետությունը այդ նպատակի համար գնդապետ Լազարյանին տրամադրել էր 25 հազ. ռուբլի (արծաթ), իսկ Թիֆլիսի հայ վաճառականությունը 600 ռուբլի գումար՝ չունևոր և կարիքավոր ընտանիքներին օգնելու համար³²: Այստեղից էլ կանխավ պարզ է դառնում, թե ինչու գաղթի կազմակերպման կոմիտեն անդրադառնալով գաղթականների նոր խմբաքանակներ ընդունելու նպատակահարմարությանը, գտավ, որ դժվար է որևէ ելք գտնել փրկելու գաղթականությանը զխտվին ոչնչացումից, ապրիլի 14-ին նամակով դիմեց Ե. Լազարյանին, նշելով, որ հաց չլինելու պատճառով ոչինչ օգնություն չի կարող ցույց տալ թշվառներին և, որ նրանք ռուսաց սահմաններում կարող են տված մահ լինել, հետևաբար խնդրում է. «... բոլոր նրանց, ովքեր չունեն սեփական միջոցներ պարեն հայթայթելու համար, թողնել տեղում»³³: Կոմիտեն նույն խնդրանքով դիմում է նաև Կովկասյան ռուսական բանակի գլխավոր իրամամատարությանը³⁴:

Այս իրավիճակում, թվում է, թե իրավասու մարմիններն ու անձինք պետք է որ խորամուկո լինեին իրավիճակի պատճառների բացահայտմանը և ուղիներ որոնելիս ստեղծված վիճակից դուրս գալու համար, այնինչ ճիշտ հակառակն արեցին ծանրացան հետևանքների վրա և սկսեցին մեղավորներ փնտրել ու հանրիավի մեղադրել «հանցավոր» գաղթականությանը: Պարսկահայերի բուռն և զանգվածային ներգաղթը նրա «փրկիչ-ներին» կասկածներ էր ներշնչում, իրեց պատմական ծայրնիքում անվտանգ և մարդավայել ապրելու նրանց անհագ ցանկության և ազնիվ մղումների նկատմամբ:

³¹ Ա. Երիցյան, նշվ. աշխ., էջ 333:

³² Տե՛ս նույն տեղում, էջ 310:

³³ Նույն տեղում, էջ 333:

³⁴ Տե՛ս նույն տեղում:

Այս առնչությամբ նշենք, որ ստեղծված դժվարությունները հիմնականում սոցիալական պատճառներով էին պայմանավորված, և հազիվ թե կարելի է պնդել, որ «գաղթի դեմ պատերազմ» սկսելով այդ լարվածությունը կարող էր նախաճառել նվազել, որովհետև սոցիալական խնդիրներն օրակարգային էին ոչ միայն Չայաստանի, այլև որջ կայսրության համար:

Մինչդեռ Պասկևիչը անտեսում է այդ իրողությունը և սոցիալական ողորմելի վիճակի ամբողջ մեղքը հանրիավի բարդում է ներգաղթած հայերի վրա:

Նման դատողություն անող բարձրաստիճան գիմվորականը այն կարծիքին էր, թե իբր պարսկահայերը Ռուսաստան են գաղթել՝ շլացած ռուսական ոսկուց³⁵: Անմվազն գարմանք է պատճառում, որ այս ցինիկ մտքերը արտասանում էր մի մարդ, որը Ռուսաստանի նորագծված սահմանը հայերով ամրացնելու անձնաշահախնդիր ջատագովներից էր, իսկ հիմա արդեն տեսնելու չէր տալիս անգամ մահմեդականների պարբերական ներթափանցելը ռուսահայաստան և նրանց տարածումն ու հաստատվելը Արաքս գետի միջին հոսանքի ծախս ավիում և այլուր:

Զբաղեցնելով նման իրավիճակից դուրս գալու սույն քայլի հարկադրական անհրաժեշտությունը՝ հազիվ թե կարելի լինի բացառել նրա հեռահար նպատակները, որոնք կարող էին ուղղված լինել, ինչպես ներգաղթը վերջնականապես արգելելուն, այնպես էլ տեղաբնիկների և նորեկների միջև թշնամություն սերմանելուն: Բնական է, որ հարավում իր սահմաններն ամբողջացնելու և ամրապնդելուց հետո ռուսական իշխանությունների գերխնդիրը պետք է լիներ էրնիկ մեկ խմբի գերակայությունը թույլ չտալը, որը հեռանկարում իր մեջ մոնոէթնիկ բնակչություն դառնալու վտանգ էր պարունակում:

Թե որքանով էր հիմնավոր նման վտանգը, դժվար է պնդել կամ ժխտել: Սակայն մի բան ակնհայտ է, որ շարունակվում էր պարսկահայերի ներգաղթը, իսկ մյուս կողմից էլ օրավուր աճում էր գաղթել ցանկացողների թիվը: Ստացվում է, որ անկախ ստեղծված իրավիճակից, գաղթականություն տեղահանման և

³⁵ В.Потто. Кавказская война, в отдельных эпизодах, легендах и биографиях, т. 1, вып. 3, т., 1885, с. 21.

նրանց վերաբնակեցման խնդիրը մնում էր օրակարգում: Տեղին է նշել, որ Ռուսաստանի կառավարող շրջանների երախտամոռությունը անլուր բողոք էր առաջացրել հայ ազգային գործիչների մոտ:

Վերը նշված կարծիքի հետ համաձայն չէր նաև գեղապետ Ե. Լազարյանը: Նրան մտահոգել էր գաղթվածների մոտ ստեղծված իրավիճակը և գաղթել ցանկացողների պատած ընդհանուր տրամադրությունը, երբ պատրաստվում էր գործիւրքյան մեջ դրվել գեներալ Պասկևիչի անգիտությունը դադարեցնել ներգաղթը, գտնելով որ քաղաքականապես, տնտեսապես ու բարոյապես խելամիտ չէ այդ քայլը և բնավ չի բխում Ռուսաստանի աշխարհաքաղաքական շահերի անհրաժեշտությունից:

Հաղորդելով այս մասին Պասկևիչին, Ե. Լազարյանը արդարացի չի համարում գաղթականության կարիքների համար ծախսված ֆինանսական գումարները և օգտագործված նյութական միջոցները դարձնել շահարկման առարկա և նսեմացնել աշխատասեր ու արարող մի ողջ ժողովրդի: Ուստի, շարունակում է հայազգի գեղապետը, դրանք աննպաստակ և կորցված շռայլումներ չեն, որովհետև. «... դուք լցնելով ձեր ձեռք բերած երկրները մի վաճառաշահ և աշխատասեր ժողովրդով, տերության համար հարստության մի մեծ աղբյուր բաց արիք, որ ինչքան էլ մեծ ծախս արած լինի կառավարությունը ներգաղթողների վրա, բոլորը, միշտ էլ հավելյալով ետ կվերադարձնեն, քանի որ Ռեյմիայի և Սալմաստի հայերը հայտնի են իրենց անդադրում աշխատասիրությամբ»³⁶:

Ինչպես արդեն նշել ենք, ռուսական իշխանությունների հարուցած արհեստական արգելքներն ի գորու չեղան, թեև ուզ ժամանակավոր, կանգնեցնելու ավիվող զանգվածային ներգաղթը: Կամերալ վիճակագրության տվյալներով 1828-1830 թթ. Պարսկաստանի տարբեր շրջաններից Արևելյան Հայաստան ներգաղթողների ընդհանուր թիվը տատանվում էր 45-ից 50 հազարի սահմաններում (8249 ընտանիք, որից 100 ընտանիքը ասորիներ էին)³⁷: Նույն կարգի տվյալներ է պարունակում մի

ուրիշ պաշտոնական փաստաթուղթ՝ գեղապետ Լազարյանի գեկուցագիրը գեներալ Պասկևիչին: Նա հայտնում է, որ իրեն հաջողվել է կազմակերպել ավելի քան 8 հազար (8249) հայ ընտանիքների ներգաղթը ռուսական տարածքներ³⁸:

Բազմաթիվ սկզբնաղբյուրների տվյալներով ներգաղթածներից ավելի քան 35,5 հազար մարդ (6946 ընտանիք) վերաբնակվել են Հայկական մարզում (Երևանի պրովինցիայում) 23568 մարդ - 4559 ընտանիք, Նախիջևանի պրովինցիայում 10652 մարդ - 2137 ընտանիք և Օրդուբադի օկրուգում 1340 մարդ - 250 ընտանիք)³⁹, իսկ մնացածները Դարաբադում, Զանգեզուրում և այլ վայրերում⁴⁰: Երևանի պրովինցիայում կենտրոնացած գաղթականների ճնշող մեծամասնությունը վերաբնակեցվում է նրա կազմի մեջ մտնող Դրիսուլադի և Դարաչիչակի մահալներում: Սույն մահալներում 1828-1830 թթ. ընթացքում վերաբնակություն են հաստատել 4578 պարսկահայեր (791 ընտանիք), որից 3535 մարդ (575 ընտանիք) Դարաչիչակի մահալում, իսկ 1043 մարդ (216 ընտանիք) Դրիսուլադի մահալում⁴¹: Գաղթականության վերաբնակեցրին հիմնականում արքունական իողդերի վրա, ամմարդարբակ և լքյայ բնակավայրերում: Դարաչիչակի մահալում, ըստ բնակավայրերի, գաղթականները տեղակայվեցին հետևյալ կերպ: Նախ՝ պարսկական տիրապետության վերջին շրջանում այս մահալում հայ բնակչության թիվը մեծ չափերով նվազել էր: Բավական է նշել, որ ներգաղթի նախորդակին մահալի ընդհանուր բնակչության (1852 մարդ) մեջ հայերի (552 մարդ) տեսակարար կշիռը կազմում էր մոտ 30%-ը:

³⁶ Գ. Գալդյան, նշվ. աշխ., էջ 189:

³⁷ ՀԱԱ, ֆ. 90, ց. 1, գ. 48, ք. 398, ֆ. 94, ց. 1, գ. 435, ք. 85-86, *И. Шопен*, նշվ. աշխ., էջ 640-641, *Ա. Երիցյան*, նշվ. աշխ., էջ 383:

³⁸ Տե՛ս С. Глинка, նշվ. աշխ., էջ 103; *И. Газарян*, Переселение Армян из Персии в Армянскую область в 1828, *И. Шопен*, նշվ. աշխ., էջ 545-642, «Լրաբեր հասարակական գիտությունների», 1957, թիվ 7, էջ 64-65, «Акты...», т. 11, с. 276, 584-585, *Ա. Երիցյան*, նշվ. աշխ., էջ 383:

⁴¹ *И. Шопен*, նշվ. աշխ., էջ 546, 598, ՀԱԱ, ֆ. 90, ց. 1, գ. 63, ք. 1-360:

³⁶ *В. Потто*, նշվ. աշխ., էջ 21, *Ա. Մարուխանյան*, նշվ. աշխ., էջ 80:

³⁷ *И. Шопен*, նշվ. աշխ., էջ 545-642, *Ա. Երիցյան*, նշվ. աշխ., էջ 383:

Մահալի 20 բնակավայրերից հայեր կային միայն 5-ում. Յայջիում 4 մարդ (1 ծուխ), Բջնիում 131 (69 ծուխ), Ծաղկունքում 102 (56 ծուխ), Արգաքանում 173 (92 ծուխ) և Գոմաձորում 142 (20 ծուխ): Պարսկահայ վերաբնակիչները հիմնադրեցին կամ վերաշինեցին 11 գյուղ: Այսպես, 242 շունչ (41 ծուխ) հաստատվեց Քախսի գյուղում, Արփարայում՝ 174-ը (34 ծուխ), Մաքրավանքում՝ 51-ը (8 ծուխ), Ներքին Ախտայում՝ 308-ը (53 ծուխ), Վերին Ախտայում՝ 307-ը (49 ծուխ), Կարնի-գյուղում՝ 239-ը (42 ծուխ), Ոնդամալում՝ 567-ը (99 ծուխ), Բաքաքչիում՝ 117-ը (21 ծուխ), Դոմաշենում՝ 391-ը (60 ծուխ), Շահիդզում՝ 330-ը (49 ծուխ), Օրդաբլուում՝ 203-ը (31 ծուխ), իսկ 606 շունչ էլ (88 ծուխ) տեղավորվեցին բնակյալ Ալափարս (83 մարդ - 14 ծուխ), Յայջի (276 մարդ - 41 ծուխ) և Ծաղկունք (117 մարդ - 33 ծուխ) գյուղերում⁴²:

Ղրխբուլաղի մահալում պատկերը բոլորովին այլ էր: Մահալը հիմնականում հայաբնակ ենթաշրջան էր, թեև այստեղ նույնպես հայ բնակչության թիվը զգալիորեն կրճատվել էր: 343 ընտանիք (1779 մարդ) ունեցող այս մահալում հայեր էին 1396-ը (262 ծուխ) կամ 78,5%-ը, այլազգիների 383 շնչի (81 ծուխ) կամ 21,5%-ի դիմաց: Մինչև ներգաղթը մահալում կար 17 բնակեցված գյուղ: Դայերն ապրում էին միայն 10 գյուղերում: Երեք տարվա ընթացքում այստեղ հանգրվանած 1043 պարսկահայ գաղթականները տեղաբաշխվել են հետևյալ կերպ:

571 մարդ (127 ծուխ) վերաբնակվեցին նոր շարք մտած Բաշ-քենտ՝ 9 մարդ (2 ծուխ), Շաղաբ՝ 134 մարդ (28 ծուխ), Արամուն՝ 221 մարդ (53 ծուխ), Ավան՝ 174 մարդ (38 ծուխ) և Միուր՝ 33 մարդ (5 ծուխ) գյուղերում: 472 գաղթականներ (79 ծուխ) տեղավորվեցին Ջուվրիչ (5 շունչ - 1 ծուխ), Գյամրիս (170 շունչ - 26 ծուխ), Դզակ (36 շունչ - 7 ծուխ), Առինջ (47 շունչ - 9 ծուխ), Զալմանչի - Նոր Նորք (64 շունչ - 13 ծուխ), Քանաքեռ (41 շունչ - 10 ծուխ), Էլար (15 շունչ - 3 ծուխ) և Ելզովան (44 շունչ - 10 ծուխ) գյուղերում⁴³:

Նոր բնակավայրերում պարսկահայ վերաբնակիչները

⁴² Տե՛ս *Н. Шонен*, նշվ. աշխ., էջ 591-598.

⁴³ Տե՛ս նույն տեղում, էջ 543-546:

բազում դժվարություններ և զրկանքներ կրեցին: Ծայրաստիճան աղետալի վիճակի մեջ հայտնված նորաբնակների մի զգալի մասը չդիմացավ սուլին ու համաճարակային հիվանդություններին, մահացավ, բազմաթիվ ընտանիքներ էլ անցան կրաստան և Յուսիսային Կովկաս, իսկ առանձին ընտանիքներ վերադարձան Պարսկաստան նախկին բնակավայրերը: Այս մասին ավելի հանգամանորեն կխոսենք համապատասխան բաժնում:

Այսպիսով, պարսկահայերի ներգաղթը զգալիորեն փոխեց նաև խնդրո առարկա մահալների նկարագիրը քաղաքակրթական և էթնիկական առումներով:

Ամսադրաբնակ գյուղերի բնակեցման շնորհիվ կանգուն մնացած գյուղերի թիվը երկու մահալներում միասին ավելացավ 16-ով, իսկ հայ բնակչության թիվն աճեց 67,4%-ով⁴⁴:

Բ) Արևմտահայերի ներգաղթը

Այ, որ Ռուս-պարսկական պատերազմից հետո չափազանց բարդ և լարված հարաբերություններ ստեղծվեցին Ռուսաստանի և Թուրքիայի միջև: Պարսկաստանի նկատմամբ տարած հարթամակը Ռուսաստանին անրապնդեց Դարավային Կովկասում ու Արևելյան Դայաստանում և նրան թելադրող դիրքի հասցրեց Թուրքիայի նկատմամբ:

Ռուսական կայսրությունը ձգտում էր խորանալ դեպի հարավ ի հաշիվ Թուրքիայի, այլևս անխուսափելի էր: Տարածաշրջանում Ռուսաստանի հաստատմանը մշտապես խոչընդոտում էր Թուրքիան, հակադրելով իր անզուսպ ագրեսիվ քաղաքականությունը սպառնալով նրա հարավային սահմանի անվտանգությանը եվրոպական տերությունների հովանավորությամբ:

Սա էր այն ժամանակ Թուրքիայի կառավարող վերնախավի վարվող քաղաքականությունը Ռուսաստանի նկատմամբ, որը օբյեկտիվորեն ծառայում էր նաև Կովկասի մուսուլմանական բնակչության շահերին: Բանն այն է, որ վերջիններս ինքնավարություն ձեռք բերելու իրենց հույսերը շարունակում էին կապել

⁴⁴ Դաշվարկը կառարվել է *Н. Шонен*, նշվ. աշխ., էջ 543-546, 591-598 տվյալների հիման վրա:

Թուրքիայից եկող օգնության հետ և, հետևաբար, նրանց մոտ զնայվով, ուժեղանում էին հակառուսական տրամադրությունները:

Այս ամենից հետևում է, որ Ռուսաստանը տարածաշրջանում խաղաղ պայմաններում «հավիտյան ներկայություն» կարող էր ապահովել միայն Թուրքիայի նկատմամբ լիակատար հաղթանակ տանելու դեպքում: Նկատի առնելով այս իրողությունը զեներալ Ի. Պասկևիչը 1828 թ. մայիսի 26-ին գեներալ Ի. Գիրիչին հաղորդում է. «... միայն թուրքերի հանդեպ ունեցած հաջողությունները կարող են ապահովել «խաղաղությունն ու հանգիստն այս երկրամասում»⁴⁵:

1828 թ. ապրիլին սկսվեց ռուս-թուրքական հերթական պատերազմը Բալկանյան և Կովկասյան ռազմաճակատներով: Կովկասյան ռազմաճակատում ռուսական զենքի անշրջելի հաղթանակները խոր ակոսներ էր բացել արևմտահայության տրամադրությունների մեջ և օսմանյան բռնատիրության ճիրաններից դուրս պրծնելու հույսեր արթնացրել: Նա կարելիության չափով զինվորագրվեց այդ պատերազմին և նշանակալից դեր խաղաց Ռուսաստանի տարած հաղթանակի գործում:

Երկու ռազմաճակատների թատերաբեմում ռուսական զորքերի տարած փայլուն հաղթանակների փայլից կուրացած Մուհամեդ II-ը պարտադրված հաշտություն է խնդրում: Այն կնքվում է 1829 թ. սեպտեմբերի 2-ին Ադրիանապոլսում: Չին պատմությունը կրկնվում է: Ռուսաստանի կառավարությունը, այս անգամ նա, չկարողացավ ռուսական զենքի հաղթանակները նյութականացնել դիվանագիտական ճակատում: Ադրիանապոլսում հերթական անգամ արձանագրվեց ռուսական դիվանագիտության պարտությունը: Ռուսաստանին են անցնում սևծովյան մի քանի նավահանգիստներ, Ախալցխա, Ախալքալաք քաղաքները (հողված 3)⁴⁶: Ընդամենը այսքանը: Պայմանագրի 4-րդ հոդվածով Արևմտյան Չայաստանից գրավված Կարսը, Արդահանը, Բայազետը, Էրզրումը և մյուս տարածքները վերադարձվում են Թուրքիային: Ռուսաստանն Արևմտյան Չայաստանում

իր ձեռք բերած դիրքերը զիջեց Թուրքիային, հատկապես Անգլիայի և Ավստրո-Յունգարիայի ճնշման տակ, որոնք նրան սպառնում էին պատերազմով, իհարկե, ոչ առանց հիմքի: Ադրիանապոլսի պայմանագիրը շոշափում էր համաեվրոպական շահեր, հետևաբար այն չէր կարող տարածաշրջանում շահեր հետապնդող վերը նշված պետությունների հետաքրքրությունների շրջանակներից դուրս մնալ: Փաստորեն հաշտության պայմանագիրը չարդարացրեց արևմտահայության սպասելիքները և նրան դրեց ծանր դրության մեջ: Արևմտահայությունը չարունակեց մնալ օսմանյան տիրապետության տակ: Ռազմական պատմաբան Վ. Պոտտոն դա վտանգավոր էր համարում ռուսական կայսրության հարավային սահմանի անվտանգության համար, և ավելացնում էր. «Այստեղ, Չայաստանի ճիշտ սրտում, այդ հաշտության մասին լուրը խորը հուսահատության մեջ է դրել ամբողջ մի ժողովուրդ, ... որը նպաստել է ռուսական զենքի հաջողությանը և վերջապես, իր ապագայի վառ հույսերը կապել է ռուսական հովանավորության հետ»⁴⁷:

Պատերազմի ավարտից հետո, երբ ռուսական զորքերը դուրս բերվեցին Արևմտյան Չայաստանի գրավված տարածքներից, հայերի նկատմամբ բռնաճնշումները և կոտորածները ավելի սաստկացան: Ռուսաստանից կրած պարտությունը թուրքերի մեջ խորացրել էր այն ընկալումը, թե հայերը ներկայացնում են պոտենցիալ սպառնալիք՝ պատերազմի ժամանակ ռուսների նկատմամբ ունեցած հավատարմության և նվիրվածության պատճառով:

Թերևս առաջիններից մեկը, որ կայսր Նիկոլայ Ա-ին հայտնեց դառը ճշմարտությունը՝ Ասիայում ռուսների հաղթանակներին մեծապես նպաստած հայությանը սպառնացող վտանգի մասին, զեներալ Պասկևիչն էր՝ 1829 թ. հոկտեմբերին հղած իր զեկուցագրով: «... այդ բերկրության լուրը իրաւացի տրտմութեան մեջ ձգեց ժողովրդի այն մասը, որ արժանի է մեր կարեւորութեան թե իւր շարունակ կրած տառապանքներով ու ռուսական զենքի յաջողութեան ցոյց տուած համակրանքով և թե նաև

⁴⁵ Присоединение Восточной Армении к России, т. 2, с. 498-501.

⁴⁶ *Ա. Սելբրոյան*, նշվ. աշխ., էջ 182:

⁴⁷ *В Потто*, Кавказская война, в отдельных эпизодах, легендах и биографиях, вып. 4, т. 4, 1888, с. 471.

այն դժբախտ ապագայով, որ սպասում է նորան ապագայում մահնեղականների հալածանքից ու վրեժխնդրությունից»⁴⁸։ – սասել է նա։ Չնայած այս տխուր իրողությանը Պասկևիչը հույս ուներ, որ կատանա Նիկոլայ Ա-ի համաձայնությունը դժբախտության մեջ հայտնված արևմտահայությանը Ռուսաստանի տիրապետության տակ գաղթեցնելու հարցում։

Հանրահայտ գեկուցագրում նա խնդրում է կայսրից թույլ տվություն և միջոցներ Ռուսաստանի սահմաններ գաղթելու ցանկություն ունեցող⁴⁹ 10 հազար հայ ընտանիքների և այլ քրիստոնյաների գաղթը կազմակերպելու համար։ «Սորա համար

⁴⁸ *Ա. Երիցյան*, նշվ. աշխ., էջ 435-437։

⁴⁹ Չատկանշական է, որ Օսմանյան կայսրության մեջ տիրող տնտեսական և քաղաքական մոնոպոլիզացիայի իրավիճակից պարտադրված արևմտահայությունը, ինչպես և Բայազետի փաշայության հայերը սկսել էին լքել պատմական հայրենիքը շատ ավելի վաղ։ Հայրենակորուստ այս երևույթը ավելի խորացավ XIX դարում։ 1805 թ. սկզբներից գործով Բայազետ եկած ֆրանսիացի դիվանագետ Պ. ժոբերը գրել է. «Իզուր հողագործը այնտեղ սերմ է ցանում, հունձը խլում են չիստունացած։ Նա ստիպված է լքել այդ դաշտերը, փախչել ընտանիքով և հոտերով, ազատվելու ավազակների կատաղությունից և ճահնգում իշխող փաշաների հարստահարություններից։ Այսպես, այդ դժբախտ երկրում գոյություն չունի ո՛չ հայրենիք, ո՛չ ապահովություն, ո՛չ հանգիստ»։ Տե՛ս *В. Брюсов*, *Летопись исторических судеб армянского народа*, Е., 1969, с. 147։

Անապահովության առումով արևմտահայությունը նոր բարդությունների առջև կանգնեց 1806-1812թթ. ռուս-թուրքական պատերազմի ժամանակ ռուսական զորքերին համակողմանի աջակցություն ցուցաբերելու համար։ Ավելի մեծ չափերի հասավ գաղթել ցանկացողների քիվը։ Այսպես, 1806թ. ռուսական Կովկասյան բանակի գեներալ Նեպոստակին տեղեկացնում են, որ Բայազետի շուրջ 10 հազար հայեր ցանկանում են անցնել ռուսական տիրապետության սահմանները և սպասում են ռուսական զորքերի կողմից Երևանի գրավմանը։ Կան այլ փաստեր նա։ 1822-1823թթ. պարսկա-թուրքական պատերազմի հետևանքով ոտնատակ էր տարվում Արևմտյան Հայաստանը, իսկ արևմտահայությունը բնաջնջվում էր ու տեղահանվում, բազմաթիվ դիմումներ ուղարկվեցին ռուսական Կովկասյան բանակի հրամանատարությանը՝ գաղթի խնդրանքով։ 1822թ. Կարսի, Իրզրումի և Բայազետի հայ բնակչությունը դիմումներ ուղարկեց գեներալ Երմոլովին՝ խնդրելով թույլ տալ գաղթել Լոռի-Փամբակ։ Տե՛ս *Ա. Ներսիսյան*, *Հայ մողովդիի ազատագրական պայքարը* թուրքական տիրապետության դեմ, Ե., 2002, էջ 292։

համարձակվում են խնդրել ամենաողորմածաբար բարեհաճությունը Չոբը Կ. Մեծուքեան, որպեսզի իրաւունք տրուի ինձ քնակեցնել այդ գերդաստաններիս Վրաստանում և Հայոց աշխարհում (Երևանի կողմերում), իսկ եթե այդ երկրները չբաականանան՝ Կովկասյան աշխարհում»⁵⁰։ Ռուսական կառավարությունն այդ ծրագիրն արժանացրեց հավանության։ Կոմս Չերնիշովը 1829 թ. նոյեմբերի 18-ին իրազեկեց Պասկևիչին, որ կայսրը բարեհաճել է հաստատել 10 հազար հայ ընտանիքներից գաղթելու Վրաստան, Հայոց աշխարհ և Հյուսիսային Կովկաս ու գործի դեմ դրա համար պահանջած գումարը՝ 90 հազար ռսկի⁵¹։

Լույսի և հույսի ճանապարհ է բացվում բազմապարզար արևմտահայերի համար՝ օգտվելու Արդիանապոլսի պայմանագրի 13-րդ հոդվածով իրենց արտոնած ռուսական կայսրության սահմանները ներգաղթելու իրավունքից⁵²։

Ներգաղթողներին ընդունելու և տեղավորելու համար ստեղծվել էին պետական հատուկ մարմիններ՝ բարձրագույն մարմին գաղթականության կոմիտեի գլխավորությամբ։ Պասկևիչի՝ 1829 թ. դեկտեմբերի 3-ի կարգադրության հիման վրա, 1830 թ. հունվարի 28-ին Թիֆլիսում ստեղծվում է գաղթականություն կոմիտե⁵³։ Գաղթի կանոնները և գաղթականներին տրվող արտոնություններն իրենց բովանդակությամբ նույն էին, ինչը որ պարսկահայերի համար։ Կոմիտեն որոշ աշխատանք է կատարում գաղթողներին նյութական միջոցներ տրամադրելու և նրանց նոր վայրերում տեղավորելու համար⁵⁴։

Հատկանշական է, որ դեռ պաշտոնապես արտագաղթի թույլտվություն չստացած, բազմաթիվ հայ ընտանիքներ ռուս

⁵⁰ *Ա. Երիցյան*, նշվ. աշխ., էջ 434։

⁵¹ Տե՛ս նույն տեղում։

⁵² 13-րդ հոդվածով երկու կողմերի հպատակներին իրավունք է տրվում 18 ամսվա ընթացքում, իրենց ցանկությամբ, իրենց շարժական գույքով, մեկ երկրից տեղափոխվել մեկ այլ երկիր։ Տե՛ս «Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում», կազմողներ՝ *Չ. Կիրակոսյան, Ռ. Սահակյան*, էջ 73-82։

⁵³ Տե՛ս *Ա. Երիցյան*, նշվ. աշխ., էջ 436։

⁵⁴ Տե՛ս *Ա. Մելքոնյան*, նշվ. աշխ., էջ 183։

զինվորներին կրնկակոխ շարժվում էին դեպի ռուսահայաստան: Գեներալ Պասկևիչը 1830 թ. հունվարի 22-ին ռազմական մինիստր Չերնիշևին գրում էր, որ սկսած 1829 թ. հոկտեմբերի 1-ից մեծ թվով հայեր անցել են ռուսական սահմանը⁵⁵:

Զեկուցագրում Պասկևիչը տեղեկացնում էր գաղթի հետ կապված այլ մանրամասների մասին, որ «... գաղթի համար էրգրունում պատրաստ է մոտ 2000 ընտանիք, Բայազետ քաղաքում 1143, Բայազետի փաշայության գավառներում ավելի քան 2000 ընտանիք»⁵⁶:

Առաջին գաղթողները ճանապարհ ընկան 1828-1829 թթ. ծնունդը: Չնայած քաղաքիվ դժվարություններին 1829 թ. վերջերին, չսպասելով գաղթի պաշտոնական թույլտվությանը էրգրունի լիվայից Փամբախի գավառ են տեղափոխվում 59 ընտանիք հայ կաթոլիկներ, Բայազետի շրջակա գյուղերից Դայակական մարզ 200 ընտանիք⁵⁷: Գաղթականների շարքերը ծովացան, երբ հրապարակվեց գաղթի պաշտոնական թույլտվությունը:

Գաղթելու թույլտվություն ստանալու համար խնդրագրեր են ստացվում էրգրունում ռուսական զորքերի հրամանատար Պոնկրատևի, Բայազետում՝ գեներալ Ռեուտի և այլ ռուս բարձրաստիճան զինվորականների հասցեով⁵⁸:

Բայազետ քաղաքի և նրա գավառների հայերին համակել էր Արևելյան Դայաստան արտագաղթելու գաղափարը:

1830 թ. փետրվարի 3-ին Բարսեղ և Սկրտիչ Արծրունի եղբայրները⁵⁹ և Բայազետ քաղաքի ու նրա շրջակա գյուղերի հասարակության 11 այլ երևելիներ, պաշտոնական նամակով դի-

մեցին Պակևիչին՝ խնդրանքով իրենց հասարակությանը շնորհել Գեղարքունիքի՝ Սևանա լճի ավազանի քաղա տարածությունները, և որ իրենց ցանկություն ունեն քաղաք կառուցել Պասկևիչի անունով: «Շնորհել հասարակությանց մերոց ի քնակութիւն զԳեղարքունի՝ այսինքն զԳեօզայ և զՉրջակայս ծովակին Սևանայ. այս է զԴարաւային, զԼուսնայան և զԳիւսիսային կողմանս նորա հանդերձ ամենայն անտառօքն...»⁶⁰:

Սույն դիմումի բովանդակությունից նկատելի է, որ Բայազետի հայությունը կանխավ վստահ էր, որ իր խնդրանքը կբավարարվի, իհարկե, ոչ առանց հիմքի, համոզված լինելով, որ ռուսական իշխանությունները ըստ արժանվույն կզնահատեն իր դերը Մերծավոր Արևելքում գերտերության հավակնելու Ռուսաստանի նվաճողական քաղաքականության մեջ⁶¹:

Հավաստի տեղեկություն կա, որ Սկրտիչ Արծրունին ներգործել է Բայազետի փաշայի վրա՝ քաղաքը առանց արյունահեղության հանձնելու ռուսներին, որի համար պարգևատրվել է սր. Աննայի առաջին և երկրորդ ստիճանի շքանշաններով: Ցարական կառավարությունը բարձր է գնահատել նաև Բարսեղ Արծրունու մատուցած ծառայությունները և նրան պարգևատրել է «Արիության համար» արձաթ մեդալով, «Գևորգյան խաչ» և այլ մեդալներով ու շքանշաններով: Տե՛ս ԴԱԱ, Ժ. 93, գ. 1, գ. 79, թթ. 59-63:

⁵⁵ ԴԱԱ, Ժ. 57, գ. 1, գ. 549, թթ. 2-3:

⁵⁶ Բայազետի հայությունը ռուսական զորքին օգնում էր սննդամթերքով, հագուստով, հաղորդում էր կարևոր տեղեկություններ, օգնում էր վիրավոր և հիվանդ զինվորներին: Տե՛ս "История военных действий в Азиатской Турции в 1828-1829 гг.", ч. 1, СПб., 1836, с. 353: Գլխավ փաշայության յուրաքանչյուր քնակվայի գրավում կատարվում էր հայերի անմիջական մասնակցությամբ: Այդ մասին ուշագրավ վկայություն է տալիս գեներալ Մ. Լիխտսիլը: Նա գրում էր. «Այդ հարձակումը (Բայազետ քաղաքի վրա - Գ. Գ.) խանդավառություն առաջ բերեց Բայազետի հայերի մեջ: Առանցից շատերը, այդ թվում և ծերունիները, ուրից մինչև զուլխ զինվելով, եկան ու ճանապարհին հասան զորամասին, խնդրեցին, որպեսզի միանան մեզ և հայտարարեցին. «Դուք պաշտպանում եք մեզ, զնում եք կովելու մեզ համար. մենք պատրաստ ենք մեռնել ձեզ հետ միասին»: Տե՛ս *М. Лухтык. Русские в Азиатской Турции в 1854 и 1855 годах*, СПб., 1863, с. 236: Իրոք: Բայազետի

⁵⁵ Տե՛ս «Դայ ժողովրդի պատմություն», հ. V, էջ 191:

⁵⁶ "Новые документы о переселении персидских и западных армян в 1828-1830 гг.", ԲԴԱ, 1977, թիվ 3, էջ 21:

⁵⁷ Տե՛ս «Դայ ժողովրդի պատմություն», հ. V, էջ 292:

⁵⁸ Տե՛ս *Ա.Մելքոնյան*, նշվ. աշխ., էջ 183-184:

⁵⁹ Արծրունիների ազնվական ծագում ունեցող ընտանիքը Բայազետ քաղաքի և համանուն փաշայության ամենաերևելի գերդաստաններից էր: Այդ գերդաստանի երևելիները մեծ ճանաչում ունեին նաև Թուրքիայի կառավարությունում: Սկրտիչ և Բարսեղ Արծրունի եղբայրները մեծ դերակատարում են ունեցել 1828-1829թթ. ռուս-թուրքական պատերազմում Ռուսաստանի տարած հաղթանակի գործում:

Այս առումով հետաքրքրաշարժ է զեկուցագրի այն մասը, որտեղ հեղինակներն անդրադարձնալով վերջ ավածին, հիշեցնում են. «Քաջայայտ է պայծառափայլուրին Չերոյ թե ի սկզբանէ պատերազմին ընդ Օսմանեան Տէրութեան՝ Հասարակութիւնը Հայոց որ է Բայազետ և չրջասփիւռ նահանգո նորա երևեցուցին զգերօրինակ ջերմեռանդութիւն առ ծառայութիւն Նորին Կայսերական Մեծութեան ինքնակալին ամենայն ռուսաց առանց խնայելո ի կեանս ի ստացուածս իրեանց»⁶²:

Սույն փաստաթուղթն իր մեջ նաև զգուշավորության տարր է պարունակում: Մեզ անհավանական չի թվում, որ Բայազետ քաղաքի և չրջակա գյուղերի հայ բնակչությունը, որն աշխարհագրորեն սահմանակից էր պարսկահայությանը, իրազեկեած էր Հայկական մարզում գաղթականության սոցիալ-տնտեսական սոսկալի վիճակի մասին և ցանկանում էր գաղթից առաջ ստանալ իրեն մտահոգող հարցերի պատասխանները: Դիմումում սեղմ կերպով թվարկեած են այդ հարցադրումները, որոնք բովանդակային առումով ունեն տնտեսական և քաղաքական ուղղվածություն:

Համաձայն դիմում խնդրագրի, գաղթել ցանկացողների տնտեսական հետաքրքրությունների առնչությամբ առանձնափառուկ կերպով ընդգծվում է. հատկացնել բնակության վայր և վարելահող, դրամական օգնություն, ժամանակավորապես ազատել հարկերից ու տուրքերից և սահմանել մարման ժամկետները⁶³:

Բովանդակային առումով, կարծես թե հակասություններ չկան այդ պահանջների և Թիֆլիսի գաղթականության կոմիտեի սահմանած իրահանգների միջև: Հակասություն կա միայն ժամկետների հարցում: Գաղթականության կոմիտեի հաստատած կարգի համաձայն նախատեսվում էր վեցամյա ժամկետ⁶⁴:

պաշտպանական մարտերին մասնակցել են 2000 հայեր: Պաշտպանության հրամանատարներից մեկի՝ զեներալ Պոպովի վկայությամբ հայերը կռվում և մեռնում էին ինչպես հերոսներ: Տես «Հայ ժողովրդի պատմություն», հ. V., էջ 185-186:

⁶² ՀԱԱ, ֆ. 57, ց. 1, գ. 549, ք. 2-3:

⁶³ Տես ՀԱԱ, ֆ. 57, ց. 1, գ. 549, ք. 2-3:

⁶⁴ Տես նույն տեղում:

Մինչդեռ, ըստ դիմումի, պահանջվում էր տաս տարի ժամկետով ազատել ամեն տեսակի հարկերից ու տուրքերից. «Շնորհել հասարակութեանց մերոց զուսանամեայ ազատութիւն յամենայն տեսակ ծառայութեան և հարկատուութեան սկսեալ ի 1831 ամէ մինչև ցվերջ ղեկտեմբերի 1841 ամի»⁶⁵:

Տասնամյա արտոնությունից հետո պարտավորվում էին հօգուտ արքունի գանձարանի վճարել երկրագործական եկամտի տասնորոդը՝ այն իրենց սայլերով հասցնել երևանի կամ Թիֆլիսի շտեմարանները: «Յետ տասնամեայ արտոնութեանն՝ պարտաւորիմք մատուցանել կառավարին յօգուտ արքունի գանձարանին զտասնորդ. ամենայն եկամտից մերոց որ յերկրագործութենէ. և զայս հարկ մերովք սայլիք հասուցանել յարքունի շտեմարանս երևանայ կամ Տփլիստոյ. բաց յացսմանէ մի լիցուք ներքոյ անկեալ այլատեսակ հարկաց և ծառայութեանց ոչ մքք և ոչ անասունք մքք»⁶⁶:

Գաղթել ցանկացող Բայազետի հայությունը խնդրում էր. «Շնորհել հասարակութեանց մերոց զքսան հազար ոսկի դահեկանս Հոլլանտիոց հնգետասանմեաց ժամանակաւ, այսինքն՝ յօգոստոսէ 1830 ամի մինչև ցօգոստոս 1846 ամի»՝ բնակարաններ կառուցելու, կենցաղային իրեր ձեռք բերելու, երկրագործությանը զբաղվելու և այլ կարիքների համար⁶⁷:

Բայազետի հայության պահանջը, եթե նույնիսկ բավարարվեր, ապա բաց թողնված գումարից մեկ կարիքավոր ընտանիքին տրվելու էր 8 ոսկի դահեկան, իսկ յուրաքանչյուր շնչի հաշվով՝ 2,3 դահեկան: Սա այն դեպքում, երբ զեներալ Պասկևիչը խնդրում էր ցար Նիկոլայ Ա-ին թույլ տալ յուրաքանչյուր կարիքավոր ընտանիքին միջինը բաց թողնել 25 ռուբլի նպաստ այն 100 հազար ոսկուց, որ տրվել էր իրեն ծախսելու քրդերին ռուսների կողմը գրավելու նպատակով, բայց ծախսվել էր

⁶⁵ Նույն տեղում:

⁶⁶ Նույն տեղում:

⁶⁷ Собрание актов, относящихся к обозрению истории армянского народа, т. I. М., 1833, с. 61., "Акты Кавказской археографической комиссии", т. VII, N 820, ՀԱԱ., ֆ. 57, ց. 1, գ. 549, ք. 2-3:

ընդամենը 10 հազար ոսկի⁶⁶։ Դրամական օգնություն հայցելուն Պակակիչը հանգամանորեն անդրադարձել է նամակում, նշելով, որ «տալ ի փոխ զգումար դրամոց վասն վերաբնակելոյ, կարելի է, բայց այնպիսիք կերպիւ, որպէս նշանակիսլ է առնել տոնպիսի փոխատուութիւնս դրամոց, այլոց վերաբնակեալ ժողովուրդոց, այսինքն զի վճարեցնեն զկնի անցանելոյ առաջին չորից ամաց յետ կատարեալ անդորրանալոյ նոցա, ի միջոցի վեց ամաց և զի տոյն փոխատուութեան օգնութիւնս տեսլ մի միայն տնանկաց կամ չքաւոր տանց և գերդաստանաց»⁶⁷։

Հիմա բնակության տեղի վերաբերյալ բայազետցիների պահանջի և այդ տարածքում նրանց վերաբնակվելու առնչության մասին: Ընթերցողի մոտ չստեղծվի բյուր կարծիք այն մասին թե նրանց վերաբնակեցրել են Սևանի ավազանում, ընդառաջելով այդ խնդրանքին: Իրականում գործել է գաղթականության կոմիտեի հրահանգը՝ գյուղացիների համար պարտադիր է ընտրել իրենց նախկին բնակավայրերի դիրքին և կլիմային համապատասխան վայրեր, ինչպես արդեն ասվել է, նրանց բնակեցնել արջունական հողերի վրա, յուրաքանչյուր գյուղին իր ընտանիքների թվի համեմատ, լեռնականներին բարձրադիր վայրերում, հարթավայրերում բնակվողներին՝ ցածրադիր վայրերում⁶⁸: Ուրեմն կարիք չկա անգիտամալու, այստեղ որոշիչը աշխարհագրական գործոնն էր:

Վերաբնակիչների բնակության վայրի ընտրության հարցում կարևոր էր նաև ցարական կառավարության օգտավարությունը՝ նորանվաճ տարածքները յուրացնել նաև բնակչության էթնիկ կազմը փոխելով՝ ստվարացնելով կայսրության հավատարիմ բնակչության թիվը. «Ուր նրանք օգտակար կլինեն Ռուսաստանի սահմանների պաշտպանության համար»⁶⁹:

Ռուսաստանը նման խնդիր ուներ նաև Սևանի ավազանի

⁶⁶ Մ. Դարբինյան, Արևմտահայերի 1829-1830 թթ. գաղթը Հայկական մարզ և հարակից շրջաններ, ՊԲՀ, թիվ 2, 1974, էջ 94:

⁶⁷ ՀԱԱ, ֆ. 57, ց. 1, գ. 549, ք. 3:

⁶⁸ Акты Кавказской археографической комиссии, т. VII, N 820.

⁶⁹ Договоры России с Востоком. Составил Т.Юзефович, СПб., 1869, с. 78-79.

նկատմամբ, ուր, ինչպես ցույց ենք տվել համապատասխան տեղում, հայ բնակչության թիվը չափազանց կրճատվել էր:

Առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում խնդրագրի այն մասը, որը վերաբերում է քաղաքական բնույթի պահանջներին:

Գաղթել ցանկացող Բայազետի հայությունը առաջ է քաշում հայ հասարակությունից (չորս անձից բաղկացած երկուսը քաղաքային բնակչությունից, երկուսը գյուղական) դատական իշխանություն ստեղծելու հարցը: Սույն իշխանությունն իրավասու էր միայն գրադվելու քաղաքացիական հարցերով:

«Ի դատաստանին՝ որ անշուշտ սահմանեցի ի մերումս քաղաքի՝ որպէս սահմանեալն է յամենայն նորաստացն նահանգոն՝ հրամայեցի ունիլ յայնմ զդատողական իշխանութիւն և չորից ամեմանց ի Դասարակութեանց մերոց, ամ ըստ ամէ փոխանակաւ ընտրելոց, որոց երկուքն իցեն ի քաղաքացւոց և երկուքն և գիւղացւոց: Ամենայն վէճք և գործք վճառեցին յայսմ դատարանի բաց ի թեականաց՝ որք աւանդեցին և նահանգական կառավարությունն Երևանայ»⁷⁰:

Փաստաթղթի այս մասին վերաբերում է մի առաջարկ ևս: Պահանջվում էր պետության հարավային սահմանը պաշտպանելու, ինչպես նաև նորագոյնալ տարածքներում կարգուկանոն հաստատելու և իշխանությունն ամրապնդելու նպատակով հասարակության անդամներից ստեղծել 500 հոգուց կազմված հեծյալ ջոկատ: «Եթէ պատահեցի աստուածապահ Տերութիւնս Ռուսաց պատերազմի ընդ Պարսից կամ ընդ Օսմանցւոց՝ պարաւանդիմք ծախիսք Հասարակութեանց մերոց պատրաստիլ զհինգ հարիւր հեծեալ Հայազգի զորական միայն թէ կառավարութիւնն շնորհեսցէ զվատօղ և զարմիծ: Աներկմիտ վայելեցնեն այսպիսի զօրականք մեր զպարզև ամենաողորմ կայսեր մերոց ըստ չափու արիական քաջամասնութեանց իրեանց՝ ըստ օրինակի զինուորութեանն Ռուսաց: Զօրականք մեր բացի պատերազմեն ընդ պարսից կամ ընդ Օսմանցւոց յայլ պատերազմունս չկարեն լինել գործակից և ոչ տեղափոխիլ ի սահմանաց իւրեանց այլուր»⁷¹:

⁷⁰ ՀԱԱ, ֆ. 57, ց. 1, գ. 549, ք. 2-3:

⁷¹ Սույն տեղում:

Պատկերիչը գրել է պատասխան նամակ, շարադրել է իր տեսակետները և փորձել հիմնավորել դրանք: Նա նամակը գրել է Ռիֆլիսից: Անդրադառնա՞նք նամակի հիմնգեորդը և վեցերորդ կետերին:

Նախ նշենք, որ ուժային այս կառույցների ստեղծման գաղափարը, ինքնին, եզակի երևույթ էր ռուսական իրականության մեջ և չէր համապատասխանում կայսրությանը ենթակա մյուս երկրամասերի տեղական իշխանությունների կառույցներին և կառավարման սկզբունքներին: Ընդ որում, անդրադառնալով տվյալ հարցին, Պատկերիչը նշում է հենց այդ հանգամանքը. «... պոլիցիական կարգադրուիւնք ի մեջ այսոցիկ ժողովրդոց, նմանապէս և դատաստան առնելն պարտին լինիլ ըստ հասարակ իրաւանց մեր օրինոց կացուցելոց, և ոչինչ նոր կանոնադրութիւնս ի ձեռնջ առաջարկեալ ըստ այսմ մասին թոյլատրել կարելի չէ»⁷⁴. — շեշտել է ռուս գեներալը:

Կասկած չկա, որ գաղթել ցանկացողների յուրաքանչյուր խնդրանք կամ պահանջ, որոնք չէին բխում կայսերապետական շահերից, ուժեղացնում էր ռուսական իշխանությունների և չինովնիկների այն ընկալումը, թե ներգաղթողներն ուղղորդվում են առանձին պետությունների կողմից և ներկայացնում են պոտենցիալ սպառնակիչ: Քննեց այս ոգով էլ գրված է Պատկերիչի նամակը: Սույն նամակը գեներալի անձնական տեսակետների և համոզմունքների հաստատագիր լինելուց բացի, լավագույնս ցույց է տալիս Ռուսաստանի ռազմավարությունը Անդրկովկասի տարածաշրջանում ընդհանրապես և Արևելյան Հայաստանում մասնավորապես:

Ստորև ընթերցողին ենք ներկայացնում այդ եզակի փաստաթղթի գրաբար և աշխարհաբար օրինակները:

⁷⁴ Լույս տեղում, ք. 2:

Ընտրեալ անձանց հայոց հասարակութեանց Բայազեթու և շրջակայ գիւղօրէից նորս.

Ի վերայ մատուցեալ առ իս ի ձեռք խնդրագրութեան անուամբ 32 թո լոր հասարակութեան Բայազեթու հայոց որք ունին գոծարութիւն վերաբնակելոյ ի սահմանս ռուսաց յայտ առնենք քեզ զՆերքոյ հետևեալոն

Նախ առաջին, տացի ձեզ ի բնակութիւն ձեր վասն երկու հազար տանց յերեսուն դէստին իտաքանչիւր տանց զաննեայն վաքսուն հազար դէստին. ի ձեռք խնդրել տեղուց, առջ, ուր ուրք գտանեցնեն դատարկք կամ բօշ տեղիք. Փախագ ձեր առ ի հիմնադրել զբաղաք յանուն իմ յայս անհամեմատել վայելչութեան և կարգադրութեան վասն որոյ վերաբնակելով զայս առ անտեղեկութիւն ձեր ի մասիս անհարմարութեան սոյնպիսի առաջադրութեան ծանուցանեմ ձեզ, որ անուանարութիւն քաղաքի կախեալ լիցի ի նշանակելոյ կատավարութեանը:

Երկրորդ, տալ ի փոխ զգումար դրամոց վասն վերաբնակելոյ, կարելի է, քայց այնպիսիք կերպիւ, որպէս նշանակիալ է առնել սոյնպիսի փոխատուութիւնս դրամոց, այլոց վերաբնակեալ ժողովուրդոց, այսինքն զի վճարեցնեն զկնի անցանելոյ առաջին չորից ամաց յետ կատարեալ անդորրանալոյ նոցա, ի միջոցի վեց ամաց և զի սոյն փոխատուութեան օգնութիւնն տացի մի միայն տնանկաց կամ չբաւոր տանց և զերդաստանաց:

երրորդ, շնորհել վերաբնակեալ ժողովուրդը չազատուի ի հարկացն: Կարելի է, համաձայն բարձրագոյն հաստատեալ ի 22 հոկտեմբերի յամին 1819-ին կարգադրութեան, այսինքն ի յարջունական հարկատուութեանց ի վեց ամ, այլ երկնայգործային հասարակական ծառայութեանց և տրոց յերես ամ ի ժամանակէ յունելոյ և քնակելոյ ձեր ի գաւառս մեր:

Չորրորդ, ի Տերութեան ռուսաց ի վերայ ամենայն իւրաքանչիւր ժողովորդ, հաւասար հարկք ունին, ըստ այսմ և Բայազետու վերաբնակեալ ժողովուրդք պարտին, որպէս և այլք բնակիչք գիւղականք, ներքոյ անկանիլ հարկատուութեան յետ վեց ամեայ ազատութեան ժամանակի, առանց իրիք փոփոխութեան, յօգուտ ճոցս:

Հինգ և վեցերորդ, պօլիցեական կարգադրութիւնք ի մեջ այսոցն ժողովորդք, նմանապէս և դատաստան առեւելս պարտին լինիլ ըստ հասարակ իրաւանց մեր օրինօք կացուցելոց, և ոչինչ նոր կանոնադրութիւնս ի ձեռնջ առաջարկեալ ըստ այսմ մասին թոյլատրել կարելի չէ:

Եվ յօթներորդ, ըստ այսմ մասին, թէ հասարակութիւն ձեր տալոցէ զհինգ հարիւր մարդ հեծեալ զօրական, որովհետև այժմ ոչինչ պահանջի, ուրեմն և զոչինչ կարգադրութիւն առնել կարելի չէ. և պարտ սպասել այնմիկ յապագայ ժամանակին ըստ պարագայից որպիսութեանց, բայց ոչ երբէք պահանջեցի ի ձեռնջ այսքան բազում:

ռում հաստատվելուց երեք տարի հետո:

Չորրորդ, Ռուսաց տնօրէյունուն յուրաքանչիւր ժողովրդի միանձն կարողութեան վրա հավասար աշփով է հարկ դրվում, ըստ այդմ Բայազետի վերաբնակալ ժողովուրդը, ինչպէս և այլ գյուղական բնակիչներ, հարկադրութիւնից ազատ են վեց տարի, առանց որևէ փոփոխութեան հօգուտ իրենց:

Հինգերորդ և վեցերորդ, ոստիկանական կառուցվածքները և դատավարութեանը վերաբնակիչների համար ազատ է լինի ընդհանուր օրենքների և իրավունքների հիման վրա: Եվ հետևապէս, Չեր առաջարկով ոչ մի նորամուծութիւն չի լինի:

Յօթերորդ, այն մասին, թե ձեր հասարակութիւնը կարող է տալ 500 հեծեալ զորական, քանի որ ներկայումս պահանջ չկա, հետևապէս ոչինչ կարգադրել հնարավոր չէ և ըստ պարագայի ապագայում էլ այդքան բազում պահանջ չի լինի:

Այս բոլոր կետերին ղուք պարտավոր եք տալ անհապաղ պատասխան Չեր բոլոր հասարակութեան անունից, արդո՞ք համաձայն եք բնակութեան գալ Ռուսաց սահմաններում և առաջարկած պայմաններին, որ ես կարողանամ հրամանագիր տալ վերաբնակալ քրիստոնեական կոմիտեին կամ խորհրդարանին, որպեսզի շուտապէս կերպով հարկավոր կարգադրութիւն արվի:

Ի վերայ այսոցն յօդուածոց ղուք պարտիք տալ անյապաղ գաւատախանի բոլոր հասարակութեան ձերոյ անուամբ, համաձայն էք արդեօք գալ բնակութիւն ի սահմանս ռուսաց, այսուքիք յինճն առաջարկեալ պայմանօք, զի ես կարողանայցիմ տալ զհրամանագիր վերաբնակեալ քրիստոնէից Կոմիտեին կամ խորհրդարանին յազագագ ղույնապէս առնելոյ ըստ այսմ մասին գիտակար տնօրէնութիւն:

Գեներալ, Ֆելդմարշալ, գրաֆ Պասկևիչ Երևանայ համար 753 ի 16-ին փետրվարի 1830 յամին ի Տփլիսի
ՀԱԱ, ֆ. 57, գ. 1, գ. 549, քք. 1-4:

Գեներալ, Ֆելդմարշալ, գրաֆ Պասկևիչ Երևանայ համար 753
16-ը փետրվարի 1830 թ.
Տփլիսի
ՀԱԱ, ֆ. 57, գ. 1, գ. 549, քք. 1-4:
Չեռագիր

Եւսմակի բովանդակութիւնից դժվար է նկատել, որ Պասկևիչը չի վկայակոչել իր տեսակետներն արդարացնող որևէ ծանրակշիռ փաստ և հիմնավորում, բացի նրանից, որ գաղթի կանոնները և գաղթականներին տրվող արտոնութիւններն իրենց բովանդակութեամբ բոլոր վերաբնակիչներին համար նույն են: Հետևաբար, Պասկևիչը, որ գաղթականության հիմնահարցն լուծող զլխավոր համեմակատարն էր, անգամ անձնական մեծ ցանկության դեպքում, չէր կարող թույլ տալ կտրուկ շեղումներ կենտրոնական իշխանութեան կողմից այդ ուղղությամբ սահմանված հրահանգներից: Ինչ մնում է գեներալի ցանկությանը, ապա նա հետու էր բայազետցիների պահանջները բավարարելու մտքից:

Այս առնչությամբ ավելի սպառիչ է մամակի վերջնամասը, ուր Պասկևիչը արտահայտվում է վերջնագրի լեզվով. «Ի վերայ այսոցն յօդուածոց ղուք պարտիք տալ անյապաղ գաւատախանի բոլոր հասարակութեան ձերոյ անուամբ, համաձայն էք արդեօք գալ բնակութիւն ի սահմանս ռուսաց, այսուքիք յինճն առաջարկեալ պայմանօք, զի ես կարողանայցիմ տալ զհրամանագիր վերաբնակեալ քրիստոնէից Կոմիտեին կամ

Խորհրդարանին յաղագս դույնապես անձեյոյ ըստ այսմ մասին գհարկաւոր տնօրէնութիւն»⁷⁵: Ամբնական է բժոււմ, որ վերջ-նագրի կշռույթ ունեցող այս պահանջը արվում է մի մարդու կողմից, որը դեռ 1829 թ. հոկտեմբերին կարգադրոււմ էր Էրզ-րումի, Բայազետի և Կարսի ռուսական զորքերի իր ենթակա հրամկազմին՝ անցագրեր տալ Արաքսի մյուս ափը անցնել ցանկացող քրիստոնյաներին⁷⁶: Ըստ երևութիւն, գաղթել ցանկացողների նկատմամբ ռուս զենեքալի վերաբերմունքի փո-փոխությունը թելադրված էր որոշակի համգամանքներով:

Նախ ինչպես ասվել է, Արևելյան Ղայաստանում պարսկա-հայ գաղթականների վիճակը ծայրաստիճան օրհասական էր: Միաժամանակ, սպասվածից ավելի մեծ չափերի հասավ Արևմտյան Ղայաստանից ներգաղթողների թիվը: Ռուսական իշխանություններն անհանգստացած էին ստեղծված վիճակից և քայլեր էին ձեռնարկոււմ ներգաղթին ավելի կազմակերպված բնույթ հաղորդելու համար: Երկրորդ, Բայազետի հայության պահանջները Պասկևիչի մեջ մտավախություն էին առաջացրել ազգայնական վերաբերմունքի պատճառով: Երրորդ, զենեքալը մտադիր էր այդ ճանապարհով ազատվել գաղթականների համար լրացուցիչ պարտավորություններ կատարելուց: Սա նաև ընդհանուր վարվող քաղաքականությունն էր:

Այս առումով հետաքրքիր է Զավիլեյսկու պատասխանը Կարսի գաղթական հայերին. «Կարսի գաղթականները ոչ մի իրավունք չունեն պահանջել ռուսական կառավարությունից հատուցել իրենց կալվածքների համար, քանի որ նրանք չեն գաղթոււմ հրամանատարության դրոմամբ, այլ իրենց սեփական ցանկութամբ, որպեսզի փրկվեն թուրքերի կողմից սպասվող հալածանքներից և զանգաւան աղետներից»⁷⁷:

1830 թ. գարնանից սկսվում է արևմտահայերի զանգվա-ծային արտագաղթը: Էրզրումից, Բայազետից, Ալաշկերտից, Դիաղիճից, Վանից, Կարսից և նրանց շրջակա գավառներից

⁷⁵ ՉԱՍ, ֆ. 57, ց. 1, գ. 549, ք. 4:

⁷⁶ Акты Кавказской археографической комиссии, т. VII, N 820.

⁷⁷ Մ. Դարբինյան, Արևմտահայերի 1829-1830 թթ. գաղթը Ղայակաւան մարզ և հարակից շրջաններ, ՊԲԳ, 1974, թիվ 2, էջ 94:

գաղթականների քարավանները՝ սայլերով, ձիերով, ուղքով ալիքվելով բռնեցին դեպի Ղայակական մարզ և ռուսական տիրա-պետութայն մյուս սահմանները տանող դժվարություններով ու փորձություններով լի բնակեր, բայց և միաժամանակ փրկու-թյան ու հույսի ճանապարհը: Գաղթականների քարավաններին ուղեկցոււմ էին նախապես ստեղծված զինված ջոկատները, որպեսզի պաշտպանեն նրանք թուրքական կանոնավոր զորքերից և ավագակալաբար քրդերից, որոնք արնախնոււմ բորենիների նման հոտոտոււմ էին հոգնատանց, մերկ ու սոված բազմութայն ռուհահետքերը՝ այդան ծարավը հագեցնելու և հազուրդ տալու ավանդույթի ուժ ստացած նախնայց բարբերին:

Բազմաթիվ փաստաթղթեր վկայոււմ են, որ գաղթի ճանա-պարհին արևմտահայերը հայտնվել էին քշվառութայն մեջ: Բանն այն է, որ նրանցից շատերը, մինչև արտագաղթը, կորցրել էին տուճուտեղ, զրկվել ապրուստի միջոցներից, իսկ մի զգալի մասն էլ հեռանոււմ էր երկրից, թողնելով ամեն ինչ: Նրանց չէր հաջողվել գաղթելուց առաջ վաճառել ունեցվածքը, որովհետև թուրքական իշխանությունները հայրենակիցներին հրահանգել էին հայերից ոչինչ չգնել, որովհետև «Նրանք լքելու են, և դուք այդ ամենը կստանաք ծրի»⁷⁸: Սա մանկ էր մեկ գնդապետի երկու նապաստակ խիելոււմ հայերի ունեցվածքը ծրիաբար անցնոււմ էր թուրքերին, մյուս կողմից էլ գաղթականները զրկվոււմ էին ճանապարհածախի միջոցներից:

Սակայն, սա չէր նշանակոււմ, թե Թուրքիայում ոչինչ չէր արվոււմ հայերի գաղթը «խափանելու» ուղղութայն: Ինչպես չէ, արվոււմ էր, այն էլ ինչպես: Քիչ չէին Թուրքիայի ներսոււմ պտտվող «հայասիրական» ելույթներն ու խոսքերը, հայտա-բարությունները և հայատյաց լուրերի տարածոււմ ռուսների մասին, գաղթը ծախողելու համար: Այս ամենը, անշուշտ, հիմ-նավոր չէր և իրական ցանկութայն չէր արվոււմ, այլ բխոււմ էր այդ երկրի պետական և քաղաքական շահերից: Անկասկած էր հայերի արտագաղթի բացասական նշանակությունը Թուր-քիայի տնտեսական ու մշակութային զարգացման տեսակետից:

⁷⁸ «Բշլախտ», էջ 42:

հնդիրն ուներ կարևոր նշանակություն մահ քաղաքական իմաստով: արվում էր միջազգային հանրության վրա տպավորություն թողնելու համար: Այդ քաղաքականության համատեքստում ներառվում էր մահ եվրոպական տերությունների, հատկապես Մեծ Բրիտանիայի ռազմավարական շահերը: Նրանց անհանգստացնում էր արևմտախայերի ներգաղթը երկու դրոշմապատճառով՝ Ռուսաստանն իր հարավային սահմանը քրիստոնյա ժողովուրդներով կուժեղացներ, մյուս կողմից էլ ենթադրվում էր, որ Թուրքիան կթուլանա և կվերածվի Ռուսաստանից կախված երկրի:

Մենն դեպքում Թուրքիայի խարդավանքները և նրան աջակից եվրոպական տերությունների շահամուլ քաղաքականությունը չկարողացան ծախսողել հայերի արտագաղթը: «Եթե անգամ Քրիստոսն իջնի երկնքից և պահանջի մեզնից մնալ թուրքական տիրույթներում, նրան էլ չենք լսի»,- ասել էին էրզրումցի գաղթականները քաղաքի նոր հողերը առաջնորդ Բարդուղիմեոս եպիսկոպոսին, երբ վերջինս քաղաքի ռուսական զորքերի հրամանատար գեներալ Պոնկրատի հանձնարարությամբ ցանկացել էր ճշտել թուրքական կառավարության տարածած լուրերի իսկությունը, թե նրանց բռնությամբ գաղթեցնում են ռուսական գորքերը⁷⁹:

Ապարդյուն ջանքեր. գաղթը շարունակվում էր, իսկ գաղթականների շարքերը օրավուր ստվարանում էին:

Չինա այն հարցին, թե որքան էր արևմտահայ գաղթականների թիվը: Պատմագիտության մեջ տիրապետող կարծիքն այն է, որ 1829-1830 թթ. Արևմտյան Չայաստանից Անդրկովկաս ներգաղթել են շուրջ 14 հազար ընտանիքներ (այդ թվում մահ հույներ), որոնց թիվը հասել է 85-100 հազար մարդու⁸⁰: Ներ-

⁷⁹ Ա. Երիցյան, նշվ. աշխ., էջ 338, 2. *Գրիգորյան*, նշվ. աշխ., էջ 403:

⁸⁰ Տես Ե. *Գեղամանց*, Պատմական քաղվածքներ, պրակ 4, Բաքու, 1909, էջ 376, Ա. Երիցյան, նշվ. աշխ., էջ 338, 2. *Գրիգորյան*, նշվ. աշխ., էջ 298, Վ. *Խորաբեկյան*, նշվ. աշխ., էջ 31: Գ. *Չալոյան*, նշվ. աշխ., էջ 190, «Չայ ժողովրդի պատմություն», հ. V, էջ 191, Դ. *Տարկեսյան*, նշվ. աշխ., էջ 63-64:

գաղթածների մեծ մասը 7298 ընտանիք էրզրումի փաշայությունից էր: Բայագետի փաշայությունից գաղթել էին 4215 ընտանիք, Կարսի փաշայությունից՝ 2464, իսկ Արդահան քաղաքից՝ 67 ընտանիք⁸¹, ընդամենը՝ 14044 ընտանիք: Կա այլ տեսակետ ևս, ըստ որի այդ տարիներին արևմտահայ գաղթականների թիվը կազմել է ընդամենը 12300 ընտանիք կամ 74 հազար մարդ, որից 9682 ընտանիքը կամ 58 հազար շունչը էրզրումի նահանգից: Ընդ որում, այս թվի մեջ չեն մտցված հույն և եզդի գաղթականները⁸²:

Ինչպես ասվել է, մինչև 1830 թ. վերջերը Բայագետ քաղաքից և նրա չորս գավառներից գաղթածների թիվը կազմում էր 4215 ընտանիք կամ շուրջ 25290 մարդ:

Ժողովրդագրության հարցերով զբաղվող հետազոտողներից Բայագետի փաշայությունից հայերի ներգաղթի հարցին, առաջիններից մեկը, ներգաղթածների թվաքանակի տեսանկյունից, անդրադարձել է Ա. Մելքոնյանը:

Նորահայտ փաստերի ու տվյալների համադրումից Ա. Մելքոնյանը հանգել է այն եզրակացության, որ նշված տվյալները ուռճացված են: Նա գտնում է, որ այդ անվութությունը առաջ են գաղթել և արևմտահայ տարբեր գավառներից Չայկական մարզ ներգաղթած հայերի ընդհանուր գումարից, որոնց մեջ բայագետցիներից և ալաշկերտցիներից բացի, եղել են մահ մեծ թվով էրզրումցիներ, բասենցիներ, կարսեցիներ, վանեցիներ և այլն: Չեղինանալ պարզել է, որ Բայագետից և նրա գավառներից ներգաղթած հայերի թիվը իրականում եղել է ընդամենը 2500 ծուխ կամ 15 հազար մարդ⁸³:

Ինչպես վկայում են սկզբնաղբյուրները, մի քանի օրում Բայագետ քաղաքը և փաշայության շրջակա գյուղերը դա-

⁸¹ Տես Новые документы о переселении персидских и западных арийцев в 1828-1830 гг., ԴԱ, 1977, թիվ 3, էջ 20-21: Ա. Երիցյան, նշվ. աշխ., էջ 441:

⁸² Տես Ա. Մելքոնյան, նշվ. աշխ., էջ 189:

⁸³ Տես Ա. Մելքոնյան, Ազգաբնակչության տեղաշարժերը էրզրումի նահանգի Բայագետ, Դիարիք, համուր և Ալաշկերտ գավառներում 19-րդ դ. առաջին երեսնամյակին, ԼԳ, թիվ 5, 1988, էջ 22-23:

տարկվեցին իրենց բնիկ բնակչությունից⁸⁴: Բայազետի հայ բնակչության թիվն այնքան էր նվազել, որ տեղում մնացած հայերը կազմում էին ընդամենը 190 ընտանիք և թվաքանակով գրեթե հավասարվել էին փոքրաթիվ քրդերին⁸⁵:

Արևմտահայերի զանգվածային գաղթին բնորոշ դժվարություններով և խոչընդոտներով է անցել նաև Բայազետ քաղաքի և նրա զավառների հայ բնակչության գաղթի ճանապարհը դեպի ռուսական կայսրության սահմանները: Գաղթի ոգեշնչողներն ու կազմակերպիչները ընթերցողին արդեն հայտնի Բարսեղ և Մկրտիչ Արծրունի եղբայրներն էին: «Այս անձնագրի և քաջասիրտ եղբայրները, - կարդում ենք «Քյավառ» գրքում, - ձիեր հեծած անցնում էին գյուղից գյուղ, շտապեցնում գաղթական խմբերին, միացնում ընդհանուր քարավանին»⁸⁶, ոգեշնչում էին նրանց. «Դիմացքե, հարազատներս... շուտով կհասնենք ռուսի հողը... մեր պապերը կարկուտ ու ծյուր են տեսել, դիմացել են»⁸⁷: Այդ մասին բազմաթիվ փաստել են ականատեսները:

Ահա դրանցից մեկ երկուսը: «Բարսեղ Արծրունին անցնում էր գերդաստանից գերդաստան, ոգևորում, համոզում էր, որ Արաքսն անցնելուն պես, բոլոր դառնությունները պիտի վերանան, իրենց զավակները կաարեն հարուստ ու ապաստով կյանքով: Մեկ այլ օրինակ. «Բարսեղ Արծրունին ձին վարգելով անցավ քարավանի երկարությամբ: Մի տեղ խորհուրդ էր տալիս, մի տեղ խրախուսում, մեկ ուրիշ տեղ խնդրում էր համբերել»⁸⁸ և. Աբովյանը առաջինն էր հայ մտավորականներից, որ ուշադրություն հրավիրեց այս երևելի այրերի անձնագրի ու

⁸⁴ 1828 թ. սեպտեմբերի վերջի դրությամբ Բայազետի լիվայի 817,5 քառ. վերստի վրա ապրում էր 1635 հայ ընտանիք կամ 36 հազար մարդ, որի մեծ մասը Բայազետ քաղաքում, իսկ մնացածը 20 հայկական, 4 թուրքական և 6 քրդական գյուղերում: Տե՛ս *Ա. Մելքոնյան*, նշվ. հոդվ., ԼՂԳ, թիվ 5, 1988, էջ 21:

⁸⁵ Տե՛ս *Ա. Մելքոնյան*, նշվ. աշխ., էջ 190:

⁸⁶ «Քյավառ», էջ 42:

⁸⁷ Եույն տեղում, էջ 44:

⁸⁸ Եույն տեղում:

ազգահաճո սխրանքների վրա: «Ո՛ր թողանք մեր հոյակապ իշխանք Բարսեղ, Մանուկ, Մկրտիչ աղեքն բայազետցի, - գրում էր Աբովյանը, - որոնք իրենց բոլոր հարստությունը վատնեցին, փչացրին ու իրենց աղքատ ժողովուրդը պահելով բերին էս կողմը»⁸⁹:

Արարատյան դաշտում կուտակված բայազետահայ գաղթականությունը բաժանվեց Չայկական մարզի զանազան բնակավայրերի վրա: Նրանք մեծ մասին՝ (8464 մարդ կամ 1474 ծուխ) Արծրունի եղբայրներն առաջնորդեցին դեպի Սևանի ավազան: Վերաբնակիչները հաստատվեցին Սևանա լճի արևելյան, հարավային, մասամբ և արևմտյան ափերին: Ընդ որում, Բայազետ քաղաքից գաղթածներից 1346 մարդ (258 ծուխ) վերաբնակվեցին «Դարի գլուխ» կոչվող քարձուռուցի ստորոտում, հնամենի Գավառ անունը կրող բնակավայրի տեղում, իսկ նրա շրջակա գյուղերից եկածներից 2318 մարդ (409 ծուխ) հաստատվեցին սույն շենի մերձակա տարածքներում՝ գլխավորապես Գավառագետի ավազանում: Ալաշկերտից և նրա շրջակա գյուղերից եկվորները՝ 4800 մարդ (807 ծուխ) հիմնվեցին ներկայիս Մարտունիի և Վարդենիսի ենթաշրջանների տարածքներում: Նրանց մեջ կային նաև 11 ծուխ (73 մարդ) մշեցիներ: Փաստորեն մեկուկես տարվա ընթացքում սույն մահալում բնակություն է հաստատել ընդամենը 8537 մարդ (1485 ծուխ), որից 8464-ը (1474 ծուխ) գաղթել են Բայազետից և նրա զավառներից:

Բազմաթիվ աղբյուրների տվյալներով նշված տարիներին Բայազետի փաշայությունից և Արևմտյան Չայաստանի մյուս բնակավայրերից 3263 մարդ (539 ծուխ), որից 2206-ը (379 ծուխ) կամ 67,6%-ը բաժին էր ընկնում Բայազետի հայությանը, տարահանվեց Դարաչիչակի մահալ, իսկ 231 արևմտահայեր (38 ծուխ), այդ թվում 203-ը (33 ծուխ), կամ 87,9%-ը Բայազետի հայությունից հաստատվեցին Դրխուրլաղի մահալում:

Այսպիսով, վիճակագրական տվյալների համադրությամբ ցույց է տալիս, որ 1829-1830 թթ. Արևմտյան Չայաստանի զանազան շրջաններից Գյուլշահ-Դանգիզի, Դարաչիչակի և Դրխուր-

⁸⁹ Տե՛ս *Գ.Արարտիդյան*, նշվ. աշխ., էջ 29:

8	Ոլտաւ Յիւճառաւորի Յիւճառաւոր Կառնկերտն, Գրոյտաւոր, Լորտաճն և Արեւմտեան Կառնկերտն	30	93	96	179	30	93	96	179	30	93	96	179
9	Գաղտն Յիւճառաւորի Կառնկերտն	258	698	648	1346	258	698	648	1346	258	698	648	1346
10	Պաւլոսի Յիւճառաւորի Կառնկերտն	140	361	345	709	140	361	345	709	140	361	345	709
11	Յիւճառաւորի Կառնկերտն Յիւճառաւորի Կառնկերտն	73	252	237	489	73	252	237	489	73	252	237	489
12	Միտառնի, Իմրոմ Գառնկերտն և Գառնկերտն Կառնկերտն	81	245	219	464	81	245	219	464	81	245	219	464
13	Պաւլոսի Յիւճառաւորի Կառնկերտն Կառնկերտն	118	358	342	700	118	358	342	700	118	358	342	700
14	Բրազաւոր Յիւճառաւորի Կառնկերտն	42	132	134	266	42	132	134	266	42	132	134	266
15	Քաւ Քիւր Արեւմտեան Կառնկերտն Կառնկերտն	28	86	92	178	28	86	92	178	28	86	92	178

16	Կառնկերտն, Իմրոմ Կառնկերտն Կառնկերտն	13	47	34	81	44	127	124	251	97	174	156	332
17	Կառնկերտն, Իմրոմ Կառնկերտն Կառնկերտն	60	212	177	389	60	212	177	389	60	212	177	389
18	Կառնկերտն, Իմրոմ Կառնկերտն Կառնկերտն	46	166	132	298	46	166	132	298	46	166	132	298
19	Կառնկերտն, Իմրոմ Կառնկերտն Կառնկերտն	23	77	74	151	23	77	74	151	23	77	74	151
20	Կառնկերտն, Իմրոմ Կառնկերտն Կառնկերտն	16	54	45	99	16	54	45	99	16	54	45	99
21	Կառնկերտն, Իմրոմ Կառնկերտն Կառնկերտն	2	5	5	10	2	5	5	10	2	5	5	10
22	Կառնկերտն, Իմրոմ Կառնկերտն Կառնկերտն	19	62	69	121	19	62	69	121	19	62	69	121
23	Կառնկերտն, Իմրոմ Կառնկերտն Կառնկերտն	17	56	42	98	17	56	42	98	17	56	42	98
24	Կառնկերտն, Իմրոմ Կառնկերտն Կառնկերտն	36	117	95	212	36	117	95	212	36	117	95	212
25	Կառնկերտն, Իմրոմ Կառնկերտն Կառնկերտն	39	133	114	247	39	133	114	247	39	133	114	247
26	Կառնկերտն, Իմրոմ Կառնկերտն Կառնկերտն	16	49	50	99	16	49	50	99	16	49	50	99

Ուսատարների միացվելուց հետո երեք մասիվների ընդհանուր բնակավայրերի և բնակչության պատկերը
 հետևյալ բլերով է արտահայտվում

Այդտակ 8

Մասի- ներ	Տարա- ծությունը	Բնակավայրերի քիվը												
		հայկական						մանրերկամ						
		ձուռն էվկմոսնը	ստղղ էվկմոսնը	մղղսմսնը	ձուռն էվկմոսնը	ստղղ էվկմոսնը	մղղսմսնը	ձուռն էվկմոսնը	ստղղ էվկմոսնը	մղղսմսնը	ձուռն էվկմոսնը	ստղղ էվկմոսնը		
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15
Ղղղոս- լսնի	680 քսո. վղղսն	8	13	+5	13	7	6	-1	6	2	3	+1	3	22
Ղղղոսի- սսնի	1,6 հսղղղ քսո. վղղսն	2	19	+17	19	15	13	-2	13	3	5	+2	5	37
Ղղղոսի	1906,2 քսո. վղղսն	1	24	+23	24	34	34	-	34	1	1	-	1	59
Ղղղոս- ննը	4186,2 քսո. վղղսն	11	56	45	56	56	53	-3	53	6	9	+3	9	118

Մնղղոս քսոկմոսնը	Բնակչության քիվը																						
	հայեր						մանրերկամներ																
	մղղղոսնի առսղղ			մղղղոսնի հետո			մղղղոսնի առսղղ			մղղղոսնի հետո													
	ղղղ	ղղղսն	%	ղղղ	ղղղսն	%	ղղղ	ղղղսն	%	ղղղ	ղղղսն	%											
16	17	18	19	20	21	22	23	24	25	26	27	28	29	30	31	32	33	34	35	36	37	38	39
1779	262	1396	743	653	78,5	3053	516	2670	1427	1243	87,5	1779	81	383	205	178	21,5	3053	81	383	205	178	12,5
1852	92	552	298	254	20,8	8650	1437	7356	3856	3481	85	1852	231	1300	718	582	70,2	8650	231	1300	718	582	15
5697	15	90	52	38	1,8	14254	1506	8647	4509	4138	80,6	5697	999	5607	3164	2443	84,2	14254	999	5607	3164	2443	38,4
9328	369	2038	1080	945	22	25957	3453	18687	9795	8872	71,9	9328	1311	7296	4087	3203	78	25957	1311	7296	4087	3203	28,1

Պարզորոշ երևում է, որ 1828-1831թթ. Դրխբուլաղի, Դառաչիչակի և Գյուլջայի մահալների բնակչությունը՝ պարսկահայերի և արևմտահայերի զանգվածային ներգաղթի հաշվին կտրուկ ավելացել է և ավելի քան 9,3 հազարից (1680 ընտանիք) հասել է շուրջ 26 հազարի (4764 ընտանիք): Այսինքն, երեք տարվա կտրվածքով, մահալների բնակչության ընդհանուր թիվն ավելացել է 2,7 անգամ կամ 64%-ով: Նույն ժամանակ, հայերի տեսակարար կշիռը ընդհանուր բնակչության կազմում հասել էր 71,9%-ի (18667 մարդ կամ 3453 ընտանիք) Ռուսաստանին անցնելու նախօրյակի 22%-ի դիմաց (2038 մարդ կամ 369 ընտանիք): Դա նշանակում է, որ հիշյալ տարիներին ամբողջ բնակչության կազմում աճել է հայերի թիվը, և մահմեդականների նկատմամբ պահպանվել է նրա քանակական գերակայությունը: Նույն ժամանակ, մահմեդական բնակչության մոտ տեղի է ունեցել կրճատում՝ 78%-ից նվազել է 28,1%-ի: Լորաբնակները գլխավորապես արևմտահայեր էին:

Վերջիններիս թիվն այս ընդարձակ շրջանում հաշվվում էր 12051 շունչ (2062 ծուխ), որը կազմել է ամբողջ ներգաղթածների 72,5%-ը: Նրանց տեսակարար կշիռը բնակչության ընդհանուր թվի մեջ հասել է 46,4%-ի:

Ռուսաստանին անցնելու նախօրյակին նշված մահալների զբաղեցրած տարածքի վրա կանգուն բնակավայրերի թիվը եղել է ընդամենը 73: Լքյալ և նոր կառուցված գյուղերի բնակեցման շնորհիվ բնակավայրերի թիվը ավելացել է ևս 45-ով և հասել է 118-ի:

Այսպիսով, ամբողջ շարադրանքից կարելի է անել հետևյալ եզրակացությունները. նախ պարսկահայերի և արևմտահայերի զանգվածային ներգաղթը Գայկական մարզի, այդ թվում և ապագա Նոր Բայազետի գավառի համար ունեցավ բացառիկ նշանակություն: Նրանց վերաբնակեցման շնորհիվ տեղի ունեցան էթնոժողովրդագրական ուշագրավ իրադարձություններ: Գայկական հին բնակավայրերի վերականգնումն ու նորերի հիմնումը և մահմեդականների նկատմամբ հայ բնակչության թվային գերակշռությունը այլևս իրողություն էին: Տնտեսության

մեջ քոչվոր անասնապահությունը իր տեղը զիջեց երկրագործական մշակույթին:

Շնորհիվ այդ փոփոխությունների Գայկական մարզը և նրա մասը կազմող խնդրո առարկա տարածքը փրկվեցին օտարին բաժին դառնալուց:

Միաժամանակ, գաղթը Պարսկահայաստանի և Արևմտյան Գայաստանի համար ունեցավ կործանարար հետևանքներ: Արտագաղթը պատմական Գայաստանի վերոգրյալ հատվածներում հանգեցրեց հայ բնակչության թվաքանակի կրճատմանը, տնտեսության և մշակութային կյանքի անկմանը: Սրա հետ անմիջականորեն կապված սկսվում է մահմեդական ժողովուրդների զանգվածային տեղաշարժերը դեպի Գայկական այդ տարածքները:

Նրանք զբաղեցնում էին հայերի արտագաղթի հետևանքով անմարդաբնակ մնացած գյուղերը: Գաստատվելով հայկական լքյալ գյուղերում մահմեդական տարրը իր բացասական ազդեցությունը թողեց ինչպես Արևմտյան Գայաստանի, այնպես էլ Պարսկահայաստանի էթնիկական քարտեզի վրա: Մեծապես կրճատվեց Արաքսի աջ ափից այն կողմ ընկած հայության երկու հատվածների թիվը, փոխարենը կտրուկ ավելացավ մահմեդական բնակչության տեսակարար կշիռը: Ցավալի է, բայց դիտար է, որ արտագաղթը սկիզբ դրեց, հեռանկարի իմաստով, մեր պատմական հայրենիքի մեծ մասի կորստին, թեև Արևմտյան Գայաստանը մինչև առաջին աշխարհամարտը շարունակում էր մնալ հայաբնակ:

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԳ

Նոր Բայազետի գավառը Անդրկովկասի և Արևելյան Հայաստանի վարչատարածքային բաժանումների հղովույթում XIX դ. 30-40-ական թվականներին

Անդրկովկասի և Արևելյան Հայաստանի միացումով Ռուսաստանի արտաքին քաղաքականությունը բովանդակային առումով բնակոխեց որակական նոր փուլ:

Տարածքային նվաճումների հետ մեկտեղ կայսրության զարգացման շահերը պահանջում էին ձեռնարկել և իրականացնել պետության քաղաքական ու տնտեսական ամրապնդման միջոցառումներ, որոնք արմատական փոփոխություններ պիտի մտցնեին նորագրավյալ տարածքների վարչատարածքային կառուցվածքում և բնակչության սոցիալ-տնտեսական և մյուս հարաբերություններում:

Դրանք նորանվաճ երկրամասում ամրապնդվելու և այն ամբողջովին յուրացնելու ուղիների հարցում Ռուսաստանի կառավարության ունեցած պատկերացումներն էին, նրա որդեգրած քաղաքականությունը:

Անդրկովկասի երկրամասում այդ խնդիրների լուծումն ուներ առանձնահատուկ բնույթ: Նախ, անհրաժեշտ էր վերջ տալ հավատակից և ցեղակից տիրապետողներին փոխարինելու եկած քրիստոնյա Ռուսաստանի համոզիչ տեղի մահմեդական բնակչության թշնամանքին ու ստեղծությանը: Կարևոր մեկ բացասական գործոն: Պարսկա-թուրքական դարավոր տիրապետությունը Անդրկովկասի ժողովուրդներին, այդ թվում և արևելահայությանը տնտեսապես շահագործելուց, կեղծելուց, ազգային ու կրոնական բռնաճնշումներից և ստորացումներից բացի, նրանք վարժեցրել էր այնպիսի ապրելակերպի, երբ պետիրական և տնտեսական հարաբերություններում օրենքի իշխանության փոխարեն գործում էին հիմնականում մուսուլման ժողովուրդների ազգային կենսակերպից և գոյածին հարիր

հոռի բարքերն ու սովորույթները: Այդ վիճակը շարունակվում էր նաև երկրամասը Ռուսաստանին անցնելուց հետո: Երևույթների նման ընթացքը, անշուշտ, իր հետ բերում էր անկայունություն ու խառնաշփոթ, պետականության հասկացության թերի ըմբռնում, ինչը կարող էր վտանգել երկրի կայունությանը և կայսրության հարավային սահմանները հեշտ խոցելի դարձնել արտաքին թշնամիների համար:

Տնտեսական տեսանկյունից ևս խնդիրն ուներ արդիական հնչեղություն: Նվաճված տարածքներում տեղական ժողովուրդների վարչական և օրենսդրական հնացած համակառույցի փոխարեն ռուսական վարչաձևերն ու օրենքներ մտցնելով, գործի էին դրվում հաստատուն օրենքներ հարկային սեղանում:

Ռուսական իշխանությունները գիտակցում էին ստեղծված վիճակը արագ հաղթահարելու անհրաժեշտությունը: Գեներալ Պասկևիչը, որին համեմարարված էր Անդրկովկասում, ինչպես նաև Արևելյան Հայաստանում բարեփոխումներ անցկացնելու խնդիրը, 1830 թ. ապրիլին Նիկոլայ Ա-ին գրած նամակում նշում էր, որ Անդրկովկասում ռուսական վարչաձևերի և օրենքների տարօրինակ խառնուրդ է ստեղծվել վրացականի և մուսուլմանականի հետ, հարկերի գանձման սիստեմն անկանոն է, պաշտոնատար ամենաց իրավունքների ու պարտականությունների մեջ գոյություն ունի անորոշություն: Միասնություն չկա ոչ կառավարման ձևի, ոչ օրենքների և ոչ էլ ֆինանսական սիստեմի մեջ: «Չարիքի արմատը, - գրում է նա, - գտնվում է հենց քաղաքացիական մասի կառավարության մեջ»¹:

Ռուսաստանի պաշտոնական վրջատակների տեսակետն էր. «Անդրկովկասը կապել Ռուսաստանի հետ քաղաքացիական և քաղաքական կապերով իբրև մեկ մարմին և ստիպել տեղի բնակիչներին խոսել, մտածել և զգալ ռուսաբար»²:

Այսպիսով, Անդրկովկասում վրջատակների փոփոխություններ անցկացնելու խնդիրը կայսրության շահերից բխող կենսական անհրաժեշտություն էր: Հարց է ծագում. Ռու-

¹ Վ. Պարսմյան, *Շ. Հարությունյան*, Եջվ. աշխ., էջ 67-68:

² «Колониальная политика Российской империи в Азербайджане в 20-60-х гг XIX в», ч. 1, М.-Л., 1936, с. 21.

ասատանի կառավարությունը ինչպես էր պատկերացնում այս գործընթացը և մասնավորապես ի՞նչ ռազմավարություն էր վարում այդ ուղղությամբ, այսինքն՝ խոսքը վերաբերում է ինչից պետք է սկսեր հարցին: Հենց սկզբից նշենք, որ երկրի ղեկավարությունը փաստորեն նոր եղանակներ չկիրառեց խնդիրը լուծելու համար, այլ կենսագործեց նախկինում փորձարկված և բազմիցս կենսունակությունը ապացուցած ուղին, որն էր Անդրկովկասը տարածքային վերածման ենթարկելով ստեղծեց վարչատարածքային նոր համակարգ: Ընտրված ուղին դարձավ պետական քաղաքականություն, որն իր արտահայտությունը գտավ XIX դ. 30-40-ական թվականներին Անդրկովկասում և Արևելյան Հայաստանում մեկը մյուսին հաջորդող վարչատարածքային փոփոխությունների ծրագրերի փնջում: Տարածքային վերածնունդները և ըստ այդմ վարչակառավարման նոր համակարգի ստեղծումը ներկայացնում էին որպես մեկ ընդհանուր ռազմավարական ուղղություն, որը, ինչպես ենթադրում էին Ռուսաստանի իշխանությունները, թույլ կտար նորագրավյալ տարածքներն առանց ցեղունների և այլևայլ բարդությունների «ներծծել» կայսրության մեջ:

Հատկանշական է, որ Երևանի և Նախիջևանի խանություններում ռուսական իշխանությունները մասնակցել վարչական փոփոխություններ սկսում են տակավին այս խանությունների ռազմակալման հետ միաժամանակ: Արևելյան Հայաստանում Ռուսաստանը, առաջին անգամ, իշխանության մարմնի տեսքով ներկայացել է 1827 թ. հոկտեմբերի 6-ից, երբ գեներալ Պասկևիչի հրամանով ստեղծվեց Երևանի ժամանակավոր վարչությունը: Ռազմավարական բնույթի սույն վարչությունը, որը կոչված էր իշխանություն իրականացնել զրավյալ ժողովուրդների նկատմամբ, ընդամենը կես տարվա կյանք ունեցավ: 1828 թ. մարտի 21-ին կայսր Նիկոլայ Առաջինը Սեֆառի անունից հրովարտակարգի արձակեց, որով Երևանի և Նախիջևանի խանություններից և Օրդուբադի օկրուգից ստեղծվեց Հայկական մարզը: Նրանում մասնավորաբար ասված է. «... Պարսկաստանից Ռուսաստանին միացված Երևանի և Նախիջևանի խանություններն այսուհետև բոլոր գործերում անվանել Հայկական մարզ և

մտցնել մեր տիրոջսի մեջ»⁷: Այս հրամանագրի հետ աղերս ուներ Պասկևիչի կողմից ժամանակավոր վարչությունը լուծարելու մասին հրամանի արձակումը: Մարզը բաժանվում էր երկու՝ Երևանի և Նախիջևանի գավառների և Օրդուբադի օկրուգի: Նորաստեղծ մարզի կառավարումը հանձնարարվեց բարձրաստիճան զինվորականներից կազմված մարզային վարչությանը,⁸ որի ղեկը ստանձնեց գեներալ Գավառլադեն, իսկ 1830 թ. մինչև 1838 թ. այդ պաշտոնը վարեց իշխան Վ. Բեհրուբովը:

«Հայկական մարզի կառավարման կանոնների մասին» 1833 թ. հունիսի 23-ին Պետական խորհրդի ընդունած որոշման համաձայն մարզում անցկացվեց վարչատարածքային նոր բաժանում՝ ձևափոխվեց նրա վարչական քարտեզը՝ Երևանի գավառը բաժանվեց չորս օկրուգների՝ Երևանի, Շարուրի, Արարատի և Սուրմալուի⁹: Յուրաքանչյուր օկրուգ բաժանվեց ավելի փոքր վարչական միավորների՝ մահալների և գյուղերի: Խնդրի առարկա Գյուլչայի, Դարաչիցակի և Դրխուրլաղի մահալները մտան Երևանի օկրուգի կազմի մեջ: Վերը նշված որոշման կիրարկման առաջին քայլերից մեկը այն եղավ, որ վարչական պաշտոններից հեռացվեցին խանական շրջանի նախկին պաշտոնյաները՝ խաները, բեկերը, մելիքները և աղաները¹⁰:

Որպես կանոն նորաստեղծ վարչական կառույցներում ղեկավար պաշտոններ էին զբաղեցնում ռուսական քաղաքացիական կամ զինվորական աստիճանավորները, թեև առանձին դեպքերում նշանակվել են նաև հայեր:

Նախիջևանի և Օրդուբադի վարչական կառույցները պահպանվեցին:

⁷ Полное собрание законов Российской империи, II собр., т. III, 1828 N – 1888: “Собрание актов, относящихся к обозрению истории армянского народа”, т. I, М., 1833, с. 278; “Присоединение Восточной Армении к России”, т. II, с. 566-568.

⁸ Կարչության կազմում ընդգրկվեցին երկու ռուս բարձրաստիճան զինվորականներ, մեկ հայ և մեկ մահմեդական տեղական ընտրյալ դասի ներկայացուցիչներից: Կուլեգայի հայ ներկայացուցիչ եղել է Ներսես Աշտարակեցին:

⁹ Տե՛ս *Н. Шонен*, նշվ. աշխ., էջ 448:

¹⁰ Տե՛ս «Հայ ժողովրդի պատմություն», հ. V, էջ 215:

Հունիսի 23-ի որոշմամբ Նախիջևանի պրովինցիան և Օրդուբադի օկրուզը թողնվեցին նախիբների կառավարման ներքո. «Նախիջևանի և Օրդուբադի... նախիբներին էսքան խանին և Շխալի-բեկին, որոնց այդ վայրերում զեմստվային իշխանություն է տրված, թողնել իրենց կոչման ու պաշտոնի մեջ...»⁷:

Ուղղորդվելով նշված օկրուզներում հին վարչակարգը պահպանելու և մահմեդական բնակչության երբեմնի ազդեցիկ և թելադրող կարգավիճակը չխախտելու Ռուսաստանի շուկհիստ ղեկավարության քաղաքականությամբ, տեղերում այդ քաղաքականությունը կուրորեն իրականացնող պաշտոնյաները, առանձին դեպքերում շատ ավելի հեռու գնացին: Այսպես, տվյալ ժամանակաշրջանի իրադարձությունների ամփոփական և ակտիվ մասնակից Ա. Գրիբոյեդովը, որին խնդրո առարկա հիմնահարցը ուսումնասիրող խորհրդային բոլոր պատմաբանները, չնչին բացառությամբ, համարել են հայ ժողովրդի շահերի պաշտպան, Ի. Պասկևիչին հորդորում էր Նախիջևանի 500 ընտանիք (այդ թվում ներգաղթողներից) կամովին կամ հարկադրաբար տեղափոխել այլ վայրեր և նրանց տեղը բնակեցնել մահմեդականներով⁸:

Այս ամենից հետևում է, որ Ռուսաստանին անցած Արևելյան Հայաստանի պարսկական մասում, մասնավորապես Նախիջևանում և Օրդուբադում անցկացվող ինչպես ընդհանուր, այնպես էլ մասնակի վարչատարածքային բաժանումներն ու վերաբաժանումներն ուղեկցվում էին նախկին վարչամիավորների լրիվ կամ մասնակի պահպանմամբ: Փաստորեն Անդրկովկասի նորագրավյալ մյուս տարածքների օրինակով Հայկական մարզում ևս վարչական նոր վերաբաժանումների ժամանակ հին բոլոր վարչական կառույցները չլուծարվեցին, և ստեղծվել էր մի իրավիճակ, երբ դեռ ռուսական կայսրության կիսնախկին նոր կառույցները չէին արմատնալվել, իսկ օրենքների կիրարկման համար համապատասխան օրենսդրական

⁷ "Полное собрание законов Российской империи", т. VIII, 1833, N 62, 82.

⁸ Sbu A. Берже, А. Грибоедов. Деятельность его как дипломата (1827-1829гг.).- Русская старина, СПб., 1874, с.747-748:

դաշտ չկար, հինն ու նորը դեռ զուգորդված էին և ներկայացնում էին հնի ու նորի հակադրությունների միասնություն:

Հայր է ծագում, ինչու այնպես եղավ, որ քրիստոնյա Ռուսաստանը հավատակից հայերից առավել վստահում էր մահմեդականներին:

Նախ, հենց սկզբից նշենք, որ գաղութատեր Ռուսաստանի ղեկավարությունը չէր վստահում թե հայերին և թե, առավել ևս մուսուլմաններին: Այդ քաղաքականության պատճառները շատ ավելի բազմաշերտ են ու խորը, քան կարող է թվալ առաջին հայացքից: Առաջին, ռուսական պետության համար քաղաքական առումով շահեկան չէր, որ իր հարավային նորահաստատ և «փխրուն» սահմանը բնակեցված լիներ եթնիկական միատարր կազմ ունեցող մեծաթիվ բնակչությամբ, որն, անշուշտ, հակառուսական անջատողական տրամադրություն սնուցող գործոն էր: Երկրորդ, երկու ժողովուրդներից որևէ մեկի անհնազանդության և կենտրոնախույզ ձգտումների դեպքում, մյուսին հակակշռելու համար: Երրորդ, տեղի մուսուլման բնակչության համակրանքին արժանանալու, նրա վերնախավին սիրաշահելու և իր կողմը գրավելու համար: Չորրորդ, հաշվի էր առնվում նաև այն հանգամանքը, որ մուսուլման ժողովուրդները, որպես կանոն, շատ ավելի առաջնորդվում են ավանդույթների ու սովորույթների ուժով, քան օրենքներով:

Այսուհանդերձ, Հայկական մարզում «Կիրակված վարչական բարեփոխումները... գրում է Գ. Գալոյանը», անառարկելի դրական նշանակություն ունեցան: Բնակչության լայն զանգվածները ազատագրվեցին պարսկական խաների թալանից ու բռնադատումներից: Հայկական մարզում սկսեցին գործել ռուսական կայսրության օրենքները, որոնք սակայն գաղութային հնազանդության մեջ էին պահում նվաճված երկրամասերի ժողովուրդներին⁹:

Անցել էր քավականին երկար ժամանակ: Ռուսաստանը հասցրել էր իր տիրապետող ներկայությունը ապահովել Անդրկովկասի երկրամասի տնտեսական և քաղաքական կյանքի

⁹ Գ. Գալոյան, նշվ. աշխ., էջ 183:

կարևորագույն բնագավառներում և ուսումնասիրել նրա բնակչի մասնական պայմանները, հաղորդակցության ուղիները, տնտեսական կապերը և հետաքրքրությունները կայանալիքները:

Այս ամենը դեռ բավարար չէր երկրամասը կայսրության ամբողջական մարմնի կարևորագույն գործընկեր, կարգ ու կանոն հաստատելու, նվաճված ժողովուրդներին հնազանդության մեջ պահելու, նրանց անջատողական տրամադրություններին վերջ տալու, ակնկալվող օգուտներ ստանալու և տերության ամբողջականությունը հավերժացնելու համար: Ուսական իշխանությունները պետք է որ անհրաժեշտ եզրակացություն անեին այդպիսի իրավիճակից:

Անդրկովկասում, հատկապես Արևելյան Հայաստանում սկսված գյուղացիական հակացարակյան զանգվածային ելույթները և շարժումները նոր սրությամբ դրեցին ոչ վաղ անցյալում նվաճված տարածքներում հրատապ բարեփոխումներ անցկացնելու անհրաժեշտությունը:

Երկրամասում վարչատարածքային վերածնունդներ կատարելու գաղափարը ամփոփական արծազանք ստացավ ռուսական կառավարության կողմից, երբ 1837 թ. Նիկոլայ Ա-ն այցելելով Անդրկովկաս և Արևելյան Հայաստան արժանացավ տեղի բնակչության, այսպես կոչված անհյուրընկալ վերաբերմունքին:

Ռուսական կառավարությունը 1830-ական թթ. սկսեց ակտիվացնել Անդրկովկասում բարեփոխումներ անցկացնելու իր քաղաքականությունը և դիմեց գործնական քայլերի:

Մի այդպիսի քայլ էր ցարական կառավարության կողմից ստեղծված հատուկ հանձնաժողովը սենատոր Գանի գլխավորությամբ, որը Անդրկովկասում վարչատարածքային փոփոխությունների հարցը ուսումնասիրելու և ըստ այդմ կառավարությանը եզրակացություններ կայացնելու համար 1837 թ. ուղարկվեց Անդրկովկաս: Մեկ տարի անց՝ 1838թ. հանձնաժողովի կողմից կառավարությանը ներկայացված զեկուցագիրը բովանդակում էր նախատեսվող վարչատարածքային փոփոխությունների ամբողջ շրջանակը¹⁰: 1840 թ. ապրիլի 10-ին կայս-

րը վավերացրեց «Անդրկովկասի կառավարման կանոնադրությունը»: Կառավարությունը իսկույն նեթ ծեռնամուխ եղավ դրա կենսագործմանը: Անդրկովկասը ենթարկվեց վարչական նոր բաժանման: Առաջին քայլերից մեկն այն եղավ, որ ցուլեցին նախկին բոլոր վարչամիավորումները, այդ թվում տասներկու տարվա կենսագրություն ունեցող Հայկական մարզը:

Անդրկովկասի երկրամասում ստեղծվեց երկու խոշոր վարչատարածքային միավոր՝ Կասպիական մարզը (7 գավառներով) Շամախի կենտրոնով և Վրաց-իմերեթական նահանգը՝ Թիֆլիս կենտրոնով: 11 գավառից բաղկացած Թիֆլիսի նահանգի մեջ մտցվեց նաև Արևելյան Հայաստանի երեք Երևանի, Նախիջևանի և Ալեքսանդրապոլի (Լոռու հետ միասին) գավառները¹¹:

Ընդ որում, ինչպես այս, այնպես էլ հաջորդ վարչատարածքային բաժանումների հիմքում ընկած էր քաղաքական գործոնը՝ Ռուսաստանի կառավարությունը Արևելյան Հայաստանը դիտում էր որպես գրավված տարածք, որի հետ կարող էր վարվել ինչպես ցանկանար. միայն թե հավերժացներ կայսրության ամբողջականությունը ի շահ նրա հետագա ընդարձակմանն ու հզորացմանը:

Այլ խոսքով ազգային առանձնահատկությունների, էթնոգրավանաբանական, տնտեսական և ժողովրդագրական գործոնների հետ իշխանությունները հաշվի չէին նստում: Ըստ էության, դա կայսերապաշտական քաղաքականություն էր, որի կենսագործման ճանապարհին անենաբիրտ կերպով սոսնահարվեցին արևելահայերի և Անդրկովկասի հայության ազգային արժանապատվությունը, կրոնաբարոյական զգայունները, խաթարվեց նրա ազգային-մշակութային ժառանգության շարունակականությունը: Սա դեռ ամենը չէ: Արևելյան Հայաստանը բաժան-բաժան արվեց: Արևելահայությունը և կովկասահայությունը զոհաբերվեցին այդ վարչատարածքային փոփոխու-

¹⁰ Տես Գ. Евангулов. Местная реформа на Кавказе, СПб., 1914, с. 11.

¹¹ "Обзор Эриванской губернии за 1886г. (приложение к всеподданнейшему отчету)", Е., 1887, с. 3.

թյուններին: Վերը ասվեց, որ հայկական տարածքների մեծ մասը մտցվեց Վրաց-իմերեթական նահանգի մեջ: Այս վարչատարածքային վերածափանցումներից դժգոհելու առիթ չունեցան և Կովկասի բարձրները: Կասպիական մարզին բռնակցվեցին Այուրհիբն ու Արցախը:

Այս բաժանմանը արժե անդրադառնալ, քանզի այն շուտփուռ է Անդրկովկասի ժողովուրդների ազգամիջյան հարաբերություններին վերաբերող հարցեր: Երկրամասի ժողովուրդները ռուսական իշխանությունների կողմից դիտվում էին որպես անջատողական տարրեր: Գրանց դեմ պայքարելու համար միջոցը հայտնի էր՝ փորձված ու արդյունավետ՝ որպիսին էր, բաժանիր, որ տիրես: Անդրկովկասի երկրամասը կամայականորեն վերածնելով ցարական կառավարությունը հաշվի չէր առնում տեղական բնակչության ոչ մի սովորույթ, բորբոքում էր նրանց կրոնական զգացմունքները, բթացնում ազգային ինքնագիտակցությունը, աշխատում էր մի ժողովրդին մյուսի դեմ լարել, որպեսզի հեշտ լիներ նրանց վրա իշխելը:

Վարչատարածքային նոր համակարգից Անդրկովկասի երեք հիմնական ազգությունները հայերը, վրացիները և ադրբեջանցիները խոր տազնապի մեջ էին: Ծայրահեղորեն զրգոված էին հայերը: Արիեստածին այս համակարգը երկրամասի ժողովուրդներին հարուցել էր այլ կարգի անհարմարություններ և: Այն երկրամասի տնտեսության զարգացման համար նոր հնարավորություններ չստեղծեց, եթե չասենք, որ լուրջ դժվարություններ ու քարոզություններ հարուցեց:

Անդրկովկասը որպես լեռնային և տարածքով խիստ մասնատված տարածաշրջան ռուսական կայսրության անենադժվարամատչելի երկրամասերից մեկն էր: Ծանապարհների ցանցը չափազանց փոքր էր և խիստ անբարվոք: Եթե սրան ավելացնենք, որ ծնունդ ամիսներին դրանց մեծ մասը փակվում էր, ապա պատկերն ավելի պարզ ու հասկանալի կդառնա: Ծանապարհատրանսպորտային միջոցների բացակայության հետևանքով անհնարին էր դարձել աշխույժ կապ հաստատել նահանգային կենտրոնների և գավառների, ինչպես նաև վերջիններիս միջև:

Երկրամասն առանձնանում էր յուրահատուկ բնակլիմայական պայմաններով, գյուղատնտեսական մասնագիտացման բնույթով, տնտեսական գործունեության ձևերի բազմազանությամբ, բնակչության խտությամբ, աշխատուժի և աշխատանքային ռեսուրսների թերօգտագործմամբ:

Այս ամենը վարչատարածքային այդ կառույցների մեջ պարտադրված ընդգրկված ժողովուրդներից յուրաքանչյուրի տնտեսական զարգացման, հոգևոր-մշակութային սեփական նկատարիքը կերտելու և ազգային ինքնությունը պահպանելու համար անշրջելի վտանգ էր սպառնում:

Ի դեպ, ստեղծված տնտեսական և քաղաքական կացությունը օբյեկտիվորեն չէր բխում ռուսական կայսրության շահերից, որովհետև մի կողմից ակնկալվող օգուտները չէին ստացվում, մյուս կողմից էլ ժողովրդական գանձվածների հսկայական կորեքն ու տրամադրություններն էին բորբոքվում: Փաստորեն Ռուսաստանի կառավարության սպասումները հետազայուն չարդարացան, ուստի և նրա իշխանությունների կողմից այլև չէր խրախուսվում ստեղծված կացությունը: Գնաց դա է վկայում այն փաստը, որ Անդրկովկասը կայսրության համար էլ ավելի շահավետ դարձնելու և նրանից առավելագույնը ստանալու ընչաքաղցությամբ ցարական կառավարությունը ծեռնամուկն եղավ երկրամասը նոր վարչատարածքային վերածնան ենթարկելու փորձված մեթոդին: Երկրամասում առաջին անգամ նոր վարչամիավորներ ստեղծելուց յոթ տարի անց՝ 1846 թ. դեկտեմբերին Վրաց-իմերեթական նահանգը բաժանվեց Թիֆլիսի և Քուբայիսի նահանգների, որոնցից յուրաքանչյուրի մեջ ընդգրկվեց 5-ական գավառ: Արևելյան Զայաստանի մեծ մասը՝ Երևանի, Նախիջևանի և Ալեքսանդրապոլի գավառները միացվեցին Թիֆլիսի նահանգին: Երևանի գավառն իր մեջ ներառում էր նաև Գյուլչայի, Դարաչխալկի և Դրխուրլաղի գավառակները (ենթաշրջանները):

Անդրկովկասի երկրամասի սահմանազատման այս քարտեզը անփոփոխ մնաց մինչև XIX դ. 40-ական թվականների վերջը: Այս վերածափանցում, սակայն, չունեցավ իր դրական հետևանքները:

Տարիներ պետք է անցնեին, որպեսզի ակնհայտ այդ իրողությունը ընկալեին և անհրաժեշտ հետևության հանգեին ռուսական իշխանությունները՝ գործնական քայլեր կատարելու, կայսրության մեջ զործող օրենքները երկրամասի վրա տարածելու համար: Նոր քայլը այդ ուղղությամբ կատարվեց 1849 թ.: 1849 թ. հունիսի 9-ին ռուսական կառավարությունը հրատարակեց երևանի նահանգ ստեղծելու մասին հրամանագիրը, որը ուժի մեջ մտավ 1850 թ. հունվարի 1-ին:

Սրա հիման վրա Արևելյան Հայաստանի մեծ մասի վրա ստեղծվեց երևանի նահանգը: Այս վարչական միավորի մեջ ընդգրկվեցին երևանի, Նախիջևանի և Ալեքսանդրապոլի գավառները, որոնք իրենց հերթին տրոհվեցին նոր վարչամիավորների՝ երևանի, Նախիջևանի, Ալեքսանդրապոլի, Նոր Բայազետի և Օրդուբադի գավառների¹²: Սույն նահանգի ընդհանուր տարածքը (ներառյալ Սևանա լիճը՝ 2531 քառ. սաժեն կամ 1224,2 քառ. վերստ) կազմում էր 505,27 քառ. սաժեն կամ 24447,7 քառ. վերստ: Այն տարածվում էր հյուսիսային լայնության 41°11 և 38°51, արևելյան երկարության 80°51 և 63°53 աստիճանների միջև: Հյուսիսից սահմանակից էր Ախալքալաքի և Բորչալուի գավառներին, թիֆլիսի նահանգին, Ղազախի և Գանձակի շրջաններին (վերջիններս գտնվում էին Գանձակի գավառի կազմում), արևմուտքից՝ Կարսի մարզին, արևելքից՝ Ջիվանջիրի և Ջանգեզուրի գավառներին, Գանձակի գավառին, իսկ հարավից՝ Բայազետի սանջակին, Թուրքիային և Պարսկաստանին¹³: Խնդրո առարկա Նոր Բայազետի գավառը, որը տարածվում էր հյուսիսային լայնության 39°55 և 40°40, արևելյան երկարության 62°2 և 63°41-ի շրջանակներում¹⁴, երևանի նահանգի ամենաընդարձակ գավառն էր: Նրա ընդհանուր տարածքը (առանց Սևանա լճի) կազմում էր 8651 քառ. սաժեն կամ 4186,2 քառ.

¹² "Обзор Эриванской губернии за 1886г. (приложение к всеподданнейшему отчету)", с. 3.

¹³ ՏՆՍ ՀԱԱ, ֆ. 1284, ց. 223, գ. 184, ք. 4:

¹⁴ ՏՆՍ Ե. Հայասն, Գեղարքունիք կամ Նոր Բայազետի գավառ, Թիֆլիս, 1908, էջ 4:

վերստ¹⁵: Նոր Բայազետի գավառի մեջ ընդգրկվեցին Գյուլչայի, Դարաչիչակի և Ղրիսուրլաղի գավառակները:

Վարչատարածքային այս միավորը հյուսիսից սահմանակից էր երևանի նահանգի Ալեքսանդրապոլի, հարավից՝ Նախիջևանի, արևմուտքից՝ երևանի գավառներին, հյուսիս-արևելքից՝ Թիֆլիսի նահանգին և Գանձակի ու Ղազախի գավառներին, իսկ արևելքից՝ Ջիվանջիրի գավառին¹⁶:

Այսպիսին էր վարչատարածքային համակարգը Անդրկովկասի երկրամասում ընդհանրապես և երևանի նահանգում մասնավորապես մինչև XIX դ. 60-ական թվականները, երբ ցարական կառավարությունը կայսրության տնտեսական և հեռանկարի իմաստով նաև ծավալապաշտական մղումներից էլնելով երկրամասի իր իսկ թելադրանքով սահմանափակած վարչատարածքային քարտեզը ենթարկեց նոր վերածննդ:

1867 թ. դեկտեմբերի 9-ի կանոնադրությամբ վերակազմվեց երևանի նահանգը՝ նախկին գավառներից երկուսի միացման և նոր մեկ գավառի ստեղծման տեսքով: Երևանի գավառի նախկին տարածքը բաժանվեց երկու մասի՝ ստեղծվեցին երևանի և Էջմիածնի գավառները, իսկ Օրդուբադի գավառը միացվեց Նախիջևանի գավառին: Այս վերաբաժանման արդյունքում երևանի նահանգի գավառների թիվը մնաց անփոփոխ, բայց արդեն փոփոխված սահմաններով և նոր վարչամիավորների տեսքով, որպիսիք էին երևանի, Ալեքսանդրապոլի, Նոր Բայազետի, Նախիջևանի և Էջմիածնի գավառները:

Բնակլիմայական անհարմարությունների պատճառով արհեստագործության, գյուղատնտեսության և առևտրի բնագավառներում առաքացած դժվարությունները երևանի նահանգի սահմանազատումը դարձրին անխուսափելի: 1872 թ. Ու-

¹⁵ "Обзор Эриванской губернии за 1886г. (приложение к всеподданнейшему отчету)", с. 3.

¹⁶ "Труды Закавказского статистического комитета. Земельная дачи Эриванской губ. вып. II дачи Ново-Баязетского уезда", Тифлиси 1905, с. 38.

սաստանդի կառավարությունը վերստին երևանի նահանգը վարչական բաժանման է ենթարկում:

Նահանգի տարածքի վրա հիմնվեցին ևս երկու նոր գավառներ. Էջմիածնի գավառը բաժանվեց երկու գավառների՝ Էջմիածնի և Սուրմալուի, իսկ Նախիջևանի գավառը վերակազմվեց Նախիջևանի և Շարուր-Ղարալագյազի գավառների: Նույն կանոնադրությամբ Ղրիսուկլաղի գավառակի տարածքի որոշ մասը միացվեց Երևանի գավառին: Այսպիսով, նախորդ վարչատարածքային բաժանումից հինգ տարի անց Երևանի նահանգը բաժանվեց յոթ գավառների՝ Երևանի, Ալեքսանդրապոլի, Նոր Բայազետի, Նախիջևանի, Շարուր-Ղարալագյազի, Էջմիածնի և Սուրմալուի: Ի դեպ, ցարական Ռուսաստանի 44-ամյա տիրապետության ժամանակաշրջանում Արևելյան Չայաստանի սահմաններում ինքնակալության իրականացրած մի շարք ընդհանուր և մասնակի վարչատարածքային փոփոխությունների ամբողջական շրջալուծում սա վերջինն էր, և այս համակարգը պահպանվեց մինչև 1917 թ.¹⁷ Ռոմանովների ավելի քան 300-ամյա միապետության տապալվելը:

Վարչական տեսակետից գավառները բաժանվում էին մահալների (ենթագավառների), իսկ վերջիններս՝ գյուղերի: Ցարական վարչակարգը տեղական ինքնակառավարման գործերին սկզբնական շրջանում, մինչև 1870-ական թվականների ռեֆորմները չէր խառնվում, և հայկական գյուղերի կառավարումը իրականացվում էր համայնքային կարգով: Յուրաքանչյուր գյուղ, փոքր թե մեծ կազմում էր ինքնուրույն համայնք, որն ուներ տվյալ բնակավայրի բնակչության կողմից ընտրված տանուտերը¹⁸: 1875 թ. ցարական կառավարության տեղական ինքնակառավարման մասին օրենքով սահմանվում էր մի քանի գյուղերի միավորումը մի գյուղական հասարակության մեջ¹⁹:

Գյուղական հասարակությունները կազմվում էին շրջակա մի քանի բնակավայրերի միավորումով, որոնց վարչական կենտրոն էին հանդիսանում համեմատաբար մեծ, վարչական

տվյալ կառույցի կենտրոնում գտնվող, բանուկ ճանապարհներ ունեցող բնակավայրերը, ուր և նստում էին տվյալ հասարակության կողմից ընտրված տանուտերը, գյուղական դատավորները և ոստիկանական վերակայունը:

Գյուղական հասարակությունը ղեկավարում էր տանուտերը (գալավարը) որին, իսկ մեծ համայնքներում նաև օգնականին և գյուղապետերին, ընտրում էր համայնական ընդհանուր ժողովը, որին մասնակցում էին տվյալ գյուղական հասարակության մեջ մտնող բոլոր գյուղերի ծխատները: Տանուտերը ընտրվում էր միայն մեկ ժամկետով և իրավունք չուներ անընդմեջ երկրորդ ժամկետով վերընտրվելու²⁰: Տանուտերերը հաստատվում էին նահանգապետի կողմից²¹: Նրանք պարտավոր էին կարգավորել գյուղերի միջև ծագած վիճելի հարցերը, զբաղվել հարկերի հավաքման, ջրանցքների անխափան աշխատանքի ապահովման և այլ խնդիրներով²²:

Նահանգական վարչակարգի նմանկատուրայի ամենացածր սանդղակին կանգնած տանուտերերը հասարակական հիմունքներով աշխատող շինովնիկներ էին և այդ ծառայության դիմաց պետության միջոցներից չէին վարձատրվում:

Նրանք ազատվում էին պետական հարկերից, տուրքերից և այլ պարհակներից, վարձատրվում էին համայնքի հաշվին: Աշխատավարձի չափը որոշում էր ընդհանուր ժողովը²³:

Չայտնի է, որ XIX դ. երկրորդ կեսից ռուսական ինքնակալությունը պարտադրված կայսրությունում իրականացրեց մի շարք բարեփոխումներ:

1864 թ. հունվարի 20-ի օրենքով երկրում անցկացվեցին դատական բարեփոխումներ, որոնց արդյունքում տեղերում գործող ոստիկանությունները զոկվեցին դատական իշխանությունից²⁴: Նման մոտեցման արդյունքում, այդ լիազորության

¹⁷ Տես Ի. Ղարիբյան, Արժափ - Սեղամոր, Ե., 2006, էջ 170-172:

¹⁸ Տես նույն տեղում, էջ 172-173:

¹⁸ Տես նույն տեղում, էջ 173:

²⁰ Տես «Մշակ», 29 դեկտեմբերի, 1898 թ.:

²¹ Տես *Ա. Մելրոյան*, նշվ. աշխ., էջ 199:

²² Տես *С.Зевазаров*. Исследования по истории учреждений в Закавказье, ч. I, Казань, 1889, с. 100-101; «Չայ ժողովրդի պատմություն», հ. VI, Ե., 1981, էջ 17, *Ա. Մելրոյան*, նշվ. աշխ., էջ 199:

²³ Տես «Մշակ», 29 դեկտեմբերի, 1898 թ.:

մի մասն անցավ համայնական դատավորներին: Համայնական ժողովները ընտրում էին երեք հոգուց կազմված համայնական դատավորներ, տալով նրանց լիազորություն՝ ըստ գյուղական կանոնադրության 72-րդ հոդվածի դատել համայնքներին պատկանող կողմերին մինչև 100 ֆ. սահման ունեցող գործերը քաղաքացիական գործառության վերաբերող և 30 ֆ. ոչ ավելի (հողված 75) քրեական գործունեության տեսակետից, որով հանցագործները ենթարկվում էին տուգանքի մինչ 3 ֆ., կամ հասարակական աշխատանքներ պատել է կատարելիս մինչև 6 օր կամ բանտարկվելու էին մինչև 7 օր²⁴:

Գավառները ղեկավարում էին տվյալ նահանգի նահանգապետի կողմից նշանակված գավառապետերը: Յուրաքանչյուր գավառապետ ուներ իր մեկ կամ երկու տեղակալը և այլ ենթակա աստիճանավորները: Գավառներն ունեին իրենց վարչական կենտրոն քաղաքները: Մինչև 1878 թ. հունվարի 16-ին Ռուսաստանի կառավարության կողմից հրատարակած քաղաքային կանոնադրությունը Արևելյան Հայաստանի քաղաքները կառավարում էին ոստիկանական վարչությունները, որոնք կազմված էին ոստիկանապետից, թաղամասային պետերից (կամ կատարածուներից), սրանց օգնականներից, գրագիրից և այլն: Ոստիկանապետը նշանակվում էր նահանգապետի, իսկ քաղաքապետի պետերը՝ ոստիկանապետի կողմից՝ նահանգապետի համաձայնությամբ²⁵: Վերը նշված օրենքի ընդունումով ստեղծվեցին քաղաքների կառավարման ոչ դասային, քաղաքային ինքնակարության ընտրովի ներկայացուցչական մարմիններ քաղաքային դուման և քաղաքային վարչությունը: Ինքնակարության գործադիր մարմինը՝ քաղաքային վարչությունը և կարգադրիչ մարմին քաղաքային դուման ընտրվում էին քնակչության կողմից: Ընտրությունը անց էր կազմվում ընտրական համեմատողովի կողմից, դռնբաց ժողովում, պարզ քվեարկությամբ, անհատական: Հարցը որոշվում էր ընտրական ժողովում, տեղում:

Քաղաքային կանոնադրության համաձայն ընտրելու և

ընտրվելու իրավունք չուներին հանցագործները, քրեական դատապարտվածները, վաշխառուները, սնանկացածները, միկիտանները (ոգելից խմիչք վաճառողները), անմեղսուհանները և հոգևոր կոչում ունեցողները²⁶:

Ընտրողները առաջադրում էին մի քանի տասնյակ թեկնածուներ քաղաքային վարչության լիազոր անդամների համար: Ըստ գործող կարգի, նահանգապետը կամ նահանգային վարչությունը հաստատում էր ընտրված վարչության կազմը, որից հետո վերջինս իր միջից ընտրում էր քաղաքագլխին և նրա տեղակալին: Հարկ է նշել, որ նահանգապետը կամ նահանգային վարչությունը, չարաշահելով քաղաքային վարչության և քաղաքագլխի հաստատման իրենց վերապահված իրավունքները, շատ հաճախ անկախորդ էին ճանաչում այդ ընտրությունների արդյունքները և անցկացնում էին նոր ընտրություններ: Ի դեպ, օրենքով քաղաքային վարչության անդամներն իրենց պաշտոնում հաստատվելուց հետո իրավունք ունեին երկու անգամ ընտրություն կատարել թե՛ քաղաքագլխի և թե՛ նրա տեղակալի համար: Երրորդ անգամ լիազորները կորցնում էին իրենց ընտրական իրավունքը, երբ երկրորդ ընտրությունը անհետևանք էր անցնում, հետևաբար այդ դեպքում նահանգապետը ինքն էր լիազորված լինում իր կողմից նշանակել քաղաքային վարչության պաշտոնյային²⁷:

Ինչ վերաբերում է քաղաքային դումային, ապա ընտրվելուց հետո ձևավորում էր իր խորհուրդը:

Նշենք, որ քաղաքային դուման և քաղաքային վարչությունը ընտրվում էին 4 տարի ժամկետով և ղեկավարվում էին քաղաքագլխի կողմից: Վերոգրյալ մարմինները զբաղվում էին իրենց քաղաքի բարեկարգման, տնտեսության, կենցաղսպասարկման, առողջապահության, առևտրի, կրթամշակութային, ներքին կարգ ու կանոնի և այլ հարցերով:

Այսպիսով, XIX դ. վերջին տասնամյակին Արևելյան Հայաստանի հասարակական-քաղաքական կյանքում կատարված դրական տեղաշարժերից էր այն, որ կարճ ժամանակամիջոցում

²⁴ Տե՛ս «Աշակ», 5 օգոստոսի, 1910 թ.:

²⁵ Տե՛ս «Հայ ժողովրդի պատմություն», հ. VI, էջ 17:

²⁶ Տե՛ս «Աշակ», 6 նոյեմբերի, 1896 թ.:

²⁷ Տե՛ս «Աշակ», 26 հուլիսի, 1912 թ.:

հնարավոր եղավ ի փիվս երևանի նահանգի մյուս գավառների, Նոր Բայազետի գավառում նույնպես ձևավորել իշխանության միջին ու ստորին օղակների կառավարման քիչ թե շատ գործուն համակարգ վարչատնտեսական կառավարումը փոխարինել տեղական ինքնակառավարման մարմիններով:

Վերջ ասվել է, որ երևանի նահանգի կազմում ստեղծվեց Նոր Բայազետի գավառը, որի մաս էին կազմում Գյուլչայի, Դարաշչչայի և Դրխուլակի մահալները: Ընդ որում, սույն գավառը կազմավորվեց առանց տարածքային փոփոխություններ կրելու²⁸: 1850 թ. նորաստեղծ գավառի առաջին գավառապետ նշանակվեց ռուս գեղապետ Սղոմոն Ունիկովը, որը պաշտոնավարեց հինգ տարի (1850-1854 թթ.)²⁹:

Այս պաշտոնը տարբեր տարիներին պաշտոնավարել են Ա. Չերնոխովսկին, Ի. Ապամելիքյանը, Ի. Ազամյանը, Վ. Գեղամյանը, Վ. Շախաբունյանցը, Գորալեիչը, Ֆորստեն, Չերքեզովը, Սիմոնենկոն, Տիգենհաուզենը, Ս. Դորդանյանը և Սուլխանովը:

XIX դ. 60-80-ական թվականների ցարական կառավարության կողմից կայսրությունում անցկացված բարեփոխումների արտահայտություններից էր գավառները ոստիկանական վարչամիավորների թաժանելը, որոնք միավորում էին մի քանի գյուղական հասարակություններ: Գավառը բաժանված էր ոստիկանական չորս տեղամասի՝ Ներքին Ախտայի, Նոր Բայազետի, Գյուլաղարայի և Գյուլչայի: Առաջին ոստիկանական շրջանը, որի վարչական կենտրոնն էր Ներքին Ախտան, տարածվում էր գավառի հյուսիսարևմտյան մասում և զբաղեցնում էր 559904 դեսյատին, ուներ 5 (Արզաքանի, Ներքին Ախտայի, Թյանթյանի, Ոնդամայի և Թայչարուլիի) գյուղական հասարակություն և 41 գյուղ, 33844 բնակչությամբ: Երկրորդ շրջանը կենտրոնառեղին էր Նոր Բայազետ քաղաքը, միավորում էր 3 (Աղզբիթի, Ելենովկայի, Գոչոի) գյուղական հասարակություն և 21 գյուղ, 24901

բնակչությամբ: Տարածվում էր (446242 դեսյատին) լճի արևմուտյան ափին: Երրորդ շրջանը, որի կենտրոնը Ներքին Դարսանլուըն էր (619008 դեսյատին), ընկած էր լճի հարավարևմտյան ափերին, ընդգրկում էր 3 (Գյոլի, Դալիդարդաշի, Դարսանլուի) գյուղական հասարակություն, ուներ 24 գյուղ և 24170 բնակիչ: Չորրորդը՝ Բասարզեչար կենտրոնով, իր կազմում ուներ 4 գյուղական հասարակություն (Բասարզեչարի, Ջիլի, Գյուզաղարայի, Սազոյայի), 48 գյուղ, 11089 բնակչությամբ: 136385 դեսյատին տարածք զբաղեցնող շրջանը փոփոխ էր լճի արևելյան և հյուսիսարևելյան ափերին³⁰: Ոստիկանական շրջանների կառավարիչ տեղամասային ատենակալները ենթարկվում էին գավառապետին և հաշվետու էին նրան:

Նորաստեղծ այս գավառի համար վարչական կենտրոն դարձավ Գավառ գյուղը³¹: 1850 թ. սենատի որոշումով Գավառին տրվեց քաղաքի կարգավիճակ և վերանվանվեց Նոր Բա-

²⁸ Հաշվարկը կատարվել է ՅԱՍ, ֆ. 375, ց. 1, գ. 360, ք. 8-11, ֆ. 94, ց. 5, գ. 208, ք. 370-374, ֆ. 93, ց. 1, գ. 360, ք. 8-111 "Кавказский календарь на 1893г", Тифлис, 1892, с. 14-15, "Кавказский календарь на 1890г.", Тифлис, 1889, с. 58 տվյալների հիման վրա:

²⁹ Հայաստանի հեռգույն բնակավայրերից է, քաղաք մեջ ցցված քարամայրի գլխին եղել է նախաուրարտական բերդըն, որը գտնվել է ուրարտական Ռուսա քաղաքից և նոր կառուցումներ կատարել: Միջին դարերում այս բնակավայրը կոչվել է Գավառ, որի Բյավառ ժողովրդական անվանումը կենդանի է և այժմ: Գավառ անվան ամենահին հիշատակությունը պահպանված է «Դարի գլուխ» կոչվող գեղեզմանատան Աբ. Ստեփանոս մատուռի մոտ, մի հեռույն խաչքարի պատվանդանի վրա հետևյալ արձանագրությամբ. Ի Թվ: ԲԶՂԱ: Ես ամիր Վալ հա | պ | ս որդի Վասի | | ի իշխանի չի շինեցի գեղեղեղեղեղիս և ես զգաւառան առուն հանեցի կնի վանից ծորեն ես սարերեն: | Բայակիչը գեղիս խոստացան տարին: Գ: Ժամ: կատարողքն Արիմին Մար: Գրասարակիչները թվականը հաշվել են տարբեր ձևերով: Սմբատյանցն ու Լալայանը ըստ սովորականի 291+551=842, Ավդալբեկյանը փոքր թվականով 291+1083=1374: Ս. Բարխուդարյանը նկատի ունենալով նաև խաչքարի քանդակների ոճը՝ ճիշտ է համարում վերջին թվականը: Տես Ս. Բարխուդարյան, Դիվան հայ վիճագրության, պրակ IV, Ե., 1973, էջ 51-52, Ս. Սմբատյանց, նշվ. աշխ., էջ 58 և 448, Ե. Լալայան, նշվ. աշխ., էջ 111, «Քավառ», էջ 30-31:

²⁸ Տես "Обзор Эриванской губернии за 1886 г. (приложение к всеподданнейшему отчету)", с. 3.

²⁹ Տես Մ. Սմբատյանց, նշվ. աշխ., էջ 81:

յազետ³²: Նրա ընդհանուր տարածքը կազմում էր 19,60 քառ. վերստ կամ 22,80 քառ. կմ³³:

Քաղաքի կարգավիճակ ստանալուց հետո խնդիր դրվեց ստեղծել Նոր Բայազետ քաղաքի տեղական իշխանության մարմիններ: Գործող կարգի համաձայն քաղաքի վարչակառավարման համակարգը իր մեջ բովանդակում էր երկու մարմին՝ ոստիկանությունը և քաղաքացիների կողմից ընտրված դեպուտատը (պատգամավորը): Քաղաքի սոցիալ-տնտեսական, կրթական, հոգևոր-մշակութային և կարգուկանոնի պահպանման գործերը վարում էին նշված մարմինները: Հարկ է նշել, որ սույն մարմինների միջև ընդհանուր մշակված և փոխկապակցված վարչակառավարման բացակայությունը զանազան անհարմարությունների և չարաշահումների պատճառ էին դառնում և արդարացիորեն դժգոհություն առաջացնում լայն զանգվածների շրջանում: Կարծում ենք, մեկ օրինակն էլ բավական է դրանում համոզվելու համար: Այսպես, ամեն տարի ոստիկանությունը նախահաշիվ էր կազմում քաղաքային լինելիք մուտքի և ծախսի համար, որը նախանգի կառավարության կողմից հաստատվելուց հետո գործադրում էին:

Սրանից անկախ, դեպուտատն էլ իր հերթին քաղաքի վերաբերյալ բոլորովին ուրիշ մուտք ու ելքի նախահաշիվ էր կազմում, որը ժողովրդին ներկայացնելուց հետո՝ գործադրում էր: Պարզ չէ թե ինչու էին այդպես առանձին-առանձին գործում ոստիկանությունը և դեպուտատը, բայց մի բան ակնհայտ է, որ 5-6 հազար ռուբլի քաղաքի եկամուտից ոստիկանությունն էր ստանում ու մխտում, և այդքան էլ դեպուտատն էր գործադրում, առանց տեղյակ պահելու և բուլլլետություն ստանալու գավառապետից կամ նահանգապետից³⁴:

Ժամանակի ընթացքում սոցիալ-տնտեսականի և հոգևոր-մշակութայինի հետ մեկտեղ քաղաքի վիճակի կայունացման, կառավարման կատարելագործման, նոր խնդիրների լուծման

հրամայականով փոփոխություններ կատարվեցին Նոր Բայազետ քաղաքի կառավարման կառուցվածքում: Այդ ճանապարհին առաջին քայլը դարձավ քաղաքային ինքնավարության հաստատումը: 1896 թ. գավառապետ Չերեքովիի համառ ջանքերի շնորհիվ քաղաքին տրվեց ինքնավարության կարգավիճակ³⁵: Սեպտեմբերի 29-ին ոստիկանության շենքի բակում, քաջօրյա, կայացավ քաղաքի լիազորների ընտրությունը: Գավառապետը համառոտ կերպով բացատրելով ժողովրդին ինքնավարության նշանակությունը, ասաց հետևյալը. «Կայսերական բարձրագույն բարեխաճությանը մեր քաղաքին տրվում է ինքնավարություն, դուք պետք է ձեր միջից ընտրեք 15 լիազորներ և 3 անձնավորներ»: Այնուհետև Չերեքովը հաղորդեց. «Մինչև հիմա պոլիցիան էր կառավարում քաղաքային գործերը, սրանից հետո քաղաքային գործերն անցնում են ավագի և լիազորների ձեռքը, դուք պետք է աշխատեք ընտրել հասկացող և հուսալի մարդիկ, որոնք հավատարմությամբ ծառայեն հասարակությանը»³⁶: 524 ընտրողներից ներկա էին 110 հոգի, բացակայում էին գլխավորապես հողագործները: Առաջադրվեցին 64 թեկնածուներ: Ընտրվեցին 15 լիազորներ և 3 անձնավորներ՝ Գ. Մամիկոնյանը, Գ. Նաչատրյանը, Ստ. Բատիկյանը, Խ. Բադալյանը, Ա. Արևշատյանը, Գ. Աֆրիկյանը, Գ. Դալյանը, Ա. Փոստոյանը, Գ. Բուռնազյանը, Ա. Բուռնազյանը, Խ. Բուռնիաթովը և այլքը, իսկ անձնավորներ՝ Գ. Քոչարյանը, Ս. Աֆրիկյանը և Գ. Դաբաղյանը³⁷:

Նահանգապետի կողմից հաստատվելուց հետո լիազորները գաղտնի քվեովությամբ ընտրեցին քաղաքագլուխ և տեղակալ: Քաղաքագլուխ ընտրվեց Գարություն Մամիկոնյանը, իսկ տեղակալ՝ Գևորգ Արծրունին³⁸: Հետագա տարիներին քաղաքագլխի պաշտոնը զբաղեցրել են Գ. Արծրունին, Գ. Տեր-Ասիակյանը, Ստ. Բատիկյանը և այլքը: Ինչպես արդեն ասվել է, ըստ գործող օրենքի քաղաքային վարության անդամներն իրենց պաշտոնում հաստատվելուց հետո իրավունք ունեին եր-

³² "Обзор Эриванской губернии за 1886 г. (приложение к всеподданнейшему отчету)", с. 3.

³³ "Кавказский календарь на 1896г.", Тифлис, 1895, с. 32-33, 56-57.

³⁴ Տե՛ս «Մշակ», 9 հուլիսի, 1898 թ.:

³⁵ Տե՛ս «Մշակ», 10 հոկտեմբերի, 1896 թ.:

³⁶ Տե՛ս նույն տեղում:

³⁷ Տե՛ս նույն տեղում:

³⁸ Տե՛ս նույն տեղում, «Մշակ», 22 փետրվարի, 1897 թ.:

կու անգամ ընտրություն անել՝ թե՛ ավագի և թե՛ նրա օգնականի: Այսպես, օրինակ, 1912 թ. ճորընտիր վիագորները, երբ քաղաքի ավագի պաշտոնում ընտրեցին Գևորգ Արծրունուն, Երևանի նահանգապետը ավագին հաստատեց իր պաշտոնում, իսկ օգնականի ընտրությունը անվավեր ճանաչեց, զանգված բողոքների հիման վրա: Երկրորդ անգամ օգնական ընտրեցին Ստեփան Բատիկյանին (նախկին քաղաքապետ), որին դարձյալ Երևանի նահանգապետ վարչությունը նպատակահարմար չգտավ հաստատելու ինչ-ինչ պատճառներով: Եվ ահա երրորդ անգամին այլևս իրավունք չէր տրվում նորից ընտրություն կատարել, հետևապես տեղի ուստիկանատան միջնորդությամբ Երևանի նահանգապետը քաղաքի ավագի օգնականի պաշտոնում նշանակեց տեղացի Ստեփան Մնացականյանի³⁹:

Քաղաքային ինքնավարություն մտցնելը կարևոր նշանակություն ունեցավ քաղաքի հասարակական, սոցիալ-տնտեսական և կրթամշակութային կյանքում: Այդ ուղղությամբ խնդիրների լուծմանն ուղղված, քաղաքային դասի (մեշչանների) ընդհանուր ժողովը ամեն տարի քննարկում և հաստատում էր քաղաքի հասարակության տարեկան ելքի ու մուտքի նախահաշիվը: Տարեկան մուտքը քաղաքային ինքնավարության դրամարկղում (դումայի հաշիվն առանձին էր) գոյանում էր հիմնականում քաղաքապետական խոտիարքերից, արտատանդերից և վարելահողերից ստացված եկամուտներից: Ելքի նախահաշիվը կամ, այսպես ասած ծախսերը, քաշխվում էր ըստ անհրաժեշտության:

Այսպես, 1907 թ. մարտի 22-ին Նոր Բայազետի քաղաքային դումայի դահլիճում կայացավ քաղաքային դասի տարեկան ընդհանուր ժողովը՝ արբուճի հարկերը և հասարակական ծախսերը բաժանելու համար: Ժողովի առաջ հարց էր դրված՝ հողային հարկերը և հասարակական ծախսերը բաժանել հողի վրա, թե՛ հալի (ըստ կարողության): Ա. Տեր-Գրիգորյանի առաջարկությամբ որոշվեց, որ ծախսերը, որոնք կապ ունեն հողի հետ՝ բաժանել հողահատույթների վրա, իսկ այն ծախսերը, որոնք ոչ մի առնչություն չունեն հողային հարցերի հետ՝ բաժանել հալի

³⁹ Տե՛ս «Մշակ», 26 հուլիսի, 1912 թ.:

վրա, այսինքն ըստ կարողության: Ահա այն ծախսերը, որ վերաբերում են հողային հարցերին և որոնք բաժանվելու էին հողի վրա: 1) արքունական հողային տուրք՝ 7416 ռ. 52 կոպ., 2) հանրապահների վարձ՝ 248 ռ., 3) միրաբին և ջուհարին՝ 114 ռ., 4) հարկահանին՝ 200 ռ., 5) հողաչափին՝ 329 ռ. 70 կոպ., 6) ծառային՝ 100 ռ. և 7) այլ ծախսեր՝ 100 ռ.: Ընդհանուր ծախսերի գումարը կազմել է 8599 ռ. 22 կոպ: Ահա այն ծախսերը, որոնք բաժանվելու էին կարողության չափով տնտեսների վրա: 1) ռուսաց ուսումնարանի նպաստ՝ 1230 ռ., 2) աչքի հիվանդանոցին՝ 300 ռ., 3) գրադարանի տան վարձը՝ 75 ռ., 4) հայոց ուսումնարանի օժանդակության՝ 1000 ռ., ընդամենը՝ 2605 ռ.⁴⁰: Փաստորեն նշված տարում ելքի ընդհանուր գումարը կազմել է 11204 ռ. 22 կոպ.:

Շատ է պատահել, որ սպասվելիք եկամուտները մի քանի անգամ զիջել են ինքնավարության ծախսերին: Սա, անշուշտ, այլ վիճակ էր ստեղծում: Իսկ թե ինչպիսի քայլերի էր դիմում քաղաքի գործադիր իշխանությունը այդ անհամամասնությունը հաղթահարելու համար, հարցի պատասխանը կարելի է ստանալ ստորև բերված օրինակից: 1903 թ. քաղաքի նախահաշիվի տարեկան մուտքը սպասվում էր 3000 ռ., իսկ ելքը՝ 5000 ռ. այլ խոսքով՝ ինքնավարության դրամարկղը ունենալու էր 2000 ռ. դեֆիցիտ: Դեֆիցիտը ծածկելու համար քաղաքային դասի ընդհանուր ժողովը որոշեց քաղաքի 1000-ից ավելի ընտանիքների բաժանել 9-ը կարգի, որոնք վրա աստիճանաբար հասարակական ծախսեր դնել, սկսած երկրորդ կարգից (առաջին կարգը, իբրև որոնք և չքավորներ, տուրքից ազատվում էին), նշանակելով 50 կոպ. մինչև 10 ռ. տուրք յուրաքանչյուր ընտանիքին⁴¹:

Քաղաքային վարչության մուտքային մասը մշտապես ավելացնելու համար նախ և առաջ անհրաժեշտ էր ձեռնամուկ լինել քաղաքի հարկային բեռի թեթևացմանը: Դրա հիմքում դրված էր նախկինում քաղաքապետական 11000 դեսյատին հողերը, որից վերելահողերը կազմել են 3165 դեսյատին (29 %),

⁴⁰ Տե՛ս «Մշակ», 28 ապրիլի, 1907 թ.:

⁴¹ Տե՛ս «Մշակ», 22 փետրվարի, 1903 թ.:

խոտհարքները 1835 ղեայատին (16,7 %), արոտավայրերը 6000 ղեայատին (54,3%), քաղաքին վերադարձնելը⁴²:

Բանն այն է, որ վեճ կար կառավարության կողմից, որ քաղաքապատկան բոլոր հողաբաժինները, թե՛ քաղաքատեղը, թե՛ արոտավայրերը և թե՛ վարելահողերը, իբր թե արքունական են ճանաչվում, ինչպես գյուղապատկան հողերը⁴³:

Ահա այս հողերի համար էին պայքարում քաղաքացիները, որպեսզի վերադարձնեն ընդհանուր իրեն նրա սեփականություն: Վիճելի հողերի վրա դրված տարեկան հարկը ավելի քան 6000 ռ. հավաքվում էր քաղաքի քնակչությունից: Վերջինս հարկ էր վճարում տարեկան յուրաքանչյուր ծխի համար 4 ռ. 71 կոպ., այդ զումարից 2 ռ. 21 կոպ. հողի հարկն էր, իսկ մնացած 2 ռ. 50 կոպ. ծխահարկն էր⁴⁴:

Չիշյալ 11000 ղեայատին հողից քաղաքը տարեկան մոտ 5000 ռ. եկամուտ ուներ⁴⁵: Չասկանալի է, որ, եթե այդ զումարը քաղաքից վերցվեր, ապա շատ դժվար կացություն կստեղծվեր ինքնավարության համար և քաղաքը մեծ վնաս կկրեր: Քաղաքի կողմից դիմումներն ուղղված էրևանի նահանգապետին իրենց օրինական պահանջը բավարարելու համար, մնում էին անպատասխան: 1897 թ. քաղաքային դատը ճարահատյալ հանձնառուրեց քաղաքագլխի օգնական Գ. Արծրունու գնալ Երևան և Թիֆլիս զանազան պաշտոնական կազմակերպություններից գտնել համապատասխան փաստաթղթեր և նահանգապետի դեմ բողոք ներկայացնել կառավարիչ սենատին⁴⁶: Պետք է նշել, որ այդ առիթով քաղաքի կողմից արված բողոքը, որը հաստատում էր քաղաքի հողերը իբրև սեփականություն, 1902 թ. հարգվում

⁴² Տե՛ս «Մշակ», 27 դեկտեմբերի, 1897 թ., «Մշակ», 18 հոկտեմբերի, 1907 թ.:

⁴³ 11000 ղեայատին հողը համարվում էր արքունական, որովհետև, երբ 1850 թ. կայսերական հրամանով Գավառի տրվեց քաղաքի կարգավիճակ և վերանվանվեց Նոր Բայազետ. այդ հրամանի մեջ ոչինչ չի ասված հողերի կարգավիճակի մասին: Տե՛ս «Մշակ», 27 դեկտեմբերի, 1897 թ.:

⁴⁴ Տե՛ս նույն տեղում:

⁴⁵ Տե՛ս նույն տեղում:

⁴⁶ Տե՛ս նույն տեղում:

է կառավարիչ սենատի կողմից: Ստանալով այդ լուրը, նահանգապետը շտապեց հանդիպել Նոր Բայազետ քաղաքի հասարակայնության հետ, նրան հավաստելու, որ շուտով հողերը կտրվեն քաղաքին, իբրև սեփականություն: Բայց և այնպես հողային հարկը, որ վերջին 3 տարիների համար որոշված էր վերցնել քաղաքից, կազմում էր մոտ 20000 ռ.: Ուստի անհրաժեշտ համարվեց միջնորդել կառավարության առաջ, քանի որ մեկընդմիջտ հողերը հանձնում են քաղաքին, դադարեցվի նաև հարկերի գանձումը: Այդ կապակցությամբ կարիք զգացվեց մեկին ուղարկել Պետերբուրգ սույն հարցը լուծելու համար: Քաղաքային դասի ընդհանուր ժողովը ընտրեց քաղաքազույս Գ. Արծրունու⁴⁷: Ավելորդ չի լինի նշել, որ կայսրության մայրաքաղաքում քաղաքապետին մերժեցին, բացատրելով, քանի որ այդ տարիներին քննության առարկա հողերը հանդիսացել են պետական-արքունական, ուստի և օգտագործման համար պարտավոր են եղել վճարելու սահմանված հարկերն ու տուրքերը:

Այսպիսով, քննության առարկա ժամանակաշրջանում Նոր Բայազետի գավառը Անդրկովկասի վարչատարածքային կազմավորումներում, այնուհետև Երևանի նահանգի կազմում քնակչույն էր զարգացման մի նոր ժամանակահատված, երբ Երևան փոփոխություններ տեղի ունեցան նրա վարչատարածքային, վարչակառավարման և մյուս հարաբերություններում: Ստեղծվում է Նոր Բայազետի գավառը: Գավառի կառավարման մեջ զգալի փոփոխություններ մտցվեցին: Իշխանության համակարգում իրենց հաստատուն տեղի են գրավում տեղական գավառային, քաղաքային և համայնքային կառավարման մարմինները: Գավառի վարչական կենտրոն Նոր Բայազետ քաղաքին տրվում է ինքնավարության կարգավիճակ:

Քաղաքը առաջնորդվում էր քաղաքային կանոնադրությամբ: Գավառի ներքին կյանքում ուրույն տեղ ունեին գյուղական հասարակությունները: Չնայած սահմանափակությանը, այնուհանդերձ, 1860-1870-ական թվականների բարեփոխումների անցկացումը դրական երևույթ էր և որոշակի առաջընթաց բայց հասարակության կյանքում բյուրժուական հարաբերությունների հաստատման ճանապարհին:

⁴⁷ Տե՛ս «Մշակ», 5 սեպտեմբերի, 1902 թ.:

Էթնոժողովրդագրական տեղաշարժերը Նոր Բայազետի գավառում XIX դ. 30-ական թվականներից մինչև 1913 թ.

Էթնոժողովրդագրական կազմը ամեն մի բնակչության խտացված արտահայտությունն է, նրա հայելին, որն արտացոլում է նրա ընդհանուր թիվը, էթնոգավանաբանական ու սեռատարիքային կազմը, տեղաշարժերը և տեղաբաշխվածությունը:

Յուրաքանչյուր ժողովուրդ, որպես կենդանի հավաքական մարմին ունի շարունակականության լինելության իր ներքին տրամաբանությունը՝ վերարտադրվում և սերնդափոխվում է, որն ուղեկցվում է նրա թվաքանակի փոփոխություններով՝ աճելով կամ նվազելով:

Դա կատարվում է երկու ճանապարհով՝ բնական և մեխանիկական: Հիմնական աղբյուրը բնական աճն է (սա որոշվում է միավոր ժամանակամիջոցում ծնվածների և մահացածների տարբերությամբ), որից սնվում է բնակչությունը վերարտադրվելու համար: Բնակչության թիվը փոխվում է նաև կապված նրա կենսագործունեության ձևերից մեկի՝ տեղաշարժերի հետ: Ընդ որում, այդ աղբյուրներից յուրաքանչյուրի կենսունակության ցուցանիշը անմիջականորեն շաղկապված է տվյալ ժամանակաշրջանի ներքին ու արտաքին կացության հետ:

Ամեն մի ժողովրդի բնականոն վերարտադրության համար անհրաժեշտ են սոցիալ-տնտեսական, քաղաքական, ինչպես նաև արտաքին բարենպաստ պայմաններ և սոցիալական առողջ միջավայր:

Ուսաստանի կազմի մեջ մտնելը Արևելյան Հայաստանի և խնդրո առարկա գավառի բնակչության համար արագ և կայուն աճի խթան հանդիսացավ ստեղծվեցին խաղաղ ապրելու և վերարտադրվելու անմախաղ պայմաններ, մյուս կողմից

էլ Պարսկաստանից և Արևմտյան Հայաստանից բազմաազար մերձադրածները բնակչության թվաքանակը ավելացնելուց բացի, նպաստեցին նրա բնական աճի գործակցի բարձրացմանը: Բնակչության նյութական ու կենցաղային պայմանների որոշակի բարելավման շնորհիվ մահացության տոկոսը զգալիորեն կրճատվեց:

Ուսումնասիրվող ժամանակաշրջանում Նոր Բայազետի գավառի բնակչության թվաքանակի փոփոխություններում հիշյալ աղբյուրների ունեցած դերը ցույց տալու համար անհրաժեշտ է հարցի լուսաբանումը սկսել գավառի բնակչության աճին վերաբերող տվյալներից, առանց որի հնարավոր չէ տալ լուծում այն հարցերի, որոնց ակունքի վրա է սկիզբ առնում նրա աճը:

XIX դ. 30-ական թվականներից մինչև 1913 թ. սույն գավառի բնակչության թվաքանակի, սեռային և էթնիկական կազմի փոփոխությունները դիտարկենք ներքոհիշյալ աղյուսակի տվյալներով¹:

¹ Հաշվարկը կատարվել է աղյուսակը կազմվել է ըստ ՅԱԱ, ֆ. 101, ց. 1, գ. 2, ք. 11, գ. 13, քք. 3-441, գ. 85, քք. 5, 14, ֆ. 125, գ. 1, գ. 4, մաս 2, քք. 118, 158, 191, 265, ֆ. 90, գ. 1, գ. 319, քք. 7-319, գ. 318, ք. 1-145, գ. 330, քք. 1-208, գ. 329, քք. 1-143, ֆ. 57, գ. 1, գ. 399, ք. 2, ֆ. 227, գ. 1, գ. 586, քք. 1-2, ֆ. 267, գ. 1, գ. 1, քք. 1-2, գ. 8, քք. 1-496, գ. 7, քք. 4-473, գ. 15, քք. 3-564, գ. 9, քք. 1-104, գ. 6, քք. 1-449, գ. 16, քք. 3-467, գ. 21, քք. 1-187, գ. 22, քք. 2-988, գ. 23, քք. 3-719, գ. 20, քք. 1-10 39, գ. 14, քք. 1-538. "Обзор Эриванской губернии за 1900-й год" с. 15; "Обзор Эриванской губернии за 1886 (приложение к всеподданнейшему отчету)" с. 3, 8; "Первая всеобщая перепись населения Российской империи 1897г., Министерство внутренних дел цент. стат. комитет., "Эриванская губерния LXXI СПб., 1905., с. 1,66-67, 140-142; "Кавказский календарь на 1897, с. 14-15; "Кавказский календарь на 1896", с. 32-33, 56, 57 (Закавказский статистический комитет СС статистических данных о поселении Закавказского края извлеченных из поселенных списков 1886, с. 6-13. «Հայաստան իւ հարեւան երկրները ըստ Լինչի եւ Օսիլաւ-դի», խմբ. եւ, հրատ., Ա. Արեւիա Բ. հրատ., Թիֆլիս 1915 թ., էջ 1-2 տվյալներով»:

1897	134	13104	38558	55529	114087	29,48	37166	35032	75998	18811	16789	35600	1412	1644	3056	1555	957	2312	14	7	21
Պալա- տում																					
Քարթլ	1	1210	4370	4116	8406		4129	3958	8087	173	110	203	43	40	83			25	8	33	
Շիր- մեծ	15	14314	63128	59445	123573		41295	39890	81185	18984	16899	35883	1455	1644	3139	1355	957	2312	39	15	54
1910	134	17275	49138	67940	137978		45315	42173	87354	20668	22205	42813	2113	2187	4300	1004	1120	2124	198	255	453
Պալա- տում																					
Քարթլ	1	1220	4980	4858	9838		4978	4835	9833										2	3	5
Շիր- մեծ	15	18664	74118	72798	140916		30193	47028	97187	20668	22205	42813	2113	2187	4300	1004	1120	2124	200	258	458
1913	144		85669	77354	163423	24	55615	50487	106102	25550	23057	48667	2759	2598	5357	1641	1501	3142	104	111	215
Պալա- տում																					
Քարթլ	1		9976	5424	11400		9884	5343	11227										92	81	173
Շիր- մեծ	143		91645	83178	158823		61499	55830	117029	25550	23057	48667	2759	2598	5357	1733	1582	3315	104	111	215

Ինչպես երևում է աղյուսակ 9-ից, 1831-1913 թթ. Նոր Բայազետի գավառի բնակչության թիվը ավելացել է 6,7 անգամ կամ շուրջ 85,1%-ով: Արդեն 1913 թ. սույն գավառում ապրող բնակչության թիվը հասնում էր 174,8 հազար մարդու, 1831 թ. ավելի քան 25,9 հազարի դիմաց: Նույն ժամանակամիջոցում երևանի նահանգի բնակչությունը ավելի քան վեցապատկվում է, 1831 թ. 164,2 հազարից 1913 թ. հասնում է 1071,6 հազարի կամ աճում է 84,6%-ով³: Այժմ դիտարկենք գավառի բնակչության քվաքանակի փոփոխությունների հարցերը ըստ այդ երկու արդյուրների: Վիճակագրական տվյալները ցույց են տալիս, որ Ուսաստանին անցնելուց հետո 88 տարիների ընթացքում, ինչպես ամբողջ երևանի նահանգում, այնպես էլ Նոր Բայազետի գավառում շնորհիվ բարձր ծնելիության՝ բնակչությունը գլխավորապես ավելանում էր բնական վերարտադրության ճանապարհով: Բանն այն է, որ այդ տարիներին Արևմտյան Հայաստանից և հատկապես Պարսկաստանից հայերի ներգաղթը դեպի Արևելյան Հայաստան և Նոր Բայազետի գավառ կտրուկ նվազել էր: Ինչու՞: Պատճառները շատ են ու բազմաշերտ, որոնց պատասխանները պետք է փնտրել ինչպես Արևմտյան Հայաստանում և Պարսկաստանում, այնպես էլ երևանի նահանգում և ռուսական կայսրության սահմաններում գաղթից հետո ստեղծված սոցիալ-տնտեսական, քաղաքական և էթնիկական իրավիճակի համապատկերի մեջ:

Նախ, 1828-1830 թթ. ընթացքում Պարսկաստանից և Արևմտյան Հայաստանից հայերի զանգվածային արտագաղթի հետևանքով այդ երկրներում զգալիորեն պակասել էր նրանց թիվը, և ընդհանուր բնակչության կազմում կրճատվել էր տեսակարար կշիռը: Հետևաբար հիշյալ երկրներում, մասնավորապես թուրքիայում հայերին էթնիկ զտման ենթարկելու գործընթացը նախկին սրությունը կորցրել էր, և իշխանությունները նույնպիսի շահագրգռվածություն չէին դրսևորում:

³ Հաշվարկը կատարվել է հետևյալ աղբյուրների տվյալների հիման վրա. *И. Шонен*, Եզվ. աշխ. էջ 642, «Сборник сведений о Кавказе», т. 5. Тифлис, 1879 (անանց էջակալման): «Всеобщая перепись населения Российской империи», т. 1, ч. 71, 1905, с. 1, т. 1, ч. 64, тетрадь 1, 1900, с. 1; «Кавказский календарь на 1914 г.», Тифлис, 1913, с. 122-135.

Հայերի զանգվածային արտագաղթը Պարսկաստանի և Արևմտյան Հայաստանի կիսադատարկ դարձած գավառների մնացյալ հայ բնակչության ապրելակերպի և կենսապայմանների բարելավման գործում ունեցավ նկատելի ազդեցություն: Խոսքն այն մասին է, որ չզաղթածները տարբեր մեքենայությունների ճանապարհով տեղ դառնալով գաղթածների շարժված և ու անշարժ ունեցվածքին և իրենց համար ստեղծելով տնտեսապես որոշակի ապահով վիճակ՝ գաղթել թե՛ չզաղթելու հարցում նախապատվությունը տալիս էին չզաղթելուն:

Ներգաղթի տեմպերի նվազումը պայմանավորված էր նաև Արևելյան Հայաստանում և ռուսական կայսրության հայաշատ գաղթավայրերում տիրող կացությամբ: 1828-1830 թթ. զանգվածային ներգաղթից հետո Արևելյան Հայաստանը ողբալի պատկեր էր ներկայացնում: Տարբեր գավառներում ապաստանած գաղթականության թիվը շարունակաբար ավելանում էր: Արևմտյան Հայաստանից, Պարսկաստանից և Անդրկովկասի ու Գյուսիսային Կովկասի հայաշատ վայրերից ամեն օր երևանի նահանգ էին հասնում կողոպտված, մերկ ու տկլոր բազմաթիվ ընտանիքներ: Այստեղ մեծաթիվ սակավակող բնակչության կողքին դեռևս բազմաթիվ էին հողագուրկ, քնակարան և զբաղմունք չունեցող գաղթականները: Ծնայած տեղից տեղ տեղաշարժվելուն, նորաբնակները անզան նվազագույն չափով չապահովվեցին պիտանի հողահանդակներով:

Այսպիսի անբարենպաստ պայմաններում գաղթականների նոր խմբերը ևս ընդհանուր իրավիճակի բարդացման գործընթացներից դուրս չմնացին: Նահանգի սահմաններում գրեթե անհնարին էր դարձել նոր գաղթականների վերաբնակեցումը և նրանց մշտական բնակության համար պայմանների ստեղծումը: Այստեղից հետևում է, որ սակավակող Հայաստանում գաղթականների հետ կապված ամենաբարդ լուծվելիք խնդիրը նրանց վարելահողերով բավարարելն էր: Սա, անշուշտ, բարդ հարց էր, քանզի արևելահայությունը ևս տառապում էր սակավահողությունից: Այդ դժվարին պայմաններում, ինչպես վկայում են աղբյուրները, գաղթականությունը տեղ էր հասնում նյութական ծանր վիճակում, մերկ ու տկլոր, ֆիզիկապես և հո-

գեպես քարոզված: Գերմանացի ճանապարհորդ Մ.Վակները ականառես լինելով Հայկական մարզում պարսկահայերի բնակարանային և սոցիալական ծանր պայմաններին գրում է. «Գաղթականանց 5000 ընտանիք ունեցող առաջին բաժինը 1828թ. ապրիլի 28-ին երասխեն անդին անցնելու ատեն այդեն սկսան ջբաւորութիւն զգալ... բնակարանի և հացի կողմանէ...»⁴: Չնտաքքիր է հայ մամուլի անդրադարձը գաղթականության սոցիալական վիճակի վերաբերյալ. որն, անշուշտ, արտացոլում է տվյալ ժամանակաշրջանում վերաբնակիչների սոցիալական կացությունը: «... հիվանդ, քաղցած, երեխաների գույնը քառամած, դրանք կարծես մարդիկ չեն, այլ մարդկանց ուրվականները՝ փաթաթված ցնցոտիների մեջ»⁵. Նշում է «Մշակ» թերթի հոդվածագիրը:

Գաղթականների նոր խմբաբանակներին ամբողջ Արևելյան Հայաստանում և նրա առանձին գավառներում տեղավորելու անհարմարությունների թվին կարելի է դասել արևելահայության ծայրահեղ վատթարագույն սոցիալական պայմանները և նրա խղճուկ ապրելակերպը: Այս առումով Նոր Բայազետի գավառը սոսկալի վիճակ էր ներկայացնում: «Մշակ» թերթի հոդվածագիրը, դառնացած գավառում տիրող ողբալի վիճակից, կարեկցանքով գրում է. «Գազիվ թե գտնվի մի ուրիշ գավառ, որ այնքան անհաջող պայմանների մեջ լինի, որքան Նոր Բայազետի գավառն է: Աղքատությունը ծայրահեղության է հասնում, գյուղեր կան, որոնց բնակիչներից շատերը մուրացկանություն են առնում»⁶: Այսուհանդերձ այդ դժվարությունները անկարող եղան գաղթականության՝ դեպի Երևանի նահանգ ներհոսքի հանդես: Շարունակվում էր հայ գաղթականության հոսքը: Արևմտյան Հայաստանից, մասամբ նաև Պարսկահայաստանից Արևելյան Հայաստան էին մտնում գաղթականների նորանոր խմբեր: Պահպանված արխիվային փաստաթղթերից երևում է, որ արևմտահայության ներգաղթը լայն թափ է ստացել

⁴ Մ.Վակներ, ճանապարհորդությունի ի Հայաստան, մասն Բ, Վիեննա, 1851, էջ 122:

⁵ «Մշակ», 28 հունիսի, 1897 թ.:

⁶ «Մշակ», 21 մայիսի, 1898 թ.:

1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո, երբ Բեռլինի դաշնագրով Ռուսաստանը պարտադրված էր գրաված տարածքները նորից վերադարձնել Թուրքիային: Բեռլինի դաշնագիրը արևմտահայությանը դրեց ավելի ծանր ու մղձավանջային դրության մեջ:

Հայկական տարածքներից ռուսական զորքերի դուրս գալուց հետո, հայությանը սպառնացող վտանգը էլ ավելի մեծացավ: Տեղին է մեջբերել Բեռլինի դաշնագրի գլխավոր ճարտարապետներից Լյուդ Ջորջի մի խոստովանությունը, որ «Ռուսներն ստիպված էին հեռանալ, դժբախտ հայերը նորից ճգմվեցին իրենց հին կեղեքողների կրունկների տակ»⁷:

Բեռլինի պայմանագրի զնահատման խնդրին, Հայկական հարցի տեսակետից, բնականաբար, անդրադարձել են ժամանակի հայտնի քաղաքական և դիվանագիտական գործիչներ: Թուրքիայում Անգլիայի դեսպան Հ. Լեյարդի կարծիքով Բեռլինի դաշնագիրը նպաստեց Արևմտյան Հայաստանը հայաքսակ անելու թուրքական քաղաքականության իրագործմանը բավական է ապացուցելու այդ պայմանագրի հակահայկական էությունը: 1878 թ. սեպտեմբերի 16-ին արտգործնախարար Սուլտերինը ուղարկած հաղորդագրությունում Լեյարդը գրում էր. «Հայերը հավակն են հավատարիւ, որ գրկվելով Ռուսաստանի անմիջական պաշտպանությունից, կարող են ենթարկվել մահմեդականների... վատ վերաբերմունքին ու բռնություններին, և որ միակ միջոցը՝ ձեռք բերելու իրենց ունեցվածքի ու կյանքի անվտանգությունը՝ Ռուսաստանի տարածքներն անցնելն է...»⁸:

Հատկանշական է, որ Ռուսաստանն իր հերթին խրախուսում էր արևմտահայության արտագաղթը: Գ. Գալոյանը անհերքելի փաստերով ապացուցում է, որ. «Զրկվելով Սան Ստեֆանոյի պայմանագրի 16-րդ հոդվածով վերապահված իրավունքներից, Ռուսաստանն իր հերթին քայլ էր կատարում չկորցնելու իր ազդեցությունը արևմտահայության վրա: Այդ նպատակով

նա սկսեց խրախուսել հայերի ներգաղթը ռուսական տարածքները»⁹:

Այլ կողմից Թուրքիայի շահախնդրությունը Արևմտյան Հայաստանը հայաբախելու և Ռուսաստանի տարածաշրջանային նկրտումները, մյուս կողմից էլ արևմտահայերի նկատմամբ գործադրվող բռնությունները, որոնք սպառնում էին նրա ֆիզիկական գոյությանը, պատճառ դարձան նոր զանգվածային արտագաղթի: Հազարավոր հայ ընտանիքներ ցանկություն են հայտնում անցնել ռուսական կայսրության սահմանները: Միայն այն փաստը, որ Կոստանդնուպոլսի ռուսական դեսպանի տվյալներով Ալաշկերտի և Բայազետի գավառներից գաղթել ցանկացողների թիվը հասնում էր մոտ 1000 ընտանիքի¹⁰, բավական է համոզվել, որ արտագաղթելու ցանկություն ունեցողների թիվը չափազանց մեծ էր: Ալաշկերտից, Բայազետից և Արևմտյան Հայաստանի այլ բնակավայրերից հազարավոր հայ ընտանիքներ ետ քաշվող ռուսական զորքերի հետ բռնում են գաղթի ճանապարհը: Այսպես, 1877 թ. սեպտեմբերին Բայազետից և շրջակա բնակավայրերից ռուսական զորքերի հետ Երևանի նահանգ են տեղափոխվում 1856 հայ. 39 հույն և եզրի ընտանիքներ¹¹: Դրան հետևեցին զաղթականների նորանոր խմբեր: Հատկանշական է, որ Բայազետից, Ալաշկերտից և նրանց լիվաններից ներգաղթածների խոշոր զանգվածը վերաբնակվեց Նոր Բայազետի գավառում: Մատենադարանի վավերագրերից մեկի հավաստմամբ 1877 թ. վերջին այստեղ եկածների թիվը կազմում էր 2476 մարդ, որից 40 ընտանիք (170 մարդ՝ 92 արական և 78 իգական) հաստատվեց Նոր Բայազետ քաղաքում, իսկ 2306-ը՝ գավառի գյուղերում¹²:

Քաղաքաբնակ 40 ընտանիքներին Կովկասի փոխարքայի կարգադրությամբ բնակեցրին քաղաքապատկան հողերին կից արքունական (պետական) հողերի վրա, յուրաքանչյուր ընտա-

⁷ Ллойд Джордж, Правда о мирных договорах, т. 2, М., 1957, с. 390:

⁸ Գ. Գալոյան, նշվ. աշխ., էջ 305:

⁹ Նույն տեղում, էջ 304:

¹⁰ Տե՛ս «Մշակ», 28 օգոստոսի, 1878 թ.:

¹¹ Տե՛ս ՅԱԱ, ֆ. 94, ց. 1, գ. 207, թթ. 8, 17, 18, 32, 65, 67:

¹² Տե՛ս ՅԱԱ, ֆ. 267, ց. 1, գ. 21, թթ. 173-187:

նրին հատկացնելով 30-ական դեսյատին հող¹⁹։ Մեկ տարի անց՝ 1878 թ. աշնանը, Էրզրումից և Նրա սանջակի գյուղերից 2-3 հազար հայ ընտանիքներ անցան ռուսական տերության սահմանը։ Նրանց որոշ մասը բնակություն հաստատեց Երևանի նահանգում²⁰։

Արևմտյան Հայաստանից, ավելի նվազ չափով և Պարսկաստանից ներգաղթը շարունակվել է նաև 1882-1884 թթ., 1886-1888 թթ. և 1891-1896 թթ. տարիներին։ Կաներալ ցուցակագրության տվյալներով, Նշված տարիներին Նոր Բայազետի գավառում վերաբնակություն հաստատած գաղթականների թիվը հատեց 1000 շնչի սահմանագիծը²¹։ Փոքրաթիվ գաղթականներ՝ 10 ընտանիք (31 տղամարդ, կանանց թիվը չկա) բնակության վայր ընտրեց Նոր Բայազետ քաղաքը²²։

1890-ական թվականներին Արևմտյան Հայաստանից գաղթականների հոսքը դեպի Երևանի նահանգ ավելի մեծ չափերի հասավ՝ կապված 1894-1896 թթ. Թուրքիայում հայերի գանգվածային ջարդերի հետ։ 1896 թ. 12 ընտանիքից (54 արական, 39 իգական) բաղկացած մի խումբ հասավ Նոր Բայազետ քաղաք։ Նրանց քարավանի որոշ մասն էլ մնաց Ղրխրուլաղի և Դարաչիչակի գավառներում։ 1897 թ. գավառի տարածքում բնակություն հաստատած գաղթականների թիվը կազմել է ընդամենը մոտ 1300 մարդ կամ 214 ընտանիք²³։

Այսպիսով, աղբյուրների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ քննության առարկա ժամանակաշրջանում Արևմտյան Հայաստանից, մասամբ և Պարսկաստանից Նոր Բայազետի գավառ ներգաղթողների թիվը կազմում էր մոտավորապես 22,8

¹⁹ Տե՛ս ԳԱՍ, ֆ. 227, ց. 1, գ. 586, թթ. 1-2։

²⁰ Տե՛ս Զ. Կիրակոսյան, Բուրժուական դիվանագիտությունը և Հայաստանը, Ե., 1978, էջ 318։

²¹ Տե՛ս ԳԱՍ, ֆ. 94, ց. 1, գ. 207, թթ. 89, 145-159, գ. 208, մաս առաջին, թ. 174, ֆ. 227, ց. 1, գ. 586, թթ. 1-2։

²² Տե՛ս ԳԱՍ, ֆ. 267, ց. 1, գ. 21, թթ. 173-187։

²³ Տե՛ս «Մշակ», 3 ապրիլի, 1897 թ., «Մշակ», 28 հունիսի, 1897 թ., «Մշակ», 3 հուլիսի, 1897 թ., ԳԱՍ, ֆ. 267, ց. 1, գ. 21, թթ. 175-176։

հազար մարդ, այդ թվում 3520-ը կամ 15,4%-ը Պարսկաստանից²⁴։

Այս համատեքստում ծագում է մեկ այլ հարց, թե սոցիալական ինչ վիճակում էին գտնվում գաղթականները, և ինչ էին անում իշխանություններն ու հասարակական կազմակերպությունները նրանց սոցիալ-տնտեսական վիճակի հետագա կայունացման և տանելի պայմաններ ստեղծելու ուղղությամբ։ Ինչպես արդեն ասվել է, գաղթականների քարավանները, առանց բացառության, ռուսական կայսրության սահմանը հատում էին տնտեսական ծայրահեղ անապահով վիճակում։ Փաստաթղթերի ուսումնասիրությունից երևում է, որ Անդրկովկասի և Արևելյան Հայաստանի հայությունը զորավով են կանգնել կարիքի մեջ հայտնված հայրենակիցների մասնակցել նրանց համար կատարվող դրամահավաքին և կենսական առաջնահերթության այլ միջոցների հայթայթմանը։ Այդ նպատակի համար Անդրկովկասի խոշոր կենտրոններում Թիֆլիսում, Բաքվում, Երևանում և այլուր հիմնվեցին բարեգործական ընկերություններ, որպիսիք հետագայում ստեղծվեցին նաև գավառների վարչական կենտրոններում։ Գաղթականների վերաբնակեցման, ինչպես նաև նրանց կենցաղային պայմանները իրագործելու համար 1878 թ. Կովկասի փոխարքայությունը Երևանի բարեգործական ընկերությանը հատկացրեց 20000 ռ. նպաստ՝ երեք տարվա ընթացքում մարելու պայմանով, որը բաժանվելու էր Երևանի նահանգի գավառների վրա։ Այդ նպատակով Երևանի նահանգապետի կողմից ստեղծվեց 5 հոգուց (Չով. Ղազարյան, Ռ. Ջալալյան, Վ. Եղիազարյան, Զ. Գևորգյան և Ս. Մելիքյան) հանձնաժողով։ Նկատի առնելով գաղթականների թիվը և նրանց տնտեսական վիճակը, հանձնաժողովը գումարը ըստ գավառների բաժանել է հետևյալ կերպ. Երևանի գավառին՝ 1900 ռ., Էջմիածնի գավառին՝ 7700 ռ., Սուրմալուի գավառին՝

²⁴ Հաշվարկը կատարվել է հետևյալ աղբյուրների տվյալների հիման վրա. ԳԱՍ, ֆ. 90, ց. 1, գ. 319, թթ. 5-143, ֆ. 94, ց. 1, գ. 207, թթ. 89, 145-159, 199-210, 296-301, գ. 208, մաս 1, թ. 174, ֆ. 227, ց. 1, գ. 586, թթ. 1-2, ֆ. 267, ց. 1, գ. 2, թթ. 2-1087, գ. 6, թթ. 1-149, գ. 8, թթ. 16-516, գ. 9, թթ. 1-104, գ. 13, թթ. 3-441, գ. 14, թթ. 2-539, գ. 16, թթ. 2-467, գ. 21, թթ. 173-178, գ. 22, թթ. 2-315, գ. 23, թթ. 2-728, ֆ. 1284, ց. 23, գ. 125, ց. 29։

1000 ռ., Ալեքսանդրապոլի գավառին՝ 2000 ռ., իսկ Նոր Բայազետի գավառին՝ 7400¹⁹։ Վերջինիս հատկացված գումարի չափը այն չափանիշն է, որը թույլ է տալիս Նոր Բայազետի գավառում ներգաղթածների վիճակը բնութագրել որպես տնտեսապես ծայրահեղ։ Հիշյալ փաստը կօգնի մոտավոր գաղափար կազմելու XIX դ. 70-ական թվականների դրությամբ նրանց սոցիալ-տնտեսական դրության մասին։ 1879 թ. Նոր Բայազետի գավառապետ տազնապոլի հայտնում է Երևանի նահանգապետին, որ գավառում կուտակված գաղթականությունը գտնվում է ծայրահեղ թշվառության մեջ, զուրկ է ապրելու տարրական պայմաններից, և խնդրում էր յուրաքանչյուր շնչի հաշվով բաց թողնել ամիսը 3 ռ. նպաստ²⁰։

Ընդհանուր առմամբ, 1878-1879 թթ. Երևանի նահանգում բնակություն հաստատած գաղթականներին հատկացվել է 40 հազար ռուբլու օգնություն, 30 հազար ռուբլին բաժանվել է 1878թ., իսկ մնացած 10 հազարը՝ 1879 թ.։ Նորաբնակների համար կազմակերպվող անձնա Օգնությունը շարունակվում է 80-ական թվականներին։

Նոր Բայազետ քաղաքում միտք է հղանում տեղում բացել Կովկասյան հայոց բարեգործական ընկերության մասնաճյուղ՝ օգնելու կարիքավոր և ընչազուրկ ընտանիքներին, ինչպես նաև բազմաթիվ աղքատ և ծնողազուրկ երեխաներին տարրական կրթության տալու համար²¹։ 1889 թ. մայիսի 1-ին Կովկասյան հայոց բարեգործական ընկերությունից ստացվում է թույլտվություն ընկերության տեղական մասնաճյուղ բացելու վերաբերյալ²²։ Հունիսի 5-ին մասնաճյուղը բացվում է։ Այդ օրը գավառի գործակալ եղիազար քահանա Տեր-Միքայելյանի նախաձեռնությամբ Ստ. Բատիկյանի գրադարանում կայացած ժողովը փակ քվեարկությամբ վարչության անդամներ ընտրեց Ստեփան Բատիկյանին, Գևորգ Արծրունուն, Արշակ Սամիկոնյանին, Երվանդ Առոյնյանին և Ավետիս Բուռնազյանին²³։

¹⁹ Տե՛ս «Մշակ», 28 մարտի, 1878 թ.։

²⁰ Տե՛ս Վ. *Նորաբնակյան*, նշվ. աշխ., էջ 40-41։

²¹ Տե՛ս «Մշակ», 18 ապրիլի, 1889 թ.։

²² Տե՛ս «Մշակ», 16 մայիսի, 1889 թ.։

²³ Տե՛ս «Մշակ», 16 հունիսի, 1889 թ.։

Հետագայում վարչության անդամների թիվն ավելանում է։ 1890 թ. դրությամբ վարչությունը ուներ 30 անդամ²⁴։

Ինչպես Երևանի նահանգի մյուս գավառներում, այնպես էլ Նոր Բայազետի գավառում շարունակվում էր թշվառ վիճակը։ Կենտրոնական բարեգործական ընկերության Նոր Բայազետի մասնաճյուղը գավառի գաղթականներին բաժանում է 5319 ռ. նպաստ²⁵։

Նորաբնակներին օգնություն էր կազմակերպվում նաև ապրանքների տեսքով։ Բնակչության այդ խավին տրամադրվում էր որոշ նյութական աջակցություն՝ շինանյութ, սերմացու, գյուղատնտեսական գործիքներ և այլն. նրանց սուր կարիքները հոգալու համար։

Նոր Բայազետի գավառի և առիասարակ Արևելյան Հայաստանի բնակչության էթնիկ պատկերը նկատելի փոփոխություններ է կրել XIX դ. 30-40-ական թվականներից սկսած, որն անմիջականորեն կապված էր Ռուսաստանի տարբեր շրջաններից արտաքսված զանազան աղանդներին պատկանող խմբերին սույն գավառի տարածքում բնակեցնելու հետ։ Նշված ժամանակաշրջանում, Անդրկովկասում ռուս գաղթականների բնակեցման գործը ղեկավարում էին Կովկասյան գլխավոր վարչության խորհրդի անդամ, երկրագործության և պետական գույքերի մինիստրության, կովկասյան լիազոր Ֆադեևը և Երևանի գավառապետ Բլավատսկին²⁶։ Նորանվաճ տարածքների ռուս գաղթականներով վերաբնակեցումը ցարական կառավարության գաղութային քաղաքականության մեխանիզմի դետալներից մեկն էր և հիմքում ուներ ինչպես տնտեսական, այնպես էլ քաղաքական դրապապտոններ. նախ, կենտրոնական Ռուսաստանը «մաքրել» կայսրության համար վտանգավոր տարրերից։ Երկրորդ, կենտրոնական Ռուսաստանը բեռնաթափել ազրաբային գերբնակչությունից։

Երրորդ, ռուսականացնել նորանվաճ տարածքները ինչպես էթնիկական, այնպես էլ տնտեսական ու հոգևոր մշակութային առումներով։

²⁴ Տե՛ս «Մշակ», 2 հունիսի, 1890 թ.։

²⁵ Տե՛ս ՂԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 360, քք. 134-136։

²⁶ Տե՛ս «Հայ մոլոդոլիի պատմություն», հ. V, էջ 223։

Չորրորդ, հաշիվ տեսնել աղանդավորների հետ և վերագրածնել նրանց ուղղափառության գիրկը, իսկ մյուս կողմից էլ արտոնություններ շնորհելով «բարձր դասին», իր համար կաշուն քաղաքական հենարան ստեղծել Անդրկովկասում²⁷:

1830-ականներից սկսվեց ռուս աղանդավորների՝ մոլոկանների, դոկտորների, ստարավերների, հրեացողների և այլոց տեղահանությունը դեպի Արևելյան Պայաստան: Ռուսաստանի կենտրոնական նահանգների՝ Տաճրովի, Ասարառովի, Սամարայի և այլն, վտարանդի ռուսների մշտական բնակության համար, խնդրո առարկա գավառի հյուսիսարևելյան, հարավային և արևմտյան շրջաններում հատկացվում են հողամասեր²⁸: Չիմնադրվում են մի քանի ռուսական գյուղեր: Առաջին բնակավայրերից մեկը, որ հիմնադրվել է սույն գավառում, Սեմյոնովկան է²⁹: 1848 թ. այն հիմնադրել են Տաճրովի նահանգի Ռավարովոյ գյուղից վտարված սուբբոտնիկ և մոլոկան ռուս աղանդավորները: Չետագա տարիներին (1848-1850 թթ.) գյուղը համալրվում է նոր ռուս գաղթականներով: 1851 թ. այստեղ մշտական բնակություն հաստատած ռուս վերաբնակիչների թիվը հասնում էր 191 շնչի՝ 96 արական - 95 իգական կամ 23 ծուխ³⁰: 1846թ. գավառի տարածքում երևանը Թիֆլիսի հետ կապող մայրուղու վրա առաջացավ ռուսական նոր գյուղ՝ Ելենովկան³¹, որի հիմնադրի բնակիչները Տաճրովի և Ասարառովի նահանգների գնահատված գյուղերից եկած աղանդավորներ էին՝ մեծ մասամբ սուբբոտնիկներ, կային և մոլոկաններ, պրիկուներ ու ստարա-

²⁷ Տե՛ս նույն տեղում:

²⁸ Նրանց բնակեցնում էին ազատ և բերրի հողերի վրա, ամեն մի շնչին 25 ղեպատին հատկացնելով, նահանգի և գավառի վարչական կենտրոնները տանող բանուկ ճանապարհների վրա:

²⁹ Գյուղն իր անվանումն ստացավ Կովկասի փոխարքայի հոր անունից: Տե՛ս *Մ. Ֆայթյան*, Չայաստանի ռուս վերաբնակիչները (1830 - 1920 թթ.), Ե., 1989, էջ 68:

³⁰ Տե՛ս ՉԱԱ, ֆ. 133, գ. 1, գ. 318, թթ. 95-100, Ե. *Լալայան*, նշվ. աշխ., էջ 127:

³¹ Բնակավայրն անվանակոչվել է ցարի որդու կնոջ՝ Ելենա Պավլովնայի անունով: Տե՛ս ՉԱԱ, ֆ. 133, գ. 1, գ. 319, թ. 296, *Մ. Ֆայթյան*, նշվ. աշխ., էջ 64:

վերներ³²: Ընորհիվ նոր համալրումների Ելենովկայի բնակչությունը ավելացավ, և 1851 թ. դրությամբ նրա թիվը կազմեց 550 մարդ (281 արական, 269 իգական) կամ 108 ընտանիք³³: Տաճրովի նահանգից քշված մոլոկան աղանդիկ պատկանող մի քանի ընտանիքներ 1846թ. հիմնադրեցին Կոնստանտինովկա գյուղը: Գյուղն անվանակոչվել է Լիկոլայ Ա-ի որդու՝ Կոնստանտինի անունով. «...ի նշանավորումն Կոնստանտին Լիկոլակիչի միապետական մեծության՝ հաճելի է Դարաշչյակի բնակավայրը անվանել Կոնստանտինովկա»³⁴: Կոնստանտինովկա գյուղի բնակչության թիվը 1851 թ. կազմում էր 131 մարդ (61 արական, 70 իգական) կամ 18 ընտանիք³⁵: Այսպիսով, ինչպես ցույց են տալիս արխիվային վավերագրերը, 1846-1850 թթ. Նոր Բայազետի գավառում հիմնվում են ռուսաբնակ Սեմյոնովկա, Ելենովկա և Կոնստանտինովկա գյուղերը: Նշված տարիներին ի հաշիվ Ռուսաստանի տարբեր նահանգներից (գլխավորապես կենտրոնական) կատարվող ներհոսքի ռուս բնակչության թիվն արագորեն ավելանում է 1850 թ. վերջին հասնելով 872 շնչի (438 արական, 434 իգական) կամ 149 ընտանիքի³⁶: Նախատեսված էր չորս գյուղ էլ հիմնադրել Ելենովկայի և Նոր Բայազետի միջև: Այդ գյուղերի հիմնադրման հետ կապվում էին նաև որոշակի տնտեսական հեռանկարներ՝ կապված Սևանա լճի հետ: Կովկասյան գլխավոր վարչության խորհրդի անդամ, երկրագործության և պետական գույքերի միմստության կովկասյան լիազոր Ֆադեևի մտադրությամբ այդ գյուղերի հիմնումը նոր լիցք կհաղորդեր ավազանի տնտեսության զարգացմանը, նավագնացության աշխուժացմանը և առևտրի ծավալմանը: Սակայն ռուս աղանդավորների հակառակվելը ձախողեց այդ պլանի կենսագործումը: Այստեղ հիմնվեց միայն Ալեքսանդրով-

³² Ավգրնադրյուրները վկայում են, որ առաջին վերաբնակիչներն այստեղ հայտնվել են դեռ 1835թ.: Տե՛ս ՉԱԱ, ֆ. 133, գ. 1, գ. 318, թ. 96:

³³ Տե՛ս ՉԱԱ, ֆ. 133, գ. 1, գ. 318, թ. 96:

³⁴ ՉԱԱ, ֆ. 133, գ. 1, գ. 318, թ. 96, գ. 329, թ. 296, Ե. *Լալայան*, նշվ. աշխ., էջ 127:

³⁵ Տե՛ս ՉԱԱ, ֆ. 133, գ. 1, գ. 329, թ. 296:

³⁶ Չաշվարկը կատարվել է ըստ ՉԱԱ, ֆ. 133, գ. 1, գ. 378, թթ. 94-95, 100 տվյալների:

կա գյուղը³⁷: Գավառի տարածքի բնակեցումը ռուս աղանդավորներով շարունակվել է և հետագա տարիներին, մի տարբերությամբ, որ այս անգամ այդ գործընթացին մասնակցել են նաև այն վտարանդի աղանդավորները, որոնք մինչ այդ ժամանակավորապես հաստատվել էին Անդրկովկասի տարբեր շրջաններում և Երևանի նահանգի գանձազան գավառներում: Նոր Բայազետի գավառում կառուցվում են նոր ռուսական բնակավայրեր: 1851թ. հիմնվում են Սուխոյ-Ֆոնտանը³⁸, Ալեքսանդրովկան հնում՝ Չեյնալ Արդին³⁹ (բնակիչները Տամբովի նահանգից եկած ռուս մոլոկաններ)⁴⁰, Նադեժդինոն կամ Շորժան (բնակիչները Սամարայի նահանգի համաճում գավառի Կարիլևա և այլ գյուղերից տեղահանված 15 ընտանիք ռուս մոլոկան, պրիզուն և սուբբոտնիկ աղանդավորներ)⁴¹, իսկ 1850թ. Տոմբովի և Կորոնեժի նահանգներից քշված մոլոկան աղանդավորները՝ Ներքին Ախսան⁴²:

³⁷ Տե՛ս «Հայ ժողովրդի պատմություն», հ. V, էջ 222-224:

³⁸ Այս անունը գյուղը ստացել է այն պատճառով, որ այստեղի միակ աղբյուրը կաթ-կաթ էր բխում և հաճախ չորանում: Հայերը կաթ-կաթ քիսելը նկատի առնելով կաթ-կաթ էին կոչում, ռուսները նրա չորանալը նկատի ունենալով անվանում էին Սուխոյ Ֆոնտան (չոր աղբյուր): Տե՛ս *Ե. Լալայան*, Եջվ. աշխ., էջ 80, 84:

³⁹ Ելենովկայում և Ալեքսանդրովկայում բնակություն հաստատած մոլոկանների որոշ մասը հետագայում տեղափոխվում է Կաղզվանի գավառ: Տե՛ս «Сборник материалов для описания...» вып. 38 отд. ... с 237, *Վ. Խորաբեկյան*, Եջվ. աշխ., էջ 50:

⁴⁰ Տե՛ս *Ե. Լալայան*, Եջվ. աշխ., էջ 127:

⁴¹ Տե՛ս ՉԱԱ, ֆ. 133, ց. 1, գ. 318, քք. 96-97, 100, *Ե. Լալայան*, Եջվ. աշխ., էջ 80: Այս գյուղի մի քանի բաբար ընտանիքներ ցանկություն են հայտնում տեղափոխվել Բասարզեչարի (Կարոնիսի) շրջան: Հենց այդ դիմումն էլ օգտագործելով որպես հարմար պատրվակ, ցարական պաշտոնյաները գյուղի բոլոր բնակիչներին «իրենց ցանկության համաձայն» վտարեցին գյուղից: Դատարկված գյուղում վերաբնակվեցին ռուս աղանդավորները: Տե՛ս *Ա. Հայրյան*, Եջվ. աշխ., էջ 71:

⁴² Ներքին Ախսան բաղկացած էր երկու մասից՝ հայրց և ռուսաց: Հայկականը գտնվում էր արևելյան մասում և հիմնվել էր 1829թ., իսկ ռուսականը հյուսիսային մասում և հիմնվել էր 1860թ.: Տե՛ս *Ե. Լալայան*, Եջվ. աշխ., էջ 81:

Սուխոյ-Ֆոնտան գյուղից քիչ հեռու, դեպի հարավ-արևմուտք, Երևան տանող ճանապարհի վրա 1861թ. հիմնադրվում է ռուսական Նովո-Նիկոլայևկա (Ջրաբեր) գյուղը⁴³: Երևանի գավառապետ Բլավատսկու առաջադրությամբ Նոր Բայազետի և Ալեքսանդրապոլի գավառների միացման վայրում՝ Սիսխանայի ծորում (Չանքավան) հիմնադրվեց Նոր Սիսխայովկա (Սիսխանա) ռուսաբնակ գյուղը, որի վրայով նախատեսվում էր Ալեքսանդրապոլը անմիջականորեն կապել Սևանա լճի ավազանի հետ⁴⁴:

Տվյալ ժամանակաշրջանի սկզբնաղբյուրները զգալի նյութ են պարունակում նաև Սևանա լճի հարավարևելյան մասի՝ Մազրայի հարթավայր ռուս աղանդավորներով բնակեցնելու հարցի մասին: Պարզվում է, որ նշված հարթավայրը եղել է ռուսներով վերաբնակեցնելու Կովկասի իշխանությունների ծրագրերում: Այդ կապակցությամբ 1849թ. դեկտեմբերի 6-ին Ֆադեևը Կովկասի փոխարքային ուղղված նամակում հիմնավորում է նշված տարածքը ռուս աղանդավորներով բնակեցնելու նպատակահարմարությունը և անհրաժեշտությունը: «Գյուլչա լճի հարավարևելյան մասում գտնվում է Մազրայի հարթավայրը: Անդրկովկասի երկրամասում իմ տեսած ամենահարուստ հարթավայրերից մեկը, ինչպես տեղադրությամբ, այնպես էլ իողի որակով, կլիմայով և առատ ջրով: ...այստեղ կարող են բնակվել մինչև 3 հազար ընտանիքներ...»⁴⁵, - վստահեցնում էր Ֆադեևը: Սակայն այս ծրագիրը կյանքի չէկզվեց⁴⁶: Լճի ափամերձ այս հատվածում ռուս աղանդավորներով վերաբնակեցնելու հիմնական բարդությունը կապված էր ճանապարհների քացակայության հետ. «...այդ վերաբնակեցումը գլուխ չեկավ՝ բացի որ այն գտնվում էր փոստային մայրուղուց շատ հեռու և ռուսական վերաբնակեցման գլխավոր նպատակին՝ այդ բնակավայրերը գլխավոր ճանապարհների երկայնքով հիմնադրելու

⁴³ Տե՛ս *Ա. Հայրյան*, Եջվ. աշխ., էջ 66:

⁴⁴ Տե՛ս «Հայ ժողովրդի պատմություն», հ. V, էջ 224:

⁴⁵ ՉԱԱ, ֆ. 133, ց. 1, գ. 359, ք. 17:

⁴⁶ Տե՛ս ՉԱԱ, ֆ. 133, ց. 1, գ. 57, ք. 11:

խնդրին չէր համապատասխանում»⁴⁷, – իրավացիորեն նկատում է Ա. Գայթյանը:

Սկստելիորեն ավելանում է ռուս վերաբնակիչների թիվը: Քսաներեք տարվա ընթացքում (1851-1873 թթ.) Նոր Բայազետի գավառում ապրող ռուսների ընդհանուր թիվն ավելացավ 1988 մարդով և հասավ 2860-ի⁴⁸ կամ աճեց 69,5%-ով: Հատկանշական է, որ 1913 թ. 1851 թ. դիմաց հիշյալ գավառում ռուս բնակչության թիվն ավելի քան հինգապատկվել է և 1851 թ. 999-ի փոխարեն 1913 թ. այն կազմել է 5357 մարդ կամ աճել է 81,3%-ով: Փաստորեն ռուս վերաբնակիչները Նոր Բայազետի գավառում հաստատվեցին իրենց հայրենի բնությանը և եղանակին մնամվող Սևանի ավազանի արևմտյան և հյուսիսարևմտյան մասերում:

Քննության առարկա ժամանակաշրջանում Նոր Բայազետի գավառի բնակչությունը ռուս վերաբնակիչներից բացի, համալրվել է նաև Անդրկովկասի ճահանգների, Գյուսիսային Կովկասի և Երևանի նահանգի զանազան գավառներից հայ և մահմեդական բնակչության դեպի գավառի տարածք պարբերական բնույթ կրող զանգվածային ներհոսքի ճանապարհով: Կիճակագրական տվյալների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ 1831-1913 թթ. կտրվածքով վերոհիշյալ վարչատարածքների զանազան բնակավայրերից Նոր Բայազետի գավառն ենթարթել է մշտական բնակչություն են հաստատել 26,8 հազար մարդ: Եթե այս թվին ավելացնենք նույն տարիներին Նոր Բայազետի գավառ ներգաղթած 14,7 հազար արևմտահայ և մասամբ նաև պարսկահայ գաղթականներին⁴⁹, ապա կստացվի,

⁴⁷ Ա. Գայթյան, նշվ. աշխ., էջ 72:

⁴⁸ Հավաքվող կատարվել է ՀԱԱ, ֆ. 133, ց. 1, գ. 378, թթ. 94-96, 99-100, ֆ. 267, գ. 1, գ. 16, թթ. 202-208, գ. 20, թթ. 244, 528-535, գ. 22, թթ. 111-126, 208-216, գ. 13, թթ. 194-200, 262-271, 436-441 տվյալների հիման վրա:

⁴⁹ Հավաքվող կատարվել է հետևյալ աղբյուրների տվյալների հիման վրա, ՀԱԱ, ֆ. 90, գ. 1, գ. 319, թթ. 5-143, ֆ. 227, գ. 1, գ. 586, թթ. 1-2, ֆ. 267, գ. 1, գ. 2, թթ. 2-1087, գ. 6, թթ. 1-149, գ. 8, թթ. 16-516, գ. 9, թթ. 1-104, գ. 13, թթ. 3-441, գ. 14, թթ. 2-539, գ. 16, թթ. 2-467, գ. 21, թթ. 173-178, գ. 22, թթ. 2-315, գ. 23, թթ. 2-728, ֆ. 1284, գ. 223, գ. 125, ք. 29, ֆ. 93, գ. 1, գ. 79, ք. 64, գ. 81, թթ. 52-55, գ. 330, թթ. 177-182:

որ վերը նշված տարիներին այս գավառ ներհոսք կատարած բնակչության թիվը կազմել է ավելի քան 41,5 հազար ռուս, այսինքն բնակչության ընդհանուր աճի 27,8%-ը:

Տնտեսության զարգացման ոչ բավարար մակարդակ, աշխատուժի օգտագործման սահմանափակ հնարավորությունները, մշակելի հողերի սակավությունը XIX դ. վերջերից սկսած պայմանավորեցին Նոր Բայազետի գավառի բնակչության արտահոսքը դեպի Անդրկովկաս, Գյուսիսային Կովկաս, Ռուսաստան և արտասահման: Մեր ձեռքի տակ չկան ամփոփ տվյալներ XIX դ. վերջին և XX դ. առաջին տասնամյակին այս գավառից բնակչության արտագնացության վերաբերյալ, ինչը սակայն չի նշանակում, թե արտագաղթի խնդիրը օրակարգային չէր: Այն, որ սույն գավառի բնակչության գործազուրկ և աղքատ զանգվածը աշխատանք գտնելու ակնկալիքով վաղուց էր սկսել մեկնել արտագնա աշխատանքի, իսկ արդեն նշված ժամանակաշրջանում մեծ ծավալների էր հասել, հաստատում են արխիվային փաստաթղթերը, ժամանակի մասուլը և «Կովկասյան օրացույցը»: «Պաշտոնական տվյալներով, տարեկան միջինը 800–1000 մարդ գավառից մեկնել են նահանգի սահմաններից դուրս արտագնա աշխատանքի: Օրինակ, համաձայն Նոր Բայազետի ոստիկանական վարչության տվյալների միայն 1882 թ. անցադիր է տրվել 1242 մարդու՝ գավառից դուրս գալու և արտագնացության մեկնելու համար⁵⁰: Նկատի առնենք, որ սա միայն պաշտոնական վիճակագրությունն է, իսկ իրականում այդ թվերը շատ ավելի մեծ են: Ըստ «Մշակ» թերթի, ամեն տարի հազարավոր մարդիկ, սնտեսական և այլ կարիքներից դրդված ստիպված հեռանում էին դեպի օտարություն, դեպի մեծ քաղաքներ՝ ապրուստ ճարելու համար⁵¹:

«Նրանց չափազանց շատ զնալու պատճառը, կարողում ենք նույն թերթի մեկ այլ հրապարակումում,– պետք է վերագրել այն հանգամանքին, որ օտարություն զնացողներից և ոչ մեկը սերմացու ցորեն կամ գարի չունեն, իսկ եթե պարտքով կամ

⁵⁰ «Պատմա-բանասիրական հանդես», թիվ 4, 1965, էջ 47-48:

⁵¹ Տե՛ս «Մշակ», 1 մայիսի, 1910 թ.:

վրադրով (հավելվածարով – ԳԳ.) վերցնել (վրադիրը հասնում էր 80-90%-ի), վերադարձնել չէր կարող»⁵²: Հատկանշական է, որ գավառից արտագնա աշխատանքի մեկնողների թիվը մշտապես աճել է. «Չկա Կովկասում մի այնպիսի տեղ, որ այնքան թվով պանդուխտներ ունենան օտար վայրերում, ինչպես Նոր Բայազետը»⁵³, – գրում է «Մշակ» թերթը: Աղբյուրները վկայում են, որ տարիների ընթացքում, աստիճանաբար հարմարվելով նոր պայմաններին, պանդուխտները դեպի իրենց են քաշել նաև «իրենց ընտանիքը կից, երեխա և այլն, թողնելով բոլորովին խոպանացած իրենց հողը ու ջուրը, իրենց արտն ու արդրը»⁵⁴, – տազմապում է հողվածագիրը: «Այս րոպեիս, - չարուհակում է հեղինակը, - քաղաքում մի ամբողջ թաղաբաժին Բանդի-մախլա անունով, ավերակների է նմանվում: Տուն չեք գտնի, որում իր սեփական տեղը ապրելիս լինի: Երանցից մի մասը փակ է, մյուս մասը տրված է քրեիով (վարձով – ԳԳ.) մի չնչին գումարով 1 ռուբլի ամիսը, երրորդ մասը՝ թողնված ձրիապես որևէ աղքատ ընտանիքի բնակության և պահպանության համար, չորրորդ մասը քանդված է: Եվ այդ թաղի բնակիչները չվելով դեպի Թիֆլիս, Բաքու, Բաթում և այլ տեղեր՝ բոլորովին մոռացել են իրենց տուն ու տեղ, իրենց մայր հայրենիքը»⁵⁵: Համաձայն ժամանակի մամուլի հրապարակած տեղեկությունների, պանդուխտները Անդրկովկասի խոշոր արդյունաբերական և նավահանգստային կենտրոններում կատարում էին ամենաչարքա աշխատանքները, քայք վարձատրվում էին չնչին կուպեներով: Երանք աշխատում էին օրական 11-12 ժամ և ստանում միջին հաշվով 80 կոպեկ⁵⁶:

«Միակ միսիքարտքն այն է, որ, - գրում է «Մշակը», - մեր կողմերի պանդուխտները բավական փող են հասցնում իրենց ընտանիքներին: Օրինակ, Դալի-Ղարդաշ, Քյոսա Միսեղ, Փաշա-

⁵² «Մշակ», 29 մարտի, 1888 թ.:

⁵³ «Մշակ» 1 մայիսի, 1910 թ.:

⁵⁴ Նույն տեղում:

⁵⁵ Նույն տեղում:

⁵⁶ Տե՛ս «Մշակ» 29 մարտի, 1888 թ.:

քեն և այլ գյուղերը ամսական 1000 ռուբլուց ավելի փող են ստանում յուրաքանչյուրն իր պանդուխտներից»⁵⁷:

Նոր Բայազետի գավառի գործազուրկ և կարիքավոր բնակչության մի մասն էլ իր բախտն էր փնտրում Երևանի նահանգի տարբեր գավառներում՝ սեզոնային աշխատանքի էր մեկնում հարթավայրային շրջաններ: Ըստ արխիվային տվյալների, 1913 թ. դրությամբ այս գավառի 131 բնակավայրերից արտագնա աշխատանքի (սեզոնային և տևական) մեջ գտնվողների քանակական պատկերը հետևյալն էր. Երևանի նահանգի սահմաններում՝ 3619 մարդ, որը կազմում էր ամբողջ նահանգի ներսում (861 բնակավայր) արտագնա աշխատանք կատարողների (17446 մարդ) շուրջ 21%-ը, նահանգի սահմաններից դուրս՝ 9308 մարդ կամ ամբողջ նահանգից մեկնածների (29159 մարդ) շուրջ 40%-ը, իսկ արտասահմանում՝ 271 մարդ կամ նահանգից գնացածների (2137 մարդ) 12,7%-ը:

Ստացվում է, որ խնդրո առարկա գավառից արտագնա աշխատանքի մեկնածների ընդհանուր թիվը 1913 թ. կազմում էր 13198 մարդ կամ ամբողջ նահանգից մեկնածների (48742 մարդ) շուրջ 27%-ը, որոնք տարեկան վաստակել են ավելի քան 898 հազ. ռուբլի⁵⁸:

Այս տվյալներն ամբողջությամբ վերաբերում են հայ բնակչությանը, որովհետև, ինչպես հավաստում են աղբյուրները, «թուրքաբնակ գյուղերն անշարժ են մնում, նրանք ոչ մի ժամանակ օտարության չեն գնում»⁵⁹:

Ամփոփելով նշենք, որ բնակչության մեծաթիվ արտահոսքը երկարատև ժամանակամիջոցում էական ազդեցություն է թողել գավառի ժողովրդագրական կառուցվածքի վրա՝ պակասել էր երիտասարդ տարիքային խմբի բաժինը ամբողջ բնակչության կազմում:

Երիտասարդ աշխատունակ տարիքի տղամարդկանց թվաքանակի կրճատման հետևանքով բնակչության կազմում կանանց տեսակարար կշիռ բարձրացումը նկատելի էր դառնում:

⁵⁷ «Մշակ», 1 մայիսի, 1910 թ., «Մշակ» 14 հուլիսի, 1910 թ.:

⁵⁸ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1284, ց. 194, գ. 15, թթ. 18-21:

⁵⁹ «Մշակ», 1 մայիսի, 1910 թ.:

Ինչևէ, սա չի նշանակում, թե արտագաղթի խնդիրն օրակարգային էր միայն ուսումնասիրության առարկա գավառի համար: Դա յուրահատուկ էր Երևանի նահանգի բոլոր գավառներին: Օրինակ, Ալեքսանդրապոլի գավառից արտագնա աշխատանքի մեկնածների թիվը 1913 թ. հասնում էր 12700 մարդու, որից՝ 3121-ը՝ նահանգի սահմաններում, 9308-ը՝ նահանգից դուրս և 271-ը՝ արտասահմանում, իսկ Շարուր-Ղարալազյազի գավառից՝ 2407 մարդ, այդ թվում՝ 543-ը՝ նահանգի սահմաններում, 1863-ը՝ նահանգից դուրս, իսկ 1-ը՝ արտասահմանում⁶⁰:

Միգրացիոն գործընթացի մյուս դրսևորումը, որ նկատելի էր՝ մահմեդական բնակչության դեպի Նոր Բայազետի գավառ ներհոսքի բարձր տեմպերն էին կապված անասնապահությամբ զբաղվելու համար գավառի նպաստավոր բնակլիմայական պայմանների հետ: Ակսվեց մահմեդականների հոսքը: Այդ են վկայում գավառի տարբեր շրջաններում գյուղական հին բնակավայրերի վերականգնման ու նորերի հիմնադրման վերաբերյալ ուսումնասիրությունը: Բավական է նշել, որ 1830 թ. հետընկած ժամանակաշրջանում ներգաղթի հաշվին մահմեդական բնակավայրերի թիվն այս գավառում ավելացել է 18-ով, և ևս 4-ը՝ միջգավառային տեղաշարժերի արդյունքում: Այսպես, 1875 թ. Երևանի գավառի Սատուրալ գյուղից շիա թուրքերի մի ստվար զանգված ներգաղթել է Գյոլշայի գավառակ և հիմնել Եանդ գյուղը: 1878 թ. Շարուր-Ղարալազյազի գավառի Աղբենդ գյուղից եկվոր շիա թուրքերը կառուցեցին Խարթլը գյուղը: Բորչալուի և Ղազախի գավառներից զգալի թվով շիա և այլունի թուրքեր տեղափոխվեցին և վերակենդանացրին Կարա-կալա գյուղը:

Այդ տարիներին Ղազախի, Ղարաբաղի, Ալեքսանդրապոլի, Շարուր-Ղարալազյազի, Երևանի և Սուրմալուի գավառներից մահմեդականների զանգվածաբար ներգաղթի հետևանքով վերաբնակվեցին Քարվանսարա, Աք-Տաշ, Քյուլլիջա, Տաշքենտ, Ղալակլու, Մեծ Մազրա, Քյասաման, Ջիլ, Արտանիշ,

Ղուշլի-դարասի, Դավա-խարապա և Կզլ-Կալա գյուղերը⁶¹:

Գավառի ժողովրդագրական իրավիճակի վրա՝ բնակավայրերի բնակչության քանակական, էթնոգրավանաբանական, սեռատարիքային, զբաղվածության, բնակչության միջին խտության և այլն փոփոխությունների իմաստով մեծ ազդեցություն են թողել ներգավառային շարժընթացները: Այս երևույթը թելադրված էր սոցիալ-տնտեսական կոնկրետ իրավիճակով (բնակչության քանակական աճ, անապահով կացություն, սակավահողություն, աշխատատեղերի պակաս և այլն):

Բնակչության մեկ վայրից մեկ այլ բնակավայր տեղաշարժեր ուղեկցվում էին հին բնակավայրերի վերականգնմանը զուգընթաց նորերի հիմնադրումով: Դրանք են Քաշիկ-բաշը (1900 թ. վերաշինել են Կերին Ղարաուլուից եկած հայերը), Կերին Քեռլաղոն կամ Կարմիր-խարապա (1890 թ. հիմնել են Քեռլաղոնից գաղթած հայերը), Չարդիրիը (1856 թ. հիմնել են ղուլալեցի թուրքերը), Աղ-քիլիսան (1831 թ. բնակեցրել են Բաշքենդից և Գոմածորից տեղափոխված թուրքերը), Բաբաջան-դարասին (վերաբնակիչ թուրքերը 1875 թ. գաղթել են Շիշ-կայա գյուղից), Քյանքյանը (1868 թ. հիմնել են Թոխլիճա գյուղից տեղափոխված թուրքերը):

Փոքր Քախին (1886 թ. քաղսեցի մոտ 30 հայ ընտանիք առանձնանալով, փոստային ճանապարհի ծախ կողմում հիմնադրում է նոր գյուղը)⁶², չհաշված, որ նորեկների մի մասն էլ բնակություն է հաստատել գավառի գյուղերում և Նոր Բայազետ քաղաքում, ստվարացնելով տեղացիների շարքերը: Ուսումնասիրությունը ցույց է տվել, որ դեպի քաղաք մշտական բնակչության համար հիմնականում մեկնում էին մոտակա գյուղերի սակավահող և հողազուրկ գյուղացիները:

Ընդ որում, այդ ընտանիքների մի մասը մշտապես հաստատվելով քաղաքում շարունակում էր պահպանել կապը գյուղի հետ՝ չլստրվելով հողից: Այս կարգի քաղաքաբնակները

⁶⁰ Տե՛ս ԳԱՍ, ֆ. 1284, ց. 194, գ. 15, քք. 18-21:

⁶¹ Տե՛ս Ե. Լալայան, նշվ. աշխ., էջ 48-49, 64, 66, 69-70, 76-78, 98, 100-101, 153-154:

⁶² Տե՛ս Ե. Լալայան, նշվ. աշխ., էջ 52, 54, 74, 76, 78, 85, 97:

ապրուստի միջոցը գոյանում էր երկու՝ արհեստաարդյունաբերական և գյուղատնտեսական բնույթի աշխատանքները զուգակցելու ճանապարհով: Քննության առարկա գավառի հեռավոր գյուղերից, Երևանի նահանգի մյուս գավառներից և դրսից բնակչության շարժերը դեպի քաղաք գերազանցապես պայմանավորված էին հարազատ-բարեկամների կողքին ապրելու ձգտումով՝ չնայած չի բացառվում նաև աշխատելու կամ սովորելու շարժառիթները:

Ինչ վերաբերում է Արևմտյան Հայաստանից և Պարսկաստանից ներգաղթողներին, ապա նրանք գերազանցապես բնակություն էին հաստատում գյուղական վայրերում:

Այսպիսով, վերը շարադրանքից կարելի է անել հետևյալ եզրակացությունները: Նախ, բնակչության ներհոսքի տեմպերը դեպի Նոր Բայազետի գավառ, թեև 1828-1830 թթ. համեմատությամբ նվազել էին, այդուհանդերձ, բնակչության բնական աճի հետ միասին շարունակում էր մնալ կարևոր գործոն: Այուսը: Եթե սկզբնական շրջանում գավառի գյուղերից բնակչությունը տեղաշարժվում էր հիմնականում գավառի և նահանգի ներսում, ապա XIX դ. կեսերից՝ առավելապես Երևանի նահանգի սահմաններից դուրս: Ցարիզի ժողովրդագրական քաղաքակազմության գլխավոր խնդիրներից մեկը՝ Անդրկովկասի, այդ թվում և Արևելյան Հայաստանի վերաբնակեցումն էր կայսրության տարբեր նահանգներից տեղահանված ռուս աղանդավորներով, միտում ունենալով կենտրոնական նահանգները որոշ չափով բեռնաթափել ազարայից գերբնակչությունից, ինչպես նաև թույլ չտալ աղանդավորական շարժման տարածվելուն, մյուս կողմից էլ իր համար տարածաշրջանում ստեղծել ամուր և հուսալի քաղաքական ու սոցիալական հենարան:

XIX դ. 30-ական թվականներից գավառի բնակչության քանակական աճի հիմնական աղբյուրը սեփական վերարտադրությունն էր, որն ուղեկցվում էր նաև զգալիորեն բարձր մահացությամբ:

Ժողովրդագրական շարժերի բնորոշ գծերից մեկն էլ, որ բխում է վիճակագրական տվյալներից այն է, որ Նոր Բայազետ

քաղաքի բնակչության բնական աճը գյուղական բնակչության բնական աճի համեմատությամբ նկատելիորեն բարձր էր: Դա ամենից առաջ պայմանավորված էր քաղաքի բնակչության ծնելիության գործակից գալիս բարձրացմամբ և մասամբ մահացության նվազմամբ:

Այլ խոսքով՝ գյուղական բնակչության ծնելիության, ինչպես նաև բնական աճի տեմպերն ավելի ցածր էին, Նոր Բայազետ քաղաքի բնակչության համապատասխան ցուցանիշներից: Այսպես, 1864 թ. քաղաքի բնակչության բնական աճը 1000 շնչի հաշվով կազմում էր 19, իսկ ամբողջ գյուղական բնակչությանը չէր անցնում 15-16 մարդուց⁶⁵: Գյուղական բնակչության բնական վերարտադրության համեմատաբար ցածր ցուցանիշը պայմանավորված էր նաև նրա մահացության բարձր մակարդակով:

Ինչպես ցույց են տալիս սկզբնաղբյուրները, եղել են տարիներ, երբ գյուղական բնակչության ծնվածների թիվն անցնում առավելություն ուներ մահացածների նկատմամբ: Օրինակ, 1864 թ. ավելի քան 68,4 հազար (առանք քաղաքի) բնակչություն ունեցող այս գավառում ծնվել է 1975, մահացել 1695 երեխա⁶⁶, այսինքն բնական աճը կազմել է ընդամենը 280 մարդ:

Քաղաքի բնակչության ծնելիության բարձր գործակիցը պայմանավորված էր նաև միգրացիոն տեղաշարժերով, գյուղացի դեպի քաղաք երիտասարդ տարիքի տղամարդկանց և կանանց արտահոսքով՝ աճում էր երիտասարդ տարիքի բնակչության բաժինը ընդհանուր բնակչության կազմում: Այս հանգամանքը մեծապես ազդում էր բնական վերարտադրության վրա՝ էապես բարձրացնելով բնակչության ծնելիության և բնական աճի գործակիցները: Սկզբնաղբյուրների տվյալների հաշվարկը ցույց է տալիս, որ 1831-1886 թթ., այսինքն 55 տարվա ընթացքում Նոր Բայազետի գավառում բնական աճի շնորհիվ բնակչությունն ավելացել է շուրջ 48 հազար մարդով, այսինքն տարե-

⁶⁵ Հաշվարկը կատարվել է ըստ ՀԱԱ, ֆ. 125, ց. 1, գ. 4, մաս 2-րդ, ք. 116, 158 193-194 տվյալների:

⁶⁶ ՀԱԱ, ֆ. 125, ց. 1, գ. 4, մաս 2-րդ, ք. 192-193:

կան միջինը 872 մարդով, և ընդհանուր բնակչության աճի մեջ նրա տեսակարար կշիռը կազմել է 63,5%-ը⁶⁵:

XIX դ. 80-ական թվականներից սկսած սույն գավառի բնակչության թվաքանակի աճի հիմնական աղբյուրը շարունակում էր մնալ բնական վերարտադրությունը, որի մասին մոտավոր պատկերացում է տալիս ներքոհիշյալ 10-րդ աղյուսակը⁶⁶:

Աղյուսակ 10-ից երևում է, որ հիշյալ տարիներին Նոր Բալաքետի գավառում գրանցվել են բնակչության բնական աճի բարձր տեմպեր: Թեև առանձին տարիներին տեղի է ունեցել ավելացում կամ նվազում, ամեն դեպքում պահպանվել է ճնշողինամիական, որը տատանվել է 10-15%-ի սահմաններում: Բնական աճի առավել բարձր ցուցանիշ, տարեկան միջինը (հազար բնակչի հաշվով) չուրջ 30 գրանցվել է 1895 և 1897 թթ. ընթացքում: Այս երևույթն անմիջականորեն կապված էր բնակչության ամուսնության և ծնելիության գործակիցների բարձրացման և մահացության ցուցանիշի նվազման հետ: 1886 թ. գավառի գյուղական բնակչության մեջ 1000 շնչի հաշվով ամուսնացել է

⁶⁵ Հավաքվել կատարվել է հետևյալ աղբյուրների տվյալների հիման վրա. ՉԱԱ, ֆ. 125, ց. 1, գ. 4, մաս 2, ք. 158-162, 165, 191, 244-245, ֆ. 90, գ. 1, գ. 83, ք. 5-404, գ. 89, ք. 1-324, գ. 88, ք. 2-336, գ. 23, ք. 1-118, գ. 318, ք. 1-145, գ. 319, ք. 7-92, գ. 330, ք. 1-201, գ. 329, ք. 1-146, ֆ. 93, գ. 1, գ. 79, ք. 1-680, գ. 80, ք. 2-287, գ. 81, ք. 2-161, ֆ. 267, գ. 1, գ. 6, ք. 1-459, գ. 16, ք. 3-467, գ. 21, ք. 1-187, գ. 22, ք. 2-881, գ. 23, ք. 3-719, գ. 20, ք. 2-1087, գ. 14, ք. 3-539, գ. 7, ք. 4-479, գ. 15, ք. 8-564, գ. 8, ք. 2-516, գ. 13, ք. 3-445:

⁶⁶ Աղյուսակը կազմվել է հաշվարկը կատարվել է ֆ. 90, գ. 1, գ. 83, ք. 5-404, գ. 89, ք. 1-324, գ. 88, ք. 2-224, ֆ. 93, գ. 1, գ. 79, ք. 1-680, ֆ. 94, գ. 5, գ. 3315, ք. 1, ֆ. 1284, գ. 194, գ. 15, ք. 40, գ. 86, ք. 20, գ. 223, գ. 191, ք. 2, գ. 602, ք. 3, գ. 125, ք. 35, գ. 122, ք. 29,50, ֆ. 125, գ. 1, գ. 4, մաս 2, ք. 116, 150, 193-194, ֆ. 267, գ. 1, գ. 9, ք. 1-5, "Обзор Эриванской губернии" 1886-1914 թթ. և "Кавказский календарь" 1886-1914 թթ. յուրաքանչյուր տարվա լույս տեսած համապատասխան տվյալների, 1886 թ. ընտանեկան ցուցակագրության էջ 32: "Первая всеобщая перепись населения Российской империи, 1897 г., с. 20; "Памятная книжка Эриванской губернии на 1900 г.", Эриван, 1902, от. IV, с. 143 տվյալների հիման վրա:

Բնակչության բնական աճը Նոր Բալաքետի գավառում 1886-1913թթ.

Ծրայություն վկրկնություն	Ամբողջ բնակչությունը			մյուսը -ստորադր	1000 շնչի հաշվով			Տոկոսը			Օճուճը			1000 շնչի հաշվով			Տոկոսը		
	մ	ե	ց		մ	ե	ց	մ	ե	ց	մ	ե	ց	մ	ե	ց	մ	ե	ց
1886 թ. Պայթյուն	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18	19	20
1887 թ. Պայթյուն	49473	44530	64093	48	8,2	9,1	17,3	8,2	9,1	17,3	2102	1885	3987	22,3	20	42,3	22,3	28	42,3
1888 թ. Պայթյուն	3954	3534	7488	27	6,8	7,6	14,4	6,7	7,6	14,3	338	123	261	18,4	15,4	34,8	18,4	16,4	34,8
1889 թ. Պայթյուն	5348	4980	10228	813	15,9	16,6	32,5	15,9	16,6	32,5	1790	1583	3361	33,2	31,8	65,0	33,2	31,8	65,0
1890 թ. Պայթյուն	4010	3866	7876	60	14,0	15,3	29,3	14,0	15,3	29,3	160	239	39,5	40,8	80,3	39,5	40,8	80,3	
1891 թ. Պայթյուն	4135	4064	8299	86	21,5	21,7	43,2	21,5	21,7	43,2	971	130	301	20,8	15,8	36,6	20,8	15,8	36,6
1892 թ. Պայթյուն	5875	5529	114087	902	15,3	16,3	31,6	15,3	16,3	31,6	2918	2424	5342	29,5	21,2	46,7	29,5	21,2	46,7
1893 թ. Պայթյուն	4370	4116	8486	101	23,1	24,5	47,6	23,1	24,5	47,6	152	187	319	19,7	37,6	17,9	19,7	37,6	
1894 թ. Պայթյուն	63164	60982	124176	1193	18,9	19,6	38,5	18,9	19,6	38,5	3025	2642	5667	24,3	21,3	45,6	24,3	21,3	45,6
1895 թ. Պայթյուն	4980	4858	9838	88	17,7	18,1	35,8	17,7	18,1	35,8	201	198	397	20,4	19,9	40,3	20,4	19,9	40,3
1896 թ. Պայթյուն	69338	67940	137078	1051	15,2	15,5	30,7	15,2	15,5	30,7	2892	2569	5461	21,0	18,7	39,7	21,0	18,7	39,7
1897 թ. Պայթյուն	5382	4870	10332	77	14,3	15,5	29,8	14,3	15,5	29,8	70	144	214	16,4	14,0	30,4	16,4	14,0	30,4
1898 թ. Պայթյուն	85669	77754	163422	1165	13,5	14,9	28,4	13,5	14,9	28,4	3063	2521	5594	18,7	15,4	34,1	18,7	15,4	34,1
1899 թ. Պայթյուն	9976	7440	17400	95	15,8	17,5	33,3	15,8	17,5	33,3	104	187	371	16,1	16,4	32,5	16,1	16,4	32,5

Բնակավայրի անվանումը	Մասի			1000 շնչի հաշվով			Տարածք			Ծամ բնակիչ			10000 շնչի հաշվով			Տեղաբ			
	ար	իգ	նցմ	մ	իգ	նցմ	մ	իգ	նցմ	մ	իգ	նցմ	մ	իգ	նցմ	մ	իգ	նցմ	
																			մ
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18	19	20
1886 թ. Պակնա	1611	1503	3114	17,1	15,9	33,0	17,1	15,9	33,0	401	382	873	5,2	4,0	9,2	5,2	4,0	9,2	
Բաղս	94	82	176	12,5	11,0	23,5	12,5	11,0	23,5	44	41	85	5,8	5,5	11,3	5,8	5,5	11,3	
1896 թ. Պակնա	1211	898	2109	22,4	16,3	40,7	22,4	18,3	40,7	587	665	1252	5,7	6,5	12,2	5,7	6,5	12,2	
Բաղս	62	56	127	14,5	15,6	31,1	14,5	15,6	31,1	107	95	202	13,6	12,0	25,6	13,6	12,0	25,6	
1896 թ. Պակնա	1027	765	1792	9,4	7,0	16,4	9,4	7,0	16,4	8840	1342	3191	16,9	12,3	26,2	16,9	12,3	26,2	
Բաղս	95	85	180	11,5	10,3	21,8	11,5	10,3	21,8	76	45	121	9,2	5,5	14,7	9,2	5,5	14,7	
1897 թ. Պակնա	1067	802	1869	9,3	7,0	16,3	9,3	7,0	16,3	1851	1622	3473	16,2	14,2	30,4	16,2	14,2	30,4	
Բաղս	81	72	153	9,5	8,5	18,0	9,5	8,5	18,0	71	95	166	8,4	11,2	19,6	8,4	11,2	19,6	
1909 թ. Պակնա	1493	1378	2871	12,0	11,0	23,0	12,0	11,0	23,0	1532	1264	2796	12,0	10,2	22,2	12,0	10,2	22,2	
Բաղս	126	83	209	16,8	8,4	21,2	12,8	8,4	21,2	75	113	188	7,6	11,5	19,1	7,6	11,5	19,1	
1919 թ. Պակնա	1361	1281	2652	10,0	9,1	19,1	10,0	9,1	19,1	1931	1308	2839	11,2	9,5	20,7	11,2	9,5	20,7	
Բաղս	33	40	73	3,1	3,9	7,0	3,1	3,9	7,0	37	104	141	13,2	10,0	23,2	13,2	10,0	23,2	
1919 թ. Պակնա	1498	1194	2692	9,1	7,3	16,4	9,1	7,3	16,4	1565	1324	2889	9,6	8,1	17,7	9,6	8,1	17,7	
Բաղս	74	77	151	6,5	6,7	13,2	6,5	6,7	13,2	110	110	220	9,8	9,6	19,2	9,6	9,6	19,2	

17,3, 1890-ին՝ 32,5 1897-ին՝ 31,6, 1913-ին՝ 33,3 մարդ, իսկ Նոր Բայազետ քաղաքում համապատասխանաբար՝ 14,4, 29,3, 47,6 և 28,4 մարդ:

Յուրաքանչյուր 1000 տղամարդուց զավառում ամուսնացել է 1886 թ. 8,2, 1890-ին՝ 15,9, 1897-ին՝ 15,3, 1913-ին՝ 13,5 մարդ, իսկ յուրաքանչյուր 1000 կանանցից համապատասխանաբար՝ 9,1, 16,6, 16,3, և 14,9 մարդ: Նոր Բայազետ քաղաքում 1000 տղամարդու հաշվով ամուսնացել է 6,8, 14,0, 23,1, և 15,8 մարդ, իսկ 1000 կանանցից համապատասխանաբար՝ 7,6, 15,3, 24,5 և 17,5 մարդ: Ինչպես տեսնում ենք, զավառի թե՛ քաղաքում և թե՛ գյուղական բնակավայրերում կանանց ամուսնությունը նկատելիորեն գերազանցում էր տղամարդկանց: Ինչ վերաբերում է բնակչության ծնելիությանը, ապա նրա գործակիցը կտրուկ կերպով սկսեց բարձրանալ XIX դ. 80-ական թվականների երկրորդ կեսերից: Այսպես, եթե 1831-1885 թթ. զավառի գյուղերում յուրաքանչյուր 1000 բնակչի հաշվով ծնվել էր 16-20 մարդ, ապա 1886-1913 թթ. այդ թիվը տատանվել է (միջին տարեկան) 30-35 մարդու սահմաններում: Ծնելիության գործակիցը առավել բարձր էր արական սեռի տեսակետից: 1886 թ. գյուղական բնակչության ծնվածների (1000 մարդու հաշվով) 22,3%-ը տղաներ էին, 20%-ը՝ աղջիկներ, իսկ 1913 թ. այն կազմել է համապատասխանաբար 18,7 և 15,4%-ը:

Նոր Բայազետ քաղաքում 1886 թ. այդ ցուցանիշը եղել է համապատասխանաբար 18,4 և 16,4, իսկ 1913 թ.՝ 16,1 և 16,4%-ը: 1886 թ. միայն գյուղական բնակավայրերում 1000 շնչի հաշվով մահացել է 33, իսկ 1913 թ.՝ 16,4 մարդ: Այդ թվականներին Նոր Բայազետ քաղաքում զրանցվել է համապատասխանաբար 23,5 և 13,2 գործակիցները: Ի դեպ, թե՛ գյուղական և թե՛ քաղաքի բնակչության մոտ շարունակաբար նվազել են մահացության գործակիցները՝ 1886 թ. համեմատությամբ 1913 թ. այդ ցուցանիշը գյուղական բնակչության մոտ կրճատվել է 1,1, իսկ քաղաքի բնակչությանը՝ 0,9 անգամ: Այսպիսով, եթե նկատի առնենք, որ 1886-1913 թթ. Նոր Բայազետի զավառում բնակչությունը գրեթե կրկնապատկվել է. 1886 թ. 94,3 հազարից 1913 թ. հասել է 174,8 հազարի, իսկ այդ ընթացքում բնակչության 1000

շնչի հաշվով (միջին տարեկան) բնական աճը կազմել է ավելի քան 20 մարդ, ապա կստացվի, որ սեփական վերարտադրության շնորհիվ գավառի բնակչության թիվն ավելացել է 59,3 հազար մարդով, որը կազմել է նրա փաստական աճի 73,6%-ը:

1831-1913 թթ. բնական վերարտադրության և դրսից շարունակական ներհոսքի շնորհիվ սույն տարածքի բնակչության ազգային կազմում գնալով ավելանում էր հայ բնակչությունը: Բնակչության ազգային կազմի փոփոխությունները դիտարկենք արյուսակ 9-ի տվյալներով (էջ 132-134):

Արյուսակը ցույց է տալիս, որ գավառի բնակչության քանակական աճին զուգընթաց նրա էթնիկական կազմում տեղի ունեցող փոփոխություններում նկատելի է, որ հայերը շարունակում էին մեծ թիվ կազմել:

Գավառի հայ բնակչության թիվը 1831-1913 թթ. աճել է 6,3 անգամ՝ 18,6 հազար մարդուց հասել է 117,3 հազարի: Նրա տեսակարար կշիռը ընդհանուր բնակչության կազմում ամենաբարձրը եղել է հատկապես 1831-1852 թթ. ժամանակաշրջանում, որը բնակչության ակտիվ տեղաշարժերի արդյունք էր: Հայ բնակչության բավականին բարձր տեսակարար կշիռը բացատրվում է նաև այդ տարիներին մահմեդական բնակչության զգալի արտագաղթով: Շնորհիվ բարձր ծնելիության 1913 թ. գավառում ավելացող բնակչության 67,1%-ը բաժին էր ընկնում հայությանը:

Զգալի թիվ էին կազմում ազերի թուրքերը: Չնայած մշտական տեղաշարժերին, շնորհիվ բարձր ծնելիության, ամբողջ բնակչության կազմում նրանց տեսակարար կշիռը անշահան փոփոխություններ է կրել: Այդ տարիներին թուրքալեզու բնակչությունն ավելացել է 5,1 անգամ, այսինքն՝ 1831 թ. 9,4 հազարից 1913 թ. հասել է 48,6 հազարի: Քուրդ և ռուս ազգաբնակչության տոկոսային հարաբերությունը գրեթե չի փոխվել՝ տատանվել է համապատասխանաբար 1,4 և 0,5%-ի սահմաններում:

Սլավոն բնակչության թիվը 1851 թ. եղել է 999, իսկ 1913-ին՝ 5357 կամ աճել է 5,3 անգամ: Նույն ժամանակահատվածում քրդերինը՝ 217 մարդուց հասել է 3315-ի կամ ավելացել է 15,2 անգամ:

Ազգային փոքրամասնությունները Նոր Բայազետի գավառում բացառապես գյուղաբնակ էին:

Գավառում ժողովրդագրական տեղաշարժերի բնորոշ կողմերից մեկն այն է, որ բնակչության սեռային կազմում գերակշռում էին տղամարդիկ: 1831 թ. բնակչության 53,4%-ը տղամարդիկ էին, 46,6%-ը՝ կանայք: 1897 թ. տղամարդկանց քվանտակ կազմել է 51,5, կանանց՝ 48,5%, իսկ 1913 թ. համապատասխանաբար 52,4 և 47,6%:

Այսինքն՝ ուսումնասիրվող տարիներին բնակչության կազմում տղամարդիկ մշտապես գերակշռել են: Ինչպես արդեն ցույց ենք տվել, պատճառը ծնվածների մեջ տղաների գերազանցությունն էր, չնայած ուղեկցվել է վերջիններիս շոշափելի մահացությամբ:

Այդուհանդերձ, գնալով կրճատվում էին տղամարդկանց և կանանց քվաքանակի միջև եղած տարբերությունները:

Տնտեսությունը

Ա Գյուղատնտեսական զբաղմունքը և ձկնորսությունը

Մինչև Ռուսաստանին միացվելը՝ Նոր Բայազետի գավառն Արևելյան Չայաստանի մյուս գավառների նման ողբալի պատկեր էր ներկայացնում: Նախորդ դարաշրջաններում, ինչպես ասվել է, օտար ցեղերի արշավանքների հետևանքով մարդաշատ ու ծաղկուն բնակավայրերը վերածվել էին մոխրակույտների: Տարիների տքնաջան աշխատանքով ստեղծված շեն ու բարեբեր տնտեսությունները քանդվել էին ու ոչնչացել: Տնտեսության վատթարացման, բնակչության կենսամակարդակի անկման գործում փոքր դեր չխաղաց նաև գավառի ժողովրդագրական նկարագրի փոփոխությունը:

Չայ բնակչության թիվը նվազագույն չափերի էր հասել, այնինչ դոսից եկած թոշվոր ցեղերի զուգընթաց բնակեցմամբ վերջիններիս տեսակարար կշիռը մի քանի անգամ ավելացել էր ընդհանուր բնակչության կազմում: Եթևիլ օտարացման հենց այդ փոփոխություններն էին, որ հիմնաշրջեցին գավառի բնակչության զբաղմունքի հաշվեկշիռը՝ երկրագործական մշակույթն իր տեղը զիջեց անասնապահությանը:

Տնտեսական կյանքում անասնապահությունը հաստատուն տեղ էր գրավել, որի հետևանքով էլ հազարավոր դեսյատիններով մշակովի հողեր վերածվել էին արոտավայրերի:

Պարսկական տիրապետության հաստատումով գավառի տնտեսական քայքայման և ունեզրկման գործընթացն էլ ավելի խորացավ և ահագնացող չափերի հասավ: Արտադրողական ուժերը չափազանց աննկատ էին զարգանում: Արդյունաբերությունը զտնվում էր արհեստագործական արտադրության աստիճանում, տնտեսության հիմնական ճյուղը՝ գյուղատնտեսությունը փակ տնտեսական (բնատնտեսական) բնույթ էր կրում: Այս ամենի հետևանքով Արևելյան Չայաստանում տիրում էր սոցիալ-տնտեսական ընդհանուր հետամնացություն:

Արևելյան Չայաստանը Ռուսաստանին անցնելու առաջադիմական նշանակությունը հաստատվեց նաև սոցիալ-տնտեսական զգալի առաջընթացով և որակական փոփոխություններով: Տնտեսության զարգացման համար ստեղծվեցին բարենպաստ պայմաններ: Տնտեսական կյանքում երևան է գալիս մի նոր երևույթ՝ փոխվում է գյուղատնտեսության մեջ աշխատողների զբաղվածության բնույթը՝ անասնապահությունն իր տեղը զիջում է երկրագործությանը: Գավառում գյուղատնտեսության զարգացման և կայուն բերքի ստացման համար ստեղծվել էին առավել նպաստավոր պայմաններ: Կամերալ վիճակագրական տվյալներով, մինչև Ռուսաստանին միացվելը այս երկրամասը Արևելյան Չայաստանի առավել ռուս բնակեցված գավառներից էր: 1828 թ. դրությամբ բնակչության միջին խտությունը՝ Կարաչիչակի մահալում 1 քառ. վերստ տարածքի վրա 1 շնչի հաշվով կազմում էր 1,15, Ղրխբուլաղի մահալում 2,6, իսկ Գյուլչայի մահալում 2,9 մարդ¹: Կարևոր նշանակություն ունեցավ պարսկահայերի և արևմտահայերի ներգաղթը: Նորաբնակները զերազանցապես հողագործներն էին, և նրանց վերաբնակեցումը կատարվում էր հաշվի առնելով նաև այս հանգամանքը: Նրանց բնակեցումն անմշակ հողատարածությունների վրա էական նշանակություն ունեցավ գավառի տնտեսական առաջընթացի համար: Ավելացավ գյուղատնտեսության զբաղվողների թիվը:

1831 թ. դրությամբ քննության առարկա երկրամասում գյուղատնտեսությամբ զբաղվում էին ավելի քան 3033 գյուղացիական տնտեսություններ²:

Ռուսաստանին միացվելու պատմական ակտը բնակչության համար ստեղծեց խաղաղ կյանքի և աշխատանքի ապահով պայմաններ:

Այլ խոսքով՝ բնակչության մեջ ֆիզիկական բնաջնջման վտանգից ապահովության զգացումը և խաղաղ աշխատանքի համար բավարար պայմանների առկայությունը, իրենց հերթին

¹ Չափարկը կատարվել է ՅԱԱ, ֆ. 90, ց. 1, գ. 93, քք. 116-121, գ. 83, քք. 400-404, գ. 89, քք. 319-326, *Н. Шонен*, նշվ. աշխ., էջ 543-546, 591-598, 598-602 տվյալների հիման վրա:

² Տե՛ս *Н. Шонен*, նշվ. աշխ., էջ 543-546, 591-598, 598-602:

տնտեսության վերականգնման և հողերի-մշակութային վերընթացի խթանիչներ եղան՝ պարսկական տիրապետության ժամանակների համեմատությամբ: Մյուս կողմից՝ 1830-ականներից սկսած ուլի հարթվեց Արևելյան Հայաստանի և Ռուսաստանի ու նրա կազմում անդրկովկասյան մյուս երկրների առևտրատնտեսական մերձեցման, նրանց փոխադարձ կապերի աստիճանական ընդլայնման համար:

«Ռուսաստանին միանալու հետևանքով Արևելյան Հայաստանը դարձավ այդ մեծ երկրի տնտեսական և կուլտուրական զարգացման անմիջական ու եռանդազին մասնակիցը՝ քրտնաջանորեն օգտվելով իր նոր դրության բոլոր առավելություններից»³ - գրում է Խ. Ավդալբեգյանը: Խոսքն այն մասին է, որ Արևելյան Հայաստանը դառնալով հսկայնաձև կայսրության մի մասը, ինտեգրվեց նրա բարձր մակարդակ ունեցող տնտեսությանը և կրեց նրա ազդեցությունը: Այս ամենով հանդերձ, որոշիչ դեր ուներ կենտրոնական իշխանության կողմից վարվող քաղաքականությունն այդ ուղղությամբ: Բանն այն է, որ Արևելյան Հայաստանում, ընդհանրապես ազգային ծայրամասային շրջաններում այդ երկրի ներկայության քաղաքական իրադրության կայունացումն ամրապնդվում էր նաև տնտեսական միջոցառումներով:

Ավհայտ է, որ կայսերական Ռուսաստանի ծայրամասային գաղութներից մեկն էր Արևելյան Հայաստանը: Սա հարցի մի կողմն էր, կար նաև՝ մյուս կողմը: Ինչպես բնորոշ է բոլոր գաղութատիր երկրներին, Ռուսաստանին ևս չէր խանգարում, որպեսզի նրա իշխանությունները պայքարեին այլևայլ հեռավորությունների օգտագործմամբ, Հայկական մարզի քայքայված, ճիշտ կլիմի ասել, գրեթե գոյություն չունեցող տնտեսությունը մեռյալ վիճակից հանելու և վերակենդանացնելու ուղղությամբ: Հիմա այն հարցին, թե ինչու՞ էին ռուսական իշխանությունները միտված զարուքացված երկրամասերի տնտեսությունը զարգացնելուն: Պատասխանը պարզ է: Դա էր պահանջում կայսրության շահը՝ տեղի բնակչությանը առաջին անհրաժեշտության սպառման ապրանքներով ապահովել

³ Խ. Ավդալբեգյան, Նշվ. աշխ., էջ 27:

տեղական արտադրության կազմակերպման միջոցով և մյուսը՝ խրախուսական միջոցառումներ իրականացնել տեղական հումքը օգտագործել Ռուսաստանի կարիքների համար:

Ռուսումնասիրվող տարիներին գյուղատնտեսությունը ազդարային գերբնակչություն ունեցող⁴ և որ Բայազետի գավառի տնտեսության հիմնական ճյուղն էր:

Գյուղատնտեսության ճյուղային կառուցվածքում ավանդաբար առաջատար ճյուղը եղել է հողագործությունը և անասնապահությունը⁵: Հատկապես զարգացման նոր աստիճանի հասավ հողագործությունը, որի ամենացայտուն արտահայտությունը մշակովի հողային տարածությունների ընդարձակումն էր:

Բավական է նշել, որ եթե պարսկական տիրապետության օրոք Արևելյան Հայաստանում մշակվում էր պիտանի հողերի 8-10%-ից ոչ ավելին,⁶ ապա Ռուսաստանին անցնելուց հետո

⁴ Գավառը բացառապես գյուղաբնակ էր: 1828-1913 թթ. գավառի ամբողջ տարածքում ընդլայնվել է միայն գյուղական բնակավայրերի ցանցը, բացառությամբ Գավառ գյուղի, որին 1850 թ. տրվեց քաղաքի կարգավիճակ: Այսպես, եթե 1828 թ. գավառում գյուղերի թիվը կազմել է 73, իսկ գյուղական միսերին՝ 1637, ապա 1910թ. համապատասխանաբար կազմել է 135 և 18604: Տե՛ս *Н. Шонен*, Նշվ. աշխ., էջ 544-602: «Աշակ», 19 դեկտեմբերի, 1910թ.:

⁵ Ինչպես ցույց են տալիս հնագիտական պեղումները և երկրաբանական ուսումնասիրությունները, սույն գավառի տարածքում անհիշելի ժամանակներից բնակչությունը զբաղվել է հողագործությամբ և անասնապահությամբ: Տեղաբնիկները ցանցել են հիմնականում ցորեն, գարի, ինչպես նաև կտավատ և վուշ: Զբաղվել են նաև խոշոր և մանր եղջերավոր անասնապահությամբ: Տե՛ս *Վ. Ավետյան*, Սևանի ավազանի բրոզեդարյան անասնապահությունը, Հայկ. ՍՍՀ ԳԱ «Լոբեր» հասարակական գիտությունների, թիվ 2, 2007, նույնի՝ Սևանի ավազանի բրոզեդարյան երկրագործության պատմությունից, Խ. Արուշանի անվան մանրվածավարձական ինստիտուտի «Գիտական աշխատություններ», թիվ 4, Ե., 1971., 3. *Սնացական*, Հնագիտական պեղումներ Սևանա լճի ցածրած տեղիտորիայում, «Տեղեկագիր», Հայկ. ՍՍՀ ԳԱ հասարակական գիտությունների, թիվ 8, 1952, նույնի՝ Լճաշենի նյութական մշակույթի զարգացման հիմնական տեսակները, ՊԲՀ, թիվ 2, 1965:

⁶ *М. Адош*. Экономическое развитие Восточной Армении в XIX в., Е., 1957, с. 163-164:

սկսեց արագորեն ընդարձակվել գանձատարածությունները: Նույն վիճակն էր տիրում նաև Նոր Բայազետի գավառում, որտեղ արդեն 1886 թ. դրությամբ յուրաքանչյուր գյուղացիական տնտեսության բաժին էր ընկնում 8 դեսյատին⁹ վարելահող:

Գավառի հողատարածությունների կառուցվածքում շարունակաբար ավելացել է մշակույթի հողերի բաժինը: Այդ են վկայում աղյուսակ 11-ի տվյալները¹⁰:

Աղյուսակ 11
Նոր Բայազետի գավառի հողային հանդակները

Պավարի անվանումը	1900 թ.		1904 – 1906 թթ.		1909 – 1911 թթ.	
	հողերի քանակը		հողերի քանակը		հողերի քանակը	
Նոր Բայազետի գիւղի	566594	243528	121217	50	122311,5	50
մեծահող երկաթի տարած-քը ֆեֆդերացիայի անվան սֆյուսանի կոսթե ֆեֆդերացիան				%		%
մշակելի հողեր ֆեֆդերացիան				%		%
ստրուսկարտ ֆեֆդերացիան				%		%
անմուտ սֆյուսանի կոսթե ֆեֆդերացիան	219571,5	119742,6	93,4		101748,1	46,6
մշակելի հողեր ֆեֆդերացիան				%		%
ստրուսկարտ ֆեֆդերացիան				%		%
անմուտ սֆյուսանի կոսթե ֆեֆդերացիան	235512	124253	52,7		111259	47,3
մշակելի հողեր ֆեֆդերացիան				%		%
ստրուսկարտ ֆեֆդերացիան				%		%

Աղյուսակ 11-ից պարզորոշ երևում է, որ 1900 թ. Նոր Բայազետի գավառի հողատարածությունների կառուցվածքում վարելահողերը կազմել են 121217 դեսյատին, որն ամբողջ պիտանի հողերի ավելի քան 50%-ն էր: Աղյուսակը միաժամանակ ցույց է տալիս, որ հողատարածությունների կառուցվածքում մշակելի հողատարածությունների ծավալը գնալով ավելանում էր: 1904-1906 թթ. հողատարածությունների կառուցվածքում վարելահողերը կազմել են 116742,6 դեսյատին, որն

ամբողջ պիտանի հողերի 53,4% էր: 1909-1911 թթ. վարելահողերին բաժին էր ընկնում պիտանի հողերի մոտ 53%-ը (ամբողջ մահանգում մոտ 42%-ը, ամբողջ պիտանի հողերը եղել է 1454321 դեսյատին, որից մշակելի հողերը 610452 դեսյատին)⁹:

Ըստ ոստիկանական շրջանների հողային ֆոնդի կառուցվածքը տարբեր էր, որը 1908-1909 թթ. դրությամբ ներկայացնում էր հետևյալ պատկերը: Առաջին ոստիկանական շրջանի հողահանդակների (111599 դեսյատին) կառուցվածքում պիտանի հողերը կազմել են 47422,1 դեսյատին¹⁰ կամ 42,5%-ը, որն ամբողջ գավառի պիտանի հողերի 20,1%-ն էր: Այս գոտում բնորոշ էին հացահատիկային կուլտուրաների և կերարույսերի մշակությունը, մասամբ՝ այգեգործությունը, նաև անասնապահությունը:

Երկրորդ շրջանի ընդհանուր հողատարածքից (67755 դեսյատին) գյուղատնտեսության համար պիտանի էր 39663 դեսյատինը կամ 58,5%-ը, որը կազմում էր ամբողջ գավառի պիտանի հողերի 16,9%-ը:

Այս շրջանի յուրահատուկ բնական պայմանները այնպիսին են, որ հացահատիկային (ցորեն, գարի) ու կերային մշակարույսերի մշակությունը և անասնապահությունը տնտեսապես արդարացված և շահավետ են եղել:

Երրորդ շրջանի հողային ֆոնդի (102499 դեսյատին) մեջ պիտանի հողերը կազմել են 47422,1 դեսյատին կամ ամբողջ գավառի պիտանի հողերի 21,7%-ը:

Չորրորդ ռեսուրսներով առավել լավ էր ապահովված չորրորդ ոստիկանական շրջանը: Երջանը ուներ 174601 դեսյատին հող, որից 84075,2 դեսյատինը կամ 48,1%-ը պիտանի հող, ինչը գավառի պիտանի հողերի շուրջ 38,5%-ն էր¹¹:

Այսպիսով, 1908-1909 թթ. Նոր Բայազետի չորս ոստիկանական շրջաններում միասին վերցրած, կամ որ նույնն է ամբողջ

⁹ Տես ՉԱԱ, ֆ. 375, ց. 1, գ. 1, ք. 27:

¹⁰ Չաշվարկը կատարվել է ըստ ՉԱԱ, ֆ. 375, ց. 1, գ. 1, ք. 13-38, ֆ. 93, ց. 1, գ. 360, ք. 10-11, "Кавказский календарь на 1893 г.", Тифлис, 1892, с. 14-15 տվյալների:

¹¹ Չաշվարկը կատարվել է նույն աղբյուրների տվյալների հիման վրա:

⁷ Ի. Դարիբյան, Արծախ-Մեղրաձոր, Առաջին գիրք, Ե., 2006, էջ 205:

⁸ Աղյուսակը կազմվել է հաշվարկը կատարվել է ըստ ՉԱԱ, ֆ. 93, ց. 1, գ. 360, ք. 8-11, ֆ. 375, ց. 1, գ. 1, ք. 13-38, գ. 60, ք. 25 տվյալների:

գավառում պիտանի հողերը (218582,4 դեսյատին) կազմել են ընդհանուր հողահանդակների (566594 դեսյատին) 38,6%-ը:

Վարելահողերի բաժինը հատկապես մեծ էր հացահատիկային մշակաբույսերի ցանքատարածություններում: Հացաբույսերի մշակության մեծ ծավալները և հացահատիկային տնտեսության դրական տեղաշարժերը պայմանավորված էին այն հանգամանքով, որ այդ կուլտուրաների մշակությունը համեմատաբար քիչ աշխատատար և նվազ ծախսատար էր, իսկ գավառի բնակչի մայական պայմաններն էլ նպաստավոր էին հացազգիների մշակության համար: Գերակայությունը տրվում էր ավանդական կուլտուրաներին, այսինքն՝ հիմնականում ցանվում էր ցորեն և գարի: Բացի այդ, հողագործության այս ճյուղերը նաև սեփական կարիքները բավարարելու նպատակ էին հետապնդում:

1880-1913 թթ. Նոր Բայազետի գավառում հացահատիկային զանազան կուլտուրաների ցանքսի և ստացված բերքի պատկերը ըստ տարիների ներկայացվում է ներքոհիշյալ աղյուսակում¹²:

Աղյուսակ 12

Տարիներ	Ցանքս չետվեռ	Բերք չետվեռ	%	Սնցա
1880	58610	326880	82	5,6
1881	60760	193490	68,5	3,1
1882	60635	269095	77,5	4,4
1883	61160	306170	80	5,0
1884	61580	369480	83,3	6,0
1885	61359	308146	80	5,0
1886	64380	130780	50,8	2,0
1887	41187	103910	60,3	2,5
1888	51808	203789	74,6	3,9
1889	51270	204207	75	3,9
1899	69402	128825	46,1	1,9
1900	117700	471000	75	4,0
1913	852993	1812531	53	2,1

¹² Աղյուսակը կազմվել և հավաքվելը կատարվել է ՀԱԱ, ֆ. 194, ց. 1, գ. 15, քք. 13-14, ֆ. 1284, ց. 223, գ. 125, ք. 2, 21, "Обзор Эриванской губернии за 1887г. (приложение к всеподданнейшему отчету)", с. 10-11; "Обзор Эриванской губернии за 1889г. (приложение к всеподданнейшему отчету)", с. 23; "Обзор Эриванской губернии за 1892г. (приложение к всеподданнейшему отчету)", с. 4-9 տվյալների հիման վրա:

Աղյուսակը ցույց է տալիս, որ սույն գավառում ավելի քան 10 տարիների ընթացքում հացահատիկի զանազան կուլտուրաների համախառն բերքը 1913 թ. կազմել է 1812531 չետվեռ¹³ 1880 թ. 326880 չետվեռի դիմաց, այսինքն ավելացել է 5,5 անգամ կամ 82,5-ով: Աղյուսակից նկատելի է նաև, որ հացահատիկային մշակաբույսերի տարեկան միջին բերքատվությունը հիմնականում կազմել է մեկին երեք-չորս, առանձին տարիներին անցել է հինգի սահմանը, ինչպես, օրինակ, 1880, 1884 և 1885 թվականներին: Նշված տարիների կտրվածքով հացահատիկի համախառն բերքի ամենացածր ցուցանիշ գրանցվել է 1886-1887 և 1889 թվականներին:

Բանն այն է, որ այդ տարիները գյուղատնտեսության, մասնավորապես հողագործության համար եղել են չափազանց անբարենպաստ: Գարնանը և ամռան սկզբին երկրամասի տարածքի մեծ մասի վրա տեղի է ունեցել սաստիկ երաշտ ու կարկտահարություն, իսկ աշունը խիստ կարճատև վաղաժամ առատ ծյուն տեղայն պատճառով բերքի զգալի մասը ցրտահարվել և մնացել է ծյան տակ:

«Մշակ» բերքի հրապարակումից ծանոթանում ենք, որ Դարաչիչակի ենթաշրջանը կապված բնակչի մայական անբարենպաստ պայմանների հետ (երաշտ, ցրտահարություն, հեղեղումներ, կարկտահարություն, զանազան հիվանդություններ և այլն) նույնպես տուժել է համընդհանուր անբերրիությունից:

«Այս տարի ցորենի ուղիղ կեսը մուր է դարձել, որ տեղական լեզվով «մրիկ» է կոչվում: Ամբողջ ամառը երաշտ լինելուց հետո, հուլիսի 27-28-ին սաստիկ անձրևներ տեղացին, որոնց ոչ միայն ոչինչ չօգնեցին, այլև տեղ-տեղ հեղեղատներ գոյացնելով՝ փչացրին բազմաթիվ արտեր»¹⁴, - նշում է հողվածազիրը:

Ընդհանուր առմամբ ամբողջ երևանի նահանգում մշակաբույսերի բերքատվությունը չափազանց ցածր էր: Այդ ցուցանիշն առավել ցածր էր Նոր Բայազետի գավառում և բավականին զիջում էր նահանգի միջին ցուցանիշին: Այսպես,

¹³ 1 չետվեռը հավասար է մոտ 130 կգ հացահատիկի:

¹⁴ «Մշակ», 20 օգոստոսի, 1899 թ.:

1904-1906 թթ. գավառում 1 ղեխյատիհի հաշվով միջին եկամուտը (3, 58) կազմում էր ամբողջ նահանգի միջին ցուցանիշի (12, 42) 8, 84-ը: 1909-1911 թթ. այդ ցուցանիշը կազմել է համապատասխանաբար 2,93 և 4, 85¹⁵: Չետազա տարիներին ևս այդ միտումը պահպանվել է: Ի դեպ, Երևանի նահանգի գավառների մեջ դա ամենացածր ցուցանիշն էր: Նույն ժամանակամիջոցում Նախիջևանի գավառում այն կազմել է 18,51, Սուրմալուի գավառում՝ 20,14, Շարուր-Ղարալավազայի գավառում՝ 19,88, Երևանի գավառում՝ 15,30, Էջմիածնի գավառում՝ 17,48, իսկ Ալեքսանդրապոլի գավառում՝ 8,83¹⁶:

Ինչպես կարելի է նկատել շարադրանքից խնդրո առարկա գավառի գյուղատնտեսության ճյուղերից հողագործությունը, մասնավորապես հացահատիկի արտադրությունը աչքի չէր ընկնում արդյունավետության բարձր մակարդակով և եկամտաբերությամբ, որը կախված էր ինչպես բնական պայմաններից, այնպես էլ ոռոգման աստիճանից:

Այստեղ մենք նկատի ունենք այն հանգամանքը, որ մշակելի հողատարածությունների ընդարձակման համար բացառիկ նշանակություն է ունեցել ջուրը, որպես արհեստական ոռոգման միջոց, որովհետև գավառի կլիման մեծ մասամբ ցամաքային է, և հնարավոր չէր զբաղվել արդյունավետ հողագործությամբ ու անասնապահությամբ առանց ոռոգման սիստեմի ընդարձակման: Կլիմայի վրա հատկապես մեծ ազդեցություն էր թողնում տարածքի զգալի բարձրությունը ծովի մակերևույթից: Գավառի ընդարձակ տարածքը գտնվում է ծովի մակերևույթից 1200-2000 մ. միջին բարձրության վրա: Ըստ այդմ էլ մթնոլորտային տեղումների քանակը սույն գավառում չափազանց փոփոխական էր: Այդ են վկայում ստորև բերված աղյուսակի տվյալները¹⁷:

¹⁵ Տե՛ս ՂԱԱ, ֆ. 375, ց. 1, գ. 1, թթ. 13-38:

¹⁶ Տե՛ս նույն տեղում:

¹⁷ Սղյուսակը կազմվել է "Кавказский календарь на 1913 г." с. 76, "Кавказский календарь на 1905 г." с. 64; "Справочник по климату СССР", выпуск 16, Л., 1969, с. 84-87 տվյալների հիման վրա:

Մթնոլորտային տեղումների ամսական և տարեկան քանակը (մմ.)

Գրգռվածությունը	միսին	միսին												
		Ի	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII	
Ընդամենը	1765	35	50	58	77	91	71	43	33	33	56	47	38	632
Մեկնույն ամիսում	1765	40	45	56	76	81	54	32	16	21	43	49	34	547
Միջինը	1765	21	26	40	71	117	85	58	53	50	46	46	29	643
Մեծագույնը	1765	15	16	30	47	66	57	65	41	43	40	26	14	459
Մեծագույնը	1765	21	26	40	71	117	85	58	53	50	46	46	29	643
Մեծագույնը	1765	15	16	30	47	66	57	65	41	43	40	26	14	459
Մեծագույնը	1765	21	26	40	71	117	85	58	53	50	46	46	29	643
Մեծագույնը	1765	15	16	30	47	66	57	65	41	43	40	26	14	459
Մեծագույնը	1765	21	26	40	71	117	85	58	53	50	46	46	29	643
Մեծագույնը	1765	15	16	30	47	66	57	65	41	43	40	26	14	459
Մեծագույնը	1765	21	26	40	71	117	85	58	53	50	46	46	29	643
Մեծագույնը	1765	15	16	30	47	66	57	65	41	43	40	26	14	459
Մեծագույնը	1765	21	26	40	71	117	85	58	53	50	46	46	29	643
Մեծագույնը	1765	15	16	30	47	66	57	65	41	43	40	26	14	459
Մեծագույնը	1765	21	26	40	71	117	85	58	53	50	46	46	29	643
Մեծագույնը	1765	15	16	30	47	66	57	65	41	43	40	26	14	459
Մեծագույնը	1765	21	26	40	71	117	85	58	53	50	46	46	29	643
Մեծագույնը	1765	15	16	30	47	66	57	65	41	43	40	26	14	459
Մեծագույնը	1765	21	26	40	71	117	85	58	53	50	46	46	29	643
Մեծագույնը	1765	15	16	30	47	66	57	65	41	43	40	26	14	459
Մեծագույնը	1765	21	26	40	71	117	85	58	53	50	46	46	29	643
Մեծագույնը	1765	15	16	30	47	66	57	65	41	43	40	26	14	459
Մեծագույնը	1765	21	26	40	71	117	85	58	53	50	46	46	29	643
Մեծագույնը	1765	15	16	30	47	66	57	65	41	43	40	26	14	459
Մեծագույնը	1765	21	26	40	71	117	85	58	53	50	46	46	29	643
Մեծագույնը	1765	15	16	30	47	66	57	65	41	43	40	26	14	459
Մեծագույնը	1765	21	26	40	71	117	85	58	53	50	46	46	29	643
Մեծագույնը	1765	15	16	30	47	66	57	65	41	43	40	26	14	459
Մեծագույնը	1765	21	26	40	71	117	85	58	53	50	46	46	29	643
Մեծագույնը	1765	15	16	30	47	66	57	65	41	43	40	26	14	459
Մեծագույնը	1765	21	26	40	71	117	85	58	53	50	46	46	29	643
Մեծագույնը	1765	15	16	30	47	66	57	65	41	43	40	26	14	459
Մեծագույնը	1765	21	26	40	71	117	85	58	53	50	46	46	29	643
Մեծագույնը	1765	15	16	30	47	66	57	65	41	43	40	26	14	459
Մեծագույնը	1765	21	26	40	71	117	85	58	53	50	46	46	29	643
Մեծագույնը	1765	15	16	30	47	66	57	65	41	43	40	26	14	459
Մեծագույնը	1765	21	26	40	71	117	85	58	53	50	46	46	29	643
Մեծագույնը	1765	15	16	30	47	66	57	65	41	43	40	26	14	459
Մեծագույնը	1765	21	26	40	71	117	85	58	53	50	46	46	29	643
Մեծագույնը	1765	15	16	30	47	66	57	65	41	43	40	26	14	459
Մեծագույնը	1765	21	26	40	71	117	85	58	53	50	46	46	29	643
Մեծագույնը	1765	15	16	30	47	66	57	65	41	43	40	26	14	459
Մեծագույնը	1765	21	26	40	71	117	85	58	53	50	46	46	29	643
Մեծագույնը	1765	15	16	30	47	66	57	65	41	43	40	26	14	459
Մեծագույնը	1765	21	26	40	71	117	85	58	53	50	46	46	29	643
Մեծագույնը	1765	15	16	30	47	66	57	65	41	43	40	26	14	459
Մեծագույնը	1765	21	26	40	71	117	85	58	53	50	46	46	29	643
Մեծագույնը	1765	15	16	30	47	66	57	65	41	43	40	26	14	459
Մեծագույնը	1765	21	26	40	71	117	85	58	53	50	46	46	29	643
Մեծագույնը	1765	15	16	30	47	66	57	65	41	43	40	26	14	459
Մեծագույնը	1765	21	26	40	71	117	85	58	53	50	46	46	29	643
Մեծագույնը	1765	15	16	30	47	66	57	65	41	43	40	26	14	459
Մեծագույնը	1765	21	26	40	71	117	85	58	53	50	46	46	29	643
Մեծագույնը	1765	15	16	30	47	66	57	65	41	43	40	26	14	459
Մեծագույնը	1765	21	26	40	71	117	85	58	53	50	46	46	29	643
Մեծագույնը	1765	15	16	30	47	66	57	65	41	43	40	26	14	459
Մեծագույնը	1765	21	26	40	71	117	85	58	53	50	46	46	29	643
Մեծագույնը	1765	15	16	30	47	66	57	65	41	43	40	26	14	459
Մեծագույնը	1765	21	26	40	71	117	85	58	53	50	46	46	29	643
Մեծագույնը	1765	15	16	30	47	66	57	65	41	43	40	26	14	459
Մեծագույնը	1765	21	26	40	71	117	85	58	53	50	46	46	29	643
Մեծագույնը	1765	15	16	30	47	66	57	65	41	43	40	26	14	459
Մեծագույնը	1765	21	26	40	71	117	85	58	53	50	46	46	29	643
Մեծագույնը	1765	15	16	30	47	66	57	65	41	43	40	26	14	459
Մեծագույնը	1765	21	26	40	71	117	85	58	53	50	46	46	29	643
Մեծագույնը	1765	15	16	30	47	66	57	65	41	43	40	26	14	459
Մեծագույնը	1765	21	26	40	71	117	85	58	53	50	46	46	29	643
Մեծագույնը	1765	15	16	30	47	66	57	65	41	43	40	26	14	459
Մեծագույնը	1765	21	26	40	71	117	85	58	53	50	46	46	29	643
Մեծագույնը	1765	15	16	30	47	66	57	65	41	43	40	26	14	459
Մեծագույնը	1765	21	26	40	71	117	85	58	53	50	46	46	29	643
Մեծագույնը	1765	15	16	30	47	66	57	65	41	43	40	26	14	459
Մեծագույնը	1765	21	26	40	71	117	85	58	53	50	46	46	29	643
Մեծագույնը	1765	15	16	30	47	66	57	65	41	43	40	26	14	459
Մեծագույնը	1765	21	26	40	71	117	85	58	53	50	46	46	29	643
Մեծագույնը	1765	15	16	30	47	66	57	65	41	43	40	26	14	459
Մեծագույնը	1765	21	26	40	71	117	85	58	53	50	46	46	29	643
Մեծագույնը	176													

Աղյուսակը ցույց է տալիս, որ գավառի ամենաբարձր լեռնային գոտում՝ Սեմյոնովկայում տեղումների տարեկան միջին քանակը հասել է 643 մմ.¹⁸, որից զարնանը՝ 76 մմ., ամռանը՝ 65 մմ., աշնանը՝ 47 մմ., ձմռանը՝ 25 մմ.: Նոր Բայազետում՝ 459 մմ., որից զարնանը՝ 47 մմ., ամռանը՝ 54 մմ., աշնանը՝ 36 մմ., ձմռանը՝ 15 մմ.: Ելենովկայում՝ 256 մմ, այդ թվում զարնանը՝ 62 մմ., ամռանը՝ 50 մմ., աշնանը՝ 43 մմ., ձմռանը՝ 21 մմ.:

Տեղումների ցածր քանակ դիտվել է Բասարգեչարում՝ 194 մմ., որից զարնանը՝ 32 մմ., ամռանը՝ 33 մմ., աշնանը՝ 21 մմ., ձմռանը՝ 12 մմ.: Գյամրիսում՝ 547, այդ թվում զարնանը՝ 71 մմ., ամռանը՝ 34 մմ., աշնանը՝ 38 մմ., ձմռանը՝ 40 մմ.: Լեռքին Ախտայում՝ 632 մմ, այդ թվում զարնանը՝ 75 մմ., ամռանը՝ 49 մմ., աշնանը՝ 45 մմ., ձմռանը՝ 41 մմ.:

Տեղումների այդպիսի քանակը գավառի տարածքի մեծ մասում անբավարար էր հողագործության ջրային պահանջների համեմատ, մանավանդ, որ նրա ամբողջ տարածքում հաճախ էին կրկնվում կարկուտները, փոթորիկները, երաշտները, խորշակները, ուժգին հզորությամբ քամիները, մրրիկները, ու զարնանային և վաղ աշնանային ցրտահարությունները և անասառնելի ծյան տեղումները, որը երևում է ստորև բերված աղյուսակից¹⁹:

Տարիներ	Քանակը մլլ			Օրեր									
	Քանակը	Քանակը	Քանակը	ձյան	կարկուտ	մռրիկ	փոթորիկ	հեռու փոթորիկ	խաղաղամուտ	պայծառ օրեր	անպանամ	քուրտ	սառնամանիքներ
1901	0.8	1.8	0.6	-	0	2	1	0	78	50	35	172	8
1902	0.7	1.9	0.7	32	3	0	0	2	36	55	43	-	10
1903	0.5	1.4	0.3	37	4	26	5	5	68	40	80	185	7
1904	0.7	1.4	0.4	43	2	13	2	4	39	79	61	185	4
1905	0.5	1.4	0.4	48	1	29	4	8	59	62	90	188	4
Գում.	3.2	7.9	2.4	160	10	70	12	19	280	286	309	730	33
Միջ. թիվ	0.6	1.6	0.5	40	2	14	2	4	56	57	62	182	7

Ինչպես կարելի է նկատել աղյուսակի տվյալներից Սևանի զոգավորությունում քամու արագությունը կազմել է տարեկան միջինը 2,7 մ/վրկ:

Չյուն տեղացել է տարեկան միջինը 40 օր: Հաճախակի են նաև կարկուտահարության երևույթները: Միջին հաշվով կարկուտային օրերի թիվը հասել է 2-ի: Ցուրտ և սառնամանիք օրերին բաժին է ընկել տարեկան միջինը համապատասխանաբար 62 և 182, իսկ փոթորիկներին ու մրրիկներին՝ համապատասխանաբար 16 և 7 օր: Պայծառ օրերի թիվը կազմել է տարեկան միջինը 56 օր, իսկ անպանամ օրերինը՝ միջինը 57 օր: Հետևաբար ամբողջ տարվա կտրվածքով պայծառ և անպանամ օրերի տարեկան միջինը երկուսը միասին եղել է 113 օր կամ 31%-ը, իսկ մնացած 252 օրը կամ 69%-ը կազմել են գյուղատնտեսությանը անհարմարություններ պատճառող օրերը:

Գավառի տարածքի ջերմային ռեժիմը բազմազան է, որը մեծապես պայմանավորված է տարածքի խիստ մասնատ-

¹⁸ Սևանի զոգավորությունն ունի լեռնացամաքային կլիմա: Ձգալի է լճի մեղմացնող ազդեցությունը: Հունվարին միջին ջերմաստիճանը լճամերձ գոտում – 10°C, ջրբազաններում - 12°C, հուլիսինը՝ համապատասխանաբար 18°C, 8°C: Տարեկան տեղումները լճափին դիտվել են 450 մմ, բարձրադիր վայրերում՝ 850 մմ: Չմռանը գոյանում է կայուն ձնածածկույթ: Տես «Մշակ», 6 նոյեմբերի 1910 թ.:

¹⁹ Ե. Լալայան, Նշվ աշխ., էջ 17: Աղյուսակի տվյալները վերաբերում են միայն Սևանի ավազանին կամ որ նույնն է սույն գավառի հարավ-արևմտյան մասին: Ինչ վերաբերում է նրա հյուսիսարևմտյան մասին, ապա օրերուբաբարական կայան չունենալու պատճառով չկան համապատասխան տվյալներ: Տես Ե. Լալայան, նույն տեղում:

վածությամբ և ծովի մակերևույթից զգալիորեն բարձր լինելով և ռելիեֆի լեռնային բնույթով: Նրա տարածքի հարավարևմտյան մասը (հիմնականում Ղրղսուլաղի գավառակի արևմտյան մասը), որը ներկայացնում է որպես նախալեռնային շրջան, այստեղ ծմեռը համեմատաբար կարճատև է և տաք: Ամառը բավական շոգ է լինում և օդը չոր:

Միանգամայն այլ են ջերմային պայմանները լեռնամիջյան գոգավորությունում գտնվող սևանի ավազանում: Այստեղ ծմեռն և ամռան ամիսներին ջերմաստիճաններն ավելի ցածր են լինում: Ամռան միջին ջերմաստիճանը երբեմն հասել է 5,2^o իսկ միջին նվազագույնը՝ - 1,6^o (աղյուսակ 15)²⁰:

Քաջարծակ նվազագույն տարեկան միջին ջերմաստիճանը եղել է - 31,3^o, իսկ ամենաբարձր տարեկան միջին ջերմաստիճանը դիտվել է 29,3^o: Գավառում հաճախակի են դիտվել երաշտներ և խորշակներ, որոնց հետևանքով հողի քաջարծակ խոնավապահովվածությունը տարեկան միջինը եղել է 5, 3, իսկ հարաբերականը՝ 71 մմ.:

Միա թե ինչևի հողագործությունը և անասնապահությունը զարգացնելու համար արհեստական ոռոգումը կենսական անհրաժեշտություն էր: Բանն այն է, որ գավառի տարածքով հոսող գետերն ունեն անկայուն ռեժիմ: Դրանք սնվում են հիմնականում ձնհալքի և անձրևաջրերի հաշվին, իսկ մի քանիսը նաև ստորերկրյա ջրերից: Այդ պատճառով ամռան ամիսներին չորանում կամ ծանծաղում են, մյուս կողմից էլ լեռնային գետեր են, հոսում են երբեմն այնպիսի տեղերով, որոնց հուները անհարմարություններ են ստեղծում ոռոգման համար: Ձարտ տրվեց արհեստական ոռոգմանը, առանց որի գյուղատնտեսությունը հաճախակի երաշտների պատճառով կրում էր հսկայական վնասներ: Բնակչությունը ամառային արոտավայրերի ընդարձակ տարածությունների վրա, հարմարավետ տեղերում փորել է բազմաթիվ փոսեր ու լճակներ, որոնք իրար հետ կապվել են առուներով: Այս եղանակով առու-ջրանցքների կառուցումը հնարավորություն է տվել վաղ գարնանն անձրևների ու ձնհալի

²⁰ Ե. Լալայան, նշվ. աշխ., էջ 16:

Սննդամթերքի անվանումը	Պարզիման, խոնավություն		Քիմիական բնույթ		Պարզիման, խոնավություն		Քիմիական բնույթ	
	7	13	21	7	13	21	7	13
Ջերմություն	ցիտրուսային ցանց	5.0	4.9	5.2	7.6	1.8	7.5	
	ուլուն 7 իվժուրո	-	-	-	-	-	-	-
	ցիտրուսային 7 կոլոմոմո	2.5	2.1	2.4	2.0	1.8	2.3	2.1
	ուլուն 7 իվժուրո	2.0	1.8	2.3	2.0	1.8	2.3	2.1
	ցիտրուսային 7 կոլոմոմո	2.5	2.1	2.4	2.0	1.8	2.3	2.1
Գրգռում	7	13	21	7	13	21	7	13
	7	13	21	7	13	21	7	13
Բարձրություն	603.6	611.2	591.5	603.6	611.2	591.5	603.6	611.2
	603.1	610.5	588.5	603.1	610.5	588.5	603.1	610.5
Պարզիման, խոնավություն	603.1	610.5	591.5	603.1	610.5	591.5	603.1	610.5
	603.6	611.2	591.5	603.6	611.2	591.5	603.6	611.2
Պարզիման, խոնավություն	603.6	611.2	591.5	603.6	611.2	591.5	603.6	611.2
	603.1	610.5	588.5	603.1	610.5	588.5	603.1	610.5
Պարզիման, խոնավություն	603.6	611.2	591.5	603.6	611.2	591.5	603.6	611.2
	603.1	610.5	588.5	603.1	610.5	588.5	603.1	610.5
Պարզիման, խոնավություն	603.6	611.2	591.5	603.6	611.2	591.5	603.6	611.2
	603.1	610.5	588.5	603.1	610.5	588.5	603.1	610.5
Պարզիման, խոնավություն	603.6	611.2	591.5	603.6	611.2	591.5	603.6	611.2
	603.1	610.5	588.5	603.1	610.5	588.5	603.1	610.5
Պարզիման, խոնավություն	603.6	611.2	591.5	603.6	611.2	591.5	603.6	611.2
	603.1	610.5	588.5	603.1	610.5	588.5	603.1	610.5
Պարզիման, խոնավություն	603.6	611.2	591.5	603.6	611.2	591.5	603.6	611.2
	603.1	610.5	588.5	603.1	610.5	588.5	603.1	610.5
Պարզիման, խոնավություն	603.6	611.2	591.5	603.6	611.2	591.5	603.6	611.2
	603.1	610.5	588.5	603.1	610.5	588.5	603.1	610.5
Պարզիման, խոնավություն	603.6	611.2	591.5	603.6	611.2	591.5	603.6	611.2
	603.1	610.5	588.5	603.1	610.5	588.5	603.1	610.5
Պարզիման, խոնավություն	603.6	611.2	591.5	603.6	611.2	591.5	603.6	611.2
	603.1	610.5	588.5	603.1	610.5	588.5	603.1	610.5
Պարզիման, խոնավություն	603.6	611.2	591.5	603.6	611.2	591.5	603.6	611.2
	603.1	610.5	588.5	603.1	610.5	588.5	603.1	610.5
Պարզիման, խոնավություն	603.6	611.2	591.5	603.6	611.2	591.5	603.6	611.2
	603.1	610.5	588.5	603.1	610.5	588.5	603.1	610.5
Պարզիման, խոնավություն	603.6	611.2	591.5	603.6	611.2	591.5	603.6	611.2
	603.1	610.5	588.5	603.1	610.5	588.5	603.1	610.5
Պարզիման, խոնավություն	603.6	611.2	591.5	603.6	611.2	591.5	603.6	611.2
	603.1	610.5	588.5	603.1	610.5	588.5	603.1	610.5
Պարզիման, խոնավություն	603.6	611.2	591.5	603.6	611.2	591.5	603.6	611.2
	603.1	610.5	588.5	603.1	610.5	588.5	603.1	610.5
Պարզիման, խոնավություն	603.6	611.2	591.5	603.6	611.2	591.5	603.6	611.2
	603.1	610.5	588.5	603.1	610.5	588.5	603.1	610.5
Պարզիման, խոնավություն	603.6	611.2	591.5	603.6	611.2	591.5	603.6	611.2
	603.1	610.5	588.5	603.1	610.5	588.5	603.1	610.5
Պարզիման, խոնավություն	603.6	611.2	591.5	603.6	611.2	591.5	603.6	611.2
	603.1	610.5	588.5	603.1	610.5	588.5	603.1	610.5
Պարզիման, խոնավություն	603.6	611.2	591.5	603.6	611.2	591.5	603.6	611.2
	603.1	610.5	588.5	603.1	610.5	588.5	603.1	610.5
Պարզիման, խոնավություն	603.6	611.2	591.5	603.6	611.2	591.5	603.6	611.2
	603.1	610.5	588.5	603.1	610.5	588.5	603.1	610.5
Պարզիման, խոնավություն	603.6	611.2	591.5	603.6	611.2	591.5	603.6	611.2
	603.1	610.5	588.5	603.1	610.5	588.5	603.1	610.5
Պարզիման, խոնավություն	603.6	611.2	591.5	603.6	611.2	591.5	603.6	611.2
	603.1	610.5	588.5	603.1	610.5	588.5	603.1	610.5
Պարզիման, խոնավություն	603.6	611.2	591.5	603.6	611.2	591.5	603.6	611.2
	603.1	610.5	588.5	603.1	610.5	588.5	603.1	610.5
Պարզիման, խոնավություն	603.6	611.2	591.5	603.6	611.2	591.5	603.6	611.2
	603.1	610.5	588.5	603.1	610.5	588.5	603.1	610.5
Պարզիման, խոնավություն	603.6	611.2	591.5	603.6	611.2	591.5	603.6	611.2
	603.1	610.5	588.5	603.1	610.5	588.5	603.1	610.5
Պարզիման, խոնավություն	603.6	611.2	591.5	603.6	611.2	591.5	603.6	611.2
	603.1	610.5	588.5	603.1	610.5	588.5	603.1	610.5
Պարզիման, խոնավություն	603.6	611.2	591.5	603.6	611.2	591.5	603.6	611.2
	603.1	610.5	588.5	603.1	610.5	588.5	603.1	610.5
Պարզիման, խոնավություն	603.6	611.2	591.5	603.6	611.2	591.5	603.6	611.2
	603.1	610.5	588.5	603.1	610.5	588.5	603.1	610.5
Պարզիման, խոնավություն	603.6	611.2	591.5	603.6	611.2	591.5	603.6	611.2
	603.1	610.5	588.5	603.1	610.5	588.5	603.1	610.5
Պարզիման, խոնավություն	603.6	611.2	591.5	603.6	611.2	591.5	603.6	611.2
	603.1	610.5	588.5	603.1	610.5	588.5	603.1	610.5
Պարզիման, խոնավություն	603.6	611.2	591.5	603.6	611.2	591.5	603.6	611.2
	603.1	610.5	588.5	603.1	610.5	588.5	603.1	610.5
Պարզիման, խոնավություն	603.6	611.2	591.5	603.6	611.2	591.5	603.6	611.2
	603.1	610.5	588.5	603.1	610.5	588.5	603.1	610.5
Պարզիման, խոնավություն	603.6	611.2	591.5	603.6	611.2	591.5	603.6	611.2
	603.1	610.5	588.5	603.1	610.5	588.5	603.1	610.5
Պարզիման, խոնավություն	603.6	611.2	591.5	603.6	611.2	591.5	603.6	611.2
	603.1	610.5	588.5	603.1	610.5	588.5	603.1	610.5
Պարզիման, խոնավություն	603.6	611.2	591.5	603.6	611.2	591.5	603.6	611.2
	603.1	610.5	588.5	603.1	610.5	588.5	603.1	610.5
Պարզիման, խոնավություն	603.6	611.2	591.5	603.6	611.2	591.5	603.6	611.2
	603.1	610.5	588.5	603.1	610.5	588.5	603.1	610.5
Պարզիման, խոնավություն	603.6	611.2	591.5	603.6	611.2	591.5	603.6	611.2
	603.1	610.5	588.5	603.1	610.5	588.5	603.1	610.5
Պարզիման, խոնավություն	603.6	611.2	591.5	603.6	611.2	591.5	603.6	611.2
	603.1	610.5	588.5	603.1	610.5	588.5	603.1	610.5
Պարզիման, խոնավություն	603.6	611.2	591.5	603.6	611.2	591.5	603.6	611.2
	603.1	610.5	588.5	603.1	610.5	588.5	603.1	610.5
Պարզիման, խոնավություն	603.6	611.2	591.5	603.6	611.2	591.5	603.6	611.2
	603.1	610.5	588.5	603.1	610.5	588.5	603.1	610.5
Պարզիման, խոնավություն	603.6	611.2	591.5	603.6	611.2	591.5	603.6	611.2
	603.1	610.5	588.5	603.1	610.5	588.5	603.1	610.5
Պարզիման, խոնավություն	603.6	611.2	591.5	603.6	611.2	591.5	603.6	611.2
	603.1	610.5	588.5	603.1	610.5	588.5	603.1	610.5
Պարզիման, խոնավություն	603.6	611.2	591.5	603.6	611.2	591.5	603.6	611.2
	603.1	610.5	588.5	603.1	610.5	588.5	603.1	610.5
Պարզիման, խոնավություն	603.6	611.2	591.5	603.6	611.2	591.5	603.6	611.2
	603.1	610.5	588.5	603.1	610.5	588.5	603.1	610.5
Պարզիման, խոնավություն	603.6	611.2	591.5	603.6	611.2	591.5	603.6	611.2
	603.1	610.5	588.5	603.1	610.5	588.5	603.1	610.5
Պարզիման, խոնավություն	603.6	611.2	591.5	603.6	611.2	591.5	603.6	611.2
	603.1	610.5	588.5	603.1	610.5	588.5	603.1	610.5
Պարզիման, խոնավություն								

ջրերը կուտակել և օգտագործել ամռան ամիսներին արտերը ոռոգելու և անասնապահության համար²¹:

Սակայն ոռոգման համակարգը ի զորու չէր լուծելու խոնավապահովվածությունը, որովհետև ամբողջ գավառի թե մշակելի հողերի և թե խոտհարքների մեծ մասը անջրդի էր: Օրինակ, 1909-1911 թթ. գավառի 235512 դեսյատին պիտանի հողերից ոռոգելի էր ընդամենը 26042 դեսյատինը կամ 11,06%-ը, իսկ մնացյալները 209470 դեսյատինը կամ 89%-ը չէին ոռոգվում²², այնինչ ամբողջ նահանգում ոռոգելի հողերին (234212 դեսյատին) ամբողջ պիտանի հողերի (1454321 դեսյատին) կազմում բաժին էր ընկնում 16,1%-ը²³, որը 5,1%-ով գերազանցում էր գավառի ցուցանիշին:

Այս ամենի հետևանքով ոռոգման ջրի հարցը այն աստիճանի կարևորություն է ստանում, որ երբեմն պատճառ էր դառնում ինչպես համագյուղացիների, այնպես էլ հարևան գյուղերի միջև կռիվների, ծեծ ու ջարդերի, նույնիսկ սպանությունների: Եվ, որպեսզի մարդիկ ջրի համար չտուժեին բարոյապես ու նյութապես և ջուրը իրար ձեռքից զոռբայությամբ չխլեին, նահանգապետությունը անհրաժեշտ համարեց միոբաթի (ջրբաժանի) հաստատություն հիմնել նաև գավառում, որպիսին մինչ այդ չկար²⁴:

Այսուհետ գյուղական համայնքներն իրավունք ունեին ընտրելու միոբաթներ: Վերջիններս ընտրվում էին տվյալ գյուղական համայնքի կողմից, գավառապետի կամ նրա օգնականի ներկայությամբ, փակ քվեարկությամբ՝ 1-3 տարի ժամանակով: Միոբաթներն ունեին վարչական ու դատական իրավունքներ,

²¹ Հայաստանում ամենաինն առու-ջրանցքների հետքեր նկատվել են Արագած և Գեղամա լեռների բարձրադիր շրջաններում, որոնք ունեն նախնադարյան ժամանակաշրջանի ծնունդ: Տե՛ս *Մ. Բարխուդարյան*, *Հիտոռիություններ և նոր նյութեր* Հին Հայաստանի ոռոգման գործի վերաբերյալ (Նյութեր Հայաստանի գյուղատնտեսության և գյուղացիության պատմության), Ե., 1964, հ. 1, էջ 250:

²² Տե՛ս ՉԱԱ, ֆ. 375, ց. 1, գ. 1, ք. 13-38:

²³ Տե՛ս ՉԱԱ, ֆ. 375, ց. 1, գ. 1, ք. 27:

²⁴ Տե՛ս «Մշակ», 22 հուլիսի, 1904թ.:

բաժանում էին ջուրը ըստ համայնքների և լուծում նրանց միջև առաջացած վեճերը: Նրանց օգնելու համար ընտրում էին օգնականներ (ջուլարներ), որոնք պետք է հոգային ջրի պահպանման համար, հատկապես նրա ակունքային մասում, հերթով բաժանեին ջուրը ու հսկեին հերթի պահպանումը: Միոբաթների նման ջուլարներն էլ վարձատրությունը ստանում էին բնակչությունից²⁵:

Գավառի գյուղատնտեսության մշտական ուղեկիցը հողամշակության պարզունակ գործիքներն էին (գերանդի, մանգաղ, եղափ, փոցխ, արոր և այլն), որոնք առանձին գյուղական համայնքներում ու ոստիկանակա մշրջաններում, անգամ քանակի տեսակետից չէին բավականացնում հողի մշակման պահանջներին: Հիմնական գործիքը, որն օգտագործվում էր հողը վարելու համար, արորն էր: Հատուկնետ ունեոր ընտանիքներն էին ի վիճակի գուրան օգտագործել, որովհետև հարկավոր էր ունենալ ամուլվազն յոթ լծկան եզ²⁶: Հացահատիկը կալսելու համար օգտագործվում էր կամ, իսկ հատիկը դարմանը առանձնացնում էին փայտե լայն թիակների միջոցով՝ դարմանը քամում տալով²⁷: Աշխատատար այս գործողությունը գյուղացուց շատ ժամանակ խլելուց բացի, նրան պատճառում էր բերքի զգալի կորուստ՝ քամին թեփուկների հետ տանում էր նաև հացահատիկի մի մասը: Հողի ագրոտեխնիկական նորմանը չէին պահպանվում: Տարիներ շարունակ, անընդմեջ, հողը դնելով հացահատիկային կուլտուրաների կամ այլ տեսակի մշակաբույսերի ցանքսի տակ, այն ուժասպառ էր լինում, իսկ նրա կենսունակությունը բարձրացնելու ուղղությամբ աշխատանքներ չէին տարվում: Գյուղացին ուներ լծկան անասունների մեծ պահանջ, որովհետև հետզհետե ավելանում էր բանող անասուն չունեցող ընտանիքների թիվը: Այսպես, եթե 1864 թ. սույն գավառում բանող անասունների գլխաքանակը հասնում էր մինչև 100 հազար գլխի, և յուրաքանչյուր ընտանիքին բաժին էր ընկնում միջինը 14 գլուխ

²⁵ Տե՛ս «Հայ ժողովրդի պատմություն», հ. V, էջ 28, «Հայ ժողովրդի պատմություն», հ. VI, էջ 39:

²⁶ Տե՛ս «Մշակ», 10 մայիսի, 1883 թ.:

²⁷ Տե՛ս «Հայ ժողովրդի պատմություն», հ. V, էջ 24:

զանգված բանող անասուն²⁸, ապա 1913 թ. բանող անասունների գլխաքանակը հաշվվում էր 7714,8 և յուրաքանչյուր ընտանիքին հասնում էր 0,8 գլուխ բանող անասուն²⁹:

Բանող անասունների գլխաքանակի կրճատման պատճառներից կանոնադաշտնամբ համապատասխան տեղում:

Խնդրո առարկա զավատի բուսաբուծության ցանքատարածությունների կառուցվածքում երկրորդ տեղը զբաղվում էին կերային մշակաբույսերի ցանքատարածությունները (12 %)՝: Մշակել են կորոզան, շամբրա³⁰ և առվույտ³¹, որոնք նպաստել են անասնապահության զարգացմանը:

Կարտոֆիլի, տեխնիկական մշակաբույսերի և բանջարաճաքատանային կուլտուրաների ցանքատարածությունները զբաղեցրել են շատ փոքր մակերես:

Գավառում, ուր կարտոֆիլը մշակում էին ամենուրեք, տարեկան միջին բերքատվությունը կազմել է մեկին երեք³²: Կարտոֆիլագործությունը ուներ տեղական նշանակություն: Եթե հացահատիկն արտադրվում էր սեփական պահանջները բավարարելուց բացի նաև նահանգի ներսում և նրա սահմաններից դուրս արտահանելու համար, ապա կարտոֆիլի մշակումից ստացված արդյունքը հիմնականում սեփական կարիքների համար:

Բանջարաճաքատանային կուլտուրաներից ցանել են

²⁸ Տես ԳԱԱ, ֆ. 125, գ. 1, գ. 14, մաս II, ք. 248:

²⁹ Հաշվարկը կատարվել է ըստ ԳԱԱ ֆ. 1284, գ. 194, գ. 15, ք. 29 տվյալների:

³⁰ Հաշվարկը կատարվել է ԳԱԱ, ֆ. 1284, գ. 194, գ. 15, ք. 15, ֆ. 93, գ. 1, գ. 360, ք. 8-11, ֆ. 375, գ. 1, գ. 1, ք. 18 տվյալների հիման վրա:

³¹ Համբալա (*Trigonella foenum-graecum*) միամյա բույս է, պատկանում է բակլագիների ընտանիքին: Ցողունները հիմնականում կանգուն են, կան նաև կիսալանգուն ձևեր, ճյուղավորված են, բարձրությունը տատանվում է 50-60 սմ-ի սահմաններում: Համբալայի տերևները եռմասնյա են, նման են առվույտի և իշառվույտի տերևներին, տարբերվում են նրանցից տերևկիների եզրերի կտրվածության չափով ու ձևով: Տես *Ս. Սաթրոյան*, Բուսաբուծություն, Ե., 1977, էջ 516-517:

³² Տես ԳԱԱ, ֆ. 1284, գ. 194, գ. 15, ք. 15:

³³ Տես ԳԱԱ, ֆ. 94, գ. 5, գ. 161, ք. 7:

կաղամբ, լոբի, դդում, ճակնդեղ: 1913 թ. տվյալներով այս մշակաբույսերի ցանքատարածությունները կազմել են 48,5 դեցյատին, իսկ համախառն բերքը 37938 փուլ, այդ թվում 33323 փուլ կաղամբ, 1317 փուլ ճակնդեղ, 3298 փուլ սեխ՝ դրամական արտահայտությամբ կազմել է 15570 ռ.³⁴:

Բնակչության եկամտի աղբյուրներից մեկը հնագույն ժամանակներից ի վեր եղել է յուղատու մշակաբույսերի մշակությունը³⁵:

Բավականին տարածված էր կտավատի, վուշի և կանեփի մշակությունը, որոնց ցանքատարածությունները հետոեֆորմյան տարիներին զգալիորեն ընդարձակվեցին: Դրանցից ստացվող ձեթը օգտագործում էին հիմնականում սեփական կարիքների համար:

³⁴ Տես ԳԱԱ, ֆ. 1284, գ. 223, գ. 125, ք. 21:

³⁵ Հնուց ի վեր յուղատու բույսերի մշակությունը Սևանի ավազանում այն աստիճանի զարգացում է ապրել, որ նրա բնակչությունից ձեթը վերցվել է որպես հարկ: Այսպես, 1532 թ. Գեղարքունիքի մի խումբ իշխանների այցելել են Տաթևի վանք և Մազրայից (Վարդենիսի ենթաշրջան) մինչև Կոթ (Մարտունի ենթաշրջան) եղած գյուղերի վրա պայման դրել, որ ամեն գյուղ տարեկան երկու կապալ ձեթ տա վանքին: Տես *Ս. Բարխուդարյան*, Գեղարքունիքի մելիքներն ու տանուտերերը ըստ Տաթևի վանքի մի փաստաթղթի, «Բաների մատենադարան», 1967, թիվ 8, էջ 154: Մինչև այսօր էլ Գեղամա երկրի գանազան վայրերում Օրդաբլու (Լճաշեն Սևանի ենթաշրջան), Դայրիվան (Գավառի ենթաշրջան), Ծակբար, Ծովինար և Լիճքից արևմուտք գտնվող Կ. Դակոբի ավերակ գյուղատեղում (Մարտունի ենթաշրջան) և այլուր, պահպանվում են ձիթահանի հետքեր, կան և դրանց իսկությունը հաստատող գրավոր վկայություններ: Վերին Դարանուխ գյուղում (Մարտունի ենթաշրջան) գտնվող մի ավերակ ձիթահանի հարավային պատի մեջ ազուցված խաչքարին փորագրված է. ԿԱՄՕՆ ՄՅ ԵՄ /ՄՆ/ ԻՎԱՄ ԵՒ ԵՂԲԱՅՆՆ ԻՄ ԿՎԱՄԱՆ ՈՐԻԿ ԼԵՐՄ/ ԷՄԻՆ ՀԻՆԵՑԻԼԵ ՄՐ/ ԱՆՈՑԱ, ՎԵՐԿԻ: Բ: ՃԱՐԱՑԱ. ՄՇ. ՍԵՐ/ ՋԱՐԻ ՍՕՏ /ՅԻՇԱՍԱԿ ՈՐԻ ՄՅ ԵՐՈՒՑ: /ԹՎ: Ը ՈՒ...:

Արժանագրության մեջ հիշատակված սրոնցը նույն ձիթահան է: Դրատարակիչներ *Ս. Ամբաստյանց*, Նշվ. աշխ., էջ 538, Ե. *Լալայան*, Նշվ. աշխ., էջ 152, *Ս. Բարխուդարյան*, Դիվան հայ վիճագրության, պրակ. 4, էջ 225, Գ. *Ավագյան*, «Հալ» հարկային տերմինը վիճակալան արձանագրություններում, «Հայագիտական հետազոտություններ», Ա պրակ, Ե., 1974, էջ 46:

Որոշ չափով զարգացում էին ապրել խաղողագործությունը և պտղաբուծությունը Ղրիստուպոլի գավառակի Զավմախչի, Քանաբեռ և Կզլ-Կալա բնակավայրերում:

Այսպիսով, պարսկական տիրապետության օրոք գյուղատնտեսության մեջ օգտագործվող աշխատանքի գործիքների ու միջոցների պարզունակության և անբավարարության հետևանքով ցածր էին հանրային աշխատանքի արտադրողականությունը, բերրատվությունը, ինչպես նաև անասնապահության արդյունավետությունը:

Սակայն պետք է նշել, որ հողագործության զարգացման համար ամենամեծ ղեկավարությունը սակավահողությունն էր և եղածի անհավասարաչափ բաշխվածությունը: Գյուղացու համար կենսական նշանակություն ունեցող հողային հարցը, որքան էլ որ պարմանալի է, ցարական կառավարությունը Անդրկովկասում և Արևելյան Գայաստանում ռուսական տիրապետության սկզբնական շրջանում անուշադրության էր մատնել և մինչև XIX դ. 30-ական թվականները գոհանում էր պարսկական տիրապետությունից ժառանգություն ստացած հողատիրության ձևերով և հարկատեսակներով³⁶:

Երկրի տարբեր շրջաններում զեղջևական համայնքներում հողի վերաբաժանումները կատարվում էին տարբեր սկզբունքներով (ըստ ընտանիքի բոլոր անձանց թվի կամ միայն տղամարդկանց քանակի, ըստ անուսնացած զույգերի թվի, վճարած հարկերի ու տուրքերի չափերի և այլն), բայց ավելի հաճախ «համփա-չարեք»-ի սկզբունքով:

Այստեղ ավելորդ չէ նշել, որ հողաբաժանության «համփա-չարեք»-ի եղանակը կիրառվել է Գայաստանում դեռևս XIV – XV դդ.³⁷: Ինչպես նշել է Ա. Ալեքսանյանը, հողի, ջրի և հողօգտագործման ու ջրատիրության իրավունքով պայմանավորված պարտականությունների բաշխումը կատարվում էր հինգ տվորությունի ռոժով մշակված և ընդհուպ մինչև 20-րդ դարը հարա-

³⁶ Տե՛ս ԴԱԱ, ֆ. 1284, ց. 194, գ. 15, ք. 15:

³⁷ Տե՛ս Ա. Մարկոսյան, Ազրաբային հարաբերությունները Արարատյան երկրում XVII-XVIII դդ. և XIX դ. առաջին քառորդում, Ե., 1959, էջ 330-331:

տևած, հայկական գյուղական համայնքի կազմակերպությանը բնորոշ մի համակարգով, որը հայտնի է համփա-չարեք անունով³⁸: Այնուհետև ընդգծելով իր և Ս. Եղիազարովի կարծիքներին³⁹ նույնությունը տվյալ հարցում, Ա. Ալեքսանյանը գրում է. «Համփա-չարեքը ենթադրում էր բաշխման հետևյալ չափերը: 16 շնչից բաղկացած ընտանիքը համարվում էր մեկ լրիվ համփա, ստանում էր մեկ համփաբաժին հող՝ ստանձնելով համապատասխան հարկային պարտավորություններ, իսկ մյուս միսերը դիտվում էին իբրև համփայի 3/4 (12 շունչ կամ երեք չարեք), 1/2 (8 շունչ կամ կիսան), 1/4 (4 շունչ կամ չարեք), 1/8 (2 շունչ կամ մեկ պճեղ) մասեր և ստանում համապատասխան հողաբաժիններ, որոնց չափը պայմանավորված էր գյուղի բնակչության խտության և հողային ֆոնդի հարաբերությամբ»⁴⁰: Իսկ չարեքը՝ (քառորդ մաս) բաժանման ստորին միավոր էր և տրվում էր չքավոր ընտանիքներին⁴¹: Չեռևաբար վերը նշված համակարգը կոչվում էր համփա⁴²-չարեք, և դրանով էր կարգավորվում հողերի վերաբաժանման հաճախականությունը:

Առաջացել էր մի տեսակ հողատիրության ձև, երբ ամեն մի ընտանիք տիրում էր պապերի ունեցած հողերին:

Այլ խոսքով եթե մի ընտանիք, որ 20-30 տարի առաջ բաղկացած էր 5-6 շնչից և հարուստ կամ նշանավոր անձ լինելով տիրել էր ահապահ հողերի, շարունակում էր տիրել այդ հողերին

³⁸ Ա. Ալեքսանյան, Արևելյան Գայաստանի Նոր շրջանի ազրաբային հարաբերությունների պատմագրությունը, Ե., 1991, էջ 269: Տե՛ս նաև Ի. Գաբրիլյան, նշվ. աշխ., էջ 200:

³⁹ С. Егiazаров. Сельская община, Казань, 1889, с. 55-61:

⁴⁰ Ա. Ալեքսանյան, նշվ. աշխ., էջ 269:

⁴¹ Տե՛ս «Դայ ժողովրդի պատմություն», հ. VI, էջ 37:

⁴² Ըստ Ս. Մալխասյանի և Ա. Ալեքսանյանի դիտարկումների «համփան» երկինաստ բառ է: Մի դեպքում այն նշանակում էր ընթացակից, «ընկերների հալասար զնաջող», իբրև հավասար կարողության տերեր, մյուս դեպքում՝ «գյուղերում ունեռ դասին պատկանող անձնակ տուն, որ ավելի տավար և հող ուներ և հարկ ավելի էր վճարում», այլ խոսքով՝ բնորոշում էր անհավասարությունը գյուղական տարբեր խավերի միջև: Տե՛ս Ս. Մալխասյան, Գայեթեն բացատրական բառարան, հ. 3, Ե., 1944, էջ 35, Ա. Ալեքսանյան, նշվ. աշխ., էջ 269:

ժառանգաբար, իսկ շատ ընտանիքներ իրենց խնդրության և աղքատության պատճառով չկարողանալով տիրել մեծ հողերի, ունեցել էին քիչ հող, շարունակում էին տիրել և բավականանալ այդքան հողով, չնայած, որ այդ ընտանիքներն ու նրանց անդամները կրկնապատկվել էին մի քանի անգամ:

Կային այնպիսի մեծատուն ռանչպարներ, որոնց հողաբաժինները իրենց չբավականացնելով ստիպված էին լինում կապալով վերցնել իրենց հարևաններից, որոնք միջոցներ չունեին մշակելու: Կային նաև այնպիսիները, որոնք զանազան պայմաններով (կիսովի, վարձովի և այլն) մշակում էին իրենց աղքատ գյուղացիների վարելահողերն ու խոտհարքները⁴⁵:

Սույն գավառի հողային ֆոնդը չափազանց սահմանափակ էր և չէր կարող բավարարել մշտապես ավելացող բնակչության պահանջը հողի նկատմամբ: Հետևաբար հողագուրկ և սակավահող գյուղացիներին կարելի էր բավարարել միայն «ավելցուկ» հողեր ունեցող գյուղացիների և գյուղերի հաշվին:

Հատկանշական է, որ Նոր Բայազետի գավառում բացի բնական աճից, բնակչության թիվն ավելանում էր ինչպես նաև գաղթականների նորանոր խմբաքանակներ ներգաղթելու, այնպես էլ ներհասանգային տեղաշարժերի ճանապարհով:

Այլ կերպ ասած՝ գավառում հողային հարցի լուծման վիթխարի դժվարություններն ինչպես սակավահողությունն էր, այնպես էլ մեծ թվով հողագուրկների (հիմնականում նորաբնակների) և ծայրահեղ սակավահող գյուղացիության առկայությունն էր:

Գավառում հողի խնդիրն ավելի խորացավ և սուր բնույթ կրեց՝ կապված ռուս աղանդավորներին գավառի տարածքում վերաբնակեցնելու հետ: Այնհայտ է, որ սակավահող գավառում ռուս վտարանդիների վերաբնակեցումը կատարվում էր տեղական գյուղացիության հողատարածությունների վրա, արտոնյալ պայմաններով՝ տեղացիների համեմատությամբ նրանց չնչին գրեթե 5-6 անգամ ավելի հող էր տրվում, այն էլ լավագույն հողերից:

⁴⁵ Տե՛ս «Մշակ», 20 օգոստոսի, 1904 թ.:

Օրինակ, Ներքին Ախտայի 95 ծուխ հայերն ավելի վատ հողային պայմաններում էին գտնվում, քան 35 ծուխ մուլկաները:

1866 թ. նրանք փոխարքային գրած խնդրագրում նշում էին, որ սկսած 1851 թ. իրենց տնտեսական դրությունը վատացել է, որովհետև գյուղական համայնքին պատկանող բերրի ու մտտիկ վարելահողերը կտրել ու տվել են մուլկաններին⁴⁶:

Ինչ վերաբերում է Ելենովկայի ռուս նորաբնակներին, ապա նրանք այնքան շատ հողեր ունեին, որ դրանք դառնում էին «земельная сокращка»-ի (հողային գայթակղության) վայր, որտեղ ծառում էին Դարաչիչակի գավառակի բոլոր սակավահող բնակիչները, ինչպես օրինակ, զոմածորցիք, չոչոցիք, քարվանսարեցիք, սոնամալցիք, շահիրզցիք, օրդաբլեցիք: Խոսքը այն մասին է, որ Ելենովկայի բնակիչներից շատերը չկարողանալով սեփական միջոցներով իրենց հողը մշակել, ապրում էին հողի առևտրով կամ հողը տալիս էին «կիսարա» մշակելու⁴⁷:

Մյուսևանդերն ինչպես մի շարք հետազոտողներ իրավացիորեն նկատել են, որ ռուսների վերաբնակեցման հետևանքով տեղաբնիկներին պատճառած դժվարություններից ու անհարմարություններից զատ, չպետք է աչքաթող անել «այն դրականն ու նորը, որ ռուսների վերաբնակեցումը մտցրեց տեղական բնակչության տնտեսական ու մշակութային կյանքում»⁴⁸:

Տեղական բնակչությունը նրանցից սովորեց զբաղվել բանջարաբուծության նոր տեսակների կաղամբի և գազարի մշակությամբ, ինչպես նաև տնտեսության մեջ օգտագործել ռուսական քառանիվ ծիսասայլ⁴⁹:

Այսպիսով, հետևությունն այն է, որ հողերի անհավասար բաշխվածության վերացումը իշխամությունների և գյուղական հասարակության առաջնահերթ խնդիրներից մեկն էր: Այդ խնդրի լուծումը միայն կարող էր մեղմել գյուղական չքավորու-

⁴⁶ Տե՛ս «Չալ մողովրդի պատմություն», հ. V, էջ 225, 231:

⁴⁷ Տե՛ս «Մշակ», 6 մարտի, 1907 թ.:

⁴⁸ Տե՛ս А. Бодальян, Население Армении со времени присоединения ее к России и до наших дней. Известия АН Арм. ССР, 1959, N 3, с. 52:

⁴⁹ Տե՛ս նույն տեղում:

թյան գայրույթը, այլապես, մտորում է հողվածագիրը. «Նոր Բայազետի գավառը դառնում է ծծծի, կոփի, գլուխ ջարդելու ասպարեզ, և այդ բոլորը կատարվում է խոտի կամ հողի համար»⁴⁸:

1870 թ. գյուղացիական ռեֆորմը, որը տարածվում էր միայն կալվածատիրական գյուղացիների վրա (Արևելյան Պայաստանում կազմում էին ամբողջ գյուղացիության շուրջ 28%-ը⁴⁹, իսկ Նոր Բայազետի գավառում՝ մոտ 4%-ը⁵⁰, որը պայմանավորված էր թույլ արտահայտված կալվածատիրական հողատիրությամբ), չլուծեց սակավահողության խնդիրը: Օրինակ, 70-ական թվականների սկզբներին հիշյալ գավառում յուրաքանչյուր գյուղացիական տնտեսություն ուներ 14,17 դեսյատին տնամերձ վարելահող⁵¹: Ինչ վերաբերում է պետական գյուղացիներին⁵² (իրենց վարելահողերից օգտվում էին հիմնականում համայնական կարգով), որոնք կազմում էին (1886 թ. հասնում էր 92703 մարդու կամ 11504 տնտեսության) գավառի ամբողջ գյուղական բնակչության (96123 մարդ կամ 11976 տնտեսություն)⁵³ բացարձակ մեծամասնությունը, մոտ 96,5%-ը, 1886 թ. դրությամբ գյուղական յուրաքանչյուր տնտեսություն միջին հաշվով ուներ 9,07 դեսյատին վարելահող⁵⁴: Առանձին գյուղացիական տնտեսություններում այդ թիվը ավելի փոքր էր:

⁴⁸ «Մշակ», 23 սեպտեմբերի, 1883 թ.:

⁴⁹ Տե՛ս «Ղայ ժողովրդի պատմություն», հ. VI, էջ 40:

⁵⁰ «Свод статистических данных о населении Закавказского края, извлеченных из посемейных списков 1886 г.» Тифлис, 1893 (առանց էջակաման):

⁵¹ «Сборник статистических данных о землевладении и способах хозяйства в пяти губерниях Закавказского края». Приложение IV, Тифлис, 1889, с. 21, «Ղայ ժողովրդի պատմություն», հ. VI, էջ 40:

⁵² Ցարական կառավարությունը իր հողերի մի մասը տալիս էր գյուղացիներին՝ մշտական ու ժառանգական օգտագործման համար և փոխարենը գանձում բազմաթիվ հարկեր ու տուրքեր: Այդ գյուղացիները կոչվում էին պետական գյուղացիներ, որոնք 80-ական թվականների կեսերին կազմում էին 105.051 տնտեսություն կամ 827.623 մարդ: Տե՛ս «Ղայ ժողովրդի պատմություն», հ. . VI, էջ 34:

⁵³ «Свод статистических данных о населении Закавказского края, извлеченных из посемейных списков 1886 г.» (առանց էջակաման):

⁵⁴ Տե՛ս «Ղայ ժողովրդի պատմություն», հ. . VI, էջ 34:

Օրինակ, 250 ծովս ունեցող Չիրուխլու գյուղում յուրաքանչյուր ծխի բաժին էր ընկնում միջին թվով 3 դեսյատին⁵⁵։ Թայաչաբուխում 2,93 դեսյատին վարելահող⁵⁶։

Վիճակն ավելի բան ծանր էր Գոմածոր և Ցամաքաբերդ բնակավայրերում: Այս գյուղերը միասին ունեին ընդամենը 1863 դեսյատին հող, որից յուրաքանչյուր բնակչին ընկնում էր 1 1/2 դեսյատին հող: Հողի այդ չնչին քանակությունը, որը մուլքադորական էր և պատկանում էր Սևաս վանքին, պարունակում էր անմշակ լեռների, քարքարոտների, ձորերի ահագին տարածություն, որը պիտանի չէր նույնիսկ արոտատեղ ծառայելու համար⁵⁷: Ինչպես դիպուկ նկատել է «Մշակ» թերթը. «...մինչև այժմ թե՛ Նոր Բայազետը և թե՛ Սևաս գավառը բաժանել էին հողերը, եթե կարելի էր ասել «համափապեճոյի»⁵⁸ տիրապետության կանոններով»⁵⁹: Բավական է նշել, որ արդեն 1906 թ. դրությամբ սույն գավառում յուրաքանչյուր գյուղացիական տնտեսության բաժին էր ընկնում 5 դեսյատին հող⁶⁰, այսինքն 3 դեսյատինով

⁵⁵ Տե՛ս «Մշակ», 14 հուլիսի, 1899 թ.:

⁵⁶ Տե՛ս Ի. Ղարիբյան, նշվ. աշխ., էջ 205:

⁵⁷ Տե՛ս «Մշակ», 6 մարտի, 1907 թ.:

⁵⁸ Համայնքի հիմնական միավորը «ծովսը», «բերդ», ընտանիքն էր գերդաստանը, որն ըստ ընտանիքի անդամների թվի բաժանվում էր հինգ կարգի համակների, երեք պեճոների, կիսանների, պեճոների և կես պեճոների: Համակները, ինչպես նշել ենք, բաղկացած էին 16, երեք պեճոների՝ 12, կիսանները՝ 8, պեճոները՝ 4 և կես պեճոները՝ 2 շնչի: 4 կես պեճոը կիրառվում էր ոչ միայն երկու շնչից բաղկացած ընտանիքների հողաբաժին հատկապես նույնիսկ համար, այլև հողահատկացման ժամանակ որպես հավասարեցնող միավոր՝ հողաբաժինները կարգավորելու նպատակով: Վեց, տասը, տասնչորս շնչից բաղկացած ընտանիքների հողաբաժիններին համապատասխանաբար ավելացվում էր նաև կես պեճո: Առավել բազմանդամ ընտանիքներին, որոնց կազմում կար 16-ից ավելի շունչ, համապատասխանաբար ավելացվում էր հողաբաժին: Եթե որևէ ընտանիքի թվակազմը բաղկացած էր 28 շնչից՝ նա տանում էր մեկ համափա և երեք պեճո հողաբաժին, 26-ի դեպքում՝ մեկ համափա, մեկ կիսան և կես պեճո (16+8+2=26): Տե՛ս Ի. Ղարիբյան, նշվ. աշխ., էջ 199-200:

⁵⁹ «Մշակ», 7 սեպտեմբերի, 1898 թ.:

⁶⁰ Տե՛ս Ի. Ղարիբյան, նշվ. աշխ., էջ 205:

պակաս 1886 թ. դիմաց: Ինչպես վերը ցույց ենք տվել, Թայ-
չարուխ գյուղում այդ քիվը հավասար էր 2,93 դեսյատինի:

1860-ական թվականներից սկսած համայնական հողերի
ներքին վերաբաժանումը, որը չէր տարածվում տնամերձ և ցան-
կապատած հողերի վրա, կատարվում էր ըստ շնչի, նախկինում
կիրառվող, այսպես կոչված համփա-չարեքյանի փոխարեն⁶¹:
Կենտրոնական կառավարության կողմից հաճախակի ընդուն-
վում էին ագրարային նորարար որոշումներ: 1887թ. հունիսի
2-ին կառավարությունը հրապարակեց Անդրկովկասում հո-
ղային սահմանափակումների մասին նոր օրենք, որը փոխա-
րինելու եկավ 1861թ. հունիսի 29-ի օրենքին: Նոր օրենքով
սահմանազատվում էին առանձին շրջանների հողային տա-
րածությունները (հին օրենքով սահմանազատվում էին առան-
ձին գյուղերի հողային տարածությունները), իսկ վեճերի կար-
գավորումն անտեսվում էր (1861 թ. օրենքով վեճերը լուծվում
էին վարչական կարգով):

Այս օրենքին հետևեց 1897 թ. մայիսի 26-ին ցարական կա-
ռավարության հանձնարարականը՝ լուծել հողային սահմա-
նազատումների հարցը ամրացնել յուրաքանչյուր գյուղին ու
տնտեսությանը այն հողամասերը, որոնք գտնվում էին նրանց
փաստացի օգտագործման տակ⁶²:

Կառավարության վերոհիշյալ ձեռնարկումները էապես
չփոխեցին կարիքավոր գյուղացիների հողային պահանջները,
քացի նրանից, որ վերստին հաստատեցին հողատիրության և
հողօգտագործման փաստացի կացությունը:

80-ական թվականներին, ի թիվս մյուս գավառների, Նոր
Բայազետի գավառում բնակություն հաստատած գաղթական-
ների համախոսական դիմումները նախանգային վարչությանը՝
ավելացնել համայնքապատկան հողաբաժինները, կամ իրենց
թույլ տալ վերաբնակվել այնպիսի գավառներում, որտեղ կա-

րելի կլինի հողատեր դառնալ արցունի ազատ հողերի հաշվին⁶³,
հողերի վերաբաժանման նկատմամբ հասարակական պահան-
ջի հասունացման արտահայտության դրսևորումներից էր:
Գնալով դրա անհրաժեշտությունը ավելի ու ավելի էր զգաց-
վում: Գավառի տարբեր շրջաններից մեծան բովանդակությամբ
բազմաթիվ դիմում, խնդրագրեր էին հոսում տեղական և նա-
հանգային իշխանությունների հասցեներով: Ահա այդպիսի մեկը
Ղարաչիչակից. «Տասնյակ տարիներ անաջ, երբ տեղական ազ-
գաբնակչության թիվը պակաս էր այժմյան թվից, ոչ ոք չէր
ճնշվում սակավահողությունից և մինչև իսկ սովորություն էլ
չկար ընդհանուր հսկողություն ունենալ հողատարածության
վերաբերմամբ, այն է՝ ընտանիքի անդամների թվի աճման և
նվազման համեմատ՝ նորոգել հողաբաժանությունը, այլ յուրա-
քանչյուր ընտանիք ինչքան հողաբաժին տիրել էր՝ շահագործում
էր նրան»⁶⁴:

Այնուհետև նամակում ասվում է, որ այժմ իրավիճակը
փոխվել է, հողերի մեծ մասը կտրվել են և տրվել զանազան դա-
նակարգերի և նորանոր գյուղաբնակների: Հասարակությունը
զգալով հողի սակավություն, ցանկանում է բնակչության թվի
համաձայն՝ նորից բաժանել քոլոր գյուղացիական հողերը, տա-
լով յուրաքանչյուր անդամին իր հողահատույթը թե վարելահո-
ղերի և թե խոտհարքներից և խելով ավել ավելորդ հողաբա-
ժինները, որոնք տարիներ ի վեր գտնվում են գյուղական այս և
այն «համփայի» տիրապետության տակ⁶⁵:

Հողի սակավությունից նեղված Նորատուս գյուղի 30 հայ
ընտանիքներ ավելի ծայրահեղ քայլի դիմեցին: Նրանք Նոր
Բայազետ քաղաքի ռուսաց քահանայի միջոցով խնդրագիր ներ-
կայացրին ուր որ հարկն է, ռուսադավանություն (ուղղափառու-
թյուն) ընդունելու, իույս ունենալով այդ ճանապարհով նոր հո-
ղեր ձեռք բերել⁶⁶: Հողաբաժանումը դարձել էր համընդհանուր

⁶¹ Տե՛ս С. Егизаров. Административно-экономический строй
сельской общины в Эриванской губернии. В книге "Свод материалов...",
т. I, ч. I, Тифлис, 1894, с. 26-27.

⁶² Տե՛ս «Հայ ժողովրդի պատմություն», հ. VI, էջ 38.

⁶³ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 94, ց. 1, գ. 423, ք. 43-51, գ. 247, մաս III, ք. 622-
623:

⁶⁴ «Մշակ», 1 սեպտեմբերի, 1898 թ.:

⁶⁵ Տե՛ս նույն տեղում:

⁶⁶ Տե՛ս «Մշակ», 9 հոկտեմբերի, 1897 թ.:

պահանջ: 1882 թ. գավառի հասարակությունը դիմում է Երևանի նահանգապետին՝ թույլատրելու հողերը բաժանել ըստ շնչերի: Այս ամենով էր պայմանավորված հողերի վերաբաժանման (հավասարեցման) գործընթացը սույն գավառում: Այն սկսվեց գավառի վարչական կենտրոն Նոր Բայազետ քաղաքից: Քաղաքագլուխ Գևորգ Արծրունին հարց բարձրացրեց հողերը բաժանել համաձայն ընտանիքների հաճախի (ամենավորության): Ըստ այդմ, արդեն հողի վրա հավասար իրավունք ուներ ամեն մի անձ, ինչ դասակարգից էլ լիներ: Քաղաքային դասը ընդհանուր ժողով գումարելով ընտրեց հողաբաժաններ, որոնք մի քանի ամսում կարողացան վերջնականապես հողը բաժանել բնակչության շնչի համաձայն:

Ամեն մի շնչին, արական թե իգական բաժին հասավ 3 չվան⁶⁷ և մեկուկես չարեք (տեղական չափով) վարելահող, այսինքն 0,5 դեսյատին և 150 քառ. սաժեն կամ ընդհանուր հաշվով 1200 քառ. սաժեն յուրաքանչյուր անձին: Ժողովը որոշեց նաև հողից զրկել քաղաքի զուսցուն ունեցող այն բնակիչներին, որոնք տարիներ շարունակ գտնվում էին օտարության մեջ⁶⁸:

Քաղաքի օրինակին հետևեց և ամբողջ գավառի գյուղական բնակչությունը: Գյուղական բնակավայրերում յուրաքանչյուր շնչին (իգական և արական) հասավ 3¹/₂-4 չվան (1400-1600 քառ. սաժեն) վարելահող (հողաբաժանումն խոտհարքների վրա չտարածվեց)⁶⁹:

Չետագա տարիներին վերը նշված տվյալները դրսևորել են նպագման միտում, որոնց հիմքում դրված էին գյուղական բնակչության քանակական աճը և օտարության մեջ գտնվող հայրենակիցներին հող հատկացնելու մասին Նոր կարգի ընդունումը, որով վերջիններիս էր վերադարձվում նրանցից խլված հողերը: Հողային հարաբերությունների կարգավորման էր միտված և 1900 թ. մայիսի 1-ին կառավարության ընդունած

⁶⁷ «Չվան» (տեղական չափ, որը հավասար է 400 քառ. սաժենի): Տես «Մշակ», 1 սեպտեմբերի, 1899 թ.:

⁶⁸ Տես «Մշակ», 25 ապրիլի, 1884 թ.:

⁶⁹ Տես նույն տեղում:

«Անդրկովկասի պետական հողերում բնակվող գյուղացիների հողաշինարարության գլխավոր հիմունքների մասին» օրենքը, ըստ որի հողերի բաշխման նախկին վիճակն առանձին գյուղերի, համայնքների ու ավանների միջև մնում էր անփոփոխ, իսկ գյուղացիներին առաջարկվում էր տիրել իրենց հողաբաժնին՝ առաջվա նման մշտապես օգտվելու իրավունքով: Սույն օրենքի համաձայն գյուղացիները կարող էին հողի համայնական ծեփն օգտագործումը վոխարինել ծխականով, եթե այդ որոշման կողմ քվեարկեք բնակչության 2/3-ը: Գյուղացիներն իրենց հողաբաժնից օգտվելու համար պարտավոր էին պետությանը վճարել հողահարկ կամ բահրա: Օրենքն արգելում էր պետական հողերի վնասբաժանումն առանձին գյուղերի կամ համայնքների միջև, ինչպես նաև հողաբաժինների առքն ու վաճառքը կամ գրավ դնելը⁷⁰:

Այս օրենքով ռուսական իշխանությունները ցանկանում էին պաշտպանել Անդրկովկասի երկրամասում գյուղական համայնքը և նրան զերծ պահել ամեն տեսակի ներքին ցցումներից⁷¹:

Չնայած ձեռնարկված միջոցառումներին՝ հողաշինարարության վիճակը չէր բարելավվում: XIX դ. վերջին և XX դ. առաջին տասնամյակին, ինչպես ամբողջ Երևանի նահանգում, այնպես էլ բնության առարկա զավառում սակավահողությունը գյուղատնտեսության համար մեծ հարված էր և նրա տևական

⁷⁰ Տես «Չայ ժողովրդի պատմություն», հ. VI, էջ 320:

⁷¹ Այսուհանդերձ, 1906 թ. Ռուսաստանում ընդունվեց հողային նոր օրենք, ըստ որի պետական գյուղացիները դառնալու էին իրենց բաժին հողատարածքի սեփականատերեր: Սույն օրենքով Ստոլիպինը միտում ուներ համայնքը քայքայելու (ենթադրվում էր, որ գյուղացիության ընչազուրկ իսակ վերջնականապես կքայքայվի և իր հողերը կվաճառի կուլակներին) և կուլակային տնտեսություններն ուժեղացնելու շնորհիվ ամբողջով գյուղում իր սոցիալական հեմարանը կուլակ-կալվածատեր համագործակցությունը: Այս օրենքը տարածվեց միայն ռուսական, ուկրաինական և բելոռուսական նահանգների վրա, որտեղ թողնելով կայսրության մի շարք երկրամասերը, այդ բովում և Անդրկովկասը: Տես «Չայ ժողովրդի պատմություն», հ. VI, էջ 323:

հետ մնալու հիմնական պատճառներից մեկը: Ժամանակի մասնուղ արտացոլել է 1906-1910 թթ. ընթացքում Նոր Բայազետի գավառում գյուղացիական տնտեսությունների պատկանող մշակելի հողատարածքների պատկերը: Այսպես, ըստ «Մշակ» թերթի մի հրատարակման, եթե անցյալ 6 տարիներից յուրաքանչյուր շունչ ուներ 3¹/₄ չվան կամ 1¹/₂ դեսյատին և 600 քառ. սաժեն հող, ապա 1910 թ. այդ չափը կազմել է 3 չվան, այն է 0,5 դեսյատին ամեն շնչին⁷², կամ յուրաքանչյուր գյուղացիական տնտեսությանը բաժին էր ընկնում 5 դեսյատին հող⁷³:

Այսպիսով, ամբողջ շարքարանքից կարելի է ասել մի շարք եզրակացություններ: Նախ քննության առարկա ժամանակաշրջանում սույն գավառի ագրարային գերբնակչությունը սակավահողությունից մշտապես նեղվել է:

Գյուղատնտեսության առաջատար ճյուղերից հողագործությունը քայքայված էր, գյուղում տիրում էր ծայրահեղ աղքատություն, բնակչությունը սոցիալապես շերտավորված էր, մեծ թիվ էր կազմում չքավոր գյուղացիությունը:

XIX դ. 30-ական թվականներին ցարական կառավարությունը Արևելյան Ղայաստանում մտքոց նոր հարկային քաղաքակրթություն՝ 1837 թ. պարսկահայ և արևմտահայ գաղթականները հարկվեցին «համապատասխան մրանց կացության և այն դրույթներով, որ նշանակված են բնակիչների համար»⁷⁴, որոնք մինչ այդ ազատված էին ամեն տեսակի հարկերից ու տուրքերից, որն էլ գյուղացիական հավակառավարական ելույթների ծավալման ազդակ հանդիսացավ:

Իշխանությունների մտորելու և անհանգստանալու առիթ տվեց հատկապես 1837 թ. Նոր Բայազետի և նրա գավառի 30 հայաբնակ գյուղերում սկսված զանգվածային բողոքի ակցիաները, որոնք ուղղված էին նոր հարկային քաղաքակրթության դեմ: Սա XIX դ. առաջին կեսի ամենախոշոր գյուղացիական ելույթն էր Արևելյան Ղայաստանում, որին ճնշելու համար կա-

ռավարչապետ Ռոզեն և Ղայակական մարզի կառավարիչ Բեհրու-թովը գործի դրեցին եզերների երկու վաշտ, կազակային մեկ հարյուրյակ և երկու լեռնային թնդառն⁷⁵:

Պետական ուժեղացած ապարատի և նույնքան մեծաթիվ բանակի հարաճուն պահանջների բավարարումը մի կողմից, կապիտալիստական հարաբերությունների խորացումը և շուկայական-ապրանքադրամական հարաբերությունների ծավալումը մյուս կողմից թելադրում էին ցարական կառավարությանը ամբողջ կայսրությունում անցնել հարկային նոր քաղաքակառույցային ծխահարկը փոխարինել հողահարկով, որը թույլ կտար մեծացնելու պետական զանձույթների ընդհանուր զուամարը, ասել է թե պետության եկամուտները: Կովկասի կառավարչապետ Գոլիցինի ղեկավարած հանձնաժողովը 1899 թ. հոկտեմբերին ստեղծեց հարկային ռեֆորմի նախագիծը, որը կայսրի կողմից հաստատվեց 1900 թ. հունիսի 12-ին և ուժի մեջ մտավ 1901 թ. հունվարից: Օրենքը թույլ տվեց Անդրկովկասում նաև Արևելյան Ղայաստանում հունվարի 1-ից ծխահարկը փոխարինել պետական բահրային տուրքով ու հողային հարկով:

Նկատենք, որ հողային հարկը զանձվելու էր մասնավոր անձանց և սուբյեկտների մասնավոր սեփականությունը հանդիսացող հողերից, իսկ բահրային տուրքը արքունական այն հողերից, որոնք զանվում էին գյուղացիների մշտական օգտագործման տակ:

Արժե ուշադրության արժեն մի հանգամանց էս: Կովկասի հարկային սիստեմի «կարգավորման» մասին օրենքը երկրամասի ռահանգներում կիրառվում էր առանձնակի կերպով: Նախանգային իշխանությունները հարկի ընդհանուր զուամարը բաժանելու էին զավառների, իսկ վերջիններս էլ համայնքների ու տնտեսությունների վրա, նկատի ունենալով ամեն մի գյուղի ու տնտեսության ունեցած պիտանի հողերի քանակը, որակը և եկամտաբերությունը⁷⁶:

1900 թ. օրենքը սահմանեց նաև տեղական (զեմսկի) գա-

⁷² Տես «Մշակ», 17 փետրվարի, 1910 թ., «Մշակ», 25 ապրիլի, 1884թ.:

⁷³ Տես *Ի. Դարիրյան*, նշվ. աշխ., էջ 235:

⁷⁴ «Ղայ ժողովրդի պատմություն», հ. V, էջ 235:

⁷⁵ Տես «Ղայ ժողովրդի պատմություն», հ. V, էջ 237:

⁷⁶ Տես «Ղայ ժողովրդի պատմություն», հ. VI, էջ 324:

ծունենրը, ըստ որի այսուհետ նրանց գումարը պետք է ծխերի փոխարեն որոշել հողամասերի տարածությամբ և եկամտաբերությամբ: Հարկային պարտավորությունների պաշտոնական չափերի մասին ընդհանուր պատկերացում է տալիս «Երևանի նահանգի 1901-1903 թթ. արքունական հողային տուրքերի հաշվեցուցակը», համաձայն որի յուրաքանչյուր դեյաստին այգու կամ բանջարանոցի համար սահմանվում էր՝ Երևանի գավառում 76 ռ. 33 կոպ., Ալեքսանդրապոլի գավառում՝ 100 ռ., Եջմիածնի գավառում՝ 100 ռ. 74 կոպ, Նոր Բայազետի գավառում՝ 11 ռ.⁷⁷: Ինչպես տեսնում ենք Երևանի նահանգի գավառներում այգեգործությունը և բանջարաբուծությունը հարկվում էին անհավասարաչափ: Նահանգային իշխանությունների առաջնահերթ խնդիրը հարկերի ու տուրքերի հավասար բաշխելը չէր, այլ քմահաճ կերպով պետական զանազան մուտք գործող եկամտի հոսքերի բազմապատկումը, ինչի շնորհիվ էլ Երևանի նահանգում զանազանի եկամուտներն աճեցին շուրջ 49%-ով: Դրան նպաստում էր գյուղացիների կողմից զանազան տեսակի պարտականքների պարտադիր կատարումը: Ստացված միջոցներից վարձատրվում էին գյուղական տանուտերերը, նրանց տեղակալները, միրաբները, ջուկարները, հարկահավաքները, հանդապաները, նախարակները և այլն: Այս բոլորից զատ գյուղացիների պարտականության մեջ էր մնում մասնակցել ճանապարհների, կամուրջների և հասարակական նշանակության այլ կառույցների շինարարությանը և նրանց վերանորոգումներին: Սույն պարտականքները կազմում էին գյուղացիների վճարած պետական հարկերի 1/4-ից մինչև 1/2-ը⁷⁸:

Ստանձնապես ամելանելի վիճակում էր կալվածատիրական գյուղացիությունը:

Բավական է նշել, որ հարկային նոր օրենքի հետևանքով կալվածատիրական գյուղացիներից վերցվում էր նրանց եկամտի 43,7%-ը, իսկ պետական գյուղացիների՝ 20,4%-ը⁷⁹:

⁷⁷ Տե՛ս «Մուրճ», 14 մայիսի, 1901 թ.:

⁷⁸ Տե՛ս «Դայ ժողովրդի պատմություն», հ. VI, էջ 325:

⁷⁹ Տե՛ս «Մշակ», 27 հոկտեմբերի, 1887 թ.:

Բերված տվյալները և այլ նյութեր վկայում են, որ գյուղական բնակչության, հատկապես չքավորության գերակշիռ մեծամասնությունը մատնվել էր աղքատության ու թշվառության և չէր կարող բավարարվել միայն իր աշխատանքի արդյունքներով, չունենալով ապրուստի միջոցներ: Միաժամանակ այդ նյութերը հստակորեն տեղեկացնում են, որ քննության առարկա գավառում չքավոր գյուղացիության սոցիալական վիճակը ծայրահեղ բացառիկ էր նաև այն իմաստով, որ նա սուր կերպով զգում էր փողի աճող աղքեցուկները, նրա անհրաժեշտությունը՝ որպես հետևանք ապրանքադրամական հարաբերությունների զարգացման: Բանն այն է, որ գյուղատնտեսությունը դուրս էր գալիս բնամթերային վիճակից և ավելի ու ավելի էր ապրանքային բնույթ ստանում:

Այստեղ դրանորվում է գյուղացու երկակի պահանջը փողի նկատմամբ: Մի ղեպքում, նա սկսում է ավելի մեծ քանակությամբ օգտագործել նաև դրսից ներմուծվող արդյունաբերական, մասամբ և գյուղատնտեսական ապրանքներ: Երկրորդ ղեպքում նա չէր կարողանում բավարարվել միայն իր աշխատանքի արդյունքներով և հաճախ դիմում էր վաշխառուների «օգնությանը»: Նշենք, որ վաշխառուն, ինքը որպես կապիտալիստական հարաբերությունների ծնունդ, XIX դ. երկրորդ կեսերին և XX դ. սկզբներին Արևելյան Հայաստանում, մասնավորապես գյուղերում կազմում էր բնակչության սակավաթիվ շերտը և դասվում էր գյուղացիությանը շահագործողների շարքին: Սակայն անհրաժեշտ է ընդգծել, որ գյուղացու անձնական կախումը վաշխառուներից պայմանավորված չէր հողօգտագործմամբ, այլ նրա պարտավորությունն, իբրև կանոն, թելադրված էր պարտք վերցված դրամի համար տոկոսների վճարումով: Աղքատության և թշվառության մեջ զտնվող գյուղացիության ասկայության պայմաններում մեծ աշխուժացում ապրեց վաշխառուական կապիտալը: Դա նշանակում էր նախ և առաջ վաշխառուական կապիտալից գյուղացիության կախվածության մեծացում: Արխիվային վավերագրերը և ժամանակի մամուլը անասանելի ծանր վիճակում հայտնված պարտապան գյուղացիների բազմաթիվ օրինակներ են արձանագրել նաև

Նոր Բայազետի գավառի շատ բնակավայրերում: «Գյուղերում մի շատ վատ սովորույթ է մտել, այն է, որ գյուղերի 3-4 հարուստ վաշխատուները կեղեքում են խեղճ ժողովրդին և չբավականանալով անգամ 50,80 և մինչև անգամ 100 տոկոսով, այժմ սկսել են նաև գրավ վերցնել գյուղացու արտերը մի քանի տարի ժամանակով»⁸⁰: «Անցյալ տարվա երաշտի և այս ծմեռվա երկարատև լինելու պատճառով, արձանագրել է «Մշակ»-ը, գյուղացիները ստիպված էին 30-40%-ով փող վերցնել վաշխատուներից իր և իր անասունների գոյությունը պահելու համար»⁸¹:

Ցարական կառավարության հողային և հարկային քաղաքականությունն իրականում ուղղված էր տիրող կարգերի ամրակցմանն ու հզորացմանը: XIX դ. 50-ական և 70-ական թթ. արևելահայ, այդ թվում և Նոր Բայազետի գավառի գյուղացիությունը պայքար ծավալեց՝ ուղղված կալվածատերերի, ցարական ինքնակալության, նրա տնտեսական ու քաղաքական ճնշման դեմ: Այդ տեսակետից ուշագրավ է հատկապես Նոր Բայազետի գավառի Գյուլչայի ենթագավառի Ջոդ, Սեծ Մագրա, Փոքր Մագրա, Չախրուլ և Դոշա-Բուլախ աղայարական գյուղերի բնակիչների անզիջում ու տևական պայքարն իրենց շահագործողների ու կեղեքիչների դեմ:

Առանձնակի հետաքրքրության են արժանի 1850 թ. երևանի նահանգապետի անունով Նոր Բայազետի գավառի Դարաչիչակի ենթագավառի Բջնի գյուղի բնակիչների գրած խնդրագիր-դիմումները: Բնակիչները գանգատվում էին մուլքադար Արսեն սուլթան Գեղամյանցի դեմ, որը 6 տարի շարունակ նրանցից երկու անգամ ավելի մուլք է հավաքում, քան նրան հասնում է⁸²: Սույն գրության մեջ գյուղացիները զայրույթով ասում էին. «Մենք այլևս ոչ մի պայմանով չենք կարող մնալ աստիճանավոր Արսեն սուլթանի գյուղում, այսքան տարի ճանաչելով նրա

⁸⁰ «Մշակ», 27 հոկտեմբերի, 1887 թ.:

⁸¹ «Մշակ», 10 մայիսի, 1883 թ.:

⁸² "Крестьянское движение в Армении в XIX веке", Е., 1948, с. 61.

բնավորությունը և իմանալով, թե ինչ է բերել նա մեր գլխին»⁸³:

Կալվածատիրական իշխանությունից հրաժարվող և արքունական հողի վրա վերաբնակվել ցանկացող Բջնի գյուղացիների պայքարն ընդհատումներով շարունակվեց նաև հետագա տարիներին և վերջնականապես ճնշվեց 1864 թ.:

Նույն գավառի Դրխուլաղի ենթագավառի էլար գյուղի գյուղացիները երևանի նահանգապետին գանգատվում էին Մեխիք Աղամալովի ապօրինությունների և ճնշումների դեմ և խնդրում էին իրենց ազատել ծանր պարիակներից ու Աղամալովի ճնշումներից⁸⁴:

Այսպիսով, ուսումնասիրվող ժամանակաշրջանում երևանի նահանգի մյուս գավառների նման Նոր Բայազետի գավառի գյուղական համայնքներում հողը ենթարկվեց պարբերական վերաբաժանման (3-ից 6 տարի ժամկետով), ըստ ծխերի անդամների թվի սկզբունքով, համաձայն շնչաբաժին նորմայի: Գողային բարեփոխումները կոչված էին լուծելու գյուղի ներքին և միջգյուղային կամ միջհամայնքային հողատարածքների անհամաչափությունը, ինչը սակայն «հոնքը» սարքելու փոխարեն «աչքն» էլ հանեց՝ ավելի խորացրեց ու սրեց այդ հիմնահարցը և վատթարացրեց գյուղացիության առանց այդ էլ ծանր սոցիալ-տնտեսական վիճակը:

Դիտական եկամտուների ավելացմանն էր միտված ցարական կառավարության և Անդրկովկասի երկրամասի իշխանությունների հարկային քաղաքականությունը, որը բխում էր ոչ թե հարկատուների եկամտուների իրական հնարավորություններից, այլ առանձնապես ինչքան շատ, այնքան ավելի լավ «իրավունքից» օգտվելու զայթաղությունից:

Նոր Բայազետի գավառի տնտեսական կյանքում որոշիչ դեր էր խաղում և անասնապահությունը, որը գյուղատնտեսության ճյուղային կառուցվածքում ավանդաբար եղել է առաջատար ճյուղերից մեկը: Կլիմայական կենսարար պայմանները սույն գավառի բնակչությանը թույլ են տվել անասնապահու-

⁸³ Նույն տեղում, էջ 105:

⁸⁴ Տես նույն տեղում, էջ 61:

թյամբ զբաղվելու դեռ վաղընթացան ժամանակներից.⁸⁵ որտեղ հրաշալի արդյունքներն ալպյան մարգագետիններում, և մասամբ ծննդալին արդյունաբերող պապահովվածությունը կերային կայուն բազա էին ստեղծել այդ ճյուղի զարգացման համար: Արդյունաբերող մեծ մասը գտնվում է ծովի մակերևույթից 1500-2000 մ. ավելի բարձրության գոտում Գեղամա, Արեգունի, Սևանի, Վարդենիսի, Աղմաղանի և Փամբակի լեռների վրա:

Անասնապահությունը առավել զարգացում ապրեց Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միացվելուց հետո: Նոր վարելահողերի մշակման, կերային մշակաբույսերի ցանքատարածությունների մեծացման, խոտհարքների և արդյունաբերող ընդարձակման հաշվին զավառի գյուղական բնակչությունը տարեցուարի ավելացնում էր անասնակերի պաշարը, որը հնարավորություն էր տալիս բազմացնելու խոշոր և մանր եղջերավոր անասունների գլխաքանակը:

Անասնապահությանը զբաղվելը հետապնդում էր բազում նպատակներ: Խոշոր եղջերավոր անասուններից է զը, գոմեշը և կովը ծառայել են որպես կաթ, միս ու կաշի տվող կենդանիներ:

Ստացված հումքի մի մասը մշակվում էր տնային պայմաններում, իսկ մյուս մասը՝ արհեստանոցներում: Եզը և գոմեշը օգտագործվել են որպես լծկաններ գանգառն աշխատանքներում: Չին, ջղոխն և էշը ծառայել են իբրև փոխադրամիջոց բեռնելու և նստելու համար: XIX դ. 70-ական թվականներից սկսած անասնապահությանը զբաղվում էին նաև առևտրական նպատակներով:

Համեմատաբար առաջատար ճյուղը եղել է մանր եղջերավոր անասնապահությունը: Դա պայմանավորված էր երկրամասի բնակլիմայական պայմաններով: Խոշոր եղջերավոր անասունների ծնեռումը կապված էր դժվարությունների (անասնակեր կուտակելու, ծնեռանոցներ պատրաստելու և այլն) հետ:

⁸⁵ Սևանի ավազանում յայլադային անասնապահությունը ծավալվել է դեռևս մ. թ. ա. 5-րդ հազարամյակում, իսկ նստակյաց անասնապահությունը մ. թ. ա. 2-րդ հազարամյակում: Տե՛ս Գ. Մարտիրոսյան, Գ. Կարայեյան, Գեղամա լեռների ժայռապատկերները, Ե., 1971, էջ 23:

Դրան նպաստել է և այն, որ հիշյալ զավառի ընդարձակ տարածքը հարուստ է ալպյան և ենթաալպյան անտառային արդյունաբերող, իսկ ծննդալին չափազանց աղքատ է, որը բնորոշ է Հայաստանի բոլոր լեռնային և նախալեռնային շրջաններին:

Չմոռանանք, որ այս տարածքում տևական ժամանակաշրջան բնակվել են քոչվոր խաշնարած ժողովուրդներ, որոնց տնտեսական կյանքում և զբաղմունքում որոշիչ դեր ունեռ մանր եղջերավոր անասնապահությունը:

Քննության առարկա ժամանակաշրջանում անասնապահության զարգացման մասին կարելի է պատկերացում կազմել հետևյալ աղյուսակից⁸⁶:

Աղյուսակ 16

Անասունների գլխաքանակը Նոր Բայազետի գավառում

Բնակավայրի անվանումը	1831 թ.						1865 թ.							
	խոշոր եղջերավոր անասուններ		մանր եղջերավոր անասուններ	սմբակավորներ			ընթաններ	խոշոր եղջերավոր անասուններ		մանր եղջերավոր անասուններ	սմբակավորներ		ընթաններ	
	գոմեշ	եղև կով		գոմեշ	եղև կով	խոզ		գոմեշ	եղև կով		գոմեշ	եղև կով		խոզ
Նոր Բայազետ գավառ	4008	29245	51005	3743	935	-	88936	950	165000	27240	12600	2920	470	454340
Նոր Բայազետ քաղաք	6	386	143	66	138	-	739	40	2800	2900	250	270	-	6260
Նոր Բայազետ քաղաքի Ծճարմե	4014	29621	51148	3809	1073	-	89675	990	167800	275300	12850	3190	470	460600

⁸⁶ Հաշվարկը կատարվել է աղյուսակը կազմվել է ըստ ՀԱՍ, ֆ. 90, ց. 1, գ. 300, ք. 208, գ. 318, ք. 3-5, ֆ. 1284, ց. 194, գ. 15, ք. 29, գ. 86, ք. 15-16 տվյալների:

Ընտանյալի անվանումը	1905 թ.						1913 թ.							
	խոշոր եղջերավոր անասուններ		մանր եղջերավոր անասուններ		սմբակավորներ		բնթանակ	խոշոր եղջերավոր անասուններ		մանր եղջերավոր անասուններ		սմբակավորներ		ընդամենը
	գլուխ	կգ	գլուխ	կգ	գլ	կգ		գլուխ	կգ	գլ	կգ	գլ	կգ	
Նոր Քաղաքի գավառ	11050	167652	261825	12932	2800	315	455674	4853	87639	156672	8964	1719	1045	261892
Նոր Քաղաքի Էջմիածնի մարզ	34	3000	2700	200	250	-	6184	12	4200	4630	820	250	120	10132
Ընդամենը	11084	170652	264525	12232	3050	315	461858	4865	91839	161302	10884	1969	1165	272024

Ինչպես երևում է աղյուսակ 16-ից, նշված տարիներին գավառում ամբողջ անասունների զվաքանակը մշտապես ավելացել է: Նրա աճի տեմպերը զգալիորեն գերազանցել են նահանգի միջին ցուցանիշներին: 1831-1913 թթ. գավառում ամբողջ անասնազվաքանակը ավելացել է 3 անգամ (1831 թ. 89,6 հազար, 1913 թ. 272 հազար), մինչդեռ նահանգում 2,6 անգամ (1831 թ. 534,9 հազար⁸⁷, 1913 թ-ին՝ 1 մլն. 439,5 հազար)⁸⁸: Ընդ որում նույն ժամանակամիջոցում խոշոր եղջերավոր անասունների զվաքանակը ավելացել է 2,9 անգամ՝ 33,6 հազարից կազմել է 96,7 հազար կամ աճել է 65,2%-ով (նահանգում՝ 2,7 անգամ, 161,5 հազարից հասել է 437,1 հազարի)⁸⁹, ոչխարների և այծերի զվաքանակը՝ 3,2 անգամ և 1913 թ. հասել է 161,3 հազարի 1831 թ. 51,1 հազարի դիմաց (նահանգում 1831 թ. եղել է 341,1 հազար զլուխ, իսկ 1913 թ.՝ 914,9 հազար, այսինքն աճել է 2,7 անգամ)⁹⁰, սմբակավորներինը՝ 2,9 անգամ, շուրջ 4,9 հազարից

⁸⁷ Ի. Շոպենի տվյալներով Չայկական մարզում տարեկան ստանում էին 48 հազար փուֆ կովի կարագ, 68 հազար փուֆ ոչխարի պանիր, 38,5 հազար փուֆ բուրդ, 70 հազար մանր եղջերավոր անասունների կաշի: Տե՛ս *H. Шопен*, նշվ. աշխ., էջ 793-795, 801:

⁸⁸ Տե՛ս ՉԱԱ, ֆ. 1284, ց. 194, գ. 15, գ. 29, գ. 86, րր. 15-16: "Кавказской календарь на 1913 г.", с. 281; *H. Шопен*, նշվ. աշխ., էջ 793-795:

⁸⁹ Տե՛ս նույն տեղում:

⁹⁰ Տե՛ս նույն տեղում:

հասնելով 14 հազարի (նահանգում՝ 1,8 անգամ կամ ավելացել է 38,8 հազարով և կազմել 70,7 հազար)⁹¹:

Այս տվյալները խոսում են մեր այն տեսակետի օգտին, որ հիշյալ գավառի տարածքում անասնապահության մեջ առաջատար ճյուղը հանդիսանում էր ոչխարաբուծությունը: Մյուս հետևությունը, որը բխում է աղյուսակից, հետևյալն է. XIX դ. 60-ականների երկրորդ կեսերից սկսած գավառի անասնապահության ճյուղային կազմում տեղի են ունեցել էական փոփոխություններ:

Նախորդ տարիների համեմատությամբ առանձնապես ավելի բարձր տեմպերով է աճել խոշոր եղջերավոր անասունների զվաքանակը: Այսպես, 1905 թ. 1831 թ. համեմատությամբ խոշոր եղջերավոր անասունների զվաքանակը ավելացել է 5,3 անգամ, 1865 թ. դիմաց՝ 1,1 անգամ: Նույնը և բնակչության մեկ շնչի հաշվով: Եթե 1831 թ. բնակչության մեկ շնչին ընկնում էր միջին հաշվով 1,3 զլուխ խոշոր եղջերավոր անասուն, 1865 թ.՝ 2,2, ապա 1905 թ.՝ 3:

Մինչդեռ մանր եղջերավոր անասունները, որոնց աճի տեմպերը մշտապես գերազանցել են խոշոր եղջերավոր անասունների աճի տեմպերին, նվազում էին:

Օրինակ, 1905 թ. 1865 թ. համեմատությամբ ավելի քան 10,7 հազարով կրճատվել է մանր եղջերավոր անասունների զվաքանակը, իսկ 1913 թ. այդ թիվը պակասել է շուրջ 114 հազարով կամ 58,5%-ով:

Այդ փոփոխությունները պայմանավորված էին մի կողմից, անասնապահության ավելի ներգրավվածով ապրանքարդամական հարաբերությունների մեջ, իսկ մյուս կողմից՝ կիսաբուծվորական ու քոչվորական անասնապահության քայքայումով: Նստակյաց բնակիչները, հատկապես ունևորները, առևտրական նպատակով ավելացնում էին խոշոր եղջերավոր անասունների զվաքանակը:

Ընդ որում 1913 թ. անասնազվաքանակի աճի ցուցանիշներն ավելի ցածր են եղել, քան 1865 թ. և 1905 թ. համա-

⁹¹ Տե՛ս նույն տեղում:

պատասխան ցուցանիշները, ինչի հետևանքով գավառում զգալիորեն կրճատվել է անասունների գլխաքանակը: Այսպես, ինչպես ցույց է տալիս աղյուսակ 16-ը, ամբողջ անասունների գլխաքանակը 1913 թ.⁹⁵ 1865 թ. և 1905 թ. համեմատությամբ կրճատվել է համապատասխանաբար 1,7 և 1,7 անգամ: Նույն ժամանակամիջոցում խոշոր եղջերավոր անասունների անկումը կազմել է 1,7 և 1,8, մանր եղջերավոր անասուններին՝ 1,7 և 1,6, իսկ սմբակավորներին՝ 1,2 և 1,1 անգամ:

Դա պայմանավորված էր մի շարք պատճառներով: Նախ, արոտավայրերը և խոտհարքերը մշտապես կրճատվում էին, տեղը զիջելով վարելահողերին: Մշակաբույսերի ցանքատարածությունները հատկացվում էին հացահատիկային կուլտուրաներին:

1913 թ. երաշտի տարի էր: Ամբողջ ամառ ինչպես ողջ նահանգում, այնպես էլ Նոր Բայազետի գավառում անձրև չեկավ, գյուղացիները անգամ ցանած սերմնացույց չստացան⁹⁶: Նշված տարում ամբողջ գավառում ցանվել է 852993 փուփ հացահատիկ և հավաքվել է ընդամենը 1812531 փուփ⁹⁷: Միջին բերքատվությունը 1913 թ. կազմել է 2,1, 1912 թ. 4,0 փոքի դիմաց: Նույն տարում գավառում կուտակվել է 1692200 փուփ խոտ, 23150 փուփ վուլշ⁹⁸: Փաստորեն գյուղատնտեսության երկու ճյուղերն էլ անկում ապրեցին, ամենից շատ անասնապահությունը: Մի կողմից անասնակերի պակասի, մյուս կողմից էլ անասունների մեջ տարածված տարատեսակ հիվանդությունների պատճառով: Խոսքն այն մասին է, որ անասունների մի զգալի մասը հիվանդությունների պատճառով կոտորվեց, իսկ որոշ մասն էլ սուղ կերային բազայի բացակայությամբ հարկադիր մորթի ենթարկվեց:

Նոր Բայազետի գավառում բնակչության զբաղմունքում որոշակի տեղ ուներ նաև մեղվաբուծությունը: Այստեղ մեղվաբուծությամբ զբաղվել են դեռ շատ վաղ անցյալում: Տնտեսության այս ճյուղի զարգացմանը խթանել է գավառի տարածքի

⁹⁵ Տե՛ս ՉԱԱ, ֆ. 1284, ց. 1, գ. 15, ք. 2:

⁹⁶ Տե՛ս ՉԱԱ, ֆ. 1284, ց. 194, գ. 15, ք. 13-14:

⁹⁷ Տե՛ս ՉԱԱ, ֆ. 1284, ց. 194, գ. 15, ք. 15:

հարուստ մեղրախյութ պարունակող բուսատեսակների բազմազանությունը: Բայց և այնպես մեղվաբուծությունը սույն գավառում բարձր եկամտաբեր պարանբային ճյուղ չդարձավ և զուտ տեղական նշանակություն ունեցավ: Բավական է նշել, որ գավառում 1910 թ. մեղվաբուծական տնտեսություններում ստացվել էր ընդամենը 398 փուփ մեղր, որը կազմում էր Երևանի նահանգի ընդհանուրի (10112 փուփ) մոտ 4%-ը⁹⁹: 1913 թ. այստեղ մեղվաբուծությամբ զբաղվում էր միայն 32 գյուղ կամ հիշյալ նահանգի ընդհանուրի (338 գյուղ) 9,4%-ը, իսկ մեղվաբուծական տնտեսությունների (փեթականոց) թիվը կազմում էր 131 կամ նահանգի ամբողջ փեթականոցների (2365) 5,5%-ը: Նույն տարում շրջանակավոր փեթակների թիվը գավառում հասավ 360-ի, որը կազմում էր Երևանի նահանգի 7631 շրջանակավոր փեթակների 4,7%-ը¹⁰⁰:

Նոր Բայազետի գավառի բնակչության զբաղմունքի հնագույն և առաջատար ճյուղերից էր ձկնորսությունը: Բանն այն է, որ ուսումնասիրվող ժամանակաշրջանում նույնպես անասնապահությունը և հողագործությունը չէին ապահովում տեղացիների կենսապայմանները, ինչն էլ գետերի և Սևան լճի ափերին բնակվող մարդկանց համար ձկնորսությունը սևուկ ծեծք բերելու լուացուցիչ միջոց էր դարձնում:

1910 թ. Նոր Բայազետ քաղաքում ձկնորսությամբ զբաղվում էին 22 ձկնորսական բաժիններ, որոնցից 16-ը ծովափնյա (լճափնյա), իսկ 6-ը գետային շրջաններ էին: Սրանց մեջ չէին մտնում այն ձկնորսական 160 բաժինները, որոնք պատկանում էին լճափնյա գյուղերին¹⁰¹: Չկան որսը պետությունը վերահսկում էր¹⁰²:

⁹⁹ «Обзор Эриванской губернии за 1910 г.», с. 10:

¹⁰⁰ Տե՛ս ՉԱԱ, ֆ. 1284, ց. 194, գ. 15, ք. 17:

¹⁰¹ ՉԱԱ, ֆ. 1284, ց. 194, գ. 15, ք. 18, «Մշակ», 16 հունվարի, 1910 թ.:

¹⁰² Դարսկական տիրապետության օրոք Սևան լճում ձկնորսության իրավունք ստանալու համար բնակչությունը պարտավոր էր սարքարից վճարել 100 թուման: Տե՛ս «Դայ ժողովրդի պատմություն», հ. V, էջ 50:

Կառավարությունը 4 տարին մեկ⁹⁹ Սևանա լճի և նրա ավազանի մի քանի ձկնառատ գետերի ձկնորսության իրավունքը կապալով տալիս էր անհատ մարդկանց և ընկերություններին:

Կապալառուն վճարելով գանձարանին սահմանված հարկը, ինքն իր կողմից նույնպես կապալով էր տալիս լճի որսատեղիները (ավլաղները) մաս-մաս զանազան ցանկացողներին, գլխավորապես գյուղացիներին¹⁰⁰: Բացի այդ կային և այնպիսի գյուղեր, որոնց տրված էր լճի որսատեղիներից մի մասը՝ նրանց սակավահողության պատճառով: Դրանք էին Օրդաբլուև, Նորատոււը, Նաղեժդինոն, Բաշքենդը, Գյուլը, Ավդալաղալուն և այլն¹⁰¹: Սրանց ձկնորսական բաժինները կապալով էին տրված հատկապես գյուղական համայնքին և ոչ թե կողմնակի կամ անհատ մարդու: Դրանով հեշտացվում էր ինչպես հարկատուների եկամուտների մասին իրական պատկերացում կազմելը, այնպես էլ հարկի գանձման հաջողությունները: Տեղին է նշել, որ հաճախակի ընդունվում էին հարկային նորանոր որոշումներ, որոնք, որպես կանոն, չէին բխում հարկը հարկատուների կարողություններին մոտեցնելու, նրանց նյութական դրությունը բարելավելու շահերից, այլ միտված էին հարկային բեռը ծանրացնելուն:

Այսպես, 1913 թ. կառավարությունը 10%-ով բարձրացրեց գյուղատնտեսական որսատեղիների օգտվելու հարկը¹⁰²: Կասկած չկա, որ չքավոր գյուղացին անկարող էր վճարել հարկը: Մի քանի գյուղեր շուտով կամավոր կերպով իրաժարվում են կապալից, չկարողանալով վճարել մեծաքանակ հարկը: Ելակետ ընդունելով այս հանգամանքը կառավարությունը դիմում է ամենախիստ միջոցների՝ բռնի կերպով վերցնում է նաև Ցամաքաբերդ, Օրդաբլու, Բեղլու, Նորատուս, Բաշքենդ, Քյուզաջղ, Երանոս, Դարանլուղ, Գյոզալդարա, Անրագ-աղա, Զաղա և Շորժա գյուղերին պատկանող որսատեղիները¹⁰³:

⁹⁹ Դեսնագայում՝ տարին մեկ: Տե՛ս «Մշակ», 16 հունվարի, 1910 թ.:

¹⁰⁰ Տե՛ս «Մշակ», 3 հունվարի, 1874 թ., «Մշակ», 27 մարտի, 1898 թ.:

¹⁰¹ Տե՛ս ՉԱԱ, ֆ. 1284, ց. 194, գ. 15, թ. 18, «Մշակ», 16 հունիսի, 1910 թ.:

¹⁰² Տե՛ս «Չորիզոն», 4 հուլիսի, 1914 թ.:

¹⁰³ Տե՛ս նույն տեղում:

Այս բուրդից դժվար չէ կռահել, թե սոցիալական ինչպիսի վատթարագույն վիճակի մեջ էին հայտնվել իրենց որսատեղիներից օտարված վերագրյալ գյուղերի բնակիչները: Այս տեսակետից ուշագրավ տեղեկություն է հաղորդում Թիֆլիսում իրատարակվող «Չորիզոն» թերթը: «Այս գյուղերը, որ գլխաւորապէս ապրում էին ծովով, այն է՝ նաւագնացութեամբ ու ձկնորսութեամբ, այսպիսով զրկոււմ են միանգամայն ապրելու հնարաւորութիւնից, որովհետև մի կողմից կարծակերպոււմ է Սևանան շոգնեալային երթնելութիւն. միւս կողմից կառավարութիւնն է խլում նրանց եկամուտի միակ աղբիւրը՝ ծովը: Եւ եթե ի նկատի ունենանք և այն հանգամանքը, որ յիշեալ գիւղերից շատերի ամենալաւ հողերն են արտատեղիները վաղուց յատկացրել են մուղկաններին, իսկ նրանց բոլել անբերրի ու քարաշատ սարաւանջերը, այն ժամանակ պարզ կը լինի, թէ ինչպիսի դժարին կացութիւն է ստեղծոււմ քշւառ ու անօգնական գիւղացու համար»¹⁰⁴: Այս բնորոշումից հետո թերթը տեղեկացնում է. «Վաղ թէ ոչ այստեղ կը յայտնէի սովի ուրականսը, և աղքատացած բնակչութիւնը ոչ միայն չի կարող տնտեսապէս ու կուլտուրապէս առաջադիմել»¹⁰⁵, ոչ միայն չի կարող պետական հարկը վճարել, այլ և սովից կենսահանա»¹⁰⁶:

Չկնորսության տնտեսիկան եղել է չափազանց պրիմիտիվ, որոշ իմաստով էլ այն իրենից ներկայացրել է վտանգավոր զբաղմունք: Գետերում ձկան որսը կատարվում էր ձեռքի փոքր ուռկաններով, իսկ լճից ծով որսալու համար օգտագործում էին չայքասուն անունով մեծ ուռկան, որի լայնությունը 2,5, իսկ երկարությունը՝ 670 ավելի կամ պակաս սաժեճ¹⁰⁷: Դայազիության անխոք մշակ Դևոնդ Ալիշանը նկարագրում է, որ ձկան որսը Սևանա լճի վրա կատարվել է տարբեր ձևերով: Նա գրում է. «որսալող ձկանաց ալլեալ է ըստ ազգաց ձկանցն է, որ փոքր

¹⁰⁴ «Չորիզոն», 4 հուլիսի, 1914 թ.:

¹⁰⁵ Այս շրջանի հայրց միակնան դպրոցները գլխավորապես պահվում էին լճից ստացած եկամուտով: Եկամտի վերացումով, անշուշտ կփակվեին նաև այդ դպրոցները: Տե՛ս «Չորիզոն», 4 հուլիսի, 1914 թ.:

¹⁰⁶ «Չորիզոն», 4 հուլիսի, 1914 թ.:

¹⁰⁷ Տե՛ս «Մշակ», 3 հունվարի, 1874 թ.:

կարթու, և է որ երկաթայն միասայր կամ սլաքոք, զոր վարսեն ի ծուկնն անցւոր, կամ ժանեւոր տախտակօք, զոր նոյնպէս ի վերայ կորզեն, դարձեալ, երկայնածիզ ուռկանօք /աւելի քան զհազար Ձ/, զոր չարքանակ կողեն, և ցանցատեսակ կողովօք կամ պարկոք. այլ և ուր մարդք է խոտորեցուցանելով զըբացս գետակաց: Դարձեալ, և ըստ յիշեցելումն յաճախ առ նախնիս բարք գործելով. այսինքն ի ծովեզրն կամ ի գետս՝ ու դարավազ հոսանք իցեն ջուրք՝ շրջափակ գործել փոս, և ուռենի կամ այլ վայրենի ոստովք վանդակի ի վերայ ածել, ընդ որ հոսիցի ջուրն, և ձկունքն մնայցեն ի վերայ վանդակին և ըմբմնիցին: Այսպիսին էր Կռակծին¹⁰⁸, որսն որ հաւանօրէն իին անուն է ձկան...»¹⁰⁹:

Վերը շարադրանքից հետևում է, որ ձկնորսության իրավունքը բնության առարկա ժամանակաշրջանում ունեցել է սահմանափակ բնույթ: Լճի կենդանական աշխարհին չվնասելու համար պետությունը 3 տարին մեկ պաշտոնապես արգելում էր ձկան որսը¹¹⁰:

Բ) Արհեստները, արդյունաբերությունը և առևտուրը

Գյուղատնտեսության, առհասարակ տնտեսության նշանակալից առաջընթացն անհրաժեշտ տնտեսական և սոցիալական պայմաններ ստեղծեց նաև արհեստների զարգացման համար: Հատկանշական է, որ պարսկական տիրապետության օրոք տնտեսության այս ճյուղը զտնվում էր, մեղմ ասած, աննախնամեծի վիճակում: Արհեստավորական տեխնիկան պարզունակ էր, իշխում էր ձեռքի աշխատանքը, արտադրողականությունը շատ ցածր էր: Ի. Շոպենն իր աշխատության համապատասխան բաժնում խոսելով պարսից տիրապետության վերջին տարիներին Արևելյան Հայաստանում արհեստների մասին նշում է. «... այստեղի արհեստավորն առանց դազզափի,

գործիքների, ձեռքերով ու ոտքերով է աշխատում իր անհարմար շինվածքի վրա՝ աննկարագրելի ցանքերով...»¹¹¹:

Լ. Սարուխանյանը, վկայակոչելով Ի. Շոպենի այս տողերը՝ արհեստագործության վիճակի վերաբերյալ իր տեսակետը հիմնավորելու համար գրել է. «Տեղական բնակչության ցածր պահանջները մի կողմից, ֆեոդալական անջատվածությունը, պատերազմները և բնատնտեսության պայմաններում իրացման շուկայի սահմանափակությունը մյուս կողմից, անհարթահարելի խոչընդոտներ էին ստեղծում առևտրի ու արդյունաբերության առաջադիմության համար: Խանական միջնորմները բացառում էին կանոնավոր փոխանակության հնարավորությունները: Խանություններն ու մահալները ինքնամփոփ միավորներ էին և շարունակ ներհանության մեջ՝ միմյանց նկատմամբ»¹¹²:

Ռուսական տիրապետության ներքո բարենպաստ պայմաններ են ստեղծվում արհեստագործության զարգացման համար: Կայունացող արհեստագործությունը աստիճանաբար դուրս է մղում տնայնագործությանը: Արևելյան Հայաստանի սոցիալ-տնտեսական կյանքում արհեստների բնագավառում կատարված լուրջ փոփոխությունները տարակուսելի չէին նաև Լոր Բայազետի գավառի համար: Գոյություն ունեցող սակավաթիվ արհեստանոցների կողքին 1830-ական թվականների սկզբներին հիմնվում են նորերը: Արհեստագործության նկատելի առաջընթացը բնութագրվում է արհեստագործական բնույթի զբաղմունքներում բնակչության ընդգրկվածության զգալի աճով: Այդ բնագավառում զբաղվածների թիվն ավելանում է: Իրոք, եթե 1828 թ. ապագա Լոր Բայազետի գավառում զանազան արհեստներով (31 մասնագիտության) զբաղվածների ընդհանուր թիվը հասնում էր 110 մարդու, այդ թվում 20-ը՝ Դարաչխակի, իսկ 90-ը՝ Դրփուրլաղի մահալներում (ավելի քան 98% մահալական բնակչություն ունեցող Գյուլջուլի մահալում արհեստագործական արտադրություն չկար), ապա 1831 թ. գավառի երեք մահալներում միասին վերցրած կային 1273 արհեստավորներ,

¹⁰⁸ Կռակծին ոչ քե ձկան անուն է եղել, ինչպես կարծում է Դ. Ալիշանը, այլ որսատեղին: Մանրամասն տես *Ստ. Օրբելյան*, նշվ. աշխ., էջ 174:

¹⁰⁹ Դ. Ալիշան, Սիսական, էջ 29:

¹¹⁰ Տես «Մշակ», 19 նոյեմբերի, 1892 թ.:

¹¹¹ *H. Wonen*, նշվ. աշխ., էջ 842.

¹¹² *Լ. Սարուխանյան*, նշվ. աշխ., էջ 35:

այդ թվում 412-ը՝ Դարաչիչակի, 204-ը՝ Դրիսուրկադի, իսկ 639-ը՝ Գյուլչայի մահալներում¹¹³։ Ըստ այդ տվյալների չորս տարվա ընթացքում արհեստավորների ընդհանուր թիվն ավելացել է չուրջ 11,6 անգամ։ Նախկինի նման, արհեստավորները կազմակերպվում էին համքարություններում։ Արհեստանոցներում զբաղված էին սահմանափակ թվով մարդիկ՝ վարպետը, ենթավարպետը և աշակերտը։ Ամեն մի վարպետին միջին հաշվով ընկնում էր 1,2 ենթավարպետ և նույնքան աշակերտ։

Նոր Բայազետի գավառում կային մի քանի տասնյակի հասնող արհեստներ՝ 29-ը՝ Դարաչիչակի, 27-ը՝ Դրիսուրկադի և 49-ը՝ Գյուլչայի մահալներում¹¹⁴։ Բազմաթիվ արհեստների մեջ առավել տարածված էին ջուլիակությունը, բրուտագործությունը, կաշեգործությունը, դարբնությունը, կոշակարությունը, դերձակությունը, քարագործությունը, փայտագործությունը, թամբագործությունը, ներկարարությունը և այլն։ Տարատեսակ արհեստի ճյուղերից առավելապես լայն տարածում ուներ ջուլիակությունը։ Ջուլիակ-տնայնագործների թիվը Նոր Բայազետի գավառում 1831 թ. հասնում էր 577-ի, որը կազմում էր արհեստավորների ընդհանուր թվի 45,3%-ը¹¹⁵։ Տնայնագործական բնույթի այս «արտադրությունը» կոչված էր հոգալու ջուլիակ-տնայնագործների ընտանեկան կարիքները։ Առաջ անցնելով նշենք, որ 40-ական թվականներից արհեստի այդ ճյուղը դանդաղորեն սկսում է անկում ապրել՝ չդիմանալով ռուսական գործարանային էժան ապրանքների մրցակցությանը¹¹⁶։

Արևելյան Դայաստանում, մեև մեզ հետաքրքրող գավառում արհեստագործությունը առաջընթաց ապրեց հատկապես 50-60-ական թվականներին։ Ներքաշվելով շուկայական հարաբերությունների մեջ, արհեստագործությունը դառնում է բնակ-

չության արտադրական գործունեության կարևոր ճյուղերից մեկը։

Նոր Բայազետի գավառի բնակչության զբաղվածության կազմը կրում է զգալի փոփոխություններ։ Վիճակագրական տվյալներով, 1864 թ. այս գավառում բնակչության մեջ արհեստավորների թիվը հասնում էր 1467 մարդու (ընդհանուր բնակչության 2,0%-ը)¹¹⁷։

Արհեստագործության մեջ զբաղվածների ընդհանուր թվից 582-ը կամ 39,6%-ը բնակվում էր Նոր Բայազետ քաղաքում, իսկ 885-ը կամ 60,4%-ը՝ գավառի գյուղական բնակավայրերում։ Սա նշանակում է, որ 1864 թ. արհեստի բնագավառում ընդգրկված էր քաղաքի ամբողջ բնակչության 12,7%-ը, այսինքն՝ մոտավորապես միջին հաշվով յուրաքանչյուր 9 բնակչից մեկը զբաղվում էր արհեստով¹¹⁸։ Այս նույնը, էական տարբերությամբ, դրսևորվում է գավառի գյուղական բնակչության մոտ։

Վերջինիս կազմում արհեստավորներին բաժին էր ընկնում չուրջ 13%-ը, այլ խոսքով՝ միջին հաշվով 77,3 բնակչից մեկը ընդգրկված էր արհեստագործության մեջ։ Ինչ վերաբերում է գավառի ամբողջ բնակչությանը, ապա միջին հաշվով մոտավորապես 50 մարդուց մեկը արհեստավոր էր¹¹⁹։

Արհեստագործական բնույթի զբաղմունքներում բնակչության ընդգրկվածության ցածր մակարդակը պայմանավորված էր մի շարք պատճառներով.

ա) Դասարակական արտադրության հիմնական ճյուղը գյուղատնտեսությունն էր, ուր գերիշխում էր ձեռքի ծանր աշխատանքը, որի հետևանքով բնակչության մեծ մասը զբաղվում էր գյուղատնտեսությամբ։

բ) Բնատնտեսության պայմաններում իրացման շուկայի սահմանափակությունը։ Դողագործը սակավ չափով էր կապ-

¹¹³ Տես ՉԱԱ, ֆ. 90, ց. 1, գ. 83, ք. 403, գ. 89, ք. 324, գ. 319, ք. 82։

¹¹⁴ Տես ՉԱԱ, ֆ. 90, ց. 1, գ. 83, ք. 403, գ. 89, ք. 324, գ. 319, ք. 82, "Городское население Эриванской губернии", СПб., 1867г. с. 14-15։

¹¹⁵ Տես ՉԱԱ, ֆ. 90, ց. 1, գ. 83, ք. 403, գ. 89, ք. 324, գ. 319, ք. 82։

¹¹⁶ Տես *H. Шонен*, նշվ. աշխ., էջ 851-852, «Գայ ժողովրդի պատմություն», հ. V, էջ 259։

¹¹⁷ Հավարկը կատարվել է ըստ ՉԱԱ, ֆ. 125, ց. 1, գ. 4, 2-րդ մաս, քր. 116, 157, 198-199 տվյալների։

¹¹⁸ Հավարկը կատարվել է նույն աղբյուրների տվյալների հիման վրա։

¹¹⁹ Հավարկը կատարվել է նույն աղբյուրների տվյալների հիման վրա։

ված շուկայի հետ: Նահապետական սովորույթների կենսունակությամբ գրեթե յուրաքանչյուր ընտանիք ուներ արհեստագործական անհրաժեշտ գործիքները, ասել է թե սեփական արհեստագործական արտադրությունը և հոգում էր իր տնտեսության ու կենցաղի պահանջները:

Այլ կերպ ասած՝ արհեստի շատ ճյուղեր տակավին չէին բաժանվել գյուղատնտեսությունից: Այս կապակցությամբ, անհրաժեշտ ենք համարում վկայաբերել Խ. Աբովյանին: «Մեկ փարի բան բազարից տուն չէր գալ բացի իրենց հագնելու շորիցը, են էլ կտավ, շապկացու, չուխացու, շառը հարսներն ու աղջկերքն էին նրանց համար մանուս, գործուս, կարուս»¹²⁰:

գ) Արհեստավորներն իրենց արհեստով զբաղվում էին միայն ծննանը, տարվա մյուս եղանակներին պարապում էին գյուղատնտեսությամբ¹²¹:

դ) Բնակչության գնդուճակության ցածր մակարդակը, այսինքն՝ արդյունաբերական ապրանքների նկատմամբ նվազ պահանջարկը:

ե) Հարմարավետ ճանապարհների բացակայությունը և այլն:

Այսպիսով, արհեստագործությունը հարզի էր ինչպես քաղաքում, այնպես էլ գյուղերում և ամբողջ գավառի տնտեսական կյանքում խաղում էր որոշակի դեր: Ըստ վիճակագրական տվյալների 1864 թ. գավառի արհեստավորների ապրանքների ամբողջ առևտրի շրջանառության գումարը կազմել է 17590 ռուբլի¹²²:

XIX դ. 70-ական թվականներից Արևելյան Հայաստանի սոցիալ-տնտեսական կյանքում տեղի ունեցան նշանակալից տեղաշարժեր, երբ ռուսական կապիտալիզմը սկսեց ավելի հաստատուն քայլերով թափանցել Արևելյան Հայաստան և մեծածախն արդյունաբերական ապրանքների արտահանման ծավալները:

¹²⁰ Խ. Աբովյան, Կերք Հայաստանի, Ե., 1939, էջ 30:

¹²¹ Տես «Մշակ», 16 մայիսի, 1887 թ.:

¹²² ՀԱԱ, ֆ. 125, ց. 1, գ. 4, 2-րդ մաս, ք. 157:

Այդ ազդեցությունից յուրահատուկ փոփոխություններ կրեց նաև արհեստագործական արտադրությունը: Ռուսական ավելի էժան և համեմատաբար ավելի որակյալ գործարանային արտադրանքի նկատմամբ արհեստագործականը դարձավ նվազ մրցունակ: Խոսքն այն մասին է, որ դարավերջին արհեստները կրճատվեցին, արտադրության մի շարք ճյուղերում բուլղորվին վերացան, իսկ որոշ տեսակներ վերադարձան ավանդական կարգավիճակին՝ տնայնագործությանը:

Միաժամանակ երևան եկան արհեստի նոր ճյուղեր, որոնք դուրս մղելով ասպարեզից մանր ու միջին արտադրողներին, նպաստեցին Ֆարքիկագործարանային տիպի ձեռնարկությունների առաջադիմությանը:

Այսպիսով, Արևելյան Հայաստանի արդյունաբերությունը, թեև դանդաղ, բայց նայնպես ներգրավվում էր կապիտալիստական հարաբերությունների անշրջելի հորձանուտի մեջ: Նման պայմաններում, օրինաչափ էր երևանի նահանգի տարածքում Ֆարքիկա-գործարանների և նրանցում զբաղվածների թվաքանակի անընդհատ աճը:

1888 թ. այդպիսի Ֆարքիկագործարանային ձեռնարկությունների թիվը երևանի նահանգում հասնում էր 2723-ի, որոնցում աշխատում էր 4745 բանվոր, իսկ 1913 թ. հաշվվում էր 3622 ձեռնարկություն՝ 7759 բանվորով¹²³:

Այս նույն գործընթացները, չնչին տարբերությամբ, դրսևավորվում են և՛որ Բայազետի գավառում: Ընդ որում այդ տարբերություններն ակնառու էին նրանով, որ ինչպես երևանի նահանգի մյուս գավառներում, քաջառությանը երևան քաղաքի, այնպես էլ խնդրո առարկա գավառում դրամատերերը չիմենեցին ձեռնարկություններ գործարանային իմաստով:

Ընդհանրապես գերակայում էին մանր ու միջին արդյունաբերական ձեռնարկությունները՝ պարզամաս կառուցվածքով, ցածր արտադրողականությամբ, և դրանցից ոչ բուլղորն էին գործարանային բնույթի:

Այլ խոսքով՝ քաղաքում և գյուղերում կային տասնյակ մանր ու միջին արհեստանոցներ և տնայնագործական ձեռնար-

¹²³ Տես ՀԱԱ, ֆ. 1284, ց. 223, գ. 125, ք. 32-35, գ. 194, գ. 15, ք. 33:

600,0, իսկ գյուղական բնակավայրում (527 ձեռնարկություն) 310,1 բնակիչ, 1888 թ. համապատասխանաբար՝ 463,0 և 360,2 բնակչի դիմաց¹²⁶:

բ) Բանվորների թիվն ավելացել է 97 մարդով (6-ը 6,2%-ը՝ քաղաքում, 91-ը՝ 93,8%-ը՝ գյուղական բնակավայրերում) կամ 1,2 անգամ:

Յուրաքանչյուր ձեռնարկությունում տարեկան, միջին հաշվով, զբաղված բանվորների թիվը եղել է մոտ 1,9, այդ թվում քաղաքում՝ 2, գյուղական բնակավայրերում՝ 1,8:

Ամբողջ նահանգի սահմաններում այդ փոփոխությունները դրսևորվել են գրեթե նույն ընդգծվածությամբ: Այդ ընթացքում նահանգի գործարանների թիվն աճել է 1,3 անգամ, բանվորներինը՝ 1,6 անգամ, իսկ միջին զբաղվածությունը կազմել է 2,1 մարդ: Ինչ վերաբերում է բնակչության շնչի հաշվով գործարանների թվին, ապա պաշտոնական վիճակագրական տվյալներով 1888 թ., միջին հաշվով, մեկ գործարանին բաժին էր ընկնում 250,2, իսկ 1913 թ.՝ 295,3 բնակիչ¹²⁶:

Ընդ որում Նոր Բայազետի գավառը բնութագրվում էր արդյունաբերական բնույթի զբաղմունքներում ընդգրկված բնակչության համեմատաբար անենացածր ցուցանիշներով, քան երևանի նահանգն ամբողջությամբ վերցրած, կամ նրա գավառները: Օրինակ, 1888 թ. այդ ցուցանիշը նահանգում կազմում էր 260,2 մարդ, Սուրմալուի գավառում՝ 263,2, Ալեքսանդրապոլում՝ 329,1¹²⁷: Փոքր շեղումներով հանդերձ այս վիճակը պահպանվել է նաև հետագա տարիներին: Այս հանգամանքը պայմանավորված էր Նոր Բայազետի գավառի գործարանային արդյունաբերության թույլ զարգացումով՝ հասարակական արտադրության վճռական ճյուղը գյուղատնտեսությունն էր:

¹²⁶ Դաշվարկը կատարվել է ըստ ԳԱԱ, ֆ. 1284, ց. 194, գ. 15, ք. 33, գ. 223, գ. 125, ք. 32-35, "Кавказский календарь на 1914 г.", с. 122-135 տվյալների:

¹²⁷ Դաշվարկը կատարվել է ԳԱԱ, ֆ. 1284, ց. 223, գ. 125, ք. 32-35, "Кавказский календарь на 1914 г.", с. 134-135 տվյալների:

¹²⁸ Տես ԳԱԱ, ֆ. 1284, ց. 223, գ. 125, ք. 32:

Նոր Բայազետի գավառի այսպես կոչված ֆաբրիկա-գործարանների արտադրանքը իրացվում էր ինչպես նահանգի ներսում, այնպես էլ նրա սահմաններից դուրս, յուրաքանչյուր տարի ավելացնելով դրամական շրջապտույտի գումարը, որն արդեն 1913 թ. կազմում էր 1103959 ռուբլի, 1888 թ. 106890 ռուբլու դիմաց¹²⁸:

Այդ ամենը ցույց է տալիս, որ մինչև XX դ. երկրորդ տասնամյակի սկիզբը խնդրո առարկա գավառում արդյունաբերությունը դեռևս չափազանց թույլ էր զարգացած:

Այժմ անդրադառնանք գավառի արդյունաբերության հարցին ըստ առանձին ճյուղերի (տես աղյուսակ 18):

Պարզ երևում է, որ ինչպես քաղաքում, այնպես էլ գյուղական բնակավայրերում այսպես կոչված արդյունաբերական ձեռնարկությունների մեջ մեծ թիվ են կազմել ալրադացները: 1912 թ. այդպիսի ձեռնարկությունների թիվը հասնում էր 494-ի (8-ը կամ 1,6%-ը քաղաքում, 486-ը կամ 98,4%-ը գյուղերում) 500 աշխատողներով (10-ը կամ 2%-ը քաղաքում, 490-ը կամ 98%-ը գյուղերում), 1896 թ. կար 484 ալրադաց (7-ը կամ 1,4%-ը քաղաքում, 474-ը կամ 98,6%-ը գյուղերում), որոնցում աշխատում էր 972 բանվոր (14-ը կամ 1,4%-ը քաղաքում, 958-ը կամ 98,6%-ը գյուղերում): Նշված տվյալներից երևում է, որ 1912 թ. այս ոլորտում ընդգրկված աշխատողների թիվը 1896 թ. դիմաց ավելի փոքր ցուցանիշ ունի: Բանն այն է, որ XX դ. սկզբներին արդեն կայանում են խոշոր ձեռնարկությունները, կրճատվում է ձեռքի աշխատանքի բաժինը, կատարելագործվում է նրանց արտադրական գործունեությունը: Խոսքը վերաբերում է նաև այս և մյուս ճյուղերին: Բազմաթիվ օրինակ-

¹²⁸ Տես ԳԱԱ, ֆ. 1284, ց. 194, գ. 15, ք. 33, գ. 223, գ. 125, ք. 33:

¹²⁹ Աղյուսակը կազմվել է հետևյալ աղբյուրների՝ ԳԱԱ, ֆ. 1284, ց. 194, գ. 15, ք. 33, գ. 223, գ. 125, ք. 32-35, 50, ֆ. 125, գ. 1, գ. 4, 2-րդ մաս, ք. 197-198, "Обзор Эриванской губернии за 1889 г." (առանց էականման); "Обзор Эриванской губернии за 1896 г." (առանց էականման); "Обзор Эриванской губернии за 1900-й г." (առանց էականման); "Обзор Эриванской губернии за 1910 г." (առանց էականման); "Обзор Эриванской губернии за 1912 г." (առանց էականման) տվյալների հիման վրա:

գորգագործությունը: Դա պայմանավորված էր նրանով, որ տեղական բուրդը (մինչ այդ հիմնականում արտահանվում էր) տեղում պատրաստի արտադրանքի վերածելու ուղղությամբ սկսեցին զբաղվել գնորդ-առևտրականները:

1901 թ. մի քանի գնորդ-առևտրականներ Նոր Բայազետ քաղաքում ստեղծում են ընկերություն՝ նպատակ ունենալով շահագործել տեղական արդյունաբերության ճյուղերից մեկը, այն է՝ բրդի արդյունաբերությունը¹³²:

Ընկերության անդամները մեծ մասամբ տեղացի վաճառականներն էին, իսկ մի քանիսը՝ երևանցիներ: Անդամական վճարը, դրամագույն կազմելու համար 100ռ. էր: Գլխավոր գնորդ-առևտրական և նախածեռնող Չայրապետ Խաչատրյանը (Կոլոտ Չայրապետ) վճարում է 400 ռ.¹³³: Նպատակ դնելով շահագործել, ինչպես նշեցինք բրդի արդյունաբերությունը, ընկերությունը ծրագրել էր այդ անել գորգագործության արհեստի միջոցով, կցելով դրան մի էական նպատակ՝ նա տարածել այդ արհեստագործությունը տեղացի կանանց մեջ: «Մեզանում, կարդում ենք «Մշակ» թերթում, շատ հարմար է տարածել այդ արհեստը, որովհետև ամեն տուն ունի իր բուրդը, որը շատ էժան գնով ծախում է իբրև հում նյութ»¹³⁴:

Նոր Բայազետում, Բասարզեչարում և գավառի այլ բնակավայրերում գնորդ-առևտրականները հիմնեցին արհեստանոցներ և կազմակերպեցին կենտրոնացված մանուֆակտուրա: Նրանք տալիս էին գործավարներին հումք, պատվիրում գորգերի չափերն ու նկարները, հետևում աշխատանքի ընթացքին և, վճարելով չնչին գումար, գնում արտադրանքը վաճառքի հանելու համար¹³⁵:

Գավառի ողջ տարածքում սկսեց արագորեն մեծանալ գորգագործական տնտեսությունների թիվը: Արդեն 1913 թ. այդպիսի տնտեսությունների թիվը հասավ 710-ի, իսկ արտադրած գորգերի արժեքը՝ 14132 ռ.¹³⁶:

¹³² Տե՛ս «Մշակ», 13 հոկտեմբերի, 1901 թ.:

¹³³ Տե՛ս «Մշակ», 27 հունվարի, 1906 թ.:

¹³⁴ Տե՛ս «Մշակ», 13 հոկտեմբերի, 1901 թ.:

¹³⁵ Տե՛ս նույն տեղում:

¹³⁶ Տե՛ս ՉԱԱ, ֆ. 1284, ց. 194, գ. 15, ք. 17:

Նոր Բայազետի գավառի տնտեսության մյուս ճյուղը առևտուրն էր: Գյուղատնտեսության և արհեստագործության առաջընթացը խթանում էր ներքին և արտաքին առևտրի զարգացմանը, ապրանքարամական և ապրանքաշուկայական հարաբերությունների ծավալմանը:

Վիճակագրական տվյալների հիման վրա բնակչության զբաղվածությունը ըստ առևտրի բնագավառի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այստեղ գնորդ-առևտրականների դասը մշտապես աճել է: Բանն այն է, որ արհեստների և ընդհանրապես տնտեսության զարգացմանը համընթաց հետզհետե ապրանքների իրացումը կատարում էին ոչ թե արհեստավորները կամ նյութական արժեք ստեղծողները, այլ հատուկ մարդիկ, որոնք զբաղվում էին առևտրով: Չնավորվել էր առևտրականների բավական կայուն շերտը, որը առևտրի և այլ ճանապարհներով կուտակել էր զգալի դրամական միջոցներ:

Այժի ընկան հատկապես դրամատեր-առևտրականներ Աստոմյանները, Աֆրիկյանները, Մաթևոսյանները, Արծրունիները, Ազիզյանները, Մաղաքյանները, Բատիկյանները, Տեր-Մահակյանները, Գեղամյանները և ուրիշներ: Ուշագրավ է, որ նրանցից շատերն ունեին մանրածախ խանութներ նաև Անդրհովվասի արդյունաբերական կենտրոններում և նավահանգստային քաղաքներում: Երևանի նահանգում և Անդրկովկասի արդյունաբերական ու առևտրական կենտրոններում հանրահայտ անուն էր մեծահարուստ և անզուգական բարերար Չայրապետ Խաչատրյանը (Կոլոտ Չայրապետ):

Առևտրի բնագավառում, քացի պրոֆեսիոնալ առևտրականներից ընդգրկված էին նաև գյուղացիներ և արհեստավորներ՝ առևտուրը դարձնելով իրենց հիմնական զբաղմունքը: 1882 թ. օգոստոսի 2-ին «Մշակ» թերթը Նոր Բայազետի գավառին վերաբերվող հրապարակման մեջ գրում է. «Առևտուրը զավառում բավական արդյունավետ զբաղմունք է: Դողագործությունը և արհեստները կորցրել են իրենց նշանակությունը: Դողագործները և արհեստավորները թողնում են իրենց զբաղմունքը և ձեռք գարկում հանգիստ ապրուստի՝ առևտրի»¹³⁷:

¹³⁷ «Մշակ», 2 օգոստոսի, 1882 թ.:

Սրանք հիմնականում շրջիկ առևտրականներն էին և մանրավաճառները:

Սևևտրավաշխատուական կապիտալը թափանցում էր գյուղ: Փոխվում էր գյուղատնտեսության բնույթը: Տնտեսության այս շյուղը աստիճանաբար դուրս էր գալիս բնամթերային վիճակից և ավելի ու ավելի էր ապրանքային բնույթ ստանում:

Ապրանքադրամական հարաբերությունների ծավալման պայմաններում գյուղացին սկսում էր ավելի խիստ կերպով զգալ փողի աճող ազդեցությունը և նրա կենսական անհրաժեշտությունը: Դա պայմանավորված էր նրանով, որ շարունակաբար նրա դրամական հարկերն ու տուրքերը ավելանում էին, ինչպես և աճում էր ոչ տեղական ապրանքների (հիմնականում արդյունաբերական) նկատմամբ պահանջը: Այլ խոսքով՝ գյուղացին այլևս չէր կարող միայն բնատնտեսության վրա հենվել: Նրա կյանքում գյուղատնտեսական և արհեստագործական զբաղմունքներից բացի, էական նշանակություն ուներ նաև առևտուրը: Այս բոլորից դժվար չէ կռահել, թե ինչու գյուղացին պարտադրված էր որպես ապրանք վաճառքի հանել իր գյուղատնտեսական և անասնապահական մթերքների, ինչպես նաև արհեստագործական արդյունքների մի մասը: Ներքին շուկայի հիմնական ապրանքները կազմում էին հացահատիկը, ալյուրը, ձուն, հալած յուղը, ձեթը, պանիրը, կարտոֆիլը, անասնակերը, անասունները (մանր և խոշոր եղջերավոր) և տարատեսակ արհեստագործական գործիքներն ու կենցաղային իրերը:

Սույն գավառի առևտրի գլխավոր կենտրոնը Նոր Բայազետ քաղաքն էր. այստեղ բազմաթիվ էին մեծածախ և մանրածախ առևտրի գրասենյակները, խանութները և արհեստանոցները, իհարկե, նաև իրապարհ-շուկան:

Շուկայի գործերը տնօրինում էր գավառապետի կողմից նշանակված կառավարիչը բազարչին, որը կոչվում էր բազարի արխատավ (базарный пристав): Նա հսկում էր շուկայում վաճառվող ապրանքների գների վրա և հետևում էր ընդհանուր կարգ ու կանոնի պահպանմանը: Բազարչին ուներ երկու օգնական՝ դեսյատնիկ չափերի ու կշիռների օրինակաճանությանը հետևելու համար¹³⁸:

¹³⁸ Տե՛ս «Մշակ», 5 նոյեմբերի, 1883 թ.:

Ըստ վիճակագրական տվյալների, 1886 թ. Նոր Բայազետ քաղաքի բնակչության մեջ (7488 շուկա) առևտրականների թիվը հասնում էր 200 մարդու (բնակչության շուրջ 2,7%-ը)¹³⁹: Մեկ տարի անց՝ 1887 թ. քաղաքի բնակչության զբաղվածությունը ըստ զբաղմունքի առանձին բնագավառների բաշխված էր հետևյալ կերպ. 1/10-ը՝ արհեստավորներ, 1/10-ը՝ առևտրականներ, 1/10-ը՝ ծառայողներ, իսկ մնացածը՝ հողագործներ¹⁴⁰:

Քաղաքի ներքին առևտրի հիմնական ապրանքները կազմում էին գյուղատնտեսական մթերքները, գյուղատնտեսական ու այլ տեսակի աշխատանքի գործիքները և տնտեսության մեջ ու կենցաղում գործածվող առաջին անհրաժեշտության ապրանքները:

Այսպիսով, գավառի ներսում կատարվող առևտուրը խարսխված էր գյուղի և քաղաքի միջև կատարվող ապրանքափոխանակության ու քաղաքի արհեստագործության մանր ապրանքային արտադրության վրա: Գյուղը աստիճանաբար կապվում էր քաղաքի հետ՝ վաճառքի հանելով երկրագործական և անասնապահական մթերքներ, փոխարենը քաղաքից գնելով արհեստագործական ապրանքներ:

Չնայած այս բոլորին, ներքին առևտուրը չափազանց թույլ էր: Դա պետք է բացատրել մի շարք պատճառներով. ա) Ապրանքադրամական հարաբերությունները դեռ չէին ամրապնդվել: Արհեստագործությունը, որը ցածր մակարդակի վրա էր, շարունակում էր գյուղացու տնտեսական կյանքում որոշակի դեր խաղալ: բ) Գավառը գտնվում էր բնատնտեսության պայմաններում, նրա առանձին ենթաբաղաճանների և բնակավայրերի միջև եղած կապերը թույլ էին, միասնական շուկա չկար: գ) Ներքին առևտրի ապրանքները հիմնականում շուկայի համար մեծ պահանջարկ չներկայացնող գյուղատնտեսական և արհեստավորական արտադրանքներ էին: դ) Հափի ու կշռի տեղական տարատեսակները: ե) Տեղական ճանապարհները չափազանց անբարեկարգ էին: Ըստ Ե. Լալայանի. «Գյուղերի միջև ձգում

¹³⁹ Տե՛ս «Մշակ», 20 նոյեմբերի, 1886 թ.:

¹⁴⁰ Տե՛ս «Մշակ», 16 մայիսի, 1887 թ.:

են նեղ կածաններ, տեղ-տեղ էլ սայլի հասարակ ճանապարհ»¹⁴¹, որոնց մեծ մասը ծնունդն անսնցանելի էր դառնում:

XIX դ. երկրորդ կեսին և XX դ. սկզբներին գավառի առևտրային տնտեսության մեջ առավելապես աճում էր արտահանումների ծավալը, այսինքն՝ արտադրված ապրանքները և գյուղատնտեսական մթերքները հանվում էին առավելապես արտաքին շուկա: Սրա հետ կապված հազիվ թե կարելի է ամեն ինչ հանգեցնել գավառի ներսում արտադրվող ապրանքների մրցունակությանը ինչպես արժեքային, այնպես էլ որակական ցուցանիշների առումով և մեծ պահանջարկ ունենալուն, որոնք, անշուշտ, չափազանց կարևոր են: Սակայն չենք կարող անտեսել մի ոչ անկարևոր հանգամանք ևս:

Խոսքը վերաբերում է գավառն արտաքին աշխարհի հետ կապող հաղորդակցության բարեկարգ ճանապարհներին:

Այս տեսակետից անհրաժեշտ ենք համարում նշել, որ Նոր Բայազետի գավառը հաղորդակցվում էր ինչպես նահանգի մյուս գավառների հետ. «Նոր-Բայազետի գավառը կառքի ճանապարհով հաղորդակցում է Երևան քաղաքի, Աղեքսանդրապոլի գավառի Ղարաքիլիսայի երկաթուղու կայարանի և Շարուր-Ղարապետգետի գավառի Բաշ-Նորաշեն գիւղի հետ: Դեպի Երևան և դեպի Ղարաքիլիսա կան փոստային կառքեր և կայարաններ, թե՛ ճանապարհով ոչ ամբողջովին խճուղի է: Գավառի կենդրոնական քաղաք Նոր-Բայազետը հեռու է Երևանից 116 1/4, Ղարաքիլիսայից 130 1/2, և Բաշ-Նորաշենից 130 վերստով»¹⁴², այնպես էլ Երևան-Ելենովկա-Դիլիջան-Աղստաֆա-Թիֆլիս մայրուղիով¹⁴³ կապված էր Անդրկովկասի արդյունաբերական և առևտրական կենտրոնների, նույնպես և Աև ծովի առափնյա շրջանների նավահանգստային առևտրական քաղաքների և հեռավոր արտերկրների հետ: Այս գլխավոր ճանապարհից բացի, գավառը Դվին-Պարտավ ճանապարհի միջոցով կապվում

էր Կուր գետի ավազանի և Կասպից ծովի առափնյա շրջանների հետ:

Քարավանային բանուկ ճանապարհների վրա շինվում էին ընդարձակ իջևաններ ճամփորդների և զրաստների հանգստանալու և կերակրվելու հարմարություններով: Սույն գավառից արտաքին շուկա էին արտահանվում վերամշակված կաշի, ծիրայուղ, ծուկ, ծու, հալած յուղ, հացահատիկ (հիմնականում ցորեն և ալյուր), ներկեր, գորգեր, անասուններ (մանր և խոշոր եղջերավոր) և այլն:

Արտաքին շուկայում մեծ պահանջ կար հատկապես ծիրայուղի նկատմամբ: Նոր Բայազետի գավառը տարեկան 2000-3000 փուփ կտավատի և քունջուփի ծիրայուղ էր ուղարկում Անդրկովկասի և Ռուսաստանի տարբեր շրջաններ, անգամ եվրոպական մի շարք երկրներ՝ Ֆրանսիա, Լեհաստան և այլուր¹⁴⁴:

Ուշագրավ է, որ գավառից արտահանվել է նաև չվերամշակված գյուղատնտեսական արժեքավոր հումք: Օրինակ, նորբայազետցի առևտրական Ա. Մալաքյանը կտավատի խալվարը (1 խալվար¹⁴⁵ կտավատից ստացվում էր 7 փուփ ձեթ, իսկ ձեթի փուփը արժեր 2 ռ. 30 կոպ. մինչև 3 ռուբլի)¹⁴⁶ տեղացիներին 18-20 ռուբլով գնում էր Բաթումում վաճառելու համար¹⁴⁷: Սակայն այս ժամանակահատվածում նման ձեռնարկումները հատուկենտ էին և հետագա զարգացում չստացան:

Գավառի առևտրականների եկամուտների հաշվեկշռում մեծ էր ձկան առևտրից ստացված շահույթը¹⁴⁸:

¹⁴⁴ Տես «Մշակ», 16 մայիսի, 1887 թ.:

¹⁴⁵ 1 խալվարը հավասար է 500 կգ-ի: Խալվարը նաև տարածության չափ էր և հավասար էր 4 օրավար հողատարածության կամ 5000 քառ. սաժենի: Տես «Չայ ժողովրդի պատմություն», հ. V, էջ 26:

¹⁴⁶ Տես «Մշակ», 3 փետրվարի, 1890 թ.:

¹⁴⁷ Տես «Մշակ», 12 նոյեմբերի, 1887 թ.:

¹⁴⁸ Գնուց ի վեր երկրի սահմաններից դուրս վաճառվել է Սևանից որսած իշխան ծուկը: Այս մասին հետաքրքիր դիտողություններ ունի Ղևոնդ Ալիշանը: Եւ նկատել է, որ Սևան լճում որսացող իշխան ծուկը վաճառվել է Մյունիխից դուրս գտնվող երկրներում: «... և այս վաճառ այնուցիկ, որոց որսացեալ բազմութեամբ տանին քարձ բան աղած յայլ եւ

¹⁴¹ Ե. Լալայան, նշվ. աշխ., էջ 102:

¹⁴² Նույն տեղում:

¹⁴³ Ելենովկայով անցնող Երևան-Թիֆլիս ճանապարհը կոչվել է արքունական: Նոր Բայազետ քաղաքը 30 վերստ հեռու էր ընկած այս ճանապարհից:

Բավական է նշել, որ 1913 թ. այստեղ ձկնորսությանը զբաղվող 182 (160-ը՝ գավառում, 22-ը՝ Նոր Բայազետ քաղաքում) կապալառուները որսացել են 13900 փուք ձուկ, գլխավորապես իշխան, որի վաճառքից ստացված տարեկան շրջանառության գումարը կազմել է 55600 ռուբլի¹⁴⁹: Իշխան ձուկը հիմնականում վաճառվում էր դրսում հատկապես Թիֆլիսում և Երևանում¹⁵⁰: Օգտվելով իշխան ձկան նկատմամբ շուկայի աճող պահանջներից կապալառուները¹⁵¹ անընդհատ քարծրացնում էին գինը, որը առաջացնում էր բնակչության, մասնավորապես աղքատ դասի իրավացի դժգոհությունը: Այսպես, վեց տարի շարունակ մինչև 1869 թ. իշխան ձուկը Թիֆլիսի շուկաներում վաճառվում էր 7 կոպեկով: Ասկայն կապալառուները ընկնելով գերշահույթի հետևից ձկան գինը հասցրեցին մինչև 40 կոպեկ¹⁵²: 1876 թ. գարնանը, Թիֆլիսի դուման, հաշվի առնելով բնակչության զանգվածային դժգոհությունը և նկատի ունենալով քաղաքի հասարակության կերակրատեսակում իշխան ձկան դերը, որպես քաղաքի հասարակության ներկայացուցչություն սահմանեց որոշակի գին՝ 10 կոպեկ¹⁵³:

Այս որոշումից հետո կապալառուների արծազանքն անսպասելի չէր: Պետական կալվածքների վարչությունը բողոքում է դումայի որոշման դեմ և նրան մեղադրում իր ազդեցության ոլորտներին չվերաբերող հարցերին խառնվելու համար, ընդգծելով որ նա բացի մսից և թխած հացից ուրիշ ուտելիքների

այլ կողման, մինչև ի Տփղիս և ի Գանձակ, և անդր ևս, իսկ ծովեզերայքն վասն առտուին պարենի իւրեանց որսան անմաքս»: Տե՛ս *Ղ. Ալիշան*, Միսական, էջ 29:

¹⁴⁹ Տե՛ս ՅԱԱ, ֆ. 1284, ց. 194, գ. 15, ք. 18:

¹⁵⁰ Լահանգի ներսում ձկան առևտրով զբաղվում էին այսպես կոչված էշակյիները: Տե՛ս «Մշակ», 16 մայիսի, 1887 թ.:

¹⁵¹ Պետական կալվածքների Մոդրկովկասյան վարչությունը Սևան լճի և մի քանի փոքր գետակների ձուկ որսալու իրավունքը կապալով տվել էր ներծակա գյուղերի բնակիչներին: Տե՛ս «Մշակ», 3 հունվարի, 1874 թ.:

¹⁵² Տե՛ս «Մշակ», 21 հոկտեմբերի, 1876 թ.:

¹⁵³ Տե՛ս նույն տեղում:

վրա իրավունք չունի որևէ գին նշանակել: Մինչդեռ դուման հիմնավոր կերպով ապացուցում է, որ ոչ միայն իրավունք ունի, այլև պարտավոր է հոգալ այն ամենի մասին, որ վերաբերում է քաղաքի ազգաբնակչության տնտեսական բարեկեցության հարցին:

Պետական կալվածքների վարչության և դումայի միջև ծագած տարաձայնությունը բննվեց նահանգական ատյանում, որի նախագահը նահանգապետն էր, իսկ քաղաքագլուխը անդամներից մեկը:

Նահանգական ատյանը ծայրերի մեծամասնությամբ պաշտպանեց կալվածքների վարչությանը, թեև նահանգապետը և քաղաքագլուխը համակարծիքի էին դումայի որոշման հետ¹⁵⁴:

Աճում էր նաև հացահատիկային կուլտուրաների (հիմնականում ցորեն) արտահանման ծավալը: Գավառն իր հացահատիկը արտահանում էր Երևանի նահանգի և հարևան գավառների հացասակավ շրջանները և անգամ արտերկրներ¹⁵⁵:

Արտահանման աշխուժացում ավելի շատ նկատվում էր հատկապես Դարաչիչակի ենթազավառում: «Մշակ» թերթը, ի ապացույց վերոհիշյալի, նշել է. «Դացի առատության տարիներում Դարաչիչակը միշտ մեծ քանակությամբ հաց է արտահանել դեպի այլ և այլ կողմեր - Երևան, Թիֆլիս և երբեմն նույնիսկ արտասահման: 1884 թ. հացահատիկի արտահանությունը այդ շրջանում սկսեց իսկայական քայլերով առաջ գնալ և 1885 թ. հասավ իր գագաթնակետին: Այդ տարում միլիոնավոր փութերով հացահատիկ արտահանվեց Դարաչիչակից դեպի արտասահման Փոթիի և Բարսումի վոյայով, և այդ քանակության մեջ մեծ բաժին ունեցան երևանաբնակ Ալոյան եղբայրները»¹⁵⁶:

Լայն տարածում էր ստացել նաև բրդի արտահանումը: Բուրդը բացի տեղային գործածությունից, զանազան գործվածքներ չլուխացու, շալ, գորգ, կարպետ, ջլակ, հագուստ և այլն պատրաստելու համար, ձեռքից ձեռք անցնելով իրև

¹⁵⁴ Տե՛ս նույն տեղում:

¹⁵⁵ Տե՛ս «Մշակ», 26 հոկտեմբերի, 1889 թ.:

¹⁵⁶ «Մշակ», 17 հոկտեմբերի, 1892 թ.:

առևտրի առարկա մասամբ արտահանվում էր: Արտահանման գլխավոր կենտրոնը Թիֆլիսն էր¹⁵⁷:

XX դ. սկզբին վերելք է ապրում գորգերի առևտուրը: Գնորդ-առևտրականները Նոր Բայազետի գավառում տարեկան գնում էին 15-17 հազար ռուբլու գորգ ու կարպետ և ուղարկում Կովկասի քաղաքներ, գերազանցապես Թիֆլիս կամ արտահանում Ռուսաստան ու արտասահման վաճառելու¹⁵⁸:

Առանձնակի տեղ էր զբաղվում զանազան կենդանիների կաշվի և մորթու արտահանումը: Բավական է նշել, որ Նոր Բայազետի գավառը տարեկան միջինը արտահանում էր 500-600 գունջի կաշի՝ 1000 ռուբլի արժողությամբ և 2000 աղվեսի մորթի՝ 3000 ռուբլի արժողությամբ¹⁵⁹:

Արտաքին շուկայում էլայն սպառման ապրանքներ էին նաև անասնաձեռքներից պանիրը և հալած յուղը, որոնք իրացվում էին Եվրոպական Ռուսաստանի արդյունաբերական և առևտրական կենտրոններում:

Գավառից տարեկան արտահանվում էր 1500 փուփ հալած յուղ՝ 1500 ռուբլի արժողությամբ: Աճեց նաև ձկնի արտահանումը¹⁶⁰: Տարեկան միջինը վաճառքի է հանվել ավելի քան 2000 ռուբլի արժողությամբ ձու¹⁶¹: Ավելի պատկերավոր դարձնելու համար նշենք, որ մինչև առաջին աշխարհամարտն այս գավառը անդրկովկասյան շուկաներ էր արտահանում տարեկան շուրջ 10 մլն. ձու¹⁶²:

Բավական ծավալում էր անասունների առևտուրը: Գնորդ-առևտրականներն ու հարուստ գյուղացիներն արգավանդ արուտավայրերում ու մարգագետիններում գիրացնում էին սեփա-

¹⁵⁷ Տե՛ս «Մշակ», 13 հոկտեմբերի, 1901 թ.:

¹⁵⁸ Տե՛ս «Չայ ժողովրդի պատմություն», հ. VI, էջ 310:

¹⁵⁹ Տե՛ս «Մշակ», 16 մայիսի, 1887 թ.:

¹⁶⁰ Նահանգի ներսում ձկնի առևտրով զբաղվում էին հիմնականում մանր առևտրականները կամ այսպես կոչված չավդարարները: Զվի առևտրով զբաղվելը համարվում էր չավդարարություն: Տե՛ս «Մշակ», 16 մայիսի, 1887 թ.:

¹⁶¹ Տե՛ս նույն տեղում:

¹⁶² Գ. Մարտիրոսյան, նշվ. աշխ., էջ 187:

կան ու գնած անասունները և ամեն տարի հազարներով վաճառում Անդրկովկասի ու Չայաստանի արդյունաբերական կենտրոններում¹⁶³:

Բավական է նշել, որ միայն 1887 թ. ներսի ու դրսի դրամատերերը գավառի գյուղացիներից պարտքի դիմաց վերցրեցին 10000 տավար ու նույնքան ոչխար և վաճառեցին Թիֆլիսում, 200-250 հազար ռուբլի արժողությամբ¹⁶⁴: Միաժամանակ կատարվում էր ապրանքների փոխանակում անասունների հետ: Հարուստ վաճառականներն մեծն առուի շարունակ իրենց ապրանքները փոխանակում էին գյուղացիների անասունների հետ և «չոգարություն» (անասնավաճառություն) էին անում¹⁶⁵:

Ապրանքաշուկայական հարաբերությունների վերելքն ընթանում էր Նոր Բայազետի գավառ ներկրվող ապրանքների ծավալների մեծացումով: Դրսից գավառ էին ներմուծվում առավելապես սպիրտային խմիչքներ, մրգեր, կտորեղեն, գորգեր, փայտ, մետաղյա և փայտյա զանազան ապրանքներ, հացահատիկ և այլն: Հարկ է նշել, որ հացահատիկ (հիմնականում ցորեն) ներկրվել է գլխավորապես Ռուսաստանից և Գանձակից, այն էլ հացի սակավ տարիներին:

Սկզբնաղբյուրների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ քննության առարկա ժամանակաշրջանում Նոր Բայազետի գավառում արտահանած ապրանքների ընդհանուր արժեքը գերազանցում էր ներմուծվող ապրանքների ընդհանուր արժեքին¹⁶⁶:

Փոխադրումները կատարվում էին տարվա բոլոր եղանակներին՝ սայլերով, ֆուրգոններով, կառքերով և սահնակներով: 1898 թ. գավառում հաշվվում էր 380 բեռնակառք, 3000 սայլ, որոնց տարեկան եկամուտը կազմում էր 241 հազար ռուբլի¹⁶⁷: Աշխարհագրական տեղաբաշխման առումով, փոխադրա-

¹⁶³ Տե՛ս «Չայ ժողովրդի պատմություն», հ. VI, էջ 68:

¹⁶⁴ Տե՛ս «Մշակ», 16 մայիսի, 1887 թ.:

¹⁶⁵ «Մշակ», 19 նոյեմբերի, 1892 թ.:

¹⁶⁶ Տե՛ս «Մշակ», 19 նոյեմբերի, 1887 թ.:

¹⁶⁷ Գ. Մարտիրոսյան, նշվ. աշխ., էջ 199:

միջոցները ցրված էին գավառով մեկ՝ հետևյալ կերպ. 1903 թ. եղել է 68 ֆուրգոն¹⁶⁸, որից 27-ը էլեկտրակայան, 10-ը Ալեքսանդրովկայան, 15-ը՝ Ներքին Ախտայան, 15-ը՝ Սուխոյ Ֆոնտանուն և 1-ը՝ Կոնստանտինովկայան¹⁶⁹, իսկ սայլեր՝ բոլոր գյուղերում, բացի Բյաքըրյանի գյուղական հասարակությունից¹⁷⁰: Նշված տարում կառուցված փոխադրումներով զբաղված էր 606 սայլ¹⁷¹:

Ֆուրգոններով բեռնափոխադրումներով զբաղվում էին մասնավորապես մոլոկանները: Նրանք 4 ձի լծած ֆուրգոնում բարձում էին 100-120 փուփ և վարձով տեղափոխելով, օրինակ, Երևանից Թիֆլիս առնում էին յուրաքանչյուր փոփ համար 50-60 կոպեկ վարձ: Նույնը անում էին և վերադարձին : Այդ գործողությունը տևում էր ընդամենը 15 օր¹⁷²:

Բեռնակրության համար գործածել են նաև ձի, ջորի, ավանակ և մասամբ եգ: Գրաստային փոխադրումները համեմատաբար ավելի էժան էին և շահավետ: Բանն այն է, որ Նոր Բայազետ քաղաքում և գավառի գյուղերում ճշված կենդանիների թիվը զգալիորեն շատ էր: Օրինակ, 1913 թ. սույն գավառում ձիերի և ավանակների ընդհանուր թիվը կազմում էր 15282 (12232 ձի, 3050 ավանակ), որից 450-ը¹⁷³ կամ մոտ 3%-ը քաղաքում:

Այսպես կոչված էշակչիները, ամեն տարի, ամառվա երեք ամսում 20-30 անգամ կրկնում էին իրենց երթևեկությունը (14-16 ժամվա ընթացքում 5-10 ավանակների մի բանի քարավաններ կտրում էին Գեղամա լեռները և իջնում Արարատյան դաշտ), բարձր ձուլը հասցնում Երևանի, Նախիջևանի, Իզդիրի և Էջմիածնի շուկաները, իսկ այնտեղից մրգեր, օդի, զինի, աղ էին բերում և վաճառում Նոր Բայազետի շուկայում և գավառի մյուս բնակավայրերում¹⁷⁴:

¹⁶⁸ Ֆուրգոնները ներմուծվում էին Գանձակից:

¹⁶⁹ Տե՛ս ՉԱԱ, ֆ. 94, ց. 5, գ. 1892, ք. 49-50:

¹⁷⁰ Տե՛ս Ե. Լալայան, Նշվ. աշխ., էջ 102:

¹⁷¹ Տե՛ս ՉԱԱ, ֆ. 94, ց. 5, գ. 86, ք. 15-16:

¹⁷² Տե՛ս «Մշակ», 20 հունիսի, 1889 թ.:

¹⁷³ Տե՛ս ՉԱԱ, ֆ. 1284, ց. 194, գ. 86, ք. 15-16:

¹⁷⁴ Տե՛ս ՉԱԱ, ֆ. 94, ց. 5, գ. 1892, ք. 50-52:

XX դ. առաջին տասնամյակի վերջերին Նոր Բայազետի գավառում ապրանքակապիտալիստական հարաբերությունների ձևավորմանը գործում մասնակցություն ունեցան նաև բանկերը: Նոր Բայազետ քաղաքում և գավառի մի շարք բնակավայրերում հիմնվեցին փոքր վարկային բանկեր, որոնք էլ ավելի զարկ տվեցին ներքին և արտաքին ապրանքաշրջանառության ծավալների մեծացմանը: Քաղաքում վարկային բանկ բացելու հարցը առաջին անգամ բարձրացվեց 1909 թ. օգոստոսի 19-ին, Երևանի պետական (արքունական) բանկի ներկայացուցիչ Գ. Ղարազյոզյանի կողմից¹⁷⁵: 1910 թ. ապրիլի 29-ին 40 անդամների մասնակցությամբ տեղի ունեցավ բանկի պաշտոնական քաջույնը:

Ըստ կանոնադրության¹⁷⁶ բանկը ունենալու էր երեք հոգուց բաղկացած վարչություն՝ նախագահ, գանձապահ և քարտուղար, ինչպես նաև 5-7 հոգուց կազմված խորհուրդ: Գաղտնի քվեարկությամբ ընտրվեցին վարչության նախագահ՝ Գ. Սալքյանը, գանձապահ՝ Տեր-Միքայելյանը և հաշվապահ՝ Գ. Տեր-Իսահակյանը:

Խորհրդի նախագահ ընտրվեց Գ. Սիմանյանը, անդամներ՝ Խ. Կուտուզյանը, Ա. Սարինգյուլյանը, Ս. Ենգոյանը և Ս. Ախիկյանը¹⁷⁷:

Այդպիսի փոքր վարկային ընկերություններ բացվեցին նաև գավառի ներքին Ախտա, Դալի-Ղարդաշ, Ղարաճուղ, Ներքին Ղարաճուղ գյուղերում¹⁷⁸: Պետական բանկի կողմից քաղաքի վարկային ընկերության վրա տեսչությունն իրականացնում էր Գ. Ղարազյոզյանը, իսկ գյուղերին՝ Գայդեմաշուկը¹⁷⁹:

Բանկերում դրամական միջոցները զոյանում էին փայա-

¹⁷⁵ Տե՛ս «Մշակ», 8 սեպտեմբերի, 1909 թ.:

¹⁷⁶ Գիծք է ծառայել Երևանի փոխադարձ վարկի ընկերության կանոնադրությունը: Տե՛ս «Մշակ», 16 հոկտեմբերի, 1912 թ.:

¹⁷⁷ Տե՛ս «Մշակ», 7 մայիսի, 1910 թ., «Մշակ», 30 օգոստոսի, 1912 թ.:

¹⁷⁸ Տե՛ս «Մշակ», 7 մայիսի, 1910 թ.:

¹⁷⁹ Տե՛ս «Մշակ», 13 ապրիլի, 1912 թ., «Մշակ», 21 փետրվարի, 1913 թ.:

տերերի (բաժնետերերի) դրամական ներդրումներից և պետական բանկից բաց թողնված գումարներից: Օրինակ, 1910 թ. Նոր Բայազետ քաղաքի վարկային բանկի համար իբրև հիմնական դրամազույս պետական բանկից բաց թողնվեց 4500 ռուբլի, 13 տարի ժամանակով 5 տարուց հետո մաս-մաս վճարելու պայմանով¹⁰⁰: Բացի այդ անդամագրվողները (ընկերության մեջ բացի առևտրականներից, կանոնադրության համաձայն, ընդունվում էին՝ հողագործներ, արհեստավորներ և ծառայողներ, որոնք ունեին որոշակի գումարի անշարժ գույք)¹⁰¹, անդամավճար էին դնում 10 ռուբլուց ոչ պակաս և 100 ռուբլուց ոչ ավելի¹⁰², վճարելով այդ գումարը 10 տարվա ընթացքում՝ տարեկան 10 ռուբլի, առաջին տարում միանվագ 10 ռուբլի, իսկ մնացած տարիներին՝ մաս-մաս 1 ռուբլի ամիսը, կամ տարվա ընթացքում միանգամից վճարելով 10 ռուբլի, երբ կարող էր¹⁰³:

Վարկի չափը¹⁰⁴ հասնում էր մինչև 100 ռուբլու՝ 12% դրույքաչափով: Երկարաժամկետ ավանդատուներին վճարվում էր 8, իսկ կարճաժամկետներին՝ 5-6%-ով¹⁰⁵:

Փոքր վարկային բանկերի բացվելը նշանակալից երևույթ էր Նոր Բայազետի զավառի սոցիալ-տնտեսական կյանքում. 1) Վարկային ընկերությունները մեծապես օգնում էին գավառի չքավոր բնակչությանը, չնչին տոկոսով փող բաց թողնելով և ազատելով նրանց վաշխատուների ճանկը ընկնելուց: 2) Տեղացի վաճառականները, որոնք մինչ այդ բարձր տոկոսադրույքներով օգտվում էին Երևանի, Թիֆլիսի և այլ տեղերի բանկերից, լրա-

ցուցիչ ծախսերից ու հոգսերից ազատվեցին: 3) Այս բանկերի ավանդատուները 6% ավելի շահույթ էին ստանում, քան պետական (արքունական) և առևտրական բանկերի ավանդատուները¹⁰⁶:

Այսպիսով, անփոփ եզրակացությունը այն է, որ առևտրի դերը ժողովրդի կյանքում չի սահմանափակվել միայն նյութական ստեղծելու միջոց լինելով: Առևտուրն իր խորը հետքը թողեց հայ հասարակական ու մշակութային կյանքի վրա՝ այն սկսեց դուրս գալ լճացումից և բռնել որակական փոփոխությունների ճանապարհը:

¹⁰⁰ Տե՛ս «Մշակ», 7 մայիսի, 1910 թ.:

¹⁰¹ Վարկ տրվում էր, երբ հողագործն իր հացահատիկը կամ գուրացը, արհեստավորն իր արդյունքի մնուշները (կոշիկեղեն, գործիքներ, զարդեր և այլն) գրավական էին ներկայացնում: Տե՛ս «Մշակ», 8 սեպտեմբերի, 1909 թ.:

¹⁰² Տե՛ս նույն տեղում:

¹⁰³ «Մշակ», 7 մայիսի, 1910 թ.:

¹⁰⁴ Վարկային սիստեմը որոշում էր ընկերության վարչությունը խորհրդի անդամների հետ միասին, իսկ տոկոսների չափը (մինչև 12%) սահմանում էր ընդհանուր ժողովը: Տե՛ս «Մշակ», 8 սեպտեմբերի, 1909 թ.:

¹⁰⁵ Տե՛ս «Մշակ», 7 մայիսի, 1910 թ.:

¹⁰⁶ Տե՛ս «Մշակ», 8 սեպտեմբերի, 1909 թ.:

Կրթամշակութային կյանքը

Ռուսական տիրապետության հաստատումով Նշանակալից զարգացում ապրող Նոր Բայազետի գավառի սոցիալ-տնտեսական կյանքը բնակչության կրթության և մշակույթի առաջընթացության համար որոշակի պայմաններ ստեղծեց: Մինչ այդ, սույն գավառը այս իմաստով երևանի նահանգի ամենահետին ընկած գավառներից էր կամ ամենահետին գավառը: Այս մասին գավառի գործակալ Խորեն վարդապետ Մուրադբեկյանի¹ հավաստումը շարադրված է Կովկասի հայոց բարեգործական ընկերության խորհրդին ուղղված նամակում հետևյալ կերպ. «Չեմ կարծում, որ Կովկասում լինի մի այնպիսի խուլ անկյուն, որպիսին Նոր Բայազետի գաւառն, ուր տգիտությունը ու խաւարը թագաւորում է ամենալայն չափով: Այս գաւառում դպրոցական կրթության գործը երբեք ժողովրդի զբաղման առարկան չի եղել»²:

Ֆիրավի, չի կարելի անտեսել «Մշակ» թերթի մի հրապարակման մեջ տեղ գտած հետևյալ տողերը, որոնք լրացնում և ավելի ամբողջական են դարձնում վարդապետ Մուրադբեկյանի մտքերը: «Մտավոր մակերևույթը շատ ցածր է այստեղ (Նոր Բայազետի գավառում, - Գ. Գ.), ոչ միայն գյուղերում, ուր գրագետ մարդկանց թիվը շատ սահմանափակ է, նույնիսկ քահանաներն անգրագետ և կատարյալ տգետ են, մինչև իսկ քաղաքը մի առանձին առավելություն չունի: Չազար երեքիարյուր տնից գուրեց մի հազար հոգի գրել կարողալ չիմանա, միջնակարգ կրթություն ստացածները 5-10 հոգի են, իսկ բարձրագույն կրթություն ստացած ոչ մի հոգի չկա»³:

¹ Նոր Բայազետի գավառի գործակալ է առաջադրվել 1907 թ. հոկտեմբերին: Տես «Մշակ», 18 հոկտեմբերի, 1908 թ., «Մշակ», 13 նոյեմբերի, 1907 թ.: Չետագայում Ամենայն Ֆայոց կաթողիկոս (1932-1938 թթ.):

² ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 300, ք. 7:

³ «Մշակ», 21 ապրիլի, 1898 թ.:

Խնդրին անմիջապես առնչվող ուրիշ փաստեր էլ կան, որոնք անվերապահորեն հաստատում են այս տողերը: Նախ, մինչև XIX դ. առաջին կեսը հիշյալ գավառը դպրոց չի ունեցել: Երեխաները գրաճանաչություն սովորում էին կամ գյուղական քահանայի կամ տիրացու խալիֆայի մոտ:

Ըստ ամենայնի, վերը բերված փաստերը հասկանալի են դառնա, եթե չփորձենք տալ նաև այդ երևույթի պատճառները: Դրանք մի քանիսն են: ա) Նախորդ շրջանի (մինչև Ռուսաստանին միանալը) հասարակական զարգացման ցածր մակարդակը կապված ազգային տվյալ ընդհանրության կուլտուրական զարգացման առանձնահատկությունների հետ: Խոսքը մինչև պարսկահայերի և արևմտահայերի ներգաղթը գավառում ճնշող մեծամասնություն կազմող եկվոր մուսուլման բնակչության մասին է, որի բնածին հատկության հիմնական բովանդակությունը քոչվոր կամ կիսաքոչվոր անասնապահությամբ զբաղվելն է եղել: Անշուշտ, այս հանգամանքն անմիջական ազդեցություն է գործել գավառի կրթամշակութային կյանքի վրա: բ) Համատարած անգրագիտություն էր տիրում նաև պարսկահայ և արևմտահայ գաղթականների շրջանում: Դաբերով գտնվելով օտար բռնատիրության ճիրաններում, նրանք զրկված էին մայրենի գրիչ և գրականությանը խաղողալկցվելուց: գ) Բնակչության սոցիալ-տնտեսական ցածր պայմանները: Խորեն վարդապետ Մուրադբեկյանը, ելակետ ունենալով հենց այս հանգամանքը, վերոհիշյալ նամակում գրում է. «Ժողովուրդը իր այդպիսի վերաբերմունքը պատճառաբանում է միշտ նրանով, որ ազգաբնակչությունը աղքատ է, ուսելու հաց չունի, ուստի և ոչ մի հնարաւորություն դպրոց պահելու, որը գյուղացուց ծախսեր է պահանջելու»⁴:

1830-ական թվականներից նոր շրջան բացվեց հայ դպրոցի պատմության մեջ: 1836 թ. մարտի 11-ին ցար Լիվոյա Առաջինի կողմից հաստատված հայ եկեղեցուն վերաբերվող կանոնադրության համաձայն եկեղեցին իրավունք ստացավ Հայկական մարզի բնակավայրերում բացել միդասյա (երկամյա) և

⁴ ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 300, ք. 7:

երկրայայ (չորսամյա) եկեղեցական-ծխական դպրոցներ⁵:

Դպրոցներ բացելու իրավունք էր վերապահվում նաև տեղական ինքնավարության մարմիններին, ընկերություններին և մասնավոր անձանց⁶:

Այս տիպի դպրոցներում, որոնցում ուսուցանվում էին կրոն, հայոց լեզու, ռուսաց լեզու, քվաթանություն և վայելչագրություն, հիմնականում տալիս էին տարրական կրթություն:

Չայ առաքելական եկեղեցին, որ ազդեցիկ ուժ էր ազդի վրա նաև իր գաղափարական ազդեցությամբ՝ նպատակ ունենալով ուժեղացնել կրոնաբարոյական դաստիարակություն՝ այդ ուղղությամբ, նախանձախնդիր կերպով ձեռնամուխ եղավ նոր եկեղեցական-ծխական դպրոցներ բացելու գործին: Անհրաժեշտ միջոցների բացակայության (գյուղերի 90%-ից ավելին եկեղեցիներ չունեին, գտնվում էին սոցիալական ծանր վիճակում) պատճառով Նոր Բայազետի գավառի բնակավայրերում երկար ժամանակ չբացվեցին եկեղեցական-ծխական դպրոցներ: Այս գավառում դպրոցական-կրթական գործի կազմակերպման հիմքը դրվեց XIX դ. 50-ական թվականների սկզբին: 1852 թ. նորբայազետցի հայտնի հանրային գործիչ և երևելի բարերար Բարսեղ Արծրունու ջանքերով քաղաքի Ս. Աստվածածին եկեղեցու գավառում բացվեց Չոփոսիմե-Մեսրոպյան դպրոցը՝ 62 աշակերտով⁷: Եկեղեցական-ծխական դպրոցների ծրագրով դասավանդվող առարկաներից բացի, այս դպրոցում ուսուցանվում էին նաև Չայաստանի և Ռուսաստանի պատմություն և աշխարհագրություն⁸, ինչը և նշանակուրում էր կրթության զարգացման նոր որակ:

1855 թ. Նոր Բայազետում իր գոյությունն ավետեց քաղաքի ռուսական դպրոցը: Այստեղ, որպես կանոն, սովորում էին հիմնականում հարուստ դասի երեխաները, իսկ միջակ և աղքատ ընտանիքի զավակները՝ հայոց եկեղեցական-ծխական

դպրոցներում: Այդուհանդերձ, ռուսական դպրոցում, առանձին դեպքերում հաճախում էին աղքատ ծնողների երեխաները, որոնք սովորում էին կամ կիսաթոշակով կամ բոլորովին ծրի⁹:

XIX դ. 60-80-ական թվականներին Երևանի նահանգում դպրոցական կյանքը քակոխում էր նոր փուլ: Վերափոխվում էին ուսումնական ծրագրերը, կարգավորվում էր ուսումնական գործընթացը, դպրոցների ուսումնական և տնտեսական գործունեության նկատմամբ ուժեղացվում էր վերահսկողությունը, ձեռնարկվում էին զանազան միջոցառումներ:

Նոր Բայազետի գավառի կրթամշակութային կյանքում ևս արժանագրվեցին առաջադիմական տեղաշարժեր: Այդ հաջողությունները, անշուշտ, առաջին հերթին արտահայտվեց դպրոցական ցանցի ընդլայնմամբ: Բացվեցին նոր դպրոցներ: 1867 թ. Բարսեղ Արծրունու նախաձեռնությամբ ու միջոցներով քաղաքի Ա.Չոփոսիմե-Մեսրոպյան կրթօջախը վերածվեց երկրայայան երկսեռ դպրոցի, կից բացվեց գավառի առաջին իգական կրթարանը՝ աղջիկների դպրոցը՝ 10-12 աշակերտուհիներով: Տղաների ուսումնարանը բաղկացած էր երկու, իսկ աղջիկներինը՝ մեկ սենյակից¹⁰: Դասավանդվող առարկաները նույնն էին, ինչն արական դպրոցում, զուսմարած ձեռագործությունը¹¹:

Ինչպես կտեսնենք հետագա շարադրանքում, այս կրթօջախը դարձավ Նոր Բայազետի գավառի և Երևանի նահանգի կրթամշակութային կյանքի աչքի ընկնող կենտրոններից մեկը:

Եկեղեցական-ծխական դպրոցների կյանքում 1868 թ. արժանագրվեց մի կարևոր իրադարձություն: Այդ թվականին Էջմիածնի ուսումնական հանձնաժողովի (ստեղծվել է 1867 թ. Ղևորզ Դ կաթողիկոսի կողմից) որոշմամբ հայկական ծխական դպրոցների կառավարումը հանձնվեց դպրոցական ընտրովի հոգաբարձուների տնօրինությանը¹²: Նույն տարվա հունիսի 3-ին Ա.Չոփոսիմե-Մեսրոպյան երկսեռ դպրոցում կայացավ

⁵ Տե՛ս «Չայ ժողովրդի պատմություն», հ. V, էջ 212-214:

⁶ Տե՛ս «Չայ ժողովրդի պատմություն», հ. VI, էջ 755:

⁷ Տե՛ս ՉԱԱ, ֆ. 125, ց. 1, գ. 12, քժ. 26, 27, ֆ. 56, ց. 1, գ. 7278, քժ. 27-28, «Մշակ», 23 հունիսի, 1887 թ.:

⁸ ՉԱԱ, ֆ. 7, ց. 1, գ. 9, ք. 30:

⁹ Տե՛ս «Մշակ», 12 դեկտեմբերի, 1892 թ.:

¹⁰ Տե՛ս ՉԱԱ, ֆ. 227, ց. 1, գ. 102, ք. 27, «Մշակ», 11 հունիսի, 1892 թ.:

¹¹ Տե՛ս «Մշակ», 23 հունիսի, 1878 թ.:

¹² Տե՛ս «Արարատ», 1868, հ. 2, էջ 70:

կրթօջախի հոգաբարձական խորհրդի ընտրությունը¹⁵, որի կազմում ընտրվեցին հինգ հոգի: Անշուշտ այս միջոցառումը արվեց ելնելով դպրոցների նյութական հնարավորությունները մեծացնելու, նրանց նորմալ կենսագործունեությունը ապահովելու և ուսուցման որակը բարձրացնելու շահախնդրությունից:

Բայց սա շատ մակերեսային ձևակերպում է: Երբ փորձում ես իրավիճակն ավելի լրջորեն հասկանալ, պարզ է դառնում, որ նման խնդիր իրականում միշտ չէ, որ եղել է: Արխիվներում պահպանված բազմաթիվ վավերագրերը, ինչպես և ժամանակի մամուլի արձագանքները հավաստում են վերը ասվածը: Այս կապակցությամբ սկզբնաղբյուրներից բերված մի խումբ փաստերի մեկնաբանություններից անդրադառնում ենք ստորև: 1874թ. «Մեղու Հայաստանի» օրաթերթում լույս տեսավ բժիշկ և բարեխարհ Կահան Արծրունու թղթակցությունը, որում նա ցավով ու ավստասանքով էր նշում դպրոցական գործը ոչ բանիմաց մարդկանց վստահելու և այլ բացերի մասին: «Ուսումնաբաններն ունեն հոգաբարձուք, ընտրվում են նոքա առանց ժողովրդի համաձայնության, առանց քվեարկության, այլ մի քանի «իշխաններ», որոնք յուրյանց գիտակ են համարում, հավաքվում են մեկտեղ և յուրյանց միջոց ընտրում են մեկ քանի անձինք... որոնք չճանաչելով ուսման օգուտը և նորա նշանակությունը, բոլորովին ուշադրություն չեն դարձնում ուսման ընթացքի և աշակերտաց առաջադիմության վրա»¹⁶: «Մինչև այժմ, - կարդում ենք «Մշակ» թերթի մի իրապարակման մեջ, - քաղաքի դպրոցներում տիրացուական ուղղություն է տիրում»¹⁷:

Փետրվարի 23-ին «Հորիզոն» թերթը տպագրեց Օրդաբլու գյուղի քնակչության հետևյալ բողոքը. «Շատ ենք լսել, որ ուրիշ տեղերի հոգաբարձությունները անտարբեր են դեպի իրենց խնամքին հանձնված դպրոցները, բայց այն աստիճանի չէ,

ինչպես մեզ մոտ: Մեր հոգաբարձուները թվով հինգն են, բայց ամբողջ դպրոցական գործը ծանրացած է միայն երկուսի՝ Տեր Վարդան Ստեփանյանի և Մաթևոս Մարգարյանի վրա»¹⁸: Այս շարքը կարելի է երկար շարունակել, բայց բավարարվենք այդբանով և նշենք, որ նաև այդ պատճառով Ս.Հոփսիսիմե-Մեսրոպյան դպրոցը կանգնեց փակվելու վտանգի առջև:

Դպրոցը հաստատուն եկամտի աղբյուր չունի, իսկ անհատ ձեռներեցների անձնակազմ ներդրումները և այլ աղբյուրներից հուսերը միայն մասնակիորեն էին փակում նրա ծախսերը: Գավառի գործակալ Անանիա վարդապետ Համազասպյանի նախամամախոյի քանքերի շնորհիվ գտնվեց խնդիրը լուծելու բանալին: Ուսումնաբանին դրամական օգնություն կազմակերպելու խնդրանքով 1879 թ. նա դիմեց քաղաքի մեծահարուստ և կարող մարդկանց: Հայտնի կոչից հետո ժողովրդի արձագանքը մեծ եղավ: Քաղաքի մի խումբ երևելի մարդիկ միավորվելով այդ գաղափարի շուրջ 1879 թ. մարտի 22-ին ստեղծեցին Մարդասիրական ընկերությունը, սուրբ թարգմանիչներ անվամբ: Անանիա վարդապետը կազմեց և խմբագրեց ընկերության գործունեության կանոնները, որոնք օրինության կոնդակով հաստատեց Գևորգ Դ Կաթողիկոսը¹⁹: Թեև կրթօջախի պատասխանատուն նախկինի նման հոգաբարձուների խորհուրդն էր, բայց արդեն ավելի մեծ դեր էր խաղում Մարդասիրական ընկերությունը, որի հովանավորության տակ էին գտնվում բոլոր դպրոցները²⁰:

Ուսումնաբանն այս ընկերության հովանավորության տակ մնաց մինչև 1885 թ., երբ կառավարության որոշմամբ, ի թիվս հայոց կրթօջախների, փակվեց նաև սույն ուսումնաբանը²⁰:

Ուսումնաբանի ֆինանսական վիճակը որոշ չափով բարելավվեց: Հիմնադրման տարում ընկերության անդամների ներդրումներից (3000 ռուբլի)²⁰ և զանազան աղբյուրներից գոյա-

¹⁵ Հոգաբարձուներն ընտրվում էին 2-ից մինչև 3 տարի ժամանակով, հաճախ նաև՝ 3 ամսով: Տե՛ս «Մշակ», 23 սեպտեմբերի, 1883 թ.: Իրենց ծառայության դիմաց հոգաբարձուները չէին վարձատրվում:

¹⁶ «Մեղու Հայաստանի», 1874 թ., թիվ 2:

¹⁷ «Մշակ», 7 օգոստոսի, 1890 թ.:

¹⁸ «Հորիզոն», 23 փետրվարի, 1912 թ.:

¹⁹ Տե՛ս «Մշակ», 11 հոկտեմբերի, 1892 թ.:

²⁰ Տե՛ս «Մշակ», 31 հուլիսի, 1886 թ.:

²¹ Տե՛ս «Մշակ», 11 հոկտեմբերի, 1892 թ.:

²² Տե՛ս «Մշակ», 11 հունիսի, 1892 թ.:

ցած գումարը կազմել էր 6090 ռուբլի, 85 կոպեկ²¹:

Տարատեսակ աղբյուրներից, որտեղից մշտապես սնուցվել են ինչպես այս, այնպես էլ գավառի մյուս միասկան դպրոցները, հիմնականում մի քանիսն էին: ա) Նոր Բայազետ քաղաքի բնակչության առավել զիտակից դասի մեջ մի լավ սովորույթ էր մտել, այն է՝ հանգուցյալի հոգուն հաց (քելելիս) տալու փոխարեն մի զգալի գումար էին նվիրում երկսեռ դպրոցին²² ինչպես օրինակ, Դակոբջան Դայանը նվիրատվեց 50, իսկ Կարապետ Աֆրիկյանը՝ 300 ռուբլի²³: բ) Ուսումնարանը քաղաքում ուներ մի քանի կրպակներ, որոնք տրվել էին վարձով, և գոյացած վարձագինը օգտագործվում էր կրթօջախի կարիքների համար²⁴: գ) Եկամտների մի որոշակի մասը գոյանում էր մոնավաճառությունից, որը միջին հաշվով տարեկան կազմում էր 400-ից մինչև 600 ռուբլի²⁵: դ) Ուսումնարանի կարիքներից ելնելով շատ հաճախ վիճակախաղի էր հանվում աշակերտուհիների ձեռագործ աշխատանքները: Օրինակ, 1882 թ. ուսումնարանի հոգաբարձուքյունը դիմում է հայոց եկեղեցական-ծխական դպրոցների տեսչությանը, միջնորդել ուր հարկն է վիճակախաղի դնել աշակերտուհիների 150 ձեռագործ աշխատանքները՝ արժողությամբ 200 ռուբլի²⁶:

1888 թ. վիճակախաղի հանված ձեռագործ աշխատանքների վաճառքից գոյացավ 76 ռուբլի²⁷: Դպրոցները կառավարվում էին նաև թոշակադրամով: Տարիներ շարունակ Ա.Չոլիսիմեն-Մետրոպոլիտանի ուսումնարանում ուսման վարձը վճարվում էր 10 ռուբլի յուրաքանչյուր աշակերտից հավասար կերպով: 1905թ. սեպտեմբերի վերջին մանկավարժական խորհրդի որոշմամբ թոշակադրամը հասցվեց 13 ռուբլու²⁸: զ) Որոշակի գումար էր հավաքվում մշտապես կազմակերպվող թատերա-

կան ներկայացումներից: Ընդ որում, ներկայացումները տրվում էին տեղական սիրողների (դպրոցի շնորհալի մանկավարժների, հոգաբարձուքյան անդամների և քաղաքի ուսյալ ու բարեկիրք երիտասարդների ուժերով): Նոր Բայազետ քաղաքի առաջին թատերասերների խումբը կազմավորվել է 1882 թ. հունվարի սկզբներին Ա.Չոլիսիմեն-Մետրոպոլիտանի ուսումնարանի ուսուցիչների նախաձեռնությամբ ու ջանքերով²⁹: Առաջին կազմակերպված թատերական ներկայացումը տրվել է 1882 թ. փետրվարի 5-ին հաշտարար դատարանի դահլիճում ուսումնարանի ուսուցիչների և նորքայազետցի մի քանի երիտասարդների ուժերով: «Դառողված ներկայացման համար,- գրում էր «Մշակ» թերթի թղթակիցը,- քաղաքի հայ հասարակությունը պարտական է զխաճկորպես տիկին Ե. Արծրունու և պարոն Բզնունյանի ջանքերին»³⁰:

Տոմսերի վաճառքից հավաքված 56 ռուբլին հատկացվեց քաղաքի դպրոցների չբավոր աշակերտներին³¹: Նույն տարվա հուլիսին դերասանական խումբը հիշյալ դահլիճի բեմում խաղաց երեք ներկայացում՝ «Բռնի ամուսնություն», «Երկու քաղցածներ» և «Կըռք-կըռք» կատակերգությունները: Ներկայացումներից հավաքված 40 ռուբլին փոխանցվեց ուսուցչական ժողովին³²:

Ուսումնարանի թատրոնի խաղացանկում, նրա սկզբնական տարիներից, առանձնակի տեղ է զբաղվել Գ. Սունդուկյանի դրամատուրգիան: Խումբն առաջինը բեմադրել է նրա հայտնի «Պեպո», այնուհետև «Խաթաբալա» պիեսները: Դերասանական կատարողական բարձր վարպետությամբ առանձնապես աչքի է ընկել դերասանուհի Փ. Տեր-Ասովաձատրյանը: Գոյացած միջոցներից 62 ռուբլի գումար հատկացվեց «Մարդասիրական ընկերությանը»³³:

Դաշտարար դատարանի դահլիճը այլևս չէր բավարարում

²¹ Տե՛ս «Մշակ», 10 մայիսի, 1883 թ.:

²² Տե՛ս Տե՛ս «Մշակ», 19 մայիսի, 1887 թ.:

²³ Տե՛ս «Մշակ», 18 օգոստոսի, 1883 թ.:

²⁴ Տե՛ս «Մշակ», 23 հունիսի, 1877 թ.:

²⁵ Տե՛ս «Մշակ», 5 մարտի, 1912 թ.:

²⁶ Տե՛ս «Քյավառ», էջ 211:

²⁷ Տե՛ս «Մշակ», 1 սեպտեմբերի, 1888 թ.:

²⁸ Տե՛ս «Մշակ», 18 նոյեմբերի, 1906 թ.:

²⁹ Տե՛ս «Մշակ», 12 փետրվարի, 1882 թ.:

³⁰ «Մշակ», 16 փետրվարի, 1882 թ.:

³¹ Տե՛ս նույն տեղում:

³² Տե՛ս «Մշակ», 4 օգոստոսի, 1882 թ.:

³³ «Մշակ», 18 օգոստոսի, 1883 թ.:

քաղաքի թատերասեր բնակչության պահանջմունքներին: Ուստի անհրաժեշտություն զգացվեց կառուցել նորը: 1883 թ. հոգաբարձության ջանքերով աղբիկների մասնաշենքին կից կառուցվեց դահլիճ և բեմ³⁴: Նորակառույց դահլիճն իր օժանդակ հարմարություններով առաջընթաց քայլ էր հաշտարար դատարանի հանդիսատսի համեմատությամբ: Նորակառույց այս դահլիճի բեմուն առաջին ներկայացումը եղել է Գալֆայանի «Արչակ Բ» պիեսը՝ 1883թ. հուլիսի 17-ին³⁵:

Նոր դահլիճը և բեմը, ինչպես նաև աշխուժացող թատերական կյանքը նպաստեցին դրսից դերասանների գալուստ և ներկայացումներ խաղալուն: Տարբեր տարիներին երևանից Նոր Բայազետ քաղաք թատերական ներկայացումների են եկել շնորհաշատ դերասանուհիներ Օ. Սարգսյանը, Մ. Օհանյանը, Գ. Աբրահամյանը, Ավետիքյանը, դերասաններ Ս. Տեր-Մարտիրոսյանը, Ա. Սաֆրազյանը և ուրիշներ: Ժամանակի «Մշակ» թերթի էջերը հարուստ են Նոր Բայազետ քաղաքի թատերական կյանքի առօրյան լուսարանող քրթակցություններով³⁶: Այսպես, 1891 թ. հուլիսի 12-ին, Ա. Գոնիսիմե-Մետրոպոլիտանի 40-ամյա տարեդարձի օրը, սիրող դերասան-դերասանուհիներ Օ. Սարգսյանի, Վ. Տեր-Մարտիրոսյանի, Գ. Թարվերդյանի, Ա. Մանուկյանի և ուրիշների մասնակցությամբ բեմադրվեց «Թուրք խաղողի կյանքը» և «Կույ քի իմ վեշեր» ներկայացումները: Իր գրավիչ խաղով հանդիսատեսին հատկապես հիացմունք է պատճառել երևանից հյուր եկած դերասանուհի Ավետիքյանը³⁷:

Չնտազա տարիներին նույնպես բեմադրվեցին բազմաթիվ ներկայացումներ, որոնցից ստացված հասույթի զգալի մասը հատկացվեց բարեգործական նպատակների համար: Ոչ միայն դա: 80-ական թվականներից աշխուժացող թատերական կյանքը լույս աշխարհի հանեց շնորհաշատ և թատերադրվեստին

³⁴ Տե՛ս «Մշակ», 23 հունիսի, 1887 թ.:

³⁵ Տե՛ս «Մշակ», 18 օգոստոսի, 1883 թ.:

³⁶ Տե՛ս «Մշակ», 31 հունվարի, 1891 թ., «Մշակ», 21 հուլիսի, 1890թ., «Մշակ», 21 հուլիսի, 1892 թ.:

³⁷ Տե՛ս «Մշակ», 21 հուլիսի, 1892 թ.:

նվիրյալ դերասան և դերասանուհիների մի փայլուն սերունդ, որին էլ վիճակված էր պրոֆեսիոնալ հիմքերի վրա դնելու քաղաքի թատերական կյանքը: 80-ական թվականներին (մինչև 1913 թ.) Նոր Բայազետում ակտիվ թատերական գործունեություն են ծավալել դերասան-դերասանուհիներ Վ. Տեր-Մարտիրոսյանը, Ա. Մամիկոնյանը, Գ. Թարվերդյանը, Ա. Աֆրիկյանը, Կարապետյանը, Բուռնազյանը, Շամշադինովը, Լիկիտինը, Մնացականյանը, Վ. Դովաթյանը, Մ. Աղայանը, Գ. Չաղդրանյանը, Ռ. Ազատյանը, Վ. Տեր-Աբրահամյանը, Մ. Բուրխաթյանը, Ա. Սինանյանը, Օ. Սարգսյանը և ուրիշներ³⁸:

Արվեստի նկատմամբ բնակչության աճող հետաքրքրությունների լայն շրջանակները խթանեցին ճգնաժամ ապրող կամ գոեթե մոռացույթյան տրված հայ ժողովրդական և գուսանական երգարվեստի աշխուժացմանն ու զարգացմանը: Այս վիճակն ունի իր բացատրությունը, և բացատրման բանալին Ի. Շուպինի հետևյալ վկայությունն է. Արևելյան Չայաստանը Ռուսաստանին անցնելու առաջին տարիներին ամբողջ Չայկական մարզում կային 96 երաժիշտներ, որից 85-ը հայեր էին³⁹:

Ռուսաստանին անցնելուց հետո, ցավոք, այդ ուղղությամբ դեռ երկար ժամանակ (մինչև XIX դ. վերջերը) ծրագրված և նախանձախնդիր աշխատանք չէր տարվում:

XX դ. սկզբներին Նոր Բայազետ քաղաքում այդ բնագավառում զգալի աշխատանք է ծավալում Գ. Ղազարյանը, մեծ հետաքրքրություն ստեղծելով իր գործունեության նկատմամբ: Նա ռուսական ուսումնարանի տղաներից և ծխական դպրոցի աշակերտուհիներից ստեղծեց 80 հոգանոց երգչախումբ:

Բացի այդ, նրա ջանքերով ստեղծվեց նաև 40 երաժիշտներից կազմված երաժշտախումբ՝ ապահովված հայկական

³⁸ Տե՛ս «Մշակ», 18 օգոստոսի, 1883 թ., «Մշակ», 12 փետրվարի, 1882 թ., «Մշակ», 16 փետրվարի, 1882 թ., «Մշակ», 23 հունիսի, 1887 թ., «Մշակ», 4 օգոստոսի, 1882 թ., «Մշակ», 14 հունիսի, 1897 թ., «Մշակ», 12 մարտի, 1891 թ., «Մշակ», 21 հուլիսի, 1892 թ., «Մշակ», 21 սեպտեմբերի, 1904 թ., «Մշակ», 16 փետրվարի, 1906 թ., «Մշակ», 1 մարտի, 1913 թ., «Մշակ», 1 մայիսի, 1913 թ.:

³⁹ Տե՛ս *Н. Шопен*, նշվ. աշխ., էջ 896-898:

ժողովրդական և եվրոպական դասական երաժշտական գործիքներով զուեմա, դուդուկ, քառ, սագ, ջութակ, մանդոլինա, կիթառ, դաշնամուր և այլն⁴⁰:

Զնայած կարճ ժամանակամիջոցին,⁴¹ միջոցների սղուքյանը և դժվարություններին (հաճախ ծնողները թույլ չէին տալիս իրենց աղջիկներին դուրս գալ բեմ), այդուհանդերձ խումբը կարողացավ բնակչության մեջ սեր արթնացնել դեպի հայ ժողովրդական և աշուղագուսանական արվեստը, բարձրացնել նրա գեղարվեստական ճաշակը և մղել շատերին դեպի արվեստի այդ բնագավառը: Դրանով պիտի բացատրել գավառի հասարակայնության հիացական վերաբերմունքը երգեցիկ և երաժշտական խմբերի նկատմամբ: Հատկանշական է, որ Դ. Դազարյանը առանձնակի ուշադրություն է դարձրել նաև եվրոպական և ասիական երգ ու երաժշտության տարածմանը իր հայրենի գավառի միջավայրում: Այդ է վկայում «Ալի և Բարամ» բանասիրական ավանդակատունը նրա կողմից օպերայի վերածելը և բեմականացնելը⁴²: Համերգներից ստացված եկամտի մի մասը տրամադրվում էր դպրոցներին կամ հատկացվում էր բարեգործական այլ նպատակների համար:

Բացի վերը նշված միջոցներից Ա. Գոփիսիմե-Մեսրոպյան դպրոցը պետությունից ստանում էր 1000 ռուբլի⁴³:

1870-80-ական թվականները գավառի կյանքում կարելի է առանձնացնել նաև որպես դպրոցաշինության տարիներ: Առաջին անգամ եկեղեցական-ծխական դպրոցներ բացվեցին գավառի մի շարք բնակավայրերում. 1868 թ. Չիբուխլուում, 1874 թ. Խորատուում, 1875 թ. Փաշաբենդում, Ալափարտում, 1881 թ. Սուլակում, Լեռքին Ախտայում, Լեռքին Դարանլուղում և Ծաղկունքում⁴⁴:

⁴⁰ Տե՛ս «Մշակ», 1 մարտի, 1913 թ., «Մշակ», 5 մարտի, 1913 թ.:

⁴¹ Մեզ հայտնի սկզբնաղբյուրների տվյալներից ենթադրում ենք, որ վերոգրյալ խմբերը ստեղծվել են 1911-1912 թթ. ընթացքում:

⁴² Տե՛ս «Մշակ», 3 դեկտեմբերի, 1913 թ.:

⁴³ Տե՛ս «Մշակ», 13 մայիսի, 1910 թ., «Մշակ», 4 հունիսի, 1910 թ.:

⁴⁴ Տե՛ս ՅԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 4969, քթ. 25-26, գ. 7290, ք. 3, գ. 7278, քթ. 28-29, 49-50, ֆ. 7, ց. 1, գ. 156, ք. 10:

Այս դպրոցները մեկ ուսուցիչ ունեցող կրթօջախներ էին: Ուսուցանվում էին կրոն, հայոց ընթերցանություն, քվարանություն, վայելչագրություն նաև ռուսաց ընթերցանություն, եթե ուսուցիչը տիրապետում էր այդ լեզվին⁴⁵: Տեղական պայմաններով թելադրված դպրոցները արծակվում էին հուլիսի 20-25-ին և բացվում սեպտեմբերի 25-ին⁴⁶: Դպրոցները կառավարվել են նաև նվիրատվություններով և թոշակարամով⁴⁷:

Գտնվել են նաև եկամտի այլ աղբյուրներ: Բերեց մի քանի կոնկրետ օրինակներ: Չիբուխլու գյուղն ունեցել է Ա. Գևորգ անվամբ մասունք, որը տեղափոխվել էր Լոր Բայազետ քաղաքի եկեղեցի:

Բնակիչները խնդրում են իրենց վերադարձնել այդ մասունքը և նրա եկամտներից տրամադրել գյուղի նորակառույց ուսումնարանին: 1868 թ. դեկտեմբերի 16-ին Էջմիածնի սինոդը ընդառաջել է խնդրագրին⁴⁸:

Սուլակ գյուղի նորաբաց դպրոցում սովորում էին նաև շրջակա գյուղերի երեխաները՝ 45 աշակերտ: Դարաշիջակի գյուղերի բնակչությունը հրաժարվում է պատկառումից 50-ական կոպեկ վճարել հօգուտ երևանի բեմական դպրոցին, բայց պատրաստ էր այդ դրամը վճարել, եթե այն տրամադրվեր նորաբաց դպրոցի կառավարման համար:

Այս բովանդակությամբ խնդրագիր է ուղարկվում Էջմիածնի Մայր աթոռ: Ի պատասխան այդ խնդրագրի, սինոդը որոշում է պատկառումից բաժնեմաս հանվող 50-ական կոպեկը, որը նախատեսված էր երևանի բեմական դպրոցի համար, պահել տեղում՝ Սուլակի դպրոցի կարիքների համար⁴⁹:

1879 թ. ապրիլի 26-ին և հոկտեմբերի 18-ին Գյոզալդարա գյուղի բնակչությունը դիմել է կաթողիկոսին խնդրելով թույլ տալ իրենց վերադարձնելու Մուղնու պահեստում գտնվող Ավետարանը, որպեսզի նրանից ստացված արդյունքով հնա-

⁴⁵ Տե՛ս ՅԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 7278, քթ. 28-29, 49-50:

⁴⁶ Տե՛ս «Մշակ», 22 դեկտեմբերի, 1888 թ.:

⁴⁷ Տե՛ս ՅԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 4969, ք. 26:

⁴⁸ Տե՛ս ՅԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 6773, ք. 14:

⁴⁹ Տե՛ս նույն տեղում, ք. 18:

րավոր լինի կառավարել տեղի դպրոցը: Սինոդը ընդառաջում է⁵⁰:

Ինչպես արդեն վերը գրվել է, այս դպրոցները գտնվում էին եկեղեցու տնօրինության տակ: Չնայած դեպքերի կուրսը, դպրոցների ընթացքը կարգավորելու նպատակով, 1873 թ. յուրաքանչյուր թեմում ստեղծեց թեմական դպրոցական տեսչի պաշտոնը⁵¹: Նոր Բայազետի գավառի եկեղեցական-ծխական դպրոցների տեսուչի պաշտոնը 1878 թ. սկսած ստանձնել էր հայ գրող Պերճ Պռզյանը, երբ նույն թվականին նշանակվեց Երևանի թեմական տեսուչ⁵², իսկ սույն գավառը մտնում էր Երևանի թեմի մեջ:

Գավառի ծխական դպրոցներում տիրող ընդհանուր կացությունը 1881-1882 թթ. ուսումնական տարում ուներ այսպիսի պատկեր. Ներքին Ախտայի, Ներքին Ղարանլուղի, Սուլակի և Ոնդամալի ծխական դպրոցներից յուրաքանչյուրում սովորում էր 42 աշակերտ: Դասավանդում էին համապատասխանաբար՝ Թիֆլիսում կրթություն ստացած Չայանը (տարեկան աշխատավարձը 200 ռուբլի), Նոր Բայազետի ծխական դպրոցի շրջանավարտ Դ. Գյոզայանը (150 ռուբլի տարեկան աշխատավարձով), Նոր Բայազետի քաղաքային դպրոցի սան Սարգիս Փիլոյանը (տարեկան աշխատավարձը 200 ռուբլի) և Էջմիածնի ծխական դպրոցն ավարտած Կարապետ Տեր-Յովակիմյանը (տարեկան ստացել է 200 ռուբլի)⁵³: Ճաղկունքի դպրոցում սովորում էր 25 աշակերտ, ուր տարեկան 150 ռուբլի աշխատավարձով ուսուցիչ էր աշխատում քահանա Մկրտիչը,⁵⁴ իսկ Փաշաբենդ գյուղում 35 աշակերտներին կրթելու գործը իր ուսերին կրում էր Նոր Բայազետի եկեղեցական-ծխական դպրոցի շրջանավարտ քահանա Ստեփանը (տարեկան աշխատավարձը 150 ռուբլի)⁵⁵:

Կառավարությունը լրջագույն ուշադրություն էր դարձնում

⁵⁰ Տես ՀԱՍ, ֆ. 56, ց. 1, գ. 7290, ք. 3:

⁵¹ Տես «Չայ ժողովրդի պատմություն», հ. VI, էջ 759:

⁵² Տես «Քյալաթ», էջ 211:

⁵³ Տես ՀԱՍ, ֆ. 56, ց. 1, գ. 7278, ք. 28-29, 49-50, գ. 6773, ք. 14:

⁵⁴ Տես ՀԱՍ, ֆ. 56, ց. 1, գ. 7278 ք. 49-50:

⁵⁵ Տես նույն տեղում:

նաև ազգային փոքրամասնությունների կրթության խնդիրներին: Կովկասի կառավարչապետի և կովկասյան ուսումնական կոմիտեի ներկայացմամբ, Նոր Բայազետի գավառի ինքնակառույցյալ մարմինները մի շարք հատկապես խառը բնակչությանը, բնակավայրերում հիմնեցին պետական դպրոցներ: 1884թ. բացվեց դպրոց Բասարգեչարում՝ 40 աշակերտով, 1885թ. էլեմոլկայում (ուսական)՝ 40 աշակերտով և Դալիդարդանում՝ 35 աշակերտով⁵⁶:

Չարկ է նշել, որ 1885 թ., երբ ցարական կառավարության քնահան վերաբերմունքով փակվեցին հայկական ծխական դպրոցները, այս գավառում ավելի վաղ սկսվել էր այդ գործընթացը: Ինչպես ցույց են տալիս սկզբնաղբյուրները՝ 1883 թ. վիճակով Ղարաչիլակի ենթագավառի գրեթե բոլոր դպրոցները, բացի պետականներից, փակվել էին տեղի բնակչության անտարբեր վերաբերմունքի հետևանքով: «Լյժմ այն գեղջուկ աշակերտները, որոնք փոքր ի շատ ուսման ճաշակն առած, մայրենի և պետական լեզուներով թոթովան էին», - գրում էր ժամանակի մամուլը. - ստիպվեցան դարձյալ ծունկ խոնհարեցնել ծերունի խալիֆների առաջ սաղմոսի և ժամազրքի վրա նրանցից դաս առնելու համար»⁵⁷:

1886 թ. հայկական դպրոցները վերաբացվեցին: Օրերից մի օր ծնեալ սկսվեց նաև քննության առարկա գավառում: 1886թ. առաջինը վերաբացվեց քաղաքի Ս.Յոնիփսիմե-Սեսուրոպյան դպրոցը: Դա բացատրվում է հիմնականում երկու պատճառով: ա) Տեղական իշխանությունների և հասարակության զանազան շերտերի նախանձախնդիր ակտիվությամբ պայմանավորված գավառի կրթամշակութային կյանքում դպրոցի նախկինում խաղացած վիթխարի դերակատարությամբ: բ) Արագոթեն հաղթահարվեցին ֆինանսական դժվարությունները: Նախ մինչև դպրոցի վերաբացվելը վարկատուների տոկոսների և այլ աղբյուրների հաշվին հոգաբարձության դրամարկղում գոյացել էր մոտ 900 ռուբլի գումար⁵⁸: Բացի այդ բնակչությունը

⁵⁶ Տես ՀԱՍ, ֆ. 18, ց. 1, գ. 358, ք. 5-9, գ. 338, ք. 3-5, 7-9:

⁵⁷ «Մշակ», 21 դեկտեմբերի, 1883 թ.:

⁵⁸ Տես «Մշակ», 31 հուլիսի, 1886 թ.:

ամեն կերպ օգնություն ցույց տվեց դպրոցին՝ կազմակերպված հանգամանակության և նվիրատվությունների հաշվին հնարավոր եղավ հավաքել որոշակի գումար: Ինչ վերաբերում է գավառի մյուս դպրոցներին, ապա դրանց մեծ մասը այդպես էլ չվերաբացվեց՝ մինչև 1904-1905 թթ. ուսումնական տարին:

Մ.Չոբիսիմե-Մետրոպոլիտան դպրոցը հիրավի շարունակեց մնալ գավառի կրթամշակութային կյանքի կենտրոնը: 1886-1887 թթ. ուսումնական տարին դպրոցը սկսեց⁵⁹ նորոգված, մեծ պատուհաններով, կահավորված դասասենյակներով, բարձր շինության մեջ, տղաների մի զուգընթաց երեք և աղջիկների չորս բաժանմունքներով⁶⁰:

Աշակերտների թիվն ուսումնական տարվա սկզբին եղել է 50,⁶¹ իսկ ուսումնական տարվա վերջում՝ 203, որից աղջիկներ էին միայն 74-ը, կամ 36,4%-ը: Մ. Չոբիսիմե ուսումնարանի վերակազմում էր օրիորդ Ալիսեն Ազիզյանը⁶²:

Հաջորդ, 1887-1888 թթ. ուսումնական տարում բացվեցին նոր բաժանմունքներ՝ աղջիկներին հինգերորդ բաժանմունքը և տղաների երկրորդին զուգընթաց չորրորդ բաժանմունքը: Աղջիկների հինգ բաժանմունքներին հատկացվեց երեք դասասենյակ, իսկ տղաների առաջինին իր զուգընթացով, երկրորդին իր զուգընթացով, ինչպես նաև երրորդ և չորրորդ բաժանմունքներին միասին տրամադրվեց հինգ դասասենյակ, այսինքն դպրոցը զբաղեցնում էր ութ դասասենյակ⁶³:

Ս.Մետրոպոլիտան ուսումնարանում հաշվվում էր 174 սովորող, որից 10-ը հոգևորականի, 31-ը՝ վաճառականի, 21-ը՝ արհեստավորի և 112-ը՝ գյուղացու տղաներ էին: Ուսումնական տարվա վերջին նրանցից 31-ը փոխադրվեցին Ա բաժանմունքից Ք, 28-ը Բ-ից Գ, 23-ը Գ-ից Դ, 14-ը Դ-ից Ե, իսկ 78-ը ցածր առաջադիմության պատճառով որպես երկտարեցիներ մնացին նույն

⁵⁹ Նախկինի նման ուսումնական տարին սկսվում էր սեպտեմբերի 25-ին և ավարտվում հուլիսի 20-25-ին:

⁶⁰ Տե՛ս «Մշակ», 30 հունիսի, 1888 թ.:

⁶¹ Տե՛ս «Մշակ», 30 սեպտեմբերի, 1886 թ.:

⁶² Տե՛ս «Մշակ», 21 հուլիսի, 1887 թ.:

⁶³ Տե՛ս «Մշակ», 22 հոկտեմբերի, 1888 թ.:

բաժանմունքներում: Մ.Չոբիսիմե ուսումնարանում սովորում էր 84 երեխա, այդ թվում 7-ը՝ հոգևորականի, 1-ը՝ աստիճանավորի, 27-ը՝ վաճառականի, 5-ը՝ արհեստավորի, 44-ը՝ գյուղացիների: Նրանցից 25-ը փոխադրվեցին Ա բաժանմունքից Ք, 13-ը՝ Բ-ից Գ, 9-ը՝ Գ-ից Դ, 6-ը՝ Դ-ից Ե, իսկ 31-ը՝ մնացին երկտարեցիներ: Ինչպես տեսնում ենք երկու ուսումնարաններում ճնշող մեծամասնությունը գյուղացիների, հետո միայն առևտրականների և արհեստավորների երեխաներ էին: Երկու ուսումնարաններում միասին դասավանդում էին վեց ուսուցիչներ և ուսուցչուհիներ՝ Ջահնկալ Փիլոյանը (ավարտել է Երևանի թեմական դպրոցը), Կարապետ սարկավազ Տեր-Չովիանցիսյանը (տնային կրթությամբ), Դուկաս Մալինյանը (ավարտել է Երևանի գիմնազիան), Սողոմոն Սարգսյանը (ավարտել է Երևանի ուսուցչական սեմինարիան և թեմական դպրոցը), Շուշանիկ Մալինյանը (ավարտել է Երևանի Գայանյան դպրոցը), Համասփյուռ Տեր-Մարտիրոսյանը (ավարտել է Երևանի Գայանյան դպրոցը): Տարեկան տասցել են 300 ռուբլի (Համասփյուռ Տեր-Մարտիրոսյանը՝ 150 ռուբլի): Այլ խոսքով՝ 136 դասաժամի համար տարեկան ամբողջ աշխատավարձը կազմում էր 1650 ռուբլի⁶⁴:

Այս ընդհանուր առաջադիմությունում, անշուշտ, ակնհայտ էր նաև հոգաբարձության դերը: 1887 թ. հուլիսին ուսումնարանի դահլիճում կայացավ հոգաբարձուների ընտրությունը: Պատգամավորների ժողովը գործակալ Եղիազար քահանա Տեր-Միքայելյանի նախագահությամբ ընտրեց հոգաբարձուության խորհուրդ: Նրա կազմում ընտրվեցին բաղաճի հասարակայնության վստահությունը վայելող հեղինակավոր մարդիկ, որոնք չնայած բազում դժվարություններին գավառում արդեն երկար տարիներ ծավալել էին կրթամշակութային լայն գործունեություն, որպիսիք էին Գրիգոր քահանա Բալագյոզյանը, Հայրապետ Խաչատրյանը, Մաթևոս Աֆրիկյանը, Ստեփան Բատիկյանը և Ջոհրայա Ատոնյանը⁶⁵:

ժամանակի մամուլը հիացնունքով է արձագանքել

⁶⁴ Տե՛ս ԴԱ, ֆ. 7, ց. 1, գ. 9, ք. 30:

⁶⁵ Տե՛ս նու՛ն տեղում, ք. 39:

ուսումնարանի հոգաբարձության խորհրդի, մասնավորապես Մաթևոս Աֆրիկյանի գործունեության մասին: «Պետք է խոստովանել, որ Մաթևոս Աֆրիկյանը, որին պարտական է ուսումնարանը ներկա նոր շինարարության գոյության համար, այնքան եռանդով է աշխատում դպրոցի նյութականի վրա, որ արժանի է հրապարակավ շնորհակալության»- «Մշակ» թերթի խմբագրությանը խանդավառված գրում էին մի խումբ նորրայազետցիներ,- և այդ պատճառով էլ այս քանի օրը (օգոստոսի 20-ին) նա կաթողիկոսից ստացավ պատվավոր հոգաբարձության կոնդակ, ուսումնարանի նյութականի համար իր արած ջանքերի համար...»⁶⁶:

Ուշագրավ է, որ ճույնափի հիացական խոսքեր են գրվել հանրահայտ մեկ ուրիշ նորրայազետցու՝ Չայրապետ Խաչատրյանի հանձնառու ազգաշահ գործունեության մասին. «Եվ պետք է խոստովանել, որ հոգաբարձուներ Չայրապետ Խաչատրյանը և Մաթևոս Աֆրիկյանը մեծ աշխատություն են գործ դնում ուսումնարանի նյութականի վրա»⁶⁷:

Կրթական համակարգի և ընդհանրապես զավառի կյանքում առանձնակի երևույթ էր Կովկասյան հայոց բարեգործական ընկերության մասնաճյուղի բացվելը Նոր Բայազետ քաղաքում: Մասնաճյուղի գլխավոր նպատակն էր լինելու օգնել տեղի բազմաթիվ արքատ երեխաներին տարրական կրթություն ստանալու համար:

1889 թ. սկզբին մի խումբ նորրայազետցիներ և զավառապետ Սենյոնենկոն դիմեցին Կովկասյան հայոց բարեգործական ընկերության խորհրդին՝ Նոր Բայազետում ընկերության մասնաճյուղ բացելու իրավունք ստանալու խնդրանքով⁶⁸: Նույն տարվա մայիսին, ընդառաջելով նորրայազետցի իր անդամի Սենեքերիմ Արծրունու միջնորդությանը, ընկերության խորհուրդը թույլատրեց մասնաճյուղ բացել⁶⁹: Մայիսի 5-ին գոր-

⁶⁶ «Մշակ», 25 օգոստոսի, 1888 թ.:

⁶⁷ Տես «Մշակ», 30 սեպտեմբերի, 1886 թ.:

⁶⁸ Տես «Մշակ», 18 ապրիլի, 1889 թ.:

⁶⁹ Տես «Մշակ», 18 հունիսի, 1889 թ.: Այս փաստին բերքն անդրադարձել է ավելի ուշ, մեկ այլ առիթով:

ծակալ եղիվազար քահանա Տեր-Միքայելյանի նախագահությանը Ստեփան Բատիկյանի գրադարանում⁷⁰ կայացած ժողովը զարդանի քվեարկությանը բարեգործականի վարչության անդամներ ընտրեց Գևորգ Արծրունու, Ստեփան Բատիկյանին, Արշակ Մամիկոնյանին, Երվանդ Ատոնյանին և Ավետիս Բուռնազյանին⁷¹:

1889 թ. վիճակով Նոր Բայազետի ամբողջ զավառի 130 բնակավայրում հաշվվում էր ընդամենը հինգ կրթօջախ, որից երկուսը Նոր Բայազետ քաղաքում, մեկը՝ հայոց հոգևոր երկեսն Օխակյան, իսկ մյուսը՝ Ս. Դոմիսիմե-Մեսրոպյան, երրորդը՝ Դալի-դարդաշ գյուղում, չորրորդը՝ Ելենովկա գյուղում, իսկ հինգերորդը՝ Բասարգեշար գյուղում⁷²:

Վիճակագրական տվյալները ցույց են տալիս, որ նախորդ ուսումնական տարվա համեմատությամբ 1888-1889 թթ. ուսումնական տարում Ս. Դոմիսիմե-Մեսրոպյան ուսումնարանը, բացի հոգաբարձության խորհրդի կազմից⁷³, զգալի փոփոխություններ է կրել՝ 37-ով ավելացել է սովորողների թիվը և հասել է 288-ի (205 տղա, 83 աղջիկ): Ցածր վարքի, անբավարար առաջադիմության և ուսման վարձը չվճարելու պատճառով երկու ուսումնարաններից միասին հեռացվել է 26 աշակերտ (12-ը՝ աղջիկ, 14-ը՝ տղա): Շարքաքական դասաժամերի թիվը նախորդ տարվա 136-ի դիմաց կազմել է 174 ժամ: Բարձրացել

⁷⁰ 1884 թ. Ստ. Բատիկյանի միջոցներով Նոր Բայազետում բացվում է գրադարան-ընթերցարան: Գնված, նվիրված, ստացված գրքերի մոտավոր թիվը եղել է 1000 միավոր: Ֆինանսական դժվարությունների պատճառով գրադարանը մի քանի տարով (1897-1902 թթ.) փակվել է: Տեղի գործակալ Խորեն վարդապետ Մուրադբեկյանը կոչով դիմում է քաղաքի ազգաբնակչությանը՝ սրտաբուխ նվիրատվությամբ օգնել գրադարանին հաղթահարելու ֆինանսական դժվարությունները: Գրադարանը վերաբացվում է: Կարճ ժամանակ անց (5-6 ամիս) դրանի սղության պատճառով վերստին փակվում է: 1904 թ. հուլիսի 20-ին զավառապետ Ստեփան Դրոզդյանի ջանքերով վերաբացվում է: Տես «Մշակ», 10 ապրիլի, 1902 թ., «Մշակ», 22 օգոստոսի, 1904 թ.:

⁷¹ Տես «Մշակ», 16 մայիսի, 1889 թ.:

⁷² Տես ՉԱԱ, ֆ. 7, գ. 1, գ. 9, ք. 30, ֆ. 19, գ. 1, գ. 358, ք. 5-7, գ. 267, ք. 6, «Մշակ», 8 հունիսի, 1889 թ.:

⁷³ Տես ՉԱԱ, ֆ. 7, գ. 1, գ. 32, ք. 41:

է ուսուցման որակը կապված որակյալ ուսուցչական կադրերով ուսումնարանը համալրվելու հետ: Բավական է նշել, որ ուսուցչական կազմը 71,5%-ով նորացվել է: Հմարճականներ Սարգիս Փիլոյանին և Համասփյուռ Տեր-Մարտիրոսյանին միացել են նորեկներ Վասակ Մկրտչյանը (Երևանի թեմական դպրոցի սան), Ջաքարիա Փիրկեյանը (ավարտել է Երևանի թեմական դպրոցը), Իգնատիոս Վիրաբյանը (Երևանի ուսուցչական սեմինարիայի շրջանավարտ), Արմենակ Գասպարյանը (ավարտել է Երևանի գիմնազիան) և Կատարինե Հովհաննիսյանը (Երևանի Գայանյան դպրոցի սան), որի համար տարեկան ստացել են 300-ից մինչև 350 ռուբլի, այսինքն ուսուցիչների տարեկան ընդհանուր աշխատավարձի գումարը եղել է 2140 ռուբլի նախորդ տարվա 1650 ռուբլու դիմաց⁷⁴:

1892 թ. հուլիսի 5-ին մեծ շուքով նշվեց Ս. Հռիփսիմե-Մեսրոպյան ուսումնարանի հիմնադրման 40-ամյակը: Ուսումնարանի հիմնադիր Բարսեղ Արծրունու հիշատակին կատարվեց հոգեհանգստյան արարողություն, որից հետո սկսվեց հանդիսությունը: Ներկա էին գավառի հասարակայնության ներկայացուցիչներ, պաշտոնատար անձինք, ուսումնարանի տարբեր տարիների շրջանավարտներ և ուսուցչական կազմը: Տոնահանդես բացեց տեղի գործակալ Կյուրեղ վարդապետ Կյուրեղյանը: Ընդարձակ ճառով հանդես եկավ ուսումնարանի ավագ վարժապետ (նույնն է տնօրեն) Սարգիս Փիլոյանը: Նա հանգամանորեն ներկայացրեց ուսումնարանի 40 տարվա աշխատանքային գործունեության ձեռքբերումների, բացթողումների և հետագա անելիքների մասին:

Բանախոսը ընդգծեց, որ չնայած դժվարություններին հոգաբարձուների խղի ուրոգ, տեղական իշխանությունները և հասարակայնությունը, հասկանալով նախորդ տարիներին ուսումնարանի կատարած դերը քաղաքի և գավառի կրթության և առհասարակ մշակութային կյանքի զարգացման գործում, մշտապես ուշադրության կենտրոնում են ունեցել կրթօջախի հոգերն ու խնդիրները⁷⁵:

⁷⁴ Տես նույն տեղում, ք. 32-33:

⁷⁵ Տես ԴԱԱ, ֆ. 227, ց. 1, գ. 102, ք. 27-28:

Ուսուցիչ Ի. Խաչատրյանը մասնակիցների ուշադրությունը հրավիրեց գրադարանի վիճակի և ավարտական քննությունների վրա: Կարևորելով գրադարանի նշանակությունը բանախոսը ընդգծում է, որ նվիրատուներն են նորահոր գրքեր ու պարբերականներ և գոհունակությամբ նշում է, որ հարուստ գրադարան ունենալու ծրագիրն իրականություն է դառնում: Ըստ բանախոսի, նշված ուսումնական տարում ուսումնարանի հինգերորդ բաժանմունքն ավարտելու են 7 (2-ը՝ տղա, 5-ը՝ աղջիկ) աշակերտներ, որոնք ստանալու են ոսկեգոծ տառերով տպված ավարտական վկայականներ⁷⁶:

Քառասուն տարիների ընթացքում ուսումնարանում աշխատել են 38 ուսուցիչ և 11 ուսուցչուհի⁷⁷: Այդ և հետագա տարիներին կրթօջախում աշխատել են էջմիածնի Գևորգյան ճեմարանի սան, հետագայում անվանի գրող, պետական և համարային գործիչ Ավետիս Ախարոնյանը, Սորբոնի համալսարանի շրջանավարտ, ականավոր գիտնական-լեզվաբան Հրաչյա Աճառյանը, Հովհաննես Ջանազիզյանը, Հասմիկ Նազարյանը, Գևորգ Շահինյանը, Գևորգ Դանիելյանը, Հռիփսիմե Աբրահամյանը, Մաթևոս Աֆրիկյանը, Գաբրիել Ավետիսյանը, Գևորգ Բախկյանը, Լևոն Պետրոսյանը, Արշակ Սինանյանը, Վահան Տեր-Հովակիմյանը, Գեղամ Տեր-Արծրյանը, Խաչատուր Բունիաթյանը, Գևորգ Քարամյանը, Մադաթ Դաշտոյանը, Արիստակես Մանուկյանը, Օլգա Մանուկյանը, Նվարդ Կանայանը, Վարսենիկ Եղիազարյանը, Հայկանուշ Բարոյանը, Իգնատիոս Մովսիսյանը, Վասակ Մկրտչյանը, Սարգիս Փիլոյանը, Կատարինե Հովհաննիսյանը և շատ ուրիշ նվիրյալներ⁷⁸:

Ազգային և հոգևոր գործիչների ջանքերով XIX դ. 90-ական թվականներին գավառի մի շարք բնակավայրերում բացվեցին նոր դպրոցներ:

1891 թ. հոկտեմբերին վերաբացվեց Փաշաքենդի եկեղե-

⁷⁶ Տես նույն տեղում:

⁷⁷ Տես «Մշակ», 11 հունիսի, 1892 թ.:

⁷⁸ Տես ԴԱԱ, ֆ. 7, ց. 1, գ. 32, ք. 32-33, գ. 9, ք. 30, գ. 99, ք. 27-28, 31, ֆ. 56, ց. 15, գ. 279, ք. 4-5, գ. 269, ք. 90-91:

ցական-ծխական դպրոցը, որի նախաձեռնողը Կյուրեղ վարդապետ Կյուրեղյանն էր⁷⁹:

1896 թ. վերջին ընդառաջ զնայով տեղի գործակալ Սիոն վարդապետի և հոգաբարձության խորհրդի խնդրանքին կաթողիկոս Գևորգ Ե-ն ղեկտեմբերի 31-ին թիվ 1869 կոնդակով արտուցեց 1897 թ. փետրվարին բացել և որ Բայազետ քաղաքում եկեղեցական-ծխական միդասյան երկսեռ դպրոց⁸⁰: Փետրվարի 22-ին բացվեց դպրոցը 60 աշակերտով⁸¹:

Վերը շարադրվածը բավարար հիմք է տալիս պնդելու, որ և՛ որ Բայազետի գավառի իրականության մեջ կրթական կյանքը շարունակում էր մնալ խավախու և կարեկցանքի մեջ: Բավական է մշել, որ 1897 թ. մարդահամարի տվյալներով և՛ որ Բայազետ քաղաքում 8486 բնակչության մեջ զրագետների տեսակարար կշիռը կազմում էր 17,4%-ը, իսկ նրա գավառում (122573 մարդ) ընդամենը 3,9%-ը⁸²: XIX դ. վերջին և XX դ. սկզբներին հայոց եկեղեցական-ծխական դպրոցներին նոր փորձություն էր սպասվում: 1896 թ. Կովկասի նոր կառավարչապետ⁸³ նշանակվեց Գրիգորի Գուլիցինը, որը Կովկաս գալով շարունակեց իր նախորդի Ալեքսանդր Դունդուկով-Կորսակովի հայախալած քաղաքականությունը:

Նրա խորհրդով և՛ հիկոլայ 2-րդը 1897 թ. հունիսի 14-ին հրամանագիր ստորագրեց, որով հայկական-ծխական դպրոցները հանձնվեցին կրթության նախարարությանը՝ «նոր սերունդը հայ կղերի վնասակար ազդեցությունից պաշտպանելու»⁸⁴ անվան տակ: Դժգոհությունը համազգային էր, իսկ եկեղեցու ցասունը՝ չենթարկվել այդ հրամանին, շատ հասկանալի: Նույնքան հասկանալի էր և դրան հետևող քայլը՝ կայսրի համաձայնությանը

⁷⁹ Տես «Մշակ», 19 նոյեմբերի, 1892 թ.:

⁸⁰ Տես «Մշակ», 30 հունվարի, 1897 թ.:

⁸¹ Տես «Մշակ», 5 մարտի, 1899 թ.:

⁸² "Первая всеобщая перепись населения Российской империи 1897 г. Министерство внутренних дел, цент, стат. Комитет. Эриванская губерния", LXXI. СПб., 1905 г. с. 1.

⁸³ 1882 թ. Կովկասի փոխարքայությունը փոխարինվեց կառավարչապետությամբ:

⁸⁴ «Հայրենիք», թիվ 4, փետրվար, 1929, էջ 104:

Գուլիցինի հրամանով 351 ծխական դպրոցներից 320-ի, իսկ որոշ ժամանակ անց՝ մնացած 31 դպրոցներից մի քանիսի փակվելու փաստը: Փակված դպրոցների սեփականությունը փոխանցվեց կրթության մինիստրությանը⁸⁵: Դերը հասավ բարեգործական ընկերություններին: 1899 թ. փակվեցին հայկական բոլոր բարեգործական կազմակերպությունները՝ մասնավորապես «Հայկական մարդասիրական ընկերությունը», «Հայ կանանց բարեգործական միությունը», «Կովկասյան բարեգործական ընկերությունը»:

1903 թ. Գուլիցին- և՛ հիկոլայ 2-րդ երկյակը կատարեց հաջորդ ավերությունը: Վերջին 1903 թ. հունիսի 12-ին ստորագրեց հայկական եկեղեցու ունեցվածքի և կալվածքների բռնագրավման մասին օրենքը⁸⁶:

Հատկանշական է, որ նույն թվականին, ինչպես Երևանի ամբողջ նահանգի, այնպես էլ քննության առարկա գավառի մի քանի գյուղերում Ալեքսանդրովկայում, Աուխոյ Ֆոնտանում, Նաղեժդինոյում, Սենյունովկայում և Ներքին Ղարանդուլում բացվեցին ռուսական պետական դպրոցներ, ավելացնելով արդեն 1900 թ. գործող Ներքին Ախտայի (ռուսական), Կոնստանտինովկայի (ռուսական), Մազրայի (թուրքական) գյուղերի և Նոր Բայազետի (հիմնվել է 1901 թ.) պետական դպրոցների թիվը⁸⁷: Ո՞րն էր այս միջոցառման պատճառը՝ աստիճանաբար ռուսաց լեզվի տարածման միջոցով ռուսացնել հայությանը, գտնելով, որ «... հայերը Մերձավոր Արևելքում այլևս իրեն հարկավոր չեն»⁸⁸:

Այսպիսի հեղափոխական հուժկու ցնցումները, ազգամիջյան արյունալի բախումները Անդրկովկասի երկրամասը վերածել էին եռացող կաթասի, ինչի նկատմամբ անգիտանալը կարող

⁸⁵ Տես Գ. Լազեան, Հայաստանը և հայ դատը հայ և ռուս յարաբերություններու լոյսին տակ, Ե., 1991, էջ 92-93, 7. *Միմոնյան*, Ազատագրական պայքարի ուղիներում, գիրք I, Ե., 2003, էջ 274:

⁸⁶ Տես ԳԱԱ, ֆ. 101, գ. 1, գ. 50, ք. 3-4:

⁸⁷ Տես ԳԱԱ, ֆ. 19, գ. 1, գ. 267, ք. 8, գ. 338, ք. 3-9, գ. 358, ք. 5-9, 17-19:

⁸⁸ Ա. Ամֆիտեատրով, Եվրոպա և Հայաստան, Թիֆլիս, 1906, էջ 22-23:

էր կայսրության համար ունենալ կործանարար հետևանք: Այդ բանը լավ էին հասկանում ինչպես Անդրկովկասի կառավարողները, այնպես էլ կայսրության բուրգին նստած դեկավար այրերը: Անհրաժեշտ համարվեց Անդրկովկասի երկրամասում վարել զգույշ և կշռադատված քաղաքականություն, հեռու մնալ կոնֆլիկտային իրավիճակներից և ամեն զնով վերականգնել կայսրության խաթարված հեղինակությունն ու վստահությունը: Միա քե՛ ինչու տոցիալ-քաղաքական նոր իրավիճակում Լիկոլայ 2-րդ կայսրը պարտադրված եղավ 1905 թ. օգոստոսի 1-ին արձակած հրամանով չեղյալ հայտարարել հայ եկեղեցական և վանական կալվածքներն ու զույթը բռնագրավելու մասին 1903 թ. հունիսի 12-ի իր իսկ ստորագրած հրամանը, որով հայ եկեղեցուն էին վերադարձվում նրան պատկանող ունեցվածքը, կրթական գործերով զբաղվելու իրավունքը և թույլատրվում էր եկեղեցիներին կից բացել եկեղեցական-միասնական դպրոցներ՝ փոփոխված ուսումնական ծրագրերով: Դպրոցական ծրագրերում կրոնի առարկայի դասաժամերի հաշվին ավելացել էր բնագիտական առարկաների և լեզուների դասաժամերի քանակը⁸⁸: Տարրական միդասյա դպրոցների ուսուցման տևողությունը հասցվեց չորս տարվա, իսկ երկդասյաններին՝ վեց տարվա: Քաղաքական ուղղվածության առումով, պետք է ընդգծել, որ այս միջոցառումը հայ եկեղեցու ազդեցությունը թուլացնելու և պետական իշխանության դիրքերն ամրապնդելու մի փորձ էր, ինչը և կատարվում էր փաստորեն:

Հայկական փակված դպրոցներն արագորեն սկսեցին վերաբացվել: Ձուզընթաց բացվեցին նորերը: Երկու կատարվում էր Նոր Բայազետի գավառում: 1905-1906 թթ. վերաբացվեցին Նոր Բայազետի Ս. Դոնիսիմեն-Մեսրոպյան, Փաշաբենդի և Ալափարսի միասնական դպրոցները: Երկու տարիներին բացվեցին Ներքին Ախտայի (հայաբնակ) և Ոնդամալի միասնական դպրոցները⁸⁹: 1906-1907 թթ. պետական դպրոցներ բացվեցին Աղզիբիրում (թուրքաբնակ) և Ծաղկունքում⁹⁰:

⁸⁸ Տե՛ս «Դայ ժողովրդի պատմություն», հ. VI, էջ 764:

⁸⁹ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 56, ց. 15, գ. 265, քք. 90-91:

⁹⁰ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 19, ց. 1, գ. 267, քք. 9-12:

Սուր հենարավորություններ ունեցող սակավաթիվ դպրոցները հազիվ կարողանում էին իրենց պատերից ներս առնել դպրոցահասակ երեխաների միայն շատ չնչին մասին: «Սովորելու ձգտումը, – գրում էր ժամանակի մամուլը, – հայոց ուսումնարանների փակվելուց հետո զգացվում է նույնիսկ գյուղական խուլ անկյուններում: Սակայն պետք է խոստովանել, որ այդ ձգտումը շատերի համար ուժից վեր է հեռու տեղեր ուղարկել տվորելու համար: Իսկ ով որ միջոց չունի երեխային ուրիշ տեղեր ուղարկելու, դրանց երեխաները զրազհիսություն սովորում են կամ գյուղական քահանայի կամ տիրացու խալիֆայի մոտ»⁹¹: Կային գյուղեր, որոնց բնակիչների 95%-ը անգրագետ էր⁹²:

Միա այդ ղեկավարությունները վերացնելուն էին միտված խորեն վարդապետ Մուրադբեկյանի քաճքերը՝ Նոր Բայազետի գավառում դպրոցական կյանքի կազմակերպման ու զարգացման համար:

Խորեն Մուրադբեկյանը գավառում դպրոցական գործի կազմակերպման ուղղությամբ նախատեսվելիք ծրագրերը շարադրել է, մեզ արդեն հայտնի 1908 թ. հունիսի 22-ին Կովկասյան հայոց բարեգործական ընկերության խորհրդի անունով գրած նամակում: Համառոտեմք կրթական կյանքին վերաբերող մտքերից ամենակարևորները, որոնք համաձայնորեն վերլուծել է նա: «Այս ամսույս, շրջելով վիճակ կազմել եմ բավականին թվով համախոսակամներ դպրոցներ բանալու համար, որոնցից 10-ը ամենամեծ ու աչքի ընկնող և առաջին կարգի գյուղերի համախոսակամներն ուղարկել եմ Քաթվա կուլտուրական ընկերությանը: Այս գյուղերն են Երանոս, Կալիաղալու, Ն. Աղյաման, Ալիդրիս, Վ. Դարանլուղ, Գյուլ, Ձուլախաչ, Ջաղալու, Քուլաղան, Փաշաբենդ:

Այն գյուղերում (Դալիդարաչ, Ներքին Դարանլուղ, Բասաղզեչար), որտեղ կան պետական դպրոցներ, առայժմ միասնական դպրոցներ բանալու կարիք չեմ համարում: Գավառիս երկու

⁹¹ «Աշակ», 2 փետրվարի, 1901 թ.:

⁹² Տե՛ս «Աշակ», 20 հունիսի, 1908 թ.:

ամենամեծ գյուղերի (Նորատուս և Ներքին Գյոզալդարա) համախոսակաճները չեն ուղարկել Կուլտուրական միությանը, որովհետև այդ գյուղերում դպրոցներ բանալու մասին ես անձամբ խոսել եմ պ. Տ. Աֆրիկյանի հետ, որը խոստացել էր առաջիկա սեպտեմբերից նպաստներ տալ (500-ական) այդ գյուղերին, որպիսի խոստման հիման վրա էլ ես այդ գյուղերում պատրաստել եմ շինություններ, իսկ Նորատուսում և դասարանական կահկարասի:

Այդ երկու համախոսակաճները ուղարկում եմ խորհրդրդիդ, ուղարկածս ցուցակներից խորհուրդը կտեսնի, որ 50 գյուղ դպրոցներ չունի, և որովհետև Կուլտուրական միությունը նույնպես ցանկություն ունի մեր գավառում դպրոցներ բանալու, ուստի լավ կլինե՞ր, որ խորհուրդը բացի Նորատուսից և Ն. Գյոզալդարայից նշանակեր նաև 8 դպրոցի նպաստ, որոնցից մեկը կբացվի Ղուլալի գյուղում, որից համախոսական չի ստացված, իսկ մյուսները՝ կորոշվեն այն ժամանակ, երբ Կուլտուրականից նույնպես պատասխան կստացվի: Համենայն դեպս, հուսալով, որ Կուլտուրական միությունը կընդունի բոլոր տաս համախոսակաճները, ուղարկում եմ խորհրդիդ, բացի Նորատուս և Ն. Գյոզալդարա գյուղերի համախոսականներից նաև 11 համախոսակաճներ, որոնցից 7-ը կազմված են Գեղարքունյանց մասում, իսկ 4-ը՝ Ծաղկածորի մասում: Ինչ վերաբերում է նպաստին, կարծում եմ, որ զոնե առաջին տարին պետք է նպաստ տալ գյուղական դպրոցներին 500-ական ռուբլի, որովհետև առաջին տարին կան ուրիշ այլ ծախքեր, որն անելու են գյուղացիք: Ծաղկածորի մասում կարելի է տալ 200-300 ռուբլի նպաստ»⁹⁸:

Խնդրի այդպիսի լուծումը հավանություն է զտնում Կովկասյան հայոց բարեգործականի կողմից: Հասարակությունը և անհատ բարերարները ևս այն համարում են իրատեսական և ընդունելի: Առանձնապես անհանգստացնում էր դպրոցական շենքերի հարցը: Խնդրի լուծվեց շենքեր վարձակալելու ճանապարհով: Բարեգործական ընկերությունը հատկացումներ կատարեց դպրոցական շենքեր վարձելու համար: 1907-1908 թթ. նոր ծխական դպրոցներ բացվեցին Ղուլալի, Քարվանսարա,

⁹⁸ ՀԱԱ, ֆ. 28, գ. 1, գ. 300, ք. 6-7:

Նորատուս, Ցամաքաբերդ, Չիբուխլու, Օրդաքլու, Քեռլաղաճան, Ներքին Գյոզալդարա գյուղերում: Փաստորեն 1907-1908 թթ. ուսումնական տարում Նոր Բայազետի գավառում գործում էր 24 դպրոց՝ 1754 աշակերտով, որից 297 աղջիկ, 47 ուսուցիչով⁹⁹: Դա նշանակում էր, որ նշված ուսումնական տարում Նոր Բայազետի գավառում սովորում էր ընդհանուր քնակչության մոտ 1,6%-ը¹⁰⁰: Ծխական դպրոցների տարեկան մուտքի անորոշ գումարը կազմել է 9272 ռուբլի, իսկ ելքինը, այսինքն ծախսային մասը՝ 9281 ռուբլի¹⁰¹: Հատկանշական է, որ վերոգրյալ չորս՝ Ոնդամալ, Չիբուխլու, Օրդաքլու, Ներքին Ախտա, իսկ 1909 թ. նաև Նորատուս, Դոմաշեն (Չիբուխլուի փոխարեն) և Ներքին Գյոզալդարա գյուղերի դպրոցները գործում էին Տիգրան Աֆրիկյանի միջոցներով: Բավական է նշել, որ Տ. Աֆրիկյանը միայն 1909-1910 թթ. հիշյալ դպրոցներին հատկացրել է 2700 ռուբլի ուսումնական ծախսերի համար¹⁰²:

Ուշագրավ մի փաստ ևս: Տ. Աֆրիկյանը ոչ միայն հարկավոր նպաստ էր բերում դպրոցապահականմանը, այլև՝ դպրոցաշինությանը: Կարծում ենք մեկ օրինակն էլ բավական է դրանում համոզվելու համար:

1907 թ. փետրվարի 3-ին Ներքին Ախտայի քնակչության կողմից «Մշակ» թերթի խմբագրությանը հասցեագրված նամակում մասնավորապես նշվում էր. «Թույլ տվեք Ձեր հարգելի լրագրի միջոցով, հայտնել խորին շնորհակալություն և Ախտայ գյուղի հասարակության և հոգաբարձության կողմից, Թիֆլիսաբնակ պ. Տիգրան Աֆրիկյանին..., որ բարեհաճեց հատկացնել դպրոցին տարեկան 500-ական ռուբլի նպաստ անորոշ ժամանակով և նվիրեց 200 ռուբլի հարմար դպրոցական շինություն

⁹⁹ Հաշվարկը կատարվել է ՀԱԱ, ֆ. 56, գ. 15, գ. 182, ք. 9, գ. 513, ք. 175-179, գ. 265, ք. 90-91, ֆ. 28, գ. 1, գ. 300, ք. 83-84, ֆ. 19, գ. 1, գ. 267, ք. 6-19, գ. 338, ք. 3-21, գ. 1748, ք. 13-15 տվյալների հիման վրա:

¹⁰⁰ Հաշվարկը կատարվել է ըստ վերը նշված աղբյուրների և զուգակցված ֆ. 101, գ. 1, գ. 85, ք. 5, տվյալների:

¹⁰¹ Տես ՀԱԱ, ֆ. 56, գ. 1, գ. 182, ք. 9:

¹⁰² Տես ՀԱԱ, ֆ. 28, գ. 1, գ. 300, ք. 83-84:

կառուցելու համար»: Մեքերեման ավարտը. «Ցանկալի էր, որ տեղական ունևոր և հասկացող մասն ևս հետևեր պ. Աֆրիկյանի օրինակին»⁹⁹:

Չնայած անբարենպաստ պայմաններին, բարեգործական ընկերությունները և տեղի հասարակայնությունը զգալի աշխատանք կատարեցին կրթական օջախները ընդլայնելու և նրանցում սովորողների թիվը մեծացնելու ուղղությամբ:

1909-1910 թթ. ընթացքում զավառում շարունակվում էր դպրոցների թիվն ավելանալ: Նոր դպրոցներ բացվեցին Դոմաշեն, Սոլակ և Չոլախաջ գյուղերում¹⁰⁰:

1908 թ. սկսվեց Նոր Բայազետի երկսեռ ծխական նորակառույց դպրոցի շինարարությունը, որի նախածեռնողը Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխառնորդ խորեն վարդապետ Մուրադբեկյանն էր: Դպրոցի նախագծի հեղինակն ինժեներ Սիրոյանն էր: Շենքը բաղկացած էր լինելու երկու մասից՝ տղաների և աղջիկների մասնաշենքերից: Նախահաշիվը 20 հազար ռուբլի էր յուրաքանչյուր մասնաշենքի համար: Աղջիկների մասնաշենքի շինարարության կես ծախսը հանձն առավ Հայրապետ Խաչատրյանը, պայմանով, որ իր անունը փորագրվի դպրոցի շենքի ճակատին,¹⁰¹ ինչը և արվեց, իսկ տղաների մասնաշենքը կառուցվեց հանրության ուժերով: Շինարարական մասնածողովը, նախագահությամբ խորեն Մուրադբեկյանի, հանգանակություն բացեց հօգուտ դպրոցական շենքի կառուցմանը: Հասարակայնությունն իր հնարավոր նպաստն էր բերում դպրոցաշինությանը: Օրինակ, ճանաչված բժիշկ Վահան Արծրունին մվիրատվություն արեց 1500 ռուբլի¹⁰²:

Մայիսի 14-ին սկսվեց հիմքը փորելու աշխատանքը, որին մասնակցեցին քաղաքի համքարները, առաջին օրը աշխատեցին կոշիկակարները, երկրորդ օրը՝ ատաղձագործների միությունը, երրորդ օրը՝ դարբինների համքարությունը, հաջորդ օրը՝

⁹⁹ ՀԱԱ, ֆ. 227, ց. 1, գ. 125, թ. 10:

¹⁰⁰ Տե՛ս «Մշակ», 5 դեկտեմբերի, 1908 թ., ՀԱԱ, ֆ. 7, ց. 1, գ. 156, թթ. 9-13:

¹⁰¹ Տե՛ս «Մշակ», 14 մարտի, 1908 թ.:

¹⁰² Տե՛ս «Մշակ», 4 օգոստոսի, 1908 թ.:

դերձակները և այլն: Դպրոցի շինության հիմքը փորելուց հետո հունիսի 14-ին հոգևորականները կատարեցին հիմնօրհներգությունը¹⁰³: Դպրոցի աղջիկների մասնաշենքի կառուցումը¹⁰⁴ հիմնականում ավարտվեց 1910 թ. վերջին, իսկ շինության մյուս մասը, որը կառուցվում էր հանրության միջոցներով, 1909 թ. կանգ էր առել ֆինանսական սուղ միջոցների պատճառով¹⁰⁵:

Օգնության ձեռք մեկնեց Գ. Խաչատրյանը: Տեղին է նշել, որ գիր ու գրականության հարգը իմացող, ժամանակի շունչը զգացող, արտակարգ խելքի տեր, փորձառատուն այս մարդու բռնած յուրաքանչյուր գործ ոչ միայն մեծ պատիվ էր նրա համար, այլև մեծ պատասխանատվություն սեփական ժողովրդի առջև: Այդ ամենը հայտնի էին անգամ նահանգի աշխարհիկ և հոգևոր բարձրաստիճան այրերին: Բնավ պատահական չէ, որ 1905 թ. Ա. Աստվածածին եկեղեցու¹⁰⁶ օժանդակ արարողությանը

¹⁰³ «Մշակ», 4 օգոստոսի, 1908 թ.:

¹⁰⁴ Միավամբ այն համարվել է 1905 թ. կառույց: Տե՛ս «Բյավառ», էջ 101:

¹⁰⁵ Տե՛ս «Մշակ», 24 սեպտեմբերի, 1910 թ.:

¹⁰⁶ Ա. Աստվածածին եկեղեցին կառուցվել է 1905 թ. խորեն վարդապետ Մուրադբեկյանի նախածեռնությամբ, Հայրապետ Խաչատրյանի դրամական օգնությամբ և հասարակայնությունից հանգանակած զրամական միջոցներով: 1902 թ. հուլիսի 14-ին Սևանի վանքի վանահայր Սարգիս եպիսկոպոս Փիլոյանը, տեղի հոգևորականության մասնակցությամբ կատարեց նորակառույց եկեղեցու հիմնօրհներգությունը: «Մշակ» թերթը այսպես է ներկայացնում հիմնօրհներգությունը. «Պատարագից հետո, ժ. 12-ին հոգևոր դասը զգեստավորված Ա. Կարապետ եկեղեցուց դուրս գալով, հանդիսավոր քափորով անցավ դեպի նորակառույց եկեղեցին և սկսեց օրհնության ծիսակատարությունը: Թափորի հետ գնում էին 16 հոգի «քավորներ» (9-ը՝ կին, 7-ը՝ տղամարդ), որոնք ափսիս մեջ ձեռքներին կրում էին 16 հատ քարեր, որոնք պետք է քաղվեին եկեղեցու հիմքի մեջ, ի հիշատակ 12 առաքյալների և 4 ավետարանչի»: «Մշակ», 25 հուլիսի, 1902 թ.: Մեր ձեռքի տակ է Գ. Մինանյանի Ա. Աստվածածին եկեղեցու կառուցման պատմությանը վերաբերող ուշագրավ մի հրապարակումը, որը տեղ է գտել «Մշակ» թերթի 1902 թ. համարներից մեկում: Մեջ ենք բերում ամբողջությամբ. «Նոր Բայազետի Ա. Աստվածածին եկեղեցին մոտ 8 տարի է ինչ փակված մնում էր խարխուլ լինելու համար, արդեն քանդել են և կաննում են նորից շինել:

Նոր Բայազետ ժամանած Մկրտիչ Խրիմյանը աստվածաշնորհ բառերով համենեց մեծարանքի իր խոսքը 7. Խաչատրյանի պատվին: Մինչ մեծ բարեբարը և նախկին երեցփոխը օրնիօրն հևհև զբաղված էր հանրային գործերով, Խրիմյան կաթողիկոսը 1910 թ. սեպտեմբերի 20-ին օրհնության կոնդակով պատվում է

Եկեղեցու հին շենքի քանդելու աշխատանքին, որ 1000 ռուբլի ավելի փող կմտներ հասարակության վրա, ճրիաբար մասնակցեցին տեղի «ասնափենները» և այլ դասակարգեր: Ամեն մի «ասնափ» առանձին-առանձին խմբով հերթով աշխատում են եկեղեցու շենքը քանդելու և հիմքը փորելու վրա: Աշխատանքին մասնակցում են նաև առաջնակարգ վաճառականները անձամբ: Երկուսիսկ շրջակա գյուղացիները գործակալի հորդորմամբ, մասնակցում են մեր եկեղեցու աշխատանքին՝ իրենց սայլերով ճրիաբար քար ու հող կրելով: Աշխատանքի ամբողջ ընթացքում ամեն օր նվազում է ասիական երաժշտությունը՝ դալի ու զուռնան, ավելի գործելու եռանդ ներշնչելով բանվորներին, որոնք իրավոր, մի սիրտ և մի հոգի դարձած աշխատում են անտրտուճ, օրական 200-300 ծրի բանվոր տալով: Իսկ դրանց բոլորին ճաշելու համար ամեն օր պատրաստվում է «մատաղ» քանվորների սեփական ծախսով: Եկեղեցու կառուցումը արդեն կապավում է տրված նախանգական իմժեներ Միրզոյանցին՝ 18000 ռուբլով, որը պարտավոր է մեկ ու կես տարվա ընթացքում պատրաստել: Իսկ շենքի նյութերից քաղաքը պարտավոր է հայրիաթել 150 տակառ ցեմենտ և ամբողջ քարն ու ավազը կրել, որոնք հաշվելով կողմնակի ծախսերի հետ կլինի մոտ 7000 ռուբլի: Ուրեմն եկեղեցին շինելուց և պատրաստելուց հետո կմտնի մոտ 25 հազար ռուբլի: Սակայն մեր եկեղեցին այն աստիճանի աղքատ է, որ այդ գումարը ոչ միայն մեկ ու կես տարում, այլևս տասը տարումն էլ անկարող է վճարել, ուստի, կառուցման գործը չիտանաձեղելու նկատմամբ, տեղացի պարոններ 7. Խաչատրյանը և Խ. Բուհիսյանը փոխարինարար զիջեցին 3000-ական ռուբլի յուրաքանչյուրը, որ և 6000 ռուբլին իսկույն հանձնեցին Միրզոյանցին: Մյուս մնացյալ կապալազինը 12000 ռուբլին քաղաքը պարտավոր է վճարել յուրաքանչյուր 6 ամսում 6000-ական ռուբլի: Այդ պատճառով, ապագա վճարումների համար արդեն հանձնանկություն է քաջվել տեղական ժողովրդի մեջ, նախագահությանը Խորեն վարդապետ Մուրադբեյլյանի», Աշակ», 3 հուլիսի, 1902 թ.: Ուշագրավ մեկ այլ հրատարակում է: 1902 թ. օգոստոսի 26-ին քաղաքային դումայում Խորեն Մուրադբեյլյանը առաջարկում է «...քաղաքացիներին Ս. Աստվածածին եկեղեցու շինության վրա սայլերով ճրիաբան աշխատելը հերթական դարձնել՝ թուր սայլեր ունեցողների համար անխտիր (սայլ չունեցողները

երան՝ դպրոցի և եկեղեցու կառուցմանը բացառիկ մասնակցության համար: Մեծ էր հայրենակիցների խանդավառությունը, արժաքանքները նույնպես: Սիս դրանցից մեկը:

Սեպտեմբերի 20-ին ծխական դպրոցի դալիժնում հավաքվել էր շուրջ 30 մարդ: Սկսվում է ժողովը, որը նախագահում էր քաղաքագլուխ Ստեփան Բատիկյանը: «Աշակ» թերթը այսպես է ներկայացրել. «Ամսի 20-ին Նոր Բայազետի ծխական դպրոցի հոգաբարձությունը առանձին թղթով հրավիրեց քաղաքի առաջնակարգ դասի 20-30 ամենաց ծխական ժողովի: Ջրադմուռնի առարկան էր Վեհափառ կաթողիկոսի այն օրհնության կոնդակը, որ տրված է հանուն մեր քաղաքի բազմաշխատ, նախկին երեցփոխ 7այրապետ Խաչատրյանին, որ ամբողջ 20 տարի ծառայել է հօգուտ և ի պայծառությամբ տեղիս եկեղեցիների, դեռևս մի խոշոր զոհաբերություն է արել ծխական դպրոցին, այն է՝ հանձն է առել իր ծախսով շինել դպրոցի օրիորդաց մասը քաղաքային այգուս, որի վրա ծախս է նստել մոտ 10000 ռուբլի: 7ենց այդ նպատակով էլ արվել է կաթողիկոսի կոնդակ»¹⁰⁷: Վերջում ընթերցվում է օրհնության կոնդակը: Բարեբախտություն է, որ XIXդ. և XXդ. սկզբներին Նոր Բայազետի և Նրա գավառի հասարակայնության մեջ ժողովրդի ծոցից ծնված Բարսեղ, Մկրտիչ և Գևորգ Արծրունիների, 7այրապետ Խաչատրյանի, Մաթևոս Աֆրիկյանի, Ստեփան Բատիկյանի և Մաթևոս Մարգարյանի նման նվիրյալներ էլ կային, ինչպես, օրինակ, զավառապետ Ստեփան Դորդանյանը: 1895 թ. նա նշանակվեց Նոր Բայազետի գավառապետի օգնական, իսկ երեք տարի անց՝ գավառապետ և այդ պաշտոնին մնաց մինչև 1910 թ. սեպտեմ-

նապատում են փողով: Մեշյաների ժողովը որոշեց՝ տարեկան երկու անգամ, այն է այս սեպտեմբերի 1-ից մինչև 1-ը հոկտեմբերի և 1-ից ապրիլի մինչև 15-ը հունիսի եկող 1903 թ. հերթով քաղաքից դուրս հանել օրական 30 սայլ և պարտավորեցնել նրանց ծրիապես կրել, կամ 5 սայլ ավազ կամ 2 սայլ քար: Եվ այդ գործը առաջ տանելու համար քաղաքի 4 թաղերից ընտրվեցին առանձին մասնախմբեր յուրաքանչյուրը 5-6 հոգուց բաղկացած»: «Աշակ», 5 սեպտեմբերի, 1902 թ.:

¹⁰⁷ «Աշակ», 24 սեպտեմբերի, 1910 թ.:

բերը¹⁰⁸։ Նրա պաշտոնավարման տարիներին (1895-1910 թթ.) Նոր Բայազետի և նրա գավառի սոցիալ-տնտեսական և հոգևոր-մշակութային բնագավառներում արժանագրվեցին զգալի տեղաշարժեր։ Համառոտակի քվարկեքց նրա անմիջական նախածնունդային և ջանքերով կյանքի կոչված այն գործերը, որոնք քաղաքի և գավառի համար կենսական նշանակություն ունեին։ Նրա կառավարման տարիներին վերաբացվեց Ստ. Բատիկյանի անվան գրադարան-ընթերցարանը, քաղաքը ստանում էր 24 անուն բերք, բարեկարգվեցին փողոցներն ու մայրքերը, շահագործման հանձնվեց բաղնիքը, լուծվեց քաղաքի խմելու ջրի պրոբլեմը, բացվեցին աչքի հիվանդանոցը, փոստը և քուլհականոցը։ Այդ ամենը քաղաքում, իսկ գյուղերում ճանապարհների ու բնակավայրերի բարեկարգում, կամուրջների կառուցում, Բասարզեչարում հիվանդանոցի բացում, Սևանա լճի վրա շոգենավ գործարկելու թույլտվության իրավունքի ձեռքբերում և այլն։

Եվ ամենակարևորը էլենովկան ու Նոր Բայազետն իրար կապող ճանապարհի՝ խճուղու վերածնելը¹⁰⁹, որը ինչպես գավառի, այնպես էլ նահանգի համար տնտեսականից բացի ուներ ռազմավարական նշանակություն։

Թող չափազանցություն չհամարվի, եթե նշենք, որ Ստեփան Դորդանյանի գավառապետության տարիները Նոր Բայազետի գավառի պատմության մեջ պիտի մնան իբրև լուսավոր էջեր։ Սիա թե ինչու հարազատ դարձած գավառից ընդմիջտ հեռացող Ստ. Դորդանյանին պատվախնդիր նորբայազետցիների վիթխարի բազմությունը մեծ հանդիսությամբ ճանապարհի դրեց դեպի Քուբայիսի ուր նա մեկնում էր նոր պաշտոն ստանձնելու համար։ «Մշակը» այդ առթիվ գրել է. «Նորբայազետցիները մեծ շուքով և ավստսանքով ճանապարհեցին գավառապետ Ստեփան Դորդանյանին, որը 15 տարի շարունակ պաշտոնավարել էր այդ պաշտոնում։ Բոլորը միաբերան ավստսանք

¹⁰⁸ Տե՛ս «Մշակ», 16 սեպտեմբերի, 1910 թ., «Դորիզոն», 30 ապրիլի, 1910, «Դորիզոն», 19 սեպտեմբերի, 1910 թ.։

¹⁰⁹ Տե՛ս «Դորիզոն», 19 սեպտեմբերի, 1910 թ.։

էին հայտնում, որ 15 տարի անընդմեջ աշխատել է իր պաշտոնի բարձրության վրա կանգնել։ Շատերը թե գրավոր խնդրանք և թե անձամբ դիմում էին արել նահանգապետին նրան թողնել գավառապետ»։ Այնուհետև թերթը շարունակում է, որ «Համա-կողմների մի ամանձին դասակարգ ուղեկցեց գավառապետին մինչև Ելենովկա կայարան և նույնիսկ ոմանք էլ՝ Դարաչիչակ, որտեղից մյուս օրը նա ուղևորվեց իր պաշտոնատեղին՝ Քուբայիսի»¹¹⁰։

Գլուխգնացյալ կրթության և մշակույթի այն հաջողությունները, որ բնակչությունը ձեռք էր բերել այս գավառում նախորդ տարիներին, շարունակվեցին նաև հետագայում։ 1910-1913 թթ. գավառի հայաբնակ 55 գյուղերից ծխական դպրոց ունեին 15-ը¹¹¹ կամ 25,4%-ը, որը 1912-1913 թթ. ուսումնական տարվա վիճակագրության համաձայն, հետևյալ պատկերն ուներ (տե՛ս աղյուսակ 19)։

¹¹⁰ «Մշակ», 16 սեպտեմբերի, 1910 թ.։

¹¹¹ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1292, ց. 1, գ. 128, ք. 312։

Նոր Բայազետի գավառի եկեղեցական-ծխական դպրոցները 1912 – 1913թթ. ուսումնական տարում¹¹²

Ձև	Երգանք, տեղի և դպրոցի անունը	Դպրոց						
		դպրոցը որ բլին է հիմնվել և որ բլին է բացվել	հայ բնակչության թիվը	դպրոցն արական է, կանանն, թե իստը	դպրոցը բացվի անյա է	դպրոցն ունի սեփական շինք և քարե սենյակից է բաղկացած	դպրոցն ունի գրասրահ, գրքերի քանակը	տարվա ընթացքում բացվի ուղի տարաստիւնը երեւ
1	Նոր Բայազետ քաղաք Ա.Յիդիպին-Մեջուրյան	1852 վերաբացվել է 1906	3297	իստը	5	8 սենյակ	ուժի	170
2	Նորին Սխաս Ա.Սոսլ	1883 վերաբացվել է 1905	2111	իստը	4	3 սենյակ	-	155
3	Որոտապ Ա.Ստուվանաօղի	1879 վերաբացվել է 1905	3744	իստը	3	4 սենյակ	-	124
4	Մարվանտարս Ա.Ստուվանաօղի	1907	1684	իստը	3	վարձու	-	168
5	Ալաֆարս Ա.Վարդյան	1875 վերաբացվել է 1905	2639	իստը	3	վարձու	150	150

¹¹² Հաշվարկը կատարվել է արդյունակը կազմվել է ըստ ՀԱԱ, ֆ. 7, ց. 1, գ. 56, ք. 9, գ. 99, քք. 8-10, գ. 156, քք. 10-12, գ. 159, քք. 6-11, ֆ. 56, ց. 1, գ. 7278, քք. 28-29, 49-50, գ. 4989, քք. 25-26, գ. 10893, քք. 1-2 տվյալների:

6	Սրակ Ա.Յիդիանենս	1876 վերաբացվել է 1910	1452	իստը	4	վարձու	-	120
7	Պոնաշին Ա.Մարյան	1909	2264	իստը	3	վարձու	-	122
8	Չիլովաչ Ա.Ստուվանաօղի	1868 վերաբացվել է 1907	2006	իստը	3	վարձու	-	150
9	Օրթաբուրս Ա.Ստուվանաօղի	1907	2174	իստը	4	վարձու	-	160
10	Դուլաշի Ա.Ստուվանաօղի	1908	2148	իստը	3	վարձու	-	144
11	Նորտոտս Ա.Ստուվանաօղի	1874 վերաբացվել է 1908	3281	իստը	3	2 սենյակ	-	141
12	Փաշաբենդ Ա.Գրիգոր Լուսավորչ	1875 ¹¹³ վերաբացվել է 1905	2871	իստը	3	3 սենյակ	-	139
13	Քոչարտան Ա.Վարդ	1908 ¹¹⁴	1583	իստը	4	2 սենյակ	-	105
14	Ե.Գրիգորյան Ա.Յիդիպին	1906	3577	իստը	2	3 սենյակ	-	62
15	Չիլովաչ Ա.Ստուվանաօղի	1909	3050	իստը	3	2 սենյակ	-	165

¹¹³ Նշվում է և 1872թ.: Տե՛ս «Շիրիզուն», 13 հուլիսի, 1914թ.:

¹¹⁴ 1907թ. դպրոց է բացվել Ցանաբարեռո գյուղում: ՀԱԱ, ֆ. 56, ց. 15, գ. 182, ք. 9:

Ֆին	Երբանի, տեղի և դարձող ամսեր	Ուսուցիչներ, բազմաթիվներ ուսուցիչներ և ուսուցչ- նախնյայիններ	Երբ, որտեղ է ավարտվում	Ուսուցիչներ, բազմաթիվներ						Աշակերտ- աշակերտուհիներ	
				Ընդամենը	Ընդամենը	Ընդամենը	Ընդամենը	Ընդամենը	Ընդամենը	Ընդամենը	Ընդամենը
1	Նոյ Բաղրաբեր բաղրաբ Ս Ֆոկիսիկ- Սեպտյան	Արտաշես Դարբինյան Անդրեյիկ Մովսիսյան Ալեքան Տեր- Պետրոսյան Լեօնիկ Խաչիկյան Արմենիկ Գրիգորյան Լևոն Դրամբաբյան Ասատուր Մովսիսյան Վարդան Եղմաթյան	Երևանի քաղաքը Երևանի և զինվածական ՅՈՒՆԵՍԿՈ Գեներալատ Երևանի և զինվածական Երբիլիի Է.Բ. Ջանբաբյան Երևանի քաղաքը Երևանի քննական դպրոցը Պարզամե մեծարանը	12 2 1 1 1 1 4 2	16 25 21 17 12 25 25 25	1 1 1 1 1 1 1 1	750 500 420 340 240 500 500 600	118 148 266	148 148 266		
2	Լեօնիկ Սեփան Ս Սեփյան	Վարդաշապ Շուկրաբեյան Լիզա Տեր-Լազարյան	Երևանի քննական դպրոցը և Լեռնիքյան դպրոցը Երևանի պրոցեսինգական	6 1 2	24 24 225	2 1 2	450 225	114 77 83	6 6 83		
3	Ռնգաբաղ Ս Ստովոլանսկին	Ասրիշու Մանուկյան Օլգա Տեր-Մանուկյան	Երևանի քննական դպրոցը Երևանի պրոցեսինգական	2 6	21 24	2 1	360 300	77 39	6 1 40		
4	Քարակոմասու Ս Ստովոլանսկին	Ասիտակ Արմաշյան	Վարդաշապ մեծարանը	1	30	1	200	39	1		

5	Ավագյան Ս Վարդան	Դուրս Դուրդուբյան	Երևանի քննական դպրոցը	7	2	25	450	51	51
6	Աղավաղ Ս Ֆոկիսիկյան	Գրիգոր Տեր- Մարտիրոսյան	Վարդաշապ մեծարանը	1	1	30	350	38	38
7	Դոնաթյան Ս Շախաթյան	Վանիչապետի Չախաթյան	Երևանի քննական դպրոցը	1	1	30	350	51	7
8	Չիրախյան Ս Ստովոլանսկին	Ֆիլիպիկյան Ս Մալախյան	Ֆոկիսիկ-Պարզամե դպրոցը Երևանի Խաչիկյան զինվածական	5	1	30	550	90	10
9	Օրմազդ Ս Ստովոլանսկին	Աստուրիկ Քալաթյան	Երևանի քննական դպրոցը	7	1	28	300	45	6
10	Դուրախյան Ս Ստովոլանսկին	Ավուրդու Ստեփանյան	Երևանի քննական դպրոցը	1	1	30	420	43	7
11	Լալաբաբյան Ս Ստովոլանսկին	Ավետիս Ենդիգիսյան	Նոյ Բաղրաբերի միակնական դպրոցը Նոյ Բաղրաբերի քաղաքի դպրոցը	7	4	24	300	92	16
12	Փարսաբերդ Ս Գրիգոր Լալաբաբյան	Ասատուր Դուրդուբյան	Երևանի քննական դպրոցը	1	1	30	435	41	6
13	Տոնաբաբյան Ս Սեփյան	Աստուր Դուրդուբյան Ավանիկյան	Վարդաշապ մեծարանը	1	1	30	300	47	47
14	Լ. Գյուլարյան	Մանանդյան	Երևանի քննական դպրոցը	1	1	28	300	45	45
15	Չիլանյան Ս Ստովոլանսկին	Խաչատուր Մելիք- Բաղդասարյան	Երևանի քննական դպրոցը	1	1	30	420	51	4
ԸՆ- դա- մե- նը							942	217	1159

№	Հրթիռի տեղի և դրոշմի անունը	Հրթիռաբեմերի անունները	Նախահաշիվ									
			մուտք			ելք						
			Ենթադրյալ տրոսից	Ենթիստ ցուցիկը	Ենթիվում ցուցիսում/ում	Ենթադրյալ ցուցիկը	մուտք	զանրատուղձ	մուտք			
1	Նոր Բայաբետ թռչող սարքի և Մ-30-ի հիմն-Մետաղյան	Հայաստանի Կապիտալ ինվեստիցիայի Բնակարանային և Գյուղատնտեսական Մարման Մեթոդական Երեմյա Տեր-Նարյանյան	250	450	1	33	1	80	813	675	325	1000
3	ՈՂՂԱՆԱ ԱՄՈՒՆՈՒՄԻ ԱՄՈՒՆՈՒՄԻ	Արևիկա Սևադյան	350	1	155	1	200	1	705	650	110	760
4	Բարձրագույն ԱՄՈՒՆՈՒՄԻ	Հայաստանի Հանրապետության Մարտիկ Տեր-Մարգարյան	150	20	1	61	231	200	31	231	200	231
5	Արևիկա ԱՄՈՒՆՈՒՄԻ	Արևիկա Սևադյան	1	1	200	50	200	20	470	450	30	480

6	Սուլակ ԱՄՈՒՆՈՒՄԻ	Սուլակ Պապարյան	200	80	120	400	350	51	401		
7	Պրիպյան ԱՄՈՒՆՈՒՄԻ	Սուլակ Պապարյան	200	160	1	380	350	44	304		
8	Գրիգորյան ԱՄՈՒՆՈՒՄԻ	Գրիգոր Մուխամբյան	400	122	147	669	550	185	735		
9	Օրդուր ԱՄՈՒՆՈՒՄԻ	Օրդուր Մարգարյան	200	156	1	356	300	52	352		
10	Պրիպյան ԱՄՈՒՆՈՒՄԻ	Սուլակ Պապարյան	300	100	95	30	525	420	77	497	
11	Նորատա ԱՄՈՒՆՈՒՄԻ	Նորատա Սարգսյան	250	100	20	258	635	83	718		
12	Փայազյան ԱՄՈՒՆՈՒՄԻ	Փայազյան Սարգսյան	200	60	94	70	110	534	435	58	493

13	Քննարարան Ս. Չևոբզ	Ամենա սինճայան Բարսեղ Տեր-Գրիգորյան Ավիգ Տեր-Պատրիկյան Յարգարիս Երզրան Գրիգոր Տեր-Մինասյան Ասղեղեն Տեր-Մանասյան Մովսես Տեր-Մինասյան Ավիգ Պապուրյան Շահազ Քոչարյան Սամուկ Պապուրյան	-	160	-	-	-	350	300	50	350
14	Լ. Գրիգորյան	Վահան Տեր-Գրիգորյան Սահակ Քիչիկյան Կարապետ Սիրունյան Մարտիրոս Պապուրյան	-	-	-	-	-	-	-	-	-
15	Ձուլխալ Ս.Ստեփանյան	Վահան Տեր-Գրիգորյան Սահակ Քիչիկյան Կարապետ Սիրունյան Մարտիրոս Պապուրյան	300	-	170	-	-	470	420	50	470
Ընդամենը			2650	1670	2997	1338	1577	1202	11434	9585	2299

Ճգալի թվով երեխաներ ընդգրկված են պետական տարրական դպրոցներում: 1912 թ. փծակով Նոր Բայազետի գավառում կար 14 այրախի կրթօջախ ու

Սյուրսակ 20

	Քրեակալների անվանումը	Պարտքերի քանակը և հիմնովի	Գարունը արված է իրանով իսկ	Գարունը ունի սեփական շենք	Գարունը ունի գրադարան, գրքերի քանակը	1911 - 1912 թ. ստացված		աշակերտների քանակը	
						ուսուցիչների և ուսուցիչների թիվը	ուսուցիչների թիվը	տղամարդի	նրբամարդի
1	Արշալույս	1906	արված	-	-	2	18	18	-
2	Անճարտություն	1903	իսկ	-	-	1	15	14	29
3	Դավիթբեյլի	1885	իսկ	արտ	2629	3	150	12	162
4	Քասաբեյլի	1884	իսկ	արտ	862	3	107	16	123
5	Ելենովա	1885	իսկ	արտ	1653	5	114	58	172
6	Ստանանդարտական	1900	իսկ	արտ	-	1	19	9	28
7	Ներքին կառույց	1901	արված	արտ	480	1	25	15	40
8	Նոր Բայազետ	1901	արված	արտ	1806	4	142	15	142
9	Կաթնօրին	1903	իսկ	-	-	1	32	8	40
10	Ներքին Պարամուտ	1904	իսկ	արտ	325	3	73	5	78
11	Շարկուր	1907	իսկ	-	507	1	38	2	40
12	Մազա	1901	արված	արտ	-	2	24	24	24
13	Սիմոնովա	1903	իսկ	արտ	648	1	25	17	42
14	Մուխե Ջոնյան	1903	իսկ	-	-	1	12	12	24
Ընդամենը				8	9110	29	794	168	962

115 Սյուրսակը կազմվել է ըստ ՀԱԱ, ֆ. 19, ց. 1, գ. 267, ք. 6-19, գ. 338, ք. 3-21, գ. 1748, ք. 13-15, գ. 904, ք. 1, գ. 867, ք. 93, գ. 1153, ք. 6, գ. 1161, ք. 34, գ. 1239, ք. 35, 44, 179 տվյալներով:

Ինչ հետևությունների կարելի է հանգել թիվ 19 և 20 աղյուսակներից: 1912-1913 թթ. ուսումնական տարում եկեղեցական-ծխական և պետական դպրոցների թիվը միասին Նոր Բայազետի գավառում հասել է 29-ի՝ 2121 սովորողով (385-ը՝ աղջիկ), 1907-1908 թթ. ուսումնական տարվա համապատասխանաբար 24 և 1754-ի դիմաց: Հատկանշական է, որ ավելացող աշակերտության մեջ մեծ թիվ են կազմել տղաները: Ընդամենը հինգ տարվա ընթացքում այդ դպրոցներում սովորող տղաների թիվը 1457-ից հասել է 1736-ի կարո ամել է 1,2 անգամ: Նույն ժամանակամիջոցում աղջիկների թիվը մեծացել է 88-ով և կազմել է 385: Այլ խոսքով՝ գավառի բնակչության մեջ ավելացել է սովորողների թիվը: Եթե 1886 թ. դրությամբ սովորողները կազմում էին գավառի ընդհանուր բնակչության 0,6%-ը, ապա 1913 թ.՝ ավելի քան 1,2%-ը¹¹⁶: Նկատելիորեն բարելավվել է ծխական դպրոցների ֆինանսական վիճակը՝ բյուջեի մուտքային մասը 575 ռուբլուց հասել է 11434 ռուբլու, իսկ ծախսային մասը 520 ռուբլուց՝ 11884 ռուբլու:

Աղյուսակից երևում է, որ մուտքային մասում գերակշռել են հասարակական կազմակերպություններից, անհատ բարերարներից և աշակերտների թոշակներից կատարված ներդրումները:

Վերը գրվածի հետ համահունչ է այսպիսի եզրակացությունը. կրթության բնագավառում այնքան էլ միսիթարական բան չկար:

Ինչպես անցած 75 տարում (1830-1905 թթ.), այնպես էլ դրանից հետո, մինչև 1913 թ. շատ քիչ բան էր փոխվել: Տիրում էր գրեթե համատարած անգրագիտություն: «Մշակ», թերթը, որ տարիներ շարունակ անաչառ լուսաբանում էր այս գավառի կրթանշակության լյանքի զանազան կողմերը, ավստասնքով գրում էր. «Ցավով պետք է ասել, որ մեր քաղաքում (Նոր Բայազետում՝ Գ. Գ.) գոյություն ունեցող դպրոցները հազիվ կարող են երեխաների քառորդ մասը ընդունել իրենց պատերի

¹¹⁶ Հավաքիկը կատարվել է ըստ ՀԱԱ, փ. 56, գ. 1, գ. 7278, թթ. 28-29, 49, 50, գ. 6773, ք. 14, ֆ. 19, գ. 1, գ. 358, թթ. 3-9 և 1886 թ. ընտանեկան ցուցակագրության էջ 32 տվյալների:

մեջ, իսկ մնացյալ 3/4-ը դժբախտաբար մուտք չի կարող գործել դպրոցներում, որովհետև քաղաքի 1600 տունը միջին թվով 3000 հոգի դպրոցահասակ երեխաներ ունի, մինչդեռ 3 դպրոցներում սովորող են ընդամենը 600-700 հոգի¹¹⁷:

Գավառի դպրոցների զգալի մասը գործում էր վարձու շենքերում: Եկեղեցական-ծխական դպրոցներից միայն 7-ը, իսկ պետական դպրոցներից 8-ը ունեին սեփական շենք: Դպրոցների մեծ մասը ապահովված չէր անհրաժեշտ քանակի դասագրքերով և գրեթե ամբողջով պիտույքներով: Դպրոցները չունեին եկամտի հաստատուն աղբյուր, ինչը ծանր ազդեցություն էր գործում կրթության բնականորեն գործունեության վրա: Հատկապես անհանգստացնող էր ուսման ցածր որակը:

Մի շարք դպրոցների հովանավորությունը ստանձնած Վահան Արծրունին «Մեղու Հայաստան» թերթի աշխատակցին տված հարցազրույցի ժամանակ ասել է. «Ուսումնական մասը բոլորովին բարձիթողի է լինում հարցաքննության ժամանակ, բայց բոլորյանց տգիտության պատճառով զոհ են մնում աշակերտայ լորը պատասխաններից, թեև նորա լինեին սխալ և անտեղի»:

Չմե կարող գովել և ուսուցիչներին, սոքա դարձյալ զուրկ են ուսումից, զուրկ են այն ամեն բաներից, ինչ որ պետք է ունենա ուսուցիչը: ... Ուսումնաբանը (Ա. Հոփիսիմե-Մետրոպոլիտան Գ. Հ.) աղքատ դրությամբ՝ չունեն մեկ նշանավոր գումար, որով կարելի լիներ որքան և իցե ուսյալ ուսուցիչներ վարձել: ... Ահա այսպիսի մարդկանց ձեռքին է Նոր Բայազետու նոր սերունդի բոլոր հույսը ապապայում»¹¹⁸: Այս նկատառումները վերաբերելի են գավառի բոլոր կրթությաններին: Երկու տիպի դպրոցներն էլ տարրական կրթության էին: Չմայած ձեռնարկած բոլոր քայլերին, տեղական իշխանություններին և հասարակամությանը չհաջողվեց միջնակարգ կրթության դպրոց բացել այս գավառում¹¹⁹:

¹¹⁷ «Մշակ», 28 սեպտեմբերի, 1912 թ.:

¹¹⁸ «Մեղու Հայաստան», 1874, թիվ 2:

¹¹⁹ Տե՛ս «Մշակ», 14 մարտի, 1908 թ., «Մշակ», 18 հոկտեմբերի, 1909 թ.:

Տարածքը հարուստ է տարբեր դարաշրջանների պատկանող տարատեսակի հուշարժաններով, դրանք լավագույնս փաստում են տարածաշրջանի անընդմեջ բնակեցումը վաղնջական ժամանակներից սկսած: Այդ են ապացուցում Չրազդանի կիրճից, այլ վայրերից (Արզնի, Ֆոնտան, Լուռնուս և այլն) հայտնաբերված հուշարժանները, դրանցից գտնված նյութերը¹: Այդ հուշարժանները ներկայումս հարստացված են նորերով, ինչպիսին է օրինակ Քասախ գետի կիրճում գտնվող Քնդ-2 քարայր-կացարանը:

Տարածաշրջանի բնակչության անցած ուղին, նրա անընդմեջ զարգացումը առավել հստակ է դիտվում վաղ բրոնզի դարաշրջանից սկսած: Այդ հուշարժանները ներկայացված են տարատեսակ դամբարաններով, կիկլոպյան ամրոցներով, արհեստանոցներով, սրբարաններով և այլն: Մասնավորապես վաղ բրոնզեդարյան նյութեր հայտնաբերված են Լճաշենից, Ջրառատից, Կարճաղբյուրի դամբարանադաշտի դամբարաններից մեկում², Մարտունիի և Ենրբին Գետաշենի միջև գտնվող «Ջոջ Կոլոն» կոչված դամբարանաբաժրից³, Նորաշեն և Չկալովկա գյուղերի միջև ընկած տարածքից: Վերջիններս հայտնաբերված են նոր ճանապարհը կառուցելու ընթացքում բացված հողի կտրվածքում: Դրանց հայտնաբերումը կարևորվում էր նրանով, որ այդ նյութերի միջև տարածվում էր բավական հզոր ջրաբերուկային նստվածք, ինչը և ցույց էր տալիս լճի մակարդակի տատանումը Ք.ա. III հազարամյակում⁴: Ցավոք, այդ նյու-

¹ Տես Ս.Արդարյան, Լախնադարյան հասարակությունը Չայաստանում, Ե., 1967:

² Տես А.Мнацаканян. Древние повозки из курганов бронзового века на побережье оз. Севан. – Советская археология, 1960, N2; Խույնի, Խոսում են հուշարժանները, Ե., 1968:

³ Տես Ե.Լալայան, Ազգագրական հանդես, XVIII գիրք, թիվ 2, Թիֆլիս, 1908:

⁴ Տես Գ.Մնացականյան, նշվ. աշխ.:

թերի մանրամասն հաշվետվությունը մնաց չիրատարակված: Երկրը կարելի է ասել և Արտանիշի ծովածոցում կատարված պեղումների մասին, որոնց ընթացքում բացվեցին և միջին բրոնզեդարյան դամբարաններ (II հազ. I կես): Այդ բացը լրացնում են Լճաշենի, Սևանի, Ենրբին Գետաշենի, Գավառի դամբարաններից և բնակավայրերից (Լճաշեն) հայտնաբերված տարատեսակ նյութեր, որոնց թվում են և զուենազարդ ու սև փայլեցրած մակերես, սանրատան և սպիտակ նյութով ընդելուզված զարդեր ունեցող խեցանոթները, որոնք ամենևին չեն տարբերվում Չայաստանի այլ հուշարժաններից հայտնաբերվածներից, ինչը լավագույնս փաստում է տարածաշրջանի համահայաստանյան մշակույթի մաս կազմելը:

Չետազոտողների գերակշռող մեծամասնության կարծիքով, միջին բրոնզի դարաշրջանի սկզբում են հանդես գալիս «վիշապաբարեր» կոչվող հուշակոթողները:

Չրի պաշտամունքին կապվող այդ հուշակոթողները, որոնք հայտնի էին Կարդենիսի լեռնաշղթայի փեշերից, Արտանիշի ծովախորշից և այլ վայրերից, ներկայումս ավելանում են Լճաշենից, Մարտունու շրջանի Մաղեն գյուղի «Ատտաշ» կոչվող արոտավայրում հայտնաբերվածները⁵: Լորահայտ այդ գտածոները պատկանում են «վիշապաբարերի» ցագլուխ տեսակին և չեն տարբերվում Չայկական լեռնաշխարհի այլ վայրերից, որոնք, ինչպես հայտնի է, ներկայացված են ձկան տեսք ունեցող օրինակներով:

Ուսանի ավազանի համահայաստանյան մշակույթի ոլորտում զարգացման, բայց միաժամանակ և անընդմեջ բնակեցում են փաստում և միջին բրոնզից ու շրոնգին անցնելու, II հազ. կեսերով թվագրվող դամբարաններից հայտնաբերված նյութերը (Նորատուս, Լճաշեն և այլն), որոնց ամնիջականորեն հաջորդում են Լճաշենի ցեղային առաջնորդների հարուստ և շարքային համայնականների հանեստ դամբարաններից հայտ-

⁵ Տես Է.Խանգաղյան, Լճաշենի վիշապը, «Չին Չայաստանի մշակույթ», Խ. XIII, Ե., 2005, Օ.Խնկիկյան, Ցագլուխ կոթողներ Կարդենիսի լեռներից և «վիշապաբարերի» մեկնության հարցի շուրջ, ԼՂԳ, թիվ 3, 1997:

նաբերված, ուշ բրոնզի վաղ փուլին պատկանող նյութերը⁶, բազմաթիվ մանր ու խոշոր եղբերավոր ամասուների ամբողջական կմախքներ, հացահատիկի մնացորդներ, մարդու ձեռքով պատրաստված աշխատանքային ու կենցաղային գործիքներ, զարդեր, նիզակներ, կենդանիների պատկերներով քանդակված արձանիկներ, ոսկե զուտիներ, ուլունքներ, բազմափող սափորներ, մի քանի երկակն և քառակն ղիակառք- սայլեր (չձված ձիերի և եղջերի կմախքների հետ), ծաղավոր անիվներով ռազմականքեր (յուրաքանչյուր անիվը 28 ճյուղից) և եզակի այլ փոխադրամիջոցների տեսակներ:

Այս ամենը հավաստում են, որ նշված հազարամյակում Սևանի ավազանի տարածքում երկարատև նստակեցության և բնակչիմայական նպաստավոր պայմանների շնորհիվ տեղաբնիկների մոտ բարձր զարգացման էր հասել երկրագործական մշակույթը, անասնապահությունը, մետաղամշակությունը և արհեստի մյուս ճյուղերը: Վերջիններիս զուգահեռները բազմաթիվ են: Տեղին է հիշատակել Ե. Լալայանի կողմից Ներքին Գետաշենում պեղված դամբարանը, որտեղից նույնպես սայլ է հայտնաբերված⁷: Նվազ կարևորություն չի ներկայացնում և Ներքին Գետաշենում պեղված նույն ժամանակաշրջանի պատկանող մեկ այլ դամբարանաթումբ, որտեղից, ի թիվս այլևայլ նյութերի, հայտնաբերվել է երկաթից պատրաստված դանակի մաս: Լրացնելով երկաթե վաղ գտածոների տեսականցին, այդ կրկին ցույց է տվել, որ երկաթի վաղ կիրառությունը տնտեսության մեջ ուշ բրոնզի դարաշրջանի վաղ փուլում է սկսվել:

Ուշ բրոնզեդարյան հուշարձանները բազմաթիվ են Սևանի ավազանի տարբեր վայրերում: Դրանց շարքում են, բացի Ա. Բվանոնվկու ու Ե. Լալայանի կողմից, Սևանի ավազանի տարբեր հուշարձաններում պեղած զգալի թվով դամբարաններից, նաև Դ. Մնացականյանի, Վ. Ավետյանի, Լ. Պետրոսյանի, Ա. Փիլիպոսյանի և այլ հնագետների կողմից պեղված բազմաթիվ դամբարանները, որոնք սփռված են ինչպես կիկլոպյան պարիսպ-

ներով շրջափակված բնակատեղիների անմիջական մերձակայքում, այնպես էլ դրանցից հեռու ընկած դամբարանադաշտերում:

Դրանք ցույց են տալիս ոչ միայն տարածքի բավական խիտ բնակեցված լինելը, այլև՝ շեշտված սոցիալական շերտավորումը:

Խոսելով բնակավայրերի մասին, հարկ է շեշտել և Գ. Սիբայելյանի աշխատանքը⁸, որտեղ ցույց է տրվում, թե ինչպիսի խտություն է ունեցել տարածաշրջանի բնակեցումը նշված ժամանակաշրջանում:

Պատահական չէ, որ ուլարտական արբաները այդ ցեղամիությունների առաջնորդներին «բազավոր» տիտղոսով են մեծարում և հպարտանում, որ նրանց երկրները մարտերով են նվաճել ու հպատակեցրել: Նրանց թողած արձանագրությունները հայտնի են Լճաշենից, Ներքին Գետաշենից, Ջաղալուից, Գավառից և պատկանում են Արզիշտի Ա, Սարդուրի Բ, Ռուսա Ա բազավորներին: Իրար հաջորդող այս բազավորների արշավներն իսկ ցույց են տալիս, որ տարածքի բնակիչները զգալի դիմադրություն են ցույց տվել նրանց: Այսպես, Արզիշտի Ա հայտնում է, որ ինքը նվաճել է էթրուսին, հաղթել լծի ափին գտնվող Կիլունի քաղաքի երկրին, հասել Ալիշտու և Իշտիկունիվ քաղաքները, որտեղից զգալի թվով բնակիչներ է տարել: Այդուհանդերձ, մնացած բնակչությունը, ինչպես երևում է Սարդուրի Բ արձանագրությունից, ամենևին էլ խաղաղասիրաբար տրամադրված չի եղել, ինչը և հիմք է տվել Սարդուր Բ-ին պարծենալ: Թե ինքը մեկ ցուկատու վերցրել է Ռելիկունի երկիրը, ավերել այդ երկրի 22 ամրոցները, ստրկացրել երկրի բազավոր Լիդիսին, որին, սակայն, խնայել է հարկ վճարելու պայմանով: Արձանագրության շարունակության մեջ ասվում է, որ ինքը հաղթել է նաև Ռելիկունի երկրի քազավոր Մուրհնունի: Այլ արձանագրության մեջ (Գետաշեն) Սարդուր Բ-ն հայտնում է, որ ինքը հաղթել է Տուլիխու քաղաքին, իսկ Ջաղալուի արձանագրության մեջ նշում է, որ ինքը հասել է Արկուկիվ և Ռիրտեխինի

⁶ Տես A. Мартirosյան. Армения в эпоху раннего железа, Е., 1964.

⁷ Տես Ե. Լալայան, նշվ. աշխ.:

⁸ Տես Գ. Սիբայելյան, Սևանի ավազանի կիկլոպյան ամրոցները, Ե., 1968:

երկրները: Սևանի ավազանի բնակիչներին վերբնականապես հնազանդեցնելու ուղղությամբ զգալի քանքեր է գործարդում և Ռուսա Ա Սարգուրորդին: Գավառի «Բերդի գլուխ» վայրում գտնվող ամրոցի արձանագրության մեջ նա հայտնում է, որ հաղթել է Ռեյլիկուխի երկրի թագավորին և նրան հեռացնելով երկրից, իր տեղակալին է նշանակել ու նշանավոր՝ «խալդի աստծո քաղաք» անվանումը կրող ամրոցն է կառուցել:

Ավելի քան ընդարձակ է սույն թագավորին պատկանող Շուխնարի ժայռի վրա փորագրած արձանագրությունը: Այդտեղ Ռուսա Ա-ն հայտնում է, որ լճի այս կողմում հաղթել է Ալախու, Ռեյլիկու, Լուերու, Արկուկիվ երկրների չորս, իսկ լճի մյուս կողմում 19 թագավորների (Գուրկունյի, Շանատուա, Տերիուհիա, Թիշուա, [...] գուա, Արիա, Չամա, Իրկիմա, էլա, Էրիեւտուա, Արիամանիվ, Գուրիա, Ալգրիա, Պիրուա, Շիլա, Ռիդուա, Էրիա, Արեզա Ալամերուն), մեծ տարում 23 թագավորների, որոնց բռնել է և ապա հարկ վերցնելու ժամանակ կրկին՝ տարածաշրջան գալով «Թեյշերա աստծու ամրոցն» է կառուցել⁹:

Վանի թագավորության անկումից հետո (Ք.ա. VI դ.), սույն երկրամասի տարածքը մեկընդմիջտ կազմում է Մեծ Հայքի թագավորության մի մասը և Ք.ա. VI դ. ընդգրկվում է Երվանդունիների, իսկ ք.ա. III դ. Արտաշեսյան թագավորության մեջ, որի կազմում մնացել է մինչև Արշակունիների հարստության անկումը: Պահպանված տեղագրական այն է, որ պատմական Հայաստանի վարչական հին բաժանմամբ ներկայիս Սևանի, Գրագրանի և Կոտայքի ենթաշրջանների տարածքները գտնվել են Վարաժնունիքի գավառի կազմում: Այս նախարակական տունը, որ ժառանգական կալվածքներ ուներ Այրարատում, Վասպուրականում և Տուրուբերանում, Ք.ա. II դարում իր ժառանգական տիրույթը դարձրեց նաև Վարաժնունիք գավառը: Ըստ պատմահայր հուրեթանի հաղորդած ավանդական տեղեկության, տոհմի հիմնադիրը եղել է Գեղամ նահապետի տոհմակից, Դատ իշխանի որդի Վարաժը, որին Մեծ Հայքի արքա Արտաշես Ա-ն քաջագործությունների համար նվիրատվել է այս

⁹ Տես Մ. Г. Мелюхишвили. Урартские клинообразные надписи, М., 1960, с. 249, 261, 300, 301, 304, 310, 328-329.

գավառը: «Արտաշես,- գրում է հորենացին,- շեն պարզև է Վարաժայ առ եզերք գետոյն, որ անուանեալ կղչի Գրագրան»¹⁰:

Այրարատի 18-րդ գավառ Վարաժնունիքը համապատասխանել է նախկին Գրագրանի, Սևանի, Դիլիջանի և Կարմիրի շրջանների մեծ մասին: «Ծաղկածորոյ անցեալ և այժմեան սահմանքն են՝ յարեւելից՝ Սևանայ ժովի արևմտյան ժայռե, ուր են Օրդաբլու, Ելենուվկայ և Յամաքարեղ գիւղօրայք, նաև Գեղամաղան լեռան, հիւսիսային կողմից Ծաղկունքայ սարերն՝ որք նայում են դեպի հիւսիս Դիլիջանի ձորերի վերայ, յարևմտից Ալաբարանայ վերայ, և հարաւից՝ Կոտայք գաւառը»¹¹, - գրում է Ա. Ամբաստյանը:

Վարաժնունիքը հետագա դարերում կոչվել է Ծաղկունյաց ձոր կամ Ծաղկուցածոր: Այս գավառանունը նվաճողները թարգմանաբար անվանել են Դարաշիչակ¹²:

Դարեր անց, երբ Հայաստանը կորցրեց իր քաղաքական անկախությունը, Դարաշիչակում շարունակում էին իշխել Վարաժնունիները¹³:

Գյուլչա-Դանգիզի գավառի զբաղեցրած տարածքը հնում կոչվել է Գեղամա երկիր և բաժանված է եղել երկու գավառի՝ Գեղարքունիքի, որը համապատասխանում է ներկայիս Գավառի և Մարտունու ենթաշրջաններին և Սոթք, որի մեջ քացի Վարդենիսի ներկա ենթաշրջանից մտնում էին այժմյան ճամբարակի ենթաշրջանի լճափնյա մի քանի գյուղեր:

Պատմական Հայաստանի վարչական հին բաժանմամբ լճափնյա այս երկրամասը մտնում էր Սյունիքի նահանգի մեջ և կազմում նրա երկու գավառը՝ Գեղարքունի և Սոթք. երկրամասի տերն էր Սյունյաց նախարարական տան մի ճյուղը¹⁴: Գեղար-

¹⁰ Մ. հորենացի, Պատմութիւն Հայոց, Տփղիս, 1913, էջ 107:

¹¹ Ա. Ամբաստյանց, Տեղեկագիր Գեղարքունի Ծովազարդ գաւառի, որ այժմ Լոր Բայազետ գաւառ, Վաղարշապատ, 1895, էջ 296:

¹² Ալատի ունեալով, որ պատմական և տեղագրական գրականության մեջ և պաշտոնական գործառնութեանում առավելապես իշխատակվում է Դարաշիչակ անվանումը, ուստի նշել ենք սույն անվանումը:

¹³ Տես Թ. Հակոբյան, Հայաստանի պատմական աշխարհագրություն, Ե., 1968, էջ 125:

¹⁴ Տես Ա. Բարխուդարյան, Դիվան հայ վիճագրության, պրակ IV, Ե., 1973, էջ 5:

բունիքը ընդգրկում էր լճի ավազանի հյուսիսարևմտյան մասը, իսկ Սոթքը՝ հարավարևելյան և արևելյան: Երկվայիս Գավառի ենթաշրջանի զբաղեցրած տարածքը միջին դարերում կոչվել է Ծմակ գավառ, ապա՝ Գավառ: Ծմակ գավառ էր կոչվում և՛ տարբերություն Սևանա լճի հյուսիսային ափերին գտնվող Արեգունի գավառակի: Մարտունու շրջանը Գեղարքունիքի գավառի վարչական կենտրոնի անունով կոչվել է Կոթի գավառ: 428թ. Չայոց պետականության անկումից հետո Գեղարքունիքի և Սոթքի գավառները ևս մտել են Մարզպանական Չայաստանի կազմի մեջ: Վիդ. կեսերին ուսումնասիրվող երկրամասին տիրոջին արաբները և իրենց երկարատև ռազմակալության ընթացքում ծանր հարված հասցրին նրա տնտեսությանը և մշակույթին:

Երկրի քաղաքական անվախություն վերականգնումից և Չայակական պետականության հաստատումից հետո Դարաչի-չակի գավառում իշխել է Պաիլավունիների նախարարական տունը: Բագրատունի գահակալների հովանու ներքո Պաիլավունիների օրոք (X–XI դդ.) այս գավառը կտրուկ վերելք ապրեց: Տնտեսության, առևտրի, շինարարության, մշակույթի և մյուս բնագավառներում արձանագրվեցին նշանակալից դրական տեղաշարժեր:

Չայ Բագրատունիների թագավորության վերելքի ժամանակաշրջանում (IX–XII դդ.) Գեղարքունիքի գավառը կազմում էր արքունական կալվածքների մասը, սակայն ժամանակի ընթացքում գավառը դառնում է հայ Բագրատունիների վասալ Չայկազյան տոհմի տիրույթը: Սկզբնաղբյուրները ցույց են տալիս, որ սույն գավառը լայնորեն ընդգրկված է եղել Բագրատունյանց Չայաստանի տնտեսական և քաղաքական կյանքում: Ծմակ գավառով էր անցնում Չայաստանի կարևոր մայրուղիներից մեկը՝ Դվին-Պարտավ ճանապարհը:

Ըստ Գ.Մանանդյանի, այս ճանապարհի վրա էր գտնվում Բերդկունք գյուղը կամ գյուղաքաղաքը¹⁵ և պատահական չպետք է համարել, որ Սյրիվան գյուղի հարևանությամբ եր գտնվում «Ազատ քաղաքի» ավերակները:

¹⁵ Տե՛ս Գ.Մանանդյան, Գին Չայաստանի ճանապարհները, Ե., 1936, էջ 60:

«Ազատ քաղաքի» գոյությունը ինքնին ապացույց է այն բանի, որ այստեղ գոյություն են ունեցել ինչ-որ արտոնություններ վայելող առևտրականների համայնքներ:

Ինչ վերաբերում է Սոթքին, ապա այն IXդ. մտել է Արցախի Սահլ Ամբաստյանի իշխանության կազմի մեջ:

Բագրատունյաց թագավորության անկումը հեշտացրեց թուրք-սելջուկների կողոպտիչ ու ավերիչ ներխուժումները Չայաստանի խորքերը: Երկրամասն էր հարյուստ արտաավայրերով դառնում է քոչվոր անասնապահների անառային արոտավայր «յալյաղ», իսկ սրանց ձմեռանոցները՝ «ղշլաղներ», գտնվում էին Մուղանի և Շիրվանի դաշտավայրերում: Ամառային եղանակը սկսվելուս պես քոչվոր ցեղերը իրենց հոտերով բարձրանում էին Սևանա լիճը շրջապատող Արեգունի, Վարդենիսի, Քաշաթաղի և Գեղամա լեռները: Քոչվորներից մեծապես տուժում էր հայ հողագործ գյուղացիությունը: Դրությունը որոշ չափով բարելավվում է: Սյունիքին տեղ դարձան Օրբելյան և Պռոշյան տոհմերը: Գեղարքունիքի մի մասին՝ ներկայիս Մարտունու ենթաշրջանին տիրացան Օրբելյանները, իսկ Ծմակ գավառը (այժմ՝ Գավառի ենթաշրջան) Իվանե Ջաբարյանը պահում էր իր ձեռքում¹⁶: Աղբյուրների վկայությամբ Իվանեի կողմից «Գեղարքունեաց» երկրի վերակազմը և նշանակվել ոմն Բուպակը: Վիճակը փոխվում է 1236թ. մոնղոլական նվաճումներից հետո: Չայաստանը, Վրաստանը, Շիրվանը ճանաչեցին նոր նվաճողների գերիշխանությունը, իսկ տեղական ազնվականությունը՝ իր վասալական կախումը մոնղոլական մեծ խանից: Մոնղոլ-թաթարական ցեղերը իրենց զորավարներով հաստատվել էին Սևանա լճի ավազանի շրջակա սարերում: Այստեղ էին գտնվում նրանց ճամբարները՝ «օբաները», որոնք պատուհաս են դառնում շրջակա գյուղերի հայ հողագործ գյուղացիության համար: Այսպես, մեզ հայտնի է Ճապտոկի գյուղը/այժմ կոչվում է Ծովագյուղ/, որը դարձավ մոնղոլ հրոսակախմբերի ճամբար և կոչվեց Զիրուխլու: Սա առաջին բնակավայրն էր այս վայրում, որը ստացավ թուրք-թաթարական անունը: Մոնղոլ-թաթարա-

¹⁶ Ս. Բարխուդարյան, նշվ. աշխ., էջ 6:

կան գերիշխանությանը հետևեցին Լանկ Թեմուրի արշավանքները XIV դարի վերջերին և XV դարի սկզբներին:

Այս ժամանակներն էր, որ ուսումնասիրվող տարածքում հաստատվեցին նոր բռնվոր թուրքմենական ցեղերը /հայ մատենագիրների "Թուրքմանք", որոնք հայտնի էին կարա-կոյունլու անունով:

Հայ ժողովրդի համար ազգակործան հետևանքներ ունեցան թուրք-պարսկական երկարատև պատերազմները:

Հատկապես պիտի նշել տեղական հայ ազգաբնակչության բռնագաղթերը, որոնք ծրագրված բնույթ ընդունեցին հատկապես Շահ-Աբասի ժամանակ: Ամայացան ու ավերվեցին բազմաթիվ բնակավայրեր: Շահի հրամանով բնակչությունը բռնի կերպով քշվեց Պարսկաստանի խորքերը:

Այսպիսով, օտար նվաճողների արշավանքների և նրանց տիրապետության օրոք բնության առարկա երկրամասը ձեռքից ձեռք է անցել, ենթարկվել է կոտորածների ու բռնի տեղահանության, կրել է հսկայական նյութական վնասներ: Չնայած դրան, կյանքի ու մահվան կռիվ մեջ հայությունը ցույց է տվել բացառիկ անձնագոհություն և կարողացել է պաշտպանել իր գոյությունն ու ազգային արժանապատվությունը: VII-X դդ. և հետագա դարերում երկրամասում ծալալվել են լայն շինարարական աշխատանքներ՝ վերակառուցվել են հին եկեղեցիներ, վանքեր, կացարաններ, ձիթաններ, ջրաղացներ և հիմնվել նոյնը:

XIX դ. առաջին երկու տասնամյակի վերջերին ապագա Նոր Բայազետի գավառի հենքը կազմող Գյոկչայի, Դարաչիչակի և Դրխբուլաղի մահալները երևանի խանության կազմում անցան Ռուսաստանի տիրապետության տակ:

1849թ. ստեղծվեց երևանի նահանգը, որն իր մեջ ներառեց երևանի, Ալեքսանդրապոլի, Նախիջևանի և նոր կազմակերպված Օրդուբաղի և Նոր Բայազետի գավառները:

Ռուսական կայսրության ներքո երևանի նահանգի կազմում Նոր Բայազետի գավառը սոցիալ-տնտեսական և կրթամշակութային բնագավառներում նշանակալից զարգացում ապրեց:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱՎՆՆՈՒԹՅՈՒՆ ԅՆԵԿ

Արխիվային նյութեր

1. Հայաստանի ազգային արխիվ(ՀԱԱ)

1. 1. ֆ. 7, ց. 1, գ. 9, 32, 156:
1. 2. ֆ. 19, ց. 1, գ. 267, 338, 358:
1. 3. ֆ. 28, ց. 1, գ. 300, 360:
1. 4. ֆ. 56, ց. 1, գ. 4969, 6673, 7278, 7290, 6773:
1. 5. ֆ. 57, ց. 1, գ. 399, 549:
1. 6. ֆ. 90, ց. 1, գ. 80, 83, 84, 88, 89, 93, 318, 319, 329, 330, 435:
1. 7. ֆ. 93, ց. 1, գ. 79, 80, 81, 82, 83, 93, 330, 360:
1. 8. ֆ. 94, ց. 1, գ. 161, 207, 208, մաս առաջին, 423, ց. 5, գ. 208, 247, 3315, 1892:
1. 9. ֆ. 101, ց. 1, գ. 2, 85:
- 1.10. ֆ. 125, ց. 1, գ. 4, մաս երկրորդ, 12, 14:
- 1.11. ֆ. 227, ց. 1, գ. 102, 586:
- 1.12. ֆ. 133, ց. 1, գ. 318, 378:
- 1.13. ֆ. 194, ց. 1, գ. 15:
- 1.14. ֆ. 267, ց. 1, գ. 1, 2, 6, 7, 8, 9, 13, 14, 15, 16, 20, 21, 22, 23, 24:
- 1.15. ֆ. 375, ց. 1, գ. 1, 20, 60, 360:
- 1.16. ֆ. 1063, ց. 1, գ. 683, 684, 685:
- 1.17. ֆ. 1284, ց. 223, գ. 114, 115, 118, 119, 122, 125, ց. 194, գ. 15, 86, ց. 1, գ. 15:

2 Տպագիր սկզբնաղբյուրներ

Ա) Հայերեն

2. 1. *Առաքել Դավիթեցի*, Պատմութիւն, Վաղարշապատ, 1896:
2. *Դարբինյան Մ.*, Վավերագրեր պարսկահայերի և արևմտահայերի

- 1828-1830թթ. զարթի վերաբերյալ, Բաները Հայաստանի արխիվների, 1973, թիվ 2:
2. 3. Դիվան հայ վիճագրության, պր. IV, Գեղարքունիք. Կամոյի, Մարտունու և Վարդենիսի շրջաններ, կազմեց Ս. Բարխուդարյան, Ե., 1973:
 2. 4. *Թովմա Մեծոփեցի*, Պատմութիւն Թամուրայ և յաջորդաց իւրոյ, Վաղարշապատ, 1896:
 2. 5. "Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին», կազմեց Ա. Սաֆրաստյան, հատ. Ա-Բ, Ե., 1961-1964:
 2. 6. "ԺՂ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», կազմեց Լ. Խաչիկյան, գիրք երկրորդ, Ե., 1950:
 2. 7. *Կիրակոս Գանձակեցի*, Պատմութիւն հայոց, աշխատասիրությանը Կ. Սելիք – Օհանջանյանի, Ե., 1961:
 2. 8. "Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923)», կազմողներ՝ Զ. Կիրակոսյան, Ռ. Սահակյան, Ե., 1972:
 2. 9. "Հայերեն ձեռագրերի ժՂ դարի հիշատակարաններ (1601 - 1620)», հ. Ա, կազմեցին Վ. Հակոբյան, Ա. Գովհաննիսյան, Ե., 1974:
 2. 10. "Մանր ժամանակագրություններ. 13-18-րդ դդ.», կազմեց Վ. Հակոբյան, հ. 1, Ե., 1951, հ. 2, Ե., 1956:
 2. 11. *Սովսես Խորենացի*, Պատմութիւն Հայոց, Վեներտիկ, 1881:
 2. 12. Սամուէլի Թահանայի Անեցոյ Ղափքմունքի ի գրոց պատմագրաց, Վաղարշապատ, 1893:
 2. 13. *Սիմեոն Երևանցի*, Ջամբո, գիրք, որ կոչի յիշատակարան, Վաղարշապատ, 1873:
 2. 14. *Ստեփանոս Օրբելյան*, Պատմութիւն նահանգին Սիսական, Տփլիսի, 1910:
 2. 15. "Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին», քարզմանց Լ. Սելիքսեթ-թեկ, հ. Ա., Ե., 1934:
 2. 16. *Փափազյան Ա.*, Թուրքական վավերագրերը Հայաստանի և հայերի մասին (XVI- XIX դարեր), Ե., 1999:

Բ) Ուսերբն

2. 17. "Акты, собранные Кавказской археографической комиссией (АКАК), тт. 1-12, Тифлис, 1866-1904.

2. 18. "Акты, относящиеся до заключения мира с Персией", СПб., 1828.
2. 19. "Армяно-русские отношения в XVIII в. Сборник документов", т. 3, Е., 1978.
2. 20. "Армяно-русские отношения в XVIII в", т. IV, Е., 1990.
2. 21. *Воронов Н.* Сборник статистических сведений о Кавказе, т. 1, Тифлис, 1859.
2. 22. "Городское население Эриванской губернии", СПб., 1867.
2. 23. "Договоры России с Востоком политические и торговые". Сост., Т. Юзефович, СПб., 1869.
2. 24. "Новые документы о переселении персидских и западных армян в 1828- 1830гг." – РЗУ, №3, 1977.
2. 25. "Обзор Эриванской губернии за 1886г. (приложение к всеподданнейшему отчету).
2. 26. "Обзор Эриванской губернии за 1887г. (приложение к всеподданнейшему отчету).
2. 27. "Обзор Эриванской губернии за 1889г. (приложение к всеподданнейшему отчету).
2. 28. "Обзор Эриванской губернии за 1900-й г. (приложение к всеподданнейшему отчету).
2. 29. "Обзор Эриванской губернии за 1891г. (приложение к всеподданнейшему отчету).
2. 30. "Обзор Эриванской губернии за 1892г. (приложение к всеподданнейшему отчету).
2. 31. "Обзор Эриванской губернии за 1896г. (приложение к всеподданнейшему отчету).
2. 32. "Обзор Эриванской губернии за 1910г. (приложение к всеподданнейшему отчету).
2. 32. "Обзор Эриванской губернии за 1912г. (приложение к всеподданнейшему отчету).
2. 33. "Памятная книжка Эриванской губернии на 1900г.", Е., 1902.
2. 34. "Первая всеобщая перепись населения Российской империи, 1897г.", СПб., 1905.
2. 35. "Присоединение Восточной Армении к России". Сборник документов, редактор Ц. Агаян, т. I, 1801-1813, Е., 1972, т. 2, 1814-1830, Е. 1978.
2. 36. "Полное собрание законов Российской империи, собр., т. III,

1828, N-1888.

- 2.37. "Сборник сведений о Кавказе", т. 5. Тифлис, 1879.
- 2.38. "Сборник статистических данных о земледелии и способах хозяйства в пяти губерниях Закавказского края". Приложение IV, Тифлис, 1889.
- 2.39. "Свод статистических данных о населении Закавказского края, извлеченных из посемейных списков 1886 г.", Тифлис, 1893.
- 2.40. "Социально-политическое и экономическое положение Восточной Армении после присоединения Восточной Армении к России (1830-1870). Документы и материалы, под ред. Н. Тавакаляна, Е., 1993.
- 2.41. "Справочник по климату СССР, выпуск 16, Л., 1969.

3 Գրականություն

Ա) Հայերեն

- 3.1. *Արեղեան Ա.*, Մենք եւ մեր հայրենաները, Հայրենիք, 1928, դեկտեմբեր, թիվ 2:
- 3.2. *Արույան Խ.*, Վերը Հայաստանի, Ե., 1939:
- 3.3. *Արրահամյան Ա.*, Մի էջ Անդրկովկասի ժողովուրդների և հայ-ռուսական հարաբերությունների պատմությունից, Ե., 1953:
- 3.4. *Արրահամյան Վ.*, Հայ համաքարությունները Անդրկովկասի քաղաքներում (XVIII- Xդարի սկիզբը), Ե., 1971:
- 3.5. *Արդոնց Մ.*, Հայաստանի ժողովրդական տնտեսությունը և հայ տնտեսագիտական միտքը XXդ. սկզբին, Ե., 1968:
- 3.6. *Ալիշան Ղ.*, Այրարատ, Բնաշխարհի Հայաստանեաց, Վենետիկ, 1890:
- 3.7. *Ալիշան Ղ.*, Սիսական, Տեղագրություն Միւնենաց աշխարհի, Վենետիկ, 1893:
- 3.8. *Ալեքսանյան Ս.*, Արևելյան Հայաստանի նոր շրջանի ագրարային հարաբերությունների պատմագրությունը, Ե., 1991:
- 3.9. *Աղայան Գ.*, Կարնո գաղթը (1829-1830), Թիֆլիս, 1891:
- 3.10. *Աղայան Ծ.*, Ռուսաստանի դերը հայ ժողովրդի պատմական ճակատագրում, Ե., 1981:
- 3.11. *Ավագյան Կ.*, «Հակ» հարկային տերմինը վիճական արձանագրություններում, «Հայագիտական հետազոտություններ», Ա. պրակ.,

Ե., 1974:

- 3.12. *Աղայբեգյան Խ.*, Հողային հարցը Արևելյան Հայաստանում (1801-1917թթ.), Ե., 1959:
- 3.13. *Ավետյան Վ.*, Սևանի ավազանի բրոնզեդարյան երկրագործության պատմությունից, Խ. Արույանի անվան մանկավարժական ինստիտուտի «Գիտական աշխատություններ», թիվ 4, Ե., 1971:
- 3.14. *Ավետյան Վ.*, Սևանի ավազանի բրոնզեդարյան անասնապահությունը, ԼՀԳ, 2007, թիվ 2:
- 3.15. «Այրարատ», 1868, հ. 2.:
- 3.16. *Բարսեղյան Լ.*, Հայաստանի սոցիալ-տնտեսական և քաղաքական պատմությունը XIII-XIV դարերում, Ե., 1964:
- 3.17. *Գալոյան Գ.*, Հայաստանը մեծ տերությունների աշխարհակալական առճակատումներում (XVI դարից 1917թ.), Ե., 2004:
- 3.18. *Գեղամենց Ե.*, Պատմական քաղվածքներ, պրակ 4, Բաքու, 1909:
- 3.19. *Գեղամյանց Դ.*, Կարապետ արքեպիսկոպոս (կենսագրություն), առաջաբանը և ծանոթագրությունները Ա. Մելքոնյանի, Ե., 1999:
- 3.20. *Գրիգորյան Զ.*, Հայ և ռուս ժողովուրդների դարավոր բարեկամությունը, Ե., 1960:
- 3.21. *Գրիգորյան Զ.*, Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին և նրա պատմական նշանակությունը, Ե., 1978:
- 3.22. *Դարբինյան Մ.*, Արևմտահայերի 1829-1830թթ. գաղթը Հայկական մարզ և հարակից շրջաններ, ՊԲՀ, 1974, թիվ 2:
- 3.23. *Դիլոյան Վ.*, Արևելյան Հայաստանը 19-րդ դարի առաջին երեսնամյակին և հայ-ռուսական հարաբերությունները, Ե., 1989:
- 3.24. *Եզանյան Մ.*, Հայաստանի հետեռֆորմյան ագրարային հարաբերությունները, Ե., 1964:
- 3.25. *Երեմյան Մ.*, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, Ե., 1963:
- 3.26. *Երիցյան Մ.*, Ամենայն Հայոց կաթողիկոսությունը և Կովկասի հայը 19-րդ դարում, հատ. 1-2, Թիֆլիս, 1894-1895:
- 3.27. *Էփրիկեան Դ.*, Պատկերագրոր բնաշխարհիկ բառարան, պրակ առաջին, Վենետիկ, 1902:
- 3.28. *Թումանյան Դ.*, Հայաստանի նախատվետական շրջանի ազգաբնակչությունը, ՊԲՀ, 1965, թիվ 4:
- 3.29. *Ինճիբեան Ղ.*, Աշխարհագրություն շրտից մասանց աշխարհի, մասն Ա, հատ. Ա, Վենետիկ, 1806:
- 3.30. *Լեռ*, Ստեփանոս Լազարյանց, հատ 1-2, Թիֆլիս, 1902:

- 3.31. *Լեռ*, Ֆայոց պատմություն, նորագույն շրջան, մասն երկրորդ, Ե., 1927:
- 3.32. *Խորաբնկյան Վ.*, Չայաստանի բնակչության վերարտադրությունը և տեղաշարժերը XIX-XX դարերում, XXI դարի շեմին, Ե., 2001:
- 3.33. *Խորաբնկյան Վ.*, Չայաստանի բնակչությունը և նրա զբաղվածությունը (1828-1978), Ե., 1991:
- 3.34. *Կիրակոսյան Գ.*, Չայաստանը Լանկա-Թամուրի և Թուրքմեն գեղերի արշավանքների շրջանում, Ե., 1997:
- 3.35. *Կիրակոսյան Զ.*, Բուրժուական դիվանագիտությունը և Չայաստանը, Ե., 1978:
- 3.36. «Չայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923)», կազմողներ՝ *Զ. Կիրակոսյան, Ռ. Սահակյան*, Ե., 1972:
- 3.37. *Կորկոսյան Զ.*, Խորհրդային Չայաստանի բնակչությունը վերջին հարյուրամյակում (1831-1931թթ.), Ե., 1932:
- 3.38. *Չակոբյան Թ.*, Չայաստանի պատմական աշխարհագրություն, Ե., 1968:
- 3.39. *Չայթյան Ա.*, Չայաստանի ռուս վերաբնակիչները (1830-1920թթ.), Ե., 1989:
- 3.40. «Չայ ժողովրդի պատմություն», *ՀնԱՄ ԳԱ* հրատ., հ. 5-6, Ե., 1974, 1981:
- 3.41. *Չովհաննիսյան Ա.*, Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, գիրք 2, Ե., 1959:
- 3.42. *Նարազյոզյան Ա.*, Ժողովրդագրական տեղաշարժերը Չայաստանում XI-XV դդ., Չայաստանի պատմական ժողովրդագրության հիմնահարցեր. Չայկական լեռնաշխարհը հայ էթնոսի քննարան, Ե., 2004:
- 3.43. *Նարիթյան Ի.*, Արծալի-Սեղաձոր, Ե., 2006
- 3.44. *Սաքևոսյան Ա.*, Բուսաբուծություն, Ե., 1977:
- 3.45. *Սարկոսյան Ա.*, Ազրաբային հարաբերությունները Արարատյան երկրում XVII-XVIIIդդ. և XIXդ. առաջին քառորդում, Ե., 1959:
- 3.46. *Սանանդյան Դ.*, Երկեր, հ. Ա-Գ, Ե., 1977-1985:
- 3.47. *Սանանդյան Դ.*, Չայաստանի գլխավոր ճանապարհները ըստ Պևտինգերյան քարտեզի, Ե., 1936:
- 3.48. *Սանանդյան Դ.*, Չին Չայաստանի քաղաքները, Ե., 1936:
- 3.49. *Սարտիրոսյան Գ.*, Սևան (հայրենագիտական ակնարկներ), Ե., 1996:
- 3.50. *Սեյրոնյան Ա.*, Զավախքը XIX դարում և XX դարի առաջին քառորդին, Ե., 2003:
- 3.51. *Ա.Սեյրոնյան*, Զավախք. պատմության ուրվագծեր, Ե., 1999:
- 3.52. *Ա.Սեյրոնյան*, Երզրում. Երզրումի նահանգի հայ ազգաբնակչությունը 19-րդ դարի առաջին երեսնամյակին (պատմամոտոլոգիա-գրական ուսումնասիրություն), Ե., 1994:
- 3.53. *Սալխասյան Ա.*, Չայերեն բացատրական բառարան, հ. 3, Ե., 1944:
- 3.54. *Սարկոսյան Ա.*, Ազրաբային հարաբերությունները Արարատյան երկրում XVII-XVIIIդդ. առաջին քառորդում, Ե., 1959:
- 3.55. *Սարտիրոսյան Դ., Իսրայելյան Դ.*, Գեղամա լեռների ժայռապատկերները, Ե., 1971:
- 3.56. *Սնանդանյան Դ.*, Լճաշենի նյութական մշակույթի զարգացման հիմնական տեսակները, ՊԲՀ, 1965, թիվ 2:
- 3.57. *Սնանդանյան Դ.*, Հնագիտական պեղումներ Սևանա լճի ցածր-քած տերիտորիայում, ԼՀԳ, 1952, թիվ 8:
- 3.58. *Ներսիսյան Ա.*, Չայ ժողովրդի ազատագրական պայքարը քուրդական տիրապետության դեմ, Ե., 2002:
- 3.59. «Նկարագիր գաղթականության Չայոց ի Պարսկաստան և ի Ռուսաստան», 1832, ի Սուկով:
- 3.60. *Յովհաննես Նախկուպոս Ըսիխաթունեանց*, Ստորագրութիւն կաթողիկէ Էջմիածնի և հինգ զաւառացն Արարատայ, հատոր երկրորդ, Էջմիածին, 1842:
- 3.61. *Վակներ Ա.*, Ճանապարհորդութիւն ի Չայաստան, մասն Բ, Վիեննա, 1851:
- 3.62. *Պարսմյան Վ., Չարությունյան Ը.*, Չայ ժողովրդի պատմություն, Ե., 1979:
- 3.63. *Պարսմյան Վ.*, Գրիբոյեդովը և հայ-ռուսական հարաբերությունները, Ե., 1947:
- 3.64. *Սարգիս արքեպիսկոպոս Զայալեանց*, Ճանապարհորդութիւն ի Սեփ Չայաստան, մասն Բ, Տփլիս, 1858:
- 3.65. *Սարգոսյան Դ.*, Երևանի նահանգի բնակչությունը 50 տարում (1850-1900թթ.), ԲԵՀ, 1990, թիվ 1:
- 3.66. *Սարուխանյան Ն.*, Արևելյան Չայաստանի Ռուսաստանին միաց-

ման պրորբներն մինչեղեղափոխական հայ պատմագրության մեջ,
Ե., 1971:

3.67. *Մրմազյան Դ.*, Սյունիքը IX-Xդդ., Ե., 1958:

3.68. «Բյավառ» (Բյավառ բաղաբի պատմությունը), խմբ., *Սանուկյան Գ.*, Ե., 2001:

3.69. *Օհանյան Ա.*, Վարչա-տերիտորիալ բաժանումները նախասովետական Հայաստանում, ԵրԴՀ, Գիտական աշխատություններ, Ե., 1955:

Բ)Ուսերն

3.70. *Аверьянов П.*, Этнографический и военно-политический обзор азиатских владений Оттоманской империи, СПб., 1912.

3.71. *Аверьянов П.*, Курды в войнах России с Персией и Турцией в течение XIX столетия, Тифлис, 1900.

3.72. *Адоңц М.*, Экономическое развитие Восточной Армении в XIX в., Е., 1957.

3.73. *Агаманов С.*, Очерки истории огузов и туркмен Средней Азии IX-XIII вв., Ашхабад, 1969.

3.74. *Бадалян А.*, Население Армении со времени присоединения ее к России и до наших дней, Известия АН Арм. ССР, 1959, N3.

3.75. *Бороздян К.*, Переселенцы в Закавказье. – Русский Вестник, СПб., 1891.

3.76. *Верже А., А. Грибоевдов.* Деятельность его как дипломата (1827-1829гг). "Русская старина", СПб., 1874.

3.77. *Газарян И.*, Переселение армян из Персии в Армянскую область в 1828 – Известия АН Арм. ССР серия. Общественные науки, 1957, N7.

3.78. *Гашка С.* Описание переселения армян аддербиджанских в пределы России, М., 1831.

3.79. *Григорян Э.*, Присоединение Восточной Армении к России в начале XIX в., М., 1959.

3.80. *Дживелегов А.*, Армяне в России, М., 1906.

3.81. *Дубровин Н.*, История войны и владычества русских на Кавказе, т. 1- IV, СПб., 1871-1888.

3.82. *Евангулов Г.*, Местная реформа на Кавказе, СПб., 1914.

3.83. *Егизаров С.*, Краткий этнографический очерк курдов Эриванской губернии, Тифлис, 1884.

3.84. *Егизаров С.*, Административно-экономический строй сельской общины в Эриванской губернии. В книге "Свод материалов...", т. 1, ч. 1, Тифлис, 1894.

3.85. *Еремян С.*, Армения до конца XV в. См. Очерки истории СССР, М., 1958.

3.86. *Ерицов А.*, Опыт статистического очерка народонаселения Турецкой Армении, Тифлис, 1881.

3.87. *Иваненко В.*, Гражданское управление Закавказье (исторический очерк), Тифлис, 1901.

3.88. "История военных действий в азиатской Турции в 1828-1829гг", ч. 1-2, СПб., 1836.

3.89. *Ллойд Джордж.* Правда о мирных договорах, т. 2, М., 1957.

3.90. *Лухтин М.*, Русские в Азиатской Турции в 1854 и 1855 годах, СПб., 1863.

3.91. "Колониальная политика Российского царизма в Азербайджане в 20-60-х гг. XIX в", ч. 1, М.- Л., 1936.

3.92. *Колосов С.*, Русские сектанты в Ереванской губернии, Е., 1902.

3.93. "Крестьянское движение в Армении в XIX веке", Е., 1948.

3.94. *Медзиковский Ю.*, Краткий очерк Новоабаязетского уезда Эриванской губернии, СПб., 1908.

3.95. "Народы Кавказа. Этнографические очерки АН СССР", т. 2, М., 1962.

3.96. *Петрушевский И.*, Очерки по истории феодальных отношений в Азербайджане и Армении в XVI–начале XIX века, Л., 1949.

3.97. *Потто В.*, Кавказская война, в отдельных эпизодах, легендах и биографиях, т. 1, вып. 3, т. 1885, т. 4, вып. 1- 4, т.; 1887-1888.

3.98. *Саркисян Г.*, Население Восточной Армении в XIX–начале XX в., Е., 2002.

3.99. *Семенов Л.*, К вопросу значений Туркменчайского договора для истории Армении. – Историко-филологический журнал", 1959, N 4.

3.100. "Статистическое описание Закавказского края". Сост. Орест Евешой, СПб., 1835.

- 3.101. *Тязенгаузен В.* Сборник материалов, относящихся к истории Золотой орды, т. 2, М.Л., 1941.
- 3.102. *Шахатунян А.* Административный передел Закавказского края, Тифлис, 1918.
- 3.103. *Шопен Н.* Исторический памятник состояния Армянской области в эпоху ее присоединения к Российской империи, СПб., 1852.

4. Պարբերական մամուլ

Ա) Հայերեն

- 4.1. «Դրոիզոն», 1912, 23 փետրվար, 1914, 4 հուլիս:
- 4.2. «Սեղո Չայաստանի», 1874, թիվ 2:
- 4.3. «Մուրճ», 1901, 14 մայիս:
- 4.4. «Մշակ», 1874, 3 հունվար, 19 հունվար:
- 4.5. «Մշակ», 1876, 21 հոկտեմբեր:
- 4.6. «Մշակ», 1877, 23 հունիս:
- 4.7. «Մշակ», 1878, 28 մարտ, 23 հունիս, 28 օգոստոս:
- 4.8. «Մշակ», 1882, 10 մայիս, 4 օգոստոս:
- 4.9. «Մշակ», 1883, 12 փետրվար, 16 փետրվար, 10 մայիս, 18 օգոստոս, 23 սեպտեմբեր, 5 նոյեմբեր:
- 4.10. «Մշակ», 1884, 25 ապրիլ:
- 4.11. «Մշակ», 1886, 31 հուլիս, 20 նոյեմբեր:
- 4.12. «Մշակ», 1887, 16 մայիս, 23 հունիս, 27 հոկտեմբեր, 12 նոյեմբեր, 19 նոյեմբեր:
- 4.13. «Մշակ», 1888, 29 մարտ, 1 սեպտեմբեր:
- 4.14. «Մշակ», 1889, 18 ապրիլ, 16 մայիս, 16 հունիս, 21 հոկտեմբեր:
- 4.15. «Մշակ», 1890, 9 հունվար, 3 փետրվար, 2 հունիս, 7 օգոստոս:
- 4.16. «Մշակ», 1891, 1 հոկտեմբեր:
- 4.17. «Մշակ», 1892, 11 հունիս, 11 հոկտեմբեր, 17 հոկտեմբեր, 19 նոյեմբեր:
- 4.18. «Մշակ», 1893, 22 ապրիլ, 8 հունիս:
- 4.19. «Մշակ», 1896, 10 հոկտեմբեր, 6 նոյեմբեր:
- 4.20. «Մշակ», 1897, 22 փետրվար, 3 ապրիլ, 27 հունիս, 28 հունիս, 27 դեկտեմբեր:
- 4.21. «Մշակ», 1898, 20 մարտ, 21 ապրիլ, 21 մայիս, 9 հուլիս, 1 սեպ-


- տեմբեր, 7 սեպտեմբեր, 6 նոյեմբեր, 29 դեկտեմբեր:
- 4.22. «Մշակ», 1899, 14 հուլիս, 20 օգոստոս, 1 սեպտեմբեր:
- 4.23. «Մշակ», 1901, 13 հոկտեմբեր:
- 4.24. «Մշակ», 1902, 22 հուլիս, 20 օգոստոս, 22 սեպտեմբեր:
- 4.25. «Մշակ», 1903, 22 փետրվար, 14 օգոստոս:
- 4.26. «Մշակ», 1904, 5 սեպտեմբեր, 10 սեպտեմբեր:
- 4.27. «Մշակ», 1906, 27 հունվար, 18 նոյեմբեր:
- 4.28. «Մշակ», 1907, 6 մարտ, 28 ապրիլ, 18 հոկտեմբեր, 13 նոյեմբեր:
- 4.29. «Մշակ», 1908, 18 հոկտեմբեր, 9 դեկտեմբեր:
- 4.30. «Մշակ», 1909, 8 սեպտեմբեր:
- 4.31. «Մշակ», 1910, 16 հունվար, 17 փետրվար, 1 մայիս, 13 մայիս, 4 հունիս, 16 հունիս, 14 հուլիս, 5 օգոստոս, 6 նոյեմբեր:
- 4.32. «Մշակ», 1912, 23 փետրվար, 5 մարտ, 26 հուլիս, 30 օգոստոս:
- 4.33. «Մշակ», 1913, 21 փետրվար, 1 մարտ, 5 մարտ, 3 դեկտեմբեր, 13 դեկտեմբեր:

Բ) Ուսերեն

- 4.35. «Армянский вопрос. Энциклопедия», Е., 1991.
- 4.36. «Кавказский календарь (КК) на 1851г., Т., 1850, КК на 1852 г., Т., 1851, КК на 1873г., Т., 1872, КК на 1886 г., Т., 1885, КК на 1887г., Т., 1886, КК на 1890г., Т., 1889, КК на 1893г., Т., 1892, КК на 1896г., Т., 1895, КК на 1901г., Т., 1900, КК на 1904г., Т., 1903, КК на 1905г., Т., 1904, КК на 1913г., Т., 1912, КК на 1914г., Т., 1913.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....	5
ԳԼՈՒԽ ԱՈԱՅԻՆ - Էթնոժողովրդագրական իրավիճակը Նոր Բայազետի գավառում XIX. մինչև XIXդ. սկիզբը	
ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ – Նոր Բայազետի գավառի վարչատարածքային սահմանները և բնակչությունը XVIIIդ. վերջին և XIX դ. սկզբին	
ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ – Ձանգվածային ներգաղթը Նոր Բայազետի գավառ	
Ա) Պարսկահայերի ներգաղթը	
Բ) Արևմտահայերի ներգաղթը	
ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ – Նոր Բայազետի գավառը Անդրկովկասի և Արևելյան Հայաստանի վարչատարածքային բաժանումների հոլովույթում XIXդ. 30-40-ական թվականներին ..106	
ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ – Էթնոժողովրդագրական տեղաշարժերը Նոր Բայազետի գավառում XIX դ. 30-ական թվականներից մինչև 1913թ.	130
ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ – Տնտեսությունը	162
Ա) Գյուղատնտեսական զբաղմունքը և ձկնորսությունը	162
Բ) Արհեստները, արդյունաբերությունը և առևտուրը	204
ԳԼՈՒԽ ՅՈՒԹԵՐՈՐԴ – Կրթամշակութային կյանքը	230
ՎԵՐՋԱԲԱՆ.....	272
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ 281	



ՆԱՄՆԵՏ ՄԱԼԽԱՄԻ ՆԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՆՈՐ ԲԱՅԱԶԵՏԻ ԳԱՎԱՌԸ
1828 - 1913ԹԹ.

Խմբագիր Ա. Գովակիմյան
Համակարգչային էջադրումը Վ. Պապյանի

Հրատ. պատվեր՝ N 209
Հանձնված է արտադրության՝ 28.04.2008 թ.:
Չափսը՝ 60 x 84 ¹/₁₆; Թուղթ՝ օֆսեթ N 1:
18.5 տպագր. մամուլ: Տպաքանակը 500 օրինակ:
Գինը՝ պայմանագրային:

ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն,
Երևան, Բաղրամյան 24գ: